ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՍՏԵՂԱՅԻՆ ԺԱՄԵՐԸ

Ալտեֆան Ալայգ

ՀԱԽՄԱՏԱՅԻՆ ՆՈՎԵԼ

Ստեփան Սվայգ

ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՍՏԵՂԱՅԻՆ ՃԱՄԵՐԸ

Պատմական մանրապատում մեծը

ՁԱԽՄԱՏԱՅԻՆ ՆՈՎԵԼ

ԵՐԵՎԱՆ, «ԼՈՒՅՍ», 1986

ԳՄԴ 84.4 Ավ
Ց 860

Ռուսերենից թարգմանեցին Լևոն Հախվերդյանը («Մարդկության աստեղային ժամերը») և Լիլի Պողոսյանը («Շախմատային նովել»)

Ցվայգ Ս.

Մարդկության աստեղային ժամերը (պատմ. մանրապատումներ). թարգմ.՝ Լ. Հախվերդյան, Շախմատային նովել. թարգմ.՝ Լ. Պողոսյան. միջին և բարձր տարիքի դպրոցականների համար (կազմ.՝ Օ. Հ. Պապոյանը.,), նկ.՝ Վ. Մանդակունի,— Եր.: Լույս, 1986. 207. էջ.

Ստ. Ցվայգն իր մանրապատումներում ներկայացրել է պատմության էջերից և նշանավոր մարդկանց կյանքից առնված այնպիսի դրվագներ, որոնք ունեցել են բախտորոշ նշանակություն, և իրեն հատուկ վարպետությամբ բացահայտել դրանց հուզական խորքն ու պատմական խորհուրդը: «Շախմատային նովելը» պատմությունն է ֆաշիստական մենախցում բանտարկված մի մարդու, որ պատահաբար ձեռքն ընկած շախմատային խաղերի ժողովածուի շնորհիվ փրկվում է բթացումից և սեփական անհատականությունը կորցնելու անխուսափելի վտանգից:

Ց $\frac{4703000000\ (75)}{702\ (01)\ 1986}$ 203.1986 ԳՄԴ 84.4 Ավ

Стефан Цвейг

ЗВЕЗДНЫЕ ЧАСЫ ЧЕЛОВЕЧЕСТВА

(исторические миниатюры)

ШАХМАТНАЯ НОВЕЛЛА

Для среднего и старшего школьного возраста

(на армянском языке)

Ереван, «Луйс» 1986

© «Լույս» հրատարակչություն, կազմի և նկարազարդումների համար, 1986

ՄԱՐԴԻԿՈՒՐՈՅՍԸ ԱՍՏԵՂԱՅԻՆ ԽԱՍԹԵՐԸ

Ոչ մի արվեստագետ օր-օրի, ամեն օր քանչորս ժամ շարունակ արվեստագետ չի լինում. բոլոր ճշմարիտ, անանց արժեքները, որ հաջողվում է ստեղծել, նա ստեղծում է ներշնչանքի սակավաթիվ ու հազվագյուտ պահերին միայն։

Այդպես էլ պատմությունը, ի դեմս որի մենք հարգում ենք բոլոր ժամանակների մեծագույն բանաստեղծին ու արարչին, բնավ էլ անընդմեջ չի արարում։ Եվ «տեր աստծու այդ խորհրդավոր արհեստանոցում», ինչպես կոչում էր պատմությունը Գյոթեն, ֆանշան ու սովորական շատ բան է տեղի ունենում։ Այստեղ էլ, ինչպես կյանքի ու արվեստի բոլոր ոլորտներում, հազվագյուտ են մեծ ու անմոռաց պահերը։ Ավելի հաճախ պատմությունը տարեգրի անաչառությամբ շարում է փաստ փաստի ետևից, օղակ առ օղակ ավելացնելով այն վիթխարի շղթային, որ ձգվում է հազարամյակների միջով, քանի որ դարաշրջանի ամեն մի քայլը պահանջում է նախապատրաստություն, ամեն մի ճշմարիտ իրադարձություն հասունանում է ներքուստ։ Միլիոնավոր մարդկանցից, որ ժողովուրդ են կազմում, ծնվում է միայն մի հանճար, ապարդյուն անցնող միլիոնավոր ժամերից միայն մեկն է դառնում իրոք պատմական. դա մարդկության աստեղային ժամն է։

Դրա փոխարեն, եթե արվեստում հանճար է հայտնվում, նա մնում է ապրելու դարերով. երբ խփի աստեղային ժամը, նա կարող է կանխորոշել գալիք տարիներն ու հարյուրամյակները, և այդ պահին, ինչպես շանթարգելի ծայրին է բևեռվում մթնոլորտի բովանդակ էլեկտրականությունը, ժամանակի ամենակարճ հատվածը կպարունակի պատմական բազում

իրադարձություններ։ Այն, ինչ սովորաբար հոսում է համաչափ, միաժամանակ կամ հետևողաբար, խտանում է այդ եզակի ակնթարթում, և դա կարգավորում ու կանխորոշում է ամեն ինչ. մի միակ «այո» կամ «ոչ», մի «չափազանց վաղ է» կամ «չափազանց ուշ» կանխորոշում է հարյուրավոր սերունդների բախտը, ուղղություն է տալիս առանձին մարդկանց, ամբողջ ժողովրդի կամ նույնիսկ բովանդակ մարդկության կյանքին։

Այդպիսի դրամատիկական լարումներ, այդպիսի նշանավոր ակնթարթներ, երբ դեպքերի այն շրջադարձը, որից կախված է ոչ միայն ներկան, այլև ապագան, ի կատար է ածվում մեկ օրում, մեկ ժամում կամ նույնիսկ մեկ րոպեում, հազվագյուտ են մարդու կյանքում և հազվագյուտ են պատմության ընթացքում։ Դրանցից մի քանիսը, առնված ամենատարբեր դարաշրջանների ու երկրների պատմությունից, ես փորձել եմ մտաբերել այս գրքում։ Ես այդ ժամերն աստեղային եմ կոչել այն պատճառով, որ դրանք, հավերժական աստղերի նման, մշտապես շողում են մոռացության և անէացման գիշերներում։ Ոչ մի տեղ ես չեմ հանդգնել սեփական մտքի կռահումներով խլացնել կամ ուժգնացնել կենսական երևույթների թաքնված կամ ակներև ներքին ճշմարտությունը, քանի որ իր բարձրագույն վարպետության պահերին պատմությունը կարոտ չէ շտկումների։ Այնտեղ, ուր պատմությունն է արարում իբրև ներշնչված բանաստեղծ և դրամատուրգ, նրան գերազանցելու մասին ոչ մի արվեստագետ երազել անգամ չի հանդգնի։

ԲՅՈՒԶԱՆԴԻՈՆԻ ԱՐՈՒԱԸ

29 մայիսի 1453 թվականի

ՎՏԱՆԳԸ ՄՈՏԵՆՈՒՄ Է

թվականի փետրվարի 5-ին Փոքր Ասիա ուղարկված ծրպտյալ սուրհանդակը Սուլթան Մուրադի ավագ որդուն՝ քսանմեկամյա Մահմուդին բերում է նրա հոր մահվան բոթը։ Իր խորհրդականներին ու նախարարներին ոչ մի խոսք չասելով, խորամանկ ու միաժամանակ եռանդուն իշխանը թռչում է իր լավագույն ձիու

թամբին և զտարյուն, սքանչելի նժույգին մտրակելով, առանց շունչ առնելու սուրում մինչև Բոսֆոր ընկած հարյուր քսան մղոնը, ապա առանց հապաղելու անցնում նրա եվրոպական ափը՝ Գալլիպոլիս։ Միայն այնտեղ է իր ամենահավատարիմ մերձավորներին հայտնում, որ հայրը մեռել է և, կամենալով իսկույնևեթ կանխել ամեն մի ոտնձգություն գահի նկատմամբ, անմիջապես ընտիր զորագունդ է կազմում և առաջնորդում դեպի Ադրիանապոլիս, ուր Մահմուդին առանց առարկության ճանաչում են իբրև Օտոմանյան կայսրության տիրակալ։ Նոր սուլթանի առաջին իսկ կառավարական վճիռը ցույց է տալիս, թե որքան ահավոր է նրա դաժան վճռականությունը։ Իր արնեկից հնարավոր մրցորդներին նախապես մեջտեղից վերացնելու համար նա հրամայում է լողարանում խեղդել իր անչափահաս եղբորը, իսկ դրանից անմիջապես հետո, որ նույնպես նրա արյունռուշտ և անողոք զգուշավորության վկայությունն է, սպանվածի ետևից մյուս աշխարհն է ուղարկում նաև վարձված մարդասպանին։

Այն լուրը, թե շրջահայաց Մուրադի փոխարեն թուրքական սուլթան է դարձել երիտասարդ, անզսպելի և փառատենչ Մահմուդը, Բյուզանդիայում սոսկում է առաջ բերում։ Քանի որ հարյուրավոր լրտեսների օգնությամբ հայտնի է դառնում, որ այդ փառասերը երդվել է նվաճել Բյուզանդիայի մայրաքաղաքը, որ մի ժամանակ աշխարհի մայրաքաղաքն էր համարվում, և որ նա, որքան էլ երիտասարդ, զոր ու գիշեր անց է կացնում իր կյանքի այդ գլխավոր ծրագրի ստրատեգիան քննելու վրա. մյուս կողմից բոլոր լուրերը միաբերան հաստատում են նոր փադիշահի ռազմի և դիվանագիտական աչքի ընկնող ընդունակությունները։ Մահմուդը միաժամանակ բարեպաշտ է և մոլեգար, տաքարյուն է և նենգամիտ, ուսյալ մարդ է և սիրում է արվեստ, նա Հուլիոս Կեսար և հռոմեացիների վարքագրությունները կարդում է բնագրով, և այդ ամենի հետ միասին բարբարոս է և արյուն է թափում ջրի պես։ Երազկոն, մելամաղձոտ հայացք և չարագուշակ, թուխակի կտուցի նման կեռ քիթ ունեցող այդ մարդու մեջ համադրվում են անխոնջ աշխատավորը, անվեհեր, զինվորն ու երկերեսանի դիվանագետը, և բոլոր այդ վտանգավոր ուժերը խտացված գործում են հանուն մի նպատակի. գերազանցել իր պապ Բայազետին ու իր հայր Մուրադին, որոնք առաջին անգամ Եվրոպային ցույց տվին թուրքական նոր ազգի ռազմական գերազանցությունը։ Բայց նրա առաջին հարվածը (դա հասկանում են, դա զգում են ամենքը) ուղղված է լինելու Բյուզանդիոն քաղաքի՝ Կոստանդինոսի և Հուստինիանոսի կայսերական թագի վերջին շքեղաշուք զոհարի դեմ։

Այդ գոհարը շատ մատչելի է զավթիչի ընչաքաղց ձեռքի համար և բոլորովին անպաշտպան է։ Բյուզանդիան, նույն ինքը Սև ծովից արևելք ընկած կայսրությունը, մի ժամանակ տիրում էր աշխարհին, ձգվում Պարսկաստանից մինչև Ալպեր ու վերստին մինչև ասիական անապատները, և նրա տարածքը կարելի էր չափել ամիսների երկար ճանապարհով, իսկ հիմա մի ծայրից մյուսը ոտքով կարելի է հանգիստ անցնել երեք ժամում։ Նախկին Բյուզանդական պետությունից, ավա՜ղ, գլուխը են մնացել առանց մարմնի, մայրաքաղաքն առանց երկրի, Կոստանդնուպոլիսը, Կոստանդինոսի քաղաքը, հնում՝ Բյուզանդիոնը, և կայսեր՝ բասիլևսին, այժմ պատկանում է Բյուզանդիոնի մի մասը միայն՝ այժմյան Ստամբուլը, իսկ Գալաթան արդեն ջենովացիների ձեռքին է, քաղաքի պարիսպներից դուրս եղած ամբողջ հողը՝ թուրք զավթիչների։ Վերջին կայսեր տիրապետությունը հիմա ձեռքի ափի չափ բան է, եղած-չեղածը վիթխարի մի պարիսպ, եկեղեցիներ ու պալատներ և մեկ էլ տների մի կուտակում, մի խոսքով այն, ինչ կոչվում է Բյուզանդիոն։ Այն քաղաքը, որ մի անգամ արդեն մինչև հատակը կողոպտել էին խաչակիրները, որ կիսով չափ դատարկվել էր ժանտախտի համաճարակից, հալումաշ էր եղել նոմադների արշավանքներից մշտապես պաշտպանվելու կարիքից, որ բաժանբաժան էր եղել ազգային և կրոնական երկպառակություններից, այդ քաղաքն այժմ ի վիճակի չէ ձեռք բերելու ո՜չ զինվորներ, ո՜չ արիություն, որպեսզի սեփական ուժերով պաշտպանվի թշնամուց. այն թշնամուց, որ բոլոր կողմերից վաղուց ի վեր քաղաքն առել է իր ճանկերի մեջ. Բյուզանդիայի վերջին կայսր Կոստանդինոս Դրագաշի ծիրանին հիմա հողմահարված թիկնոց է դարձել, նրա թագը՝ բախտի խաղալիք։ Բայց հենց այն պատճառով, որ թուրքերով արդեն շրջապատված Բյուզանդիոնը արևմտյան աշխարհի կողմից սրբագործված է իր ընդհանուր հազարամյա կուլտուրայով, այդ քաղաքը Եվրոպայի համար ծառայում է ասես իբրև պատվի խորհրդանիշ. միայն այն դեպքում, եթե քրիստոնեությունը համախմբվելով պաշտպանի իր վերջին, արդեն փլվող պատվարն Արևելքում՝ միայն այդ դեպքում Սուրբ Սոֆիան կարող է մնալ իբրև հավատի բազիլիկա, իբրև արևելահռոմեական քրիստոնեության վերջին և սքանչելագույն տաճար։

Կոստանդինոսն իսկույն տեսնում է վտանգը։ Զանսալով Մահմուդի բոլոր խաղաղասիրական ճառերին, նա պաշարվում է միանգամայն հասկանալի երկյուղով և սուրհանդակ սուրհանդակի ետևից առաքում է Իտալիա, սուրհանդակներ՝ Վենետիկ, սուրհանդակներ՝ Ջենովա, խնդրելով

թիանավեր և զինվորներ։ Բայց Հռոմը տատանվում է, Վենետիկը նույնպես՝ քանի որ Արևմուտքի կրոնի և Արևելքի կրոնի միջև դեռ էլի բաց է մնում դավանաբանական նախկին անդունդը։ Հունական եկեղեցին ատում է Հռոմեականը, և նրա պատրիարքը հրաժարվում է ի դեմս պապի ճանաչել գերագույն հովվապետին։ Ճիշտ է, վրա հասնող թուրքական վտանգի առաջ երկու տաճարները՝ Ֆեռարայի և Ֆլորենցիայի տաճարները, վաղուց արդեն վճիռ են ընդունել երկու եկեղեցիները միավորելու մասին, և դրա դիմաց Բյուզանդիոնին օգնության խոստում է տրված ընդդեմ թուրքերի։ Բայց հաղիվ էր վտանգը մի քիչ հեռու քաշվել իրենցից, երբ հունական սինոդները դեմ եղան դաշնագիրն ուժի մեջ դնելուն։ Եվ հիմա միայն, երբ Մահմուդը սուլթան դարձավ, կարիքը գերակշռեց ուղղափառ հոգևորականության համառությանը. օգնության խնդիրքի հետ Բյուզանդիան Հռոմ է առաքում գիջում անելու իր պատրաստակամությունը։ Եվ ահա թիանավերը բեռնվում են զինվորներով ու ռազմամթերքով, բայց նավերից մեկով գալիս է նաև պապի պատվիրակը, որ պետք է հանդիսավոր տոնակատարությամբ հռչակի երկու եկեղեցիների հաշտությունը և ի լուր աշխարհի ազդարարի, որ նա, ով կհարձակվի Բյուզանդիոնի վրա՝ մարտահրավեր կնետի բովանդակ քրիստոնյա մարդկությանը։

ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՐԱԳԸ

Դեկտեմբերի այդ օրը նշանավորվեց վեհաշուք մի պատկերով. մարմարով, խճանկարով և թանկագին քարերով զարդարուն հրաշագեղ բազիլիկայում (այժմյան մեշիդին[1] նայելով, նրա երբեմնի շքեղությունը դժվար է նույնիսկ պատկերացնել) կատարվում էր հաշտության տոնահանդեսը։ Կայսրության բոլոր մեծատոհմիկ անձերով շրջապատված՝ հայտնվում է Կոստանդինոսը՝ բասիլևսը. նա և իր կայսերական թագն ասես գերագույն վկաներն ու երաշխավորներն են այն իրողության, որ հավերժական հաշտությունն ու խաղաղությունը չեն խախտվի։ Վիթխարի տաճարը լեփ-լեցուն է, տաճարը ճաճանչավորում են հազարավոր մոմեր. ատրուշանի առաջ եղբայրաբար պատարագում են պապական գահի պատվիրակ Իսիդորոսը և ուղղափառ պատրիարք Գրիգորը. այդ եկեղեցում առաջին անգամն է պապի անունը հորջորջվում աղոթքներում, առա-

---

1 Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիա քրիստոնեական տաճարը թուրքերը քաղաքը նվաճելուց հետո դարձրին մեշիդ։

ջին անգամն է հնչում և դեպի հավերժական տաճարի բարձրադիր կամարներն ալիքվում բարեպաշտ երգեցողությունը լատին և հույն լեզուներով, մինչ ցածում հաշտություն կնքած երկու եկեղեցիների սպասավորները հանդիսավորությամբ ներս են բերում սուրբ Սպիրիդոնի մասունքները։ Արևելքն ու Արևմուտքը, մեկ և մյուս դավանանքները թվում են առմիշտ կապված, և բազում-բազում տարիների հանցավոր երկպառակությունների հետո Եվրոպայի գաղափարը, Արևմուտքի իմաստը կարծես թե կենսագործվում է։

Բայց պատմության մեջ հաշտության և բանականության հաղթանակի րոպեները կարճատև են ու վաղանցուկ։ Եթե տաճարում, ընդհանուր աղոթքի մեջ բարեպաշտորեն ի մի են հյուսվում ձայները, ապա նրա պատերից դուրս, վանքի մենախցում, ուսյալ վանական Գեննադիոսն արդեն մերկացնում է լատիններին և ճշմարիտ հավատի դավաճանությունը։ Այն կապը, որ հազիվհազ ամրանում էր բանականության շնորհիվ, կրոնական ֆանատիզմն իսկույնևեթ քանդում է։ Ու եթե հունադավան հոգևորականությունը չի էլ մտածում անկեղծորեն ենթարկվելու մասին, ապա Միջերկրական ծովի մյուս ծայրին հռոմեական հոգևորականությունը մոռացության է տալիս օգնության խոստումը։ Ճիշտ է, մի քանի թիանավ է առաքվում և մի քանի հարյուր զինվոր, բայց հետո քաղաքը թողնվում է բախտի քմահաճույքին։

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՍԿՍՎՈՒՄ Է

Պատերազմ նյութելիս բռնակալները, եթե դեռևս լիակատար զինված չեն՝ հաճույքամբ են բարբաջում խաղաղության մասին։ Այդպես էլ Մահմուդը, գահ բարձրանալուց հետո, Կոստանդինոս կայսեր դեսպաններին ընդունելիս հենց նրանց է ամենից ավելի շռայլում իր ամենաբարեհաճ և հանգստաբեր խոսքերը։ Նա, հրապարակավ և հանդիսավոր, երդվում է աստծով ու մարգարեով, հրեշտակներով ու զուրանով, որ սրբությամբ կպահպանի բասիլևսի հետ կնքած դաշնագրերը։ Եվ միաժամանակ այդ երկերեսանին համաձայնագիր է կնքում հունգարների ու սերբերի հետ երեք տարի երկկողմանի չեզոքություն պահպանելու մասին, հենց այն երեք տարին, որոնց ընթացքում մտադիր է անարգել նվաճել Կոստանդնուպոլիսը։ Եվ իսկույն, խաղաղության մասին խոսքեր շռայլելուց և խաղաղություն պահպանելու երդումներ տալուց անմիջապես հետո, Մահմուդը երդմնազանց է դառնում և պատերազմ է հրահրում։

Մինչ այդ ժամանակները թուրքերին էր պատկանում Բոսֆորի միայն ասիական ափը, ուստի և բյուզանդական նավերն անարգել կարող էին Բյուզանդիոնից նեղուցով դուրս գալ Սև ծով, դեպի ցորենի սեփական շտեմարանը։ Մահմուդը նրանց առաջ փակում է այդ ուղին և, չփորձելով նույնիսկ արդարացնել իր գործողությունները, հրամայում է ամրոց կառուցել եվրոպական ափին, Ռումելի Հիսարի կողքին, ընդ որում ամենանեղ տեղում, ուր պարսկական կռիվների ժամանակներում քաջարի Քսերքսեսը անցավ նեղուցի մյուս ափը։ Մի գիշերում հազարավոր, տասնյակ հազարավոր հող փորողներ իջնում են Բոսֆորի եվրոպական ափը, ուր, դաշնագրի համաձայն, չպետք է ամրություն կառուցվեր (բայց բռնակալների համար ի՞նչ նշանակություն ունեն դաշնագրերը)։ Եվ նրանք սնունդ հայթայթելու համար ամայացնում են շրջապատի դաշտերը, ամրոցի կառուցման քար հայթայթելու համար ավերում ոչ միայն տները, այլև Սուրբ Միքայելի վաղուց ի վեր հռչակված եկեղեցին. սուլթանն ինքը, զոր ու գիշեր հանգիստ չառնելով, գլխավորում է կառուցումը, իսկ Բյուզանդիային մնում է անզորությամբ նայել, թե ինչպես են ջանում խեղդել իրեն՝ բոլոր օրենքներին ու դաշնագրերին հակառակ՝ փակելով իր ելքը դեպի Սև ծով։ Այն նավերը, որ պետք է անցնեին մինչև այժմ ազատ ջրերը, արդեն ենթարկվում են գնդակոծման։ Թեև դեռ պատերազմ չի ծագել, բայց իր զորությունը ցույց տալու առաջին հաջողակ փորձից հետո խաղաղասեր ձևանալու խաղերը սուլթանի համար դառնում են ավելորդ։ 1452 թվականի օգոստոսին Մահմուդը հավաքում է իր բոլոր փաշաներին ու աղաներին և բացահայտ հայտարարում Բյուզանդիոնի վրա գրոհելու և զավթելու իր մտադրությունը։ Հայտարարությանը հաջորդում է բռնությունը. թուրքական կայսրության բոլոր վայրերն են առաքվում մունետիկներ, նրանք հավաքում են զենք կրելու ընդունակ բոլոր տղամարդկանց, և 1453 թվականի ապրիլի 5-ին, հանկարծահաս փոթորկի ափ նետած ալիքի պես, անընդդրկելի օտոմանյան զորաբանակը հեղեղում է Բյուզանդիոնի առջև ընկած ամբողջ հարթավայրը, ընդհուպ մինչև նրա պարիսպները։

Իր զորքերի գլուխն անցած, շքեղ հագնված, ընթանում է հեծյալ սուլթանը։ Նա մտադիր է իր վրանը խփել ուղիղ ավետարանիչ Ղուկասի դարպասների առաջ։ Բայց նախքան իր գլխավոր շտաբի դրոշները կծածանվեն քամուց, նա հրամայում է գետնին աղոթքի գորգ փռել։ Բոկոտն կանգնում է նա գորգին, երեսը դեպի Մեքքա դարձրած, երեք անգամ կռանում է՝ ճակատը գետնին դիպցնելով, իսկ նրա թիկունքի կողմում գոյանում է շքեղաշուք մի տեսարան. հազար հազարավոր զինվորներ նույն-

պես կռանում են նույն կողմի վրա, նույն ռիթմով ասում են նույն աղոթքը, պաղատելով ալլահին, որ իրենց զորություն և հաղթանակ պարգևի։ Դրանից հետո միայն սուլթանը ոտքի է ելնում։ Ալլահին հնազանդվողը նորից դառնում է մարտակոչ նետող, աստծո խոնարհ ծառան՝ տիրակալ ու ռազմիկ, և ճամբարով մեկ շուտափույթ ցրվում են նրա սուրհանդակները, որպեսզի թմբկահարությունն ու շեփորահարությունը սկսվելուն պես ազդարարեն՝ քաղաքի պաշարումն սկսվա՛ծ է։

ՊԱՐԻՍՊՆԵՐՆ ՈՒ ԹՆԴԱՆՈԹՆԵՐԸ

Բյուզանդիոնը միայն պարիսպներ ունի, դրանք են նրա ուժն ու փրկությունը. ոչինչ այլևս չի մնացել նրա երբեմնի աշխարհակալ հզորությունից, բացի փառավոր ու երջանիկ ժամանակների այդ ժառանգությունը։ Քաղաքի եռանկյունին պատված է եռաշերտ զրահով։ Ներքևում քարակոփ պարիսպները քաղաքը պաշտպանում են թեների՝ Մարմարա ծովի և Ոսկեղջյուրի կողմից. իր վիթխարի զանգվածով պատնեշը տարածվում է դեպի հարթավայրը. դա այսպես կոչված Թեոդոսիոսի պարիսպն է։ Հնուց անտի Կոստանդինոսը, գալիք վտանգները կանխատեսելով, Բյուզանդիոնը գոտևորել էր թերթաքարե պարսպով, իսկ Հուստինիանոսը շարունակել էր պատնեշը բարձրացնել ու ամրացնել։ Բայց Թեոդոսիոսն էր յոթ կիլոմետրանոց պարսպապատ ամրոց կառուցել, որի քարակուռ զորության մասին հիմա էլ կարելի է պատկերացում կազմել նրա բաղեղապատ ավերակներին նայելով։ Հրակնատներով և ատամներով զարդարուն, ջրով լեցուն փոսորակով պատված, քառակուսի հզոր պահակային աշտարակներով պաշտպանված՝ ամրոցը ձգվում էր երկու և երեք զուգահեռ շարքերով, և ամեն մի թագավոր, մի ամբողջ հազարամյակի ընթացքում, լրացրել ու նորոգել է քաղաքը պաշտպանող այդ վիթխարի ամրոցը։ Այդ հոյաշեն միջնաբերդը այն ժամանակ համարվում էր կատարյալ անմատչելիության խորհրդանիշ։ Ինչպես հնում բարբարոսական անզսպելի հորդաների և հեղեղի պես վրա տվող թուրքական ջոկատների առաջ, այնպես էլ հիմա այդ քառակուսի զանգվածները թվում են անխոցելի մինչև օրս հորինված ռազմի սարքերի դիմաց. ամեն տեսակի բաբաններ, քարաձիգ գործիքներ և խոյերի, նույնիսկ վերջերս ստեղծված հրանոթների ու հրասանդերի նետած ականները անզորությամբ թափվում են՝ այդ ուղղագիծ հարթությանը դիպչելով։ Ոչ մի եվրոպական քաղաք չի պաշտպանված ավելի ամուր և հուսալի, որքան Կոստանդնուպոլիսը՝ իր Թեոդոսիոսի պարսպով։

Մահմուդին ավելի, քան մեկ ուրիշին հայտնի է, թե որքան հզոր է ու հուսալի այդ պարիսպը։ Եվ բազում ամիսներ ու տարիներ իր անքուն գիշերներին ու երազներում նրա միտքը սևեռված է այն նպատակին, թե ինչպես հաղթի անհաղթելին, ինչպես խորտակի անխորտակելին։ Նրա սեղանին օր-օրի ավելանում է թշնամական ամրությունների չափերն ու ձևերը ցույց տվող գծագրերի կույտը։ Նրան քաջ հայտնի է պարսպի և՛ մեկ, և՛ մյուս կողմում գտնվող ամեն մի հողաթումբ, ամեն մի զառիվայր, ամեն մի ջրատար առու, և նրա ինժեներներն իր հետ միասին մշակել են բոլոր մանրամասները։ Բայց նրանց հիասթափություն է պատել. բոլոր հաշվումները ցույց են տալիս, որ գոյություն ունեցող ռազմի սարքերով Թեոդոսիոսի պարիսպը խորտակել հնարավոր չէ։

Ուրեմն պետք է նոր հրանոթներ գործի դնել։ Դրանք պետք է լինեն ավելի երկարափող, ավելի հզոր, ավելի հեռահար, քան մինչ այդ ռազմի արվեստին հայտնի հրանոթները։ Եվ նետվող արկերն էլ պետք է ուրիշ լինեն՝ ավելի ամուր քարից, ավելի ծանր, հզոր ու խորտակիչ, քան մինչ այդ եղածները։ Այդ անմատչելի պարիսպը խարխլելու համար պետք է հնարել նոր հրետանի, ուրիշ ելք չկա, և Մահմուդը հայտարարում է, որ պատրաստ է ամեն գնով ստեղծել հարձակման նոր միջոցներ։

Ամե՛ն գնով. այսօրինակ հայտարարությունն ինքնին արդեն բորբոքում է ստեղծագործ, կենդանի ուժերը։ Եվ ահա, պատերազմ հայտարարելուց շատ չանցած, սուլթանի մոտ է գալիս հունգար Ուրբասը կամ Օրբասը, որ հայտնի էր իբրև հրետանու ամենափորձված և ամենահնարամիտ վարպետ։ Ճիշտ է, նա քրիստոնյա է և քիչ առաջ իր ծառայություններն առաջարկել էր Կոստանդինոս կայսրին, բայց մտածելով, և իրավամբ, որ սուլթանն իրեն ավելի լավ կվարձատրի և իր արվեստը ցույց տալու համար ավելի համարձակ խնդիրներ կառաջադրի, նա հայտարարում է, թե պատրաստ է, անսահմանափակ միջոցներ ստանալու դեպքում, ձուլել այնպիսի վիթխարի թնդանոթ, որի նմանը աշխարհում դեռ չի եղել։ Սուլթանը, որին, ինչպես մի միակ մտքով բռնված ամեն մարդու, ոչ մի գին չափազանց չի թվում, իսկույնևեթ նրան տրամադրում է կամեցած թվով բանվորներ և Ադրիանապոլիս է հասցնում հազարավոր սայլ պղինձ։ Հրետանագործը մեծ ջանքերով կավից ձուլման կաղապար է սարքում՝ գործի դնելով ջրմխում կատարելու գաղտնի միջոցներ։ Միայն դրանից հետո կարող է սկսվել պղնձի հալված զանգվածի ձուլումը։ Այդ խնդիրը հաջողվում է ի կատար ածել։ Հրանոթի վիթխարի փողը, ամենամեծը մինչ այդ աշխարհում ձուլվածներից, դուրս է բերվում

կաղապարից և սառեցվում, բայց նախքան առաջին փորձարկումը Մահմուդը մունետիկներ է ուղարկում ամենուրեք, որ կատարվելիքի մասին նախազգուշացնեն հղի կանանց։ Ու երբ հրեշավոր թնդյունով, ասես կայծակի փայլով հրավառված, նրա երախը դուրս է նետում քարե հզոր գունդը և այդ առաջին ու միակ փորձը խարխլում է մոտակա պարիսպը՝ Մահմուդն անհապաղ հրաման է արձակում ստեղծել նույնքան վիթխարի հրանոթներից բաղկացած մի ամբողջ մարտկոց։

Առաջին մեծ «քարանետ մեքենան», ինչպես հետագայում դա կկոչեն երկյուղած հույն պատմագիրները, վերջապես ստեղծվում է։ Բայց առաջ է գալիս էլ ավելի մեծ դժվարություն. այդ հրեշը, պղնձաձույլ այդ վիշապն ինչպե՞ս քարշ տալ ամբողջ Թրակիայով և հասցնել մինչև Բյուզանդիոնի պարիսպները։ Եվ սկսվում է մի ողիսական, որ ոչնչի հետ չի կարելի համեմատել. մի ամբողջ ժողովուրդ, մի ամբողջ զորաբանակ երկու ամսվա ընթացքում առաջ են մղում չափից դուրս երկարավիզ այդ համառ հրեշին։ Հեծյալ ջոկատներն առջևից, իբրև մշտական պահնորդներ, պետք է պաշտպանեն այդ գանձը հնարավոր հարձակումներից։ Նրանց հետևում են բազմահարյուր, գուցեև բազմահազար մարդիկ, որ տքնում են զոր ու գիշեր՝ փորում են հողը և տեղափոխում սայլերով, որպեսզի վերացնեն այդքան ծանրաքարշ տրանսպորտի առաջ եղած բոլոր անհարթությունները, իսկ նա իր ետևից վերստին ավերում է ճանապարհը։ Անիվների վրա դրված այդ բերդին լծված է հինգ հարյուր զույգ եզ, իսկ սոնու վրա, ինչպես մի ժամանակ նշանավոր կոթողը Եգիպտոսից Հռոմ բերելիս, դարսված են հրանոթների վիթխարի փողերը։ Ըստ որում, դրանց ծանրությունը խնամքով տեղաբաշխված է. երկու հարյուր մարդ աջ ու ձախ կողմերից անխոնջ կերպով հավասարակշռում են սեփական ծանրությունից ճոճվող վիթխարի զանգվածը, իսկ հիսուն սայլագործ ու ատաղձագործ շարունակ փոխում կամ յուղում են փայտե գլանները, պնդացնում են հենարանները, կամուրջներ են գցում. ամենքը հասկանում են, որ միայն քայլ առ քայլ, դանդաղ վարգով կարող է այդ անվերջանալի քարավանը առաջ շարժվել լեռնաշղթաների վրայով ու տափաստանի միջով։ Հավաքվում են շրջակա գյուղերի գեղջուկները և զարմանք կտրած նայում պղնձաձույլ հրեշին, որին, իբրև պատերազմի աստծու, երկրից երկիր են տեղափոխում նրա քուրմերն ու սպասավորները։ Բայց շատ չանցած, նրա հետքերով քարշ են տալիս և իր եղբայրակիցներին՝ նույնպես պղնձաձույլ, դուրս բերված իր կավաշեն մայրական գրկից։ Մարդկային կամքը մեկ անգամ չէ, որ անհնարինը դարձրել է հնարավոր։ Եվ ահա արդեն քսան կամ երեսուն նույնպիսի հրեշներ,

իրենց կլորավուն սև երախները բաց արած, դարձել են դեպի Բյուզանդիոնը։ Ծանր հրետանին մուտք գործեց պատերազմների պատմություն, և սկսվեց մենամարտը Հռոմեական Արևելքի կայսրների հազարամյակներ կանգուն միջնաբերդի և նոր սուլթանի նոր հրետանու միջև։

ՎԵՐՍՏԻՆ ԾԱԳՈՒՄ Է ՀՈՒՅՍԸ

Դանդաղ, համառ, անկասելի՝ Մահմուդի հրանոթները շողափայլ կծոցներով հոշոտում են ու փշրում Բյուզանդիոնի պարիսպը։ Հրանոթներից յուրաքանչյուրն առայժմ կարող է ամեն օր արձակել ոչ ավելի, քան վեց-յոթ կրակոց։ Օր-օրի սուլթանը տեղադրում է նորանոր հրանոթներ, և ամեն մի կրակոցի հետ փոշու ամպեր են բարձրանում, ու նորանոր ճեղքեր են բացվում քարակոփ պարսպի մեջ։ Ճիշտ է, պաշարվածները գիշերով այդ ճեղքերը փակում են փայտի սեպերով, թեև սեպերը գնալով պակասում են, ինչպես նաև քաթանի կտորտանքներից սարքված գնդերով, բայց և այնպես հիմա արդեն պաշարողները երբեմնի անմատչելի միջնաբերդի դեմ չէ, որ կռվում են։ Եվ պարսպի ետևում ութ հազար պաշարվածները սոսկումով են մտածում այն ճակատագրական պահի մասին, երբ Մահմուդի հարյուր հիսուն հազար ռազմիկները վրճռական գրոհի կելնեն և կնետվեն ճեղքեր տված պարսպի վրա։

Ժամանակն է, վաղուց ժամանակն է, որ քրիստոնեական աշխարհը մտաբերի տված խոստումը. կանանց բազմությունները երեխաների հետ եկեղեցիներում օրերով ծունկ են չոքում սուրբ մասունքների առաջ, իսկ զինվորները պահնորդային աշտարակներից զոր ու գիշեր նայում են հեռուն՝ թուրքական նավերով լեցուն Մարմարա ծովում չի՞ երևում արդյոք Հռոմի պապի խոստացած կամ վենետիկյան պահեստային նավատորմիղը։

Վերջապես ապրիլի 20-ի ժամը 3-ին բռնկեց ազդանշանը։ Հորիզոնում առագաստներ նշմարվեցին։ Ճիշտ է, դա այն հզոր քրիստոնեական նավատորմը չէ, որ երազում էին պաշարվածները, բայց և այնպես քամին դանդաղորեն դեպի ափ է մղում ջենովական երեք մեծ նավ, իսկ ետևից ցորենով բարձված մի փոքր բյուզանդական նավ, որ շրջապատված է այդ երեքի պաշտպանությամբ։ Իսկույնևեթ ամբողջ Կոստանդնուպոլիսը հավաքվում է առափնյա ամրությունների մոտ՝ օգնության հասնողներին ցնծագին ընդունելություն ցույց տալու համար։ Բայց նույն այդ պահին Մահմուդը թռչում է ձիու թամբին, իր ծիրանափայլ վրանի մոտից քառատրոփ սուրում դեպի ցած, դեպի նավահանգիստ,

Ուր խարիսխ էր նետել թուրքական տորմիղը, և հրաման է արձակում ամեն գնով խանգարել նավերին Բյուզանդիոնի նավահանգիստը՝ Ոսկեղջյուր մտնել։

Թուրքական տորմիղը բաղկացած է հարյուր հիսուն փոքր նավերից, և անմիջապես լսվում է մի քանի հազար թիակների ճողփյունը։ Աբորդաժային կեռեր, կրականետեր և պարսատիկներ ունեցող հարյուր հիսուն նավերը դժվարությամբ մոտենում են չորս գալիոններին, բայց, ուժեղ հողմից մղվելով, այդ հզոր նավերն առաջ են ընկնում և իրենց տակովն անում թուրքական նավերը, որոնց միջից ճիչեր, աղմուկ ու կրակոցներ են լսվում։ Փքուն, կլորավուն առագաստներով վսեմաշուք, հարձակվողների հանդեպ արհամարհանքով լեցուն՝ հաղթանակած նավերը մոտենում են Ոսկեղջյուրի հուսալի նավահանգստին, որի հռչակավոր շղթան, ձգված Ստամբուլից մինչև Գալաթա, դեռ երկար կծառայի նրանց գրոհներից ու հարձակումներից պաշտպանելու համար։ Չորս գալիոնը գրեթե հասնում են իրենց նպատակին. առափնյա ամրությունների մոտ խռնված հազարավոր մարդիկ կարող են ամեն մեկի դեմքը տեսնել առանձին-առանձին, կանայք ու տղամարդիկ արդեն ծնկի են գալիս, որ աստծուն ու նրա սրբերին փառք տան փրկություն բերելու համար, արդեն զրնգում է նավահանգստային շղթան, որ բացվի և, քաղաքը շրջափակումից ազատելով, ներս թողնի փրկարար նավերին։

Եվ հանկարծ կատարվում է մի ահավոր բան։ Քամին անսպասելիորեն դադարում է։ Ասես մագնիսական ուժի զորությամբ չորս նավն էլ մեխվում են իրենց տեղում, ուղիղ ծովի մեջ. պարսատիկի հազիվ մի քանի նետման տարածություն է նրանց բաժանում փրկարար նավահանգստից։ Եվ թուրքական թիանավերի ամբողջ ոհմակը վայրենի, հաղթական ճիչերով նետվում է տեղում գամված չորս նավի վրա, որ չորս աշտարակի պես մնացել են ծովածոցում անշարժ տնկված։ Եղջերուից կառչած որսորդական շների պես, մանր նավերը կախվում են մեծ նավերից։ Թուրքերը կացիններով ջարդում են մեծ նավերի կողերը, որ ջրասույզ անեն։ Նորանոր խմբեր են մագլցում խարսխաշղթաներով՝ առագաստների վրա ջահեր նետելով, որ այրեն նավերը։ Թուրքական արմադայի նավապետն իր ծովակալային նավը վճռաբար ուղղում է ցորենով բարձված գալիոնի վրա, որ խոյահարի նման։ Նավերն արդեն կցվել են միմյանց իբրև շղթայի երկու օղակ։ Ճիշտ է, բարձրադիր նավակողերով ու սաղավարտներով պաշտպանված ջենովական նավաստիները դեռ կարող են ետ մղել վեր մագլցող թուրքերին, նրանք դեռ կարողանում են թուրքերին ետ քշել կեռերով, քարերով և հունական կրակով։ Բայց շատ

չանցած գալիս է այդ պայքարի վախճանը։ Ուժերը շատ են անհավասար։ Ջենովական նավերը դատապարտված են կործանման։

Ի՜նչ ահավոր պատկեր այն հազարավոր մարդկանց համար, որ հավաքվել են քաղաքի պարիսպների մոտ։ Դա կատարվում է նույնքան մոտ, ինչպես կրկեսի հրապարակում, երբ ժողովուրդը հետևում է արյունալի մենամարտերին, այնքան տանջալիորեն մոտ, որ բազմությունն աչքի առաջ տեսնում է ծովամարտը՝ իր պաշտպանների անխուսափելի կործանումը, քանի որ ամենաշատը ևս երկու ժամ՝ և չորս նավն էլ պարտված կլինեն ծովային մարտում։ Ջուր եղավ բարեկամների գալուստը, զո՜ւր։ Հույները, կանգնած Կոստանդնուպոլսի ամրությունների վրա, իրենց եղբայրներից հեռու այնքան միայն, որ նետված քարը կըհասներ, սեղմում են բռունցքները ապարդյուն ցասումով, քանի որ ոչընչով չեն կարող օգնել իրենց փրկարարներին։ Ոմանք էլ իրենց մոլեգին շարժումներով ջանում են ոգեշնչել բարեկամներին։ Մյուսները, ձեռքները երկինք կարկառած, հրաշք գործելու աղաչանք են անում Քրիստոսին, Միքայել հրեշտակապետին և նրանց վանքերի ու տաճարների բոլոր սրբերին, որ այսքան դարեր պահապան են եղել Բյուզանդիոնին։ Բայց հակադիր ափին, Գալաթայում, թուրքերն էլ իրենց հերթին են նույնքան ջերմեռանդ աղոթում, որ հաղթանակն իրենց զորքին շնորհվի. ծովն ասես կրկեսի հրապարակ է դարձել, ծովամարտը՝ գլադիատորների կռիվ։ Սուլթանն ինքը քառատրոփ սուրացել է ծովափ։ Իր փաշաներով շրջապատված, նա այնքան է խորացել ջրի մեջ, որ զգեստը թրջվել է և, ձեռքի ափերը շեփոր դարձրած, իր զինվորներին ահեղ հրաման է տալիս գրավել քրիստոնեական նավերը ինչ գնով էլ լինի։ Եվ ամեն անգամ, երբ թուրքական նավերից մեկին ստիպում են ետ քաշվել, կեռ յաթաղանը թափահարելով նա հայհոյում ու սպառնում է իր ծովակալին. «Եթե չհաղթես՝ կենդանի չվերադառնաս»։

Քրիստոնեական չորս նավ դեռ դիմանում էին, բայց ծովամարտը մոտենում է վախճանին. նետելու ականները, որոնցով քրիստոնյաները ետ են մղում թուրքական նավերը, սպառվելու վրա են, նավաստիները հոգնել են հիսուն անգամ գերակշիռ ուժերի դեմ բազմաժամ կռիվ մղելուց։ Օրը թեքվում է, արևը մայր է մտնում։ Եվս մի ժամ, և նավերին, եթե նույնիսկ մինչ այդ թուրքերը նրանց աբորդաժի չվերցնեն, հոսանքը կքշի դեպի հանդիպակաց ափը, որ գրավել է թշնամին։ Նրանք կործանվա՜ծ են, կործանվա՜ծ, կործանվա՜ծ։

Բայց ահա տեղի է ունենում այն, ինչ Բյուզանդիոնի կողմի հուսալքվող, ճիչ ու կական բարձրացնող բազմությանը հրաշք է թվում։ Հան-

կարծ ծովը հուզվում է թեթևակի, քամի է բարձրանում։ Եվ չորս գալիոնների թոշնած առագաստները իսկույն լցվում են, ուռճանում, մեծանում, դառնում կլորավուն։ Քամին, բաղձալի, փրկարա՞ր քամին վերջապես զարթնեց։ Գալիոնների նավախելերը բարձրանում են հաղթականորեն, առագաստները ուռճեցրած, հանկարծակի մղումով առաջ են շարժվում և, հակահարձակման անցնելով, խորտակում են չորս բոլորը վիտացող թուրքական նավերը։ Նրանք աղատվել են արդեն, նրանք փրկված են։ Հազարավոր բազմության ցնծագին աղաղակների ուղեկցությամբ ապահով նավահանգիստ է մտնում առաջին նավը, հետո երկրորդը, հետո երրորդը, հետո չորրորդը. փակոցային շղթան, զրնգալով, վերջապես բարձրանում է, իսկ թուրքական նավերի վտառը, այլևս արդեն անօգնական, ծովածոցով մեկ ցիրուցան, մնում է ետևում։ Եվ մոայլ, հուսահատության մատնված քաղաքի վրայով մի անգամ ևս շառագույն ամպի նման անցնում է հույսի ցնծությունը։

ՆԱՎԱՏՈՐՄԻՂՆ ԱՆՑՆՈՒՄ Է ԼԵՌԱՆ ՎՐԱՅՈՎ

Միայն մի գիշեր է տևում պաշարվածների անզուսպ հրճվանքը։ Բայց չէ որ գիշերը միշտ էլ բորբոքում է մեր երևակայությունը և մեր հույսերը պարուրում տենչանքների քաղցր թույնով։ Մի գիշեր միայն պաշարվածներն իրենց փրկված և ապահով են համարում։ Չէ որ այնպես, ինչպես այդ չորս նավը բարեհաջող տեղ հասան՝ զինվորներ և պարենամթերք բերելով,—երաղում են Կոստանդնուպոլսի բնակիչները,—այդպես էլ շաբաթ առ շաբաթ նորերը կգան. Եվրոպան իրենց չի մոռացել։ Եվ նրանք, վաղաժամ հույսերի փարած, քաղաքն արդեն տեսնում են պաշարումից ազատ, իսկ ոսոխին՝ անարգված ու ջախջախված։

Մահմուդը նույնպես երազող է, բայց ուրիշ բնույթի երազող, շատ ավելի հազվագյուտ երևույթ. նա մեկն է այն մարդկանցից, որ կամքի ուժով կարողանում են կենսագործել երազանքը։ Եվ նույն այն ժամանակ, երբ գալիոնները, Ոսկեղջյուրի նավահանգիստը հասնելով, իրենց արդեն ապահով են կարծում, սուլթանը հղանում է մի ծրագիր, այնքան աներևակայելիորեն հանդուգն, որ պատերազմների պատմության մեջ, առանց հոգուն մեղք անելու, կարելի է հավասարեցնել Հաննիբալի և Նապոլեոնի ամենից անվեհեր գործերին։

Բյուզանդիոնը, ինչպես ոսկեղեն պտուղ, ընկած է սուլթանի առջև, բայց սա չի կարողանում տիրանալ նրան։ Գրոհելու և տիրանալու գլխավոր խոչընդոտը խորունկ ծովածոցն է։ Ոսկեղջյուրը կույրաղիքի նման

մի ծովախորշ է, որ մի թևից պահում է Կոստանդնուպոլիսը։ Այդ ծովախորշը թափանցել անհնար է փաստորեն, քանի որ նրա մուտքի մոտ ընկած է ջենովական Գալաթա քաղաքը, որի հանդեպ Մահմուդը պարտավոր է չեզոքություն պահել, իսկ այնտեղից ծովի վրայով մինչև թշնամական քաղաքը ձգվում է շղթայափակոցը։ Ուստի և սուլթանի տորմիղը չի կարող ճակատային հարվածով ծովախորշը մտնել. միայն և միայն ներքին ավազանի կողմից, այնտեղից, ուր վերջանում է ջենովական սահմանը, կարելի է հարձակվել ու տիրել քրիստոնեական նավերին։ Բայց տորմիղն ինչպե՞ս նետել ներքին ծովախորշը։ Իհարկե, կարելի է նավերն այնտեղ սարքել և նոր տորմիղ ստեղծել։ Բայց դա շատ ամիսներ կպահանջի, իսկ անհամբեր սուլթանն անկարող է սպասել։

Եվ այստեղ Մահմուդի գլխում հանճարեղ միտք է ծագում։ Արտաքին ծովից, ուր նրա տորմիղը կանգնած է անօգուտ, նավերը մանգաղաձև թերակղզու վրայով քարշ տալ մինչև Ոսկեղջյուրի ներքին ծովախորշը։ Լեռնային թերակղզու վրայով հարյուրավոր նավեր տեղափոխելու հանդուգն միտքն առաջին հայացքից այնքան անհեթեթ ու անգործադրելի է թվում, որ և՛ բյուզանդացիները, և՛ Գալաթայի ջենովացիները դրան նույնքան նվազ տեղ են հատկացնում իրենց ստրատեգիական զուգակշռում, որքան հռոմեացիները, ապա և ավստրիացիները՝ Ալպերի վրայով Հաննիբալի ու Նապոլեոնի սրընթաց անցումին։

Բովանդակ երկրային փորձն ասում է, որ նավերը կարող են միայն ջրով անցնել, բայց նավատորմը երբեք չի անցել լեռան վրայով։ Սակայն բոլոր ժամանակներում դիվային կամքի նշանը եղել է հենց այն, որ անհնարինը դարձնի հնարավոր, և ռազմի հանճարը մշտապես ճանաչվում է ըստ այնմ, թե ինչպես է պատերազմի ընթացքում արհամարհում պատերազմ վարելու սովորական եղանակները և հարկավոր պահին փորձված մեթոդները փոխարինում է հանպատրաստից ստեղծագործությամբ։

Եվ ահա սկսվում է ռազմական մի կամպանիա, որ հազիվ թե կարելի է համեմատել ռազմի պատմության էջերում հանդիպող որևէ դրվագի հետ։ Մահմուդը գաղտնի հրաման է տալիս անհամար քանակությամբ գերաններ բերել, հյուսները դրանցից սահնակներ են շինում, և հետո նավերը դնում են դրանց վրա։ Միաժամանակ հազարավոր մարդիկ գործի են անցնում, որպեսզի տրանսպորտի առաջ ըստ հնարավորին լավ հարթեն այն նեղ արահետը, որ պիտի անցներ Բերայի բարձունքի եզրով դեպի վեր և վար։ Այդքան մեծաքանակ բանվորների կուտակումը թշնամուց թաքցնելու համար սուլթանն օր ու գիշեր ծովային

հրասանդներով ահաբեկող գնդակոծություն է կատարում Գալաթա չեզոք քաղաքի վրայով. գնդակոծությունն ինքնին չունի որևէ իմաստ, բայց ունի այն նպատակը, որ շեղի թշնամու ուշադրությունը և թաքցնի նավերի ճամփորդությունը լեռների վրայով ու հովիտներով՝ մի ջրից մյուսը։ Ու մինչ թշնամին զբաղված է և հարձակում է սպասում միայն ցամաքից, թուրքերը նավերը դնում են առատորեն յուղված գլանների վրա, գոմեշների անհամար զույգեր քարշ են տալիս նավերը, իսկ նավաստիները պահում են կողքերից։ Այսպես, բարձունքի վրայով, թուրքերն անց են կացնում նավ նավի ետևից։

Ռազմական բոլոր խոշորագույն գործողությունների ժամանակ ամենից վճռականը անսպասելիությունն պահն է։ Այստեղ ևս մենք տեսնում ենք Մահմուդի ռազմական հանճարի ապացույցը։ Ոչ ոք չի կռահում նրա մտադրությունը։ «Իմ հղացումների մասին մորուքիս թեկուզ մի մազն իմանա՝ ես արմատից կպոկե՞մ այդ մազը»,— այսպես է խոսել մի անգամ այդ հանճարեղ և նենգավոր խորամանկը։ Եվ այն ժամանակ, երբ հրասանդների արձակված գնդերը դիպչում են Կոստանդնուպոլսի պարիսպներին՝ նրա հրամանն ի կատար ածելով, ապրիլի 22-ին յոթանասուն նավ անցնում են լեռների ու հովիտների, խաղողի այգիների ու հովիտների միջով ու հասնում մի ծովից մյուսը։

Հաջորդ առավոտյան բյուզանդացիներին թվում է, թե երազի մեջ են՝ թշնամական նավատորմը, ասես ուրուների ձեռքով թե առած ու տեղափոխված, դրոշներով ու նավաստիներով, լողում է իրենց ծովախորշում, որ համարում էին անմատչելի։ Նրանք դեռ տրորում են աչքերը՝ ջանալով կռահել, թե ինչպե՞ս կատարվեց այդ հրաշքը, իսկ մինչ այդ ծովախորշով պաշտպանված պարիսպների տակ արդեն լսվում է շեփորների, ծնծղաների ու թմբուկների ցնծագին ժխորը։ Եվ ամբողջ Ոսկեղջյուրը, Գալաթայի մոտի մի նեղ շեզոք տարածությունից բացի, ուր մեկուսացված է քրիստոնեական նավատորմը, այդ հանճարեղ գործողության շնորհիվ արդեն պատկանում է սուլթանին և նրա բանակին։ Հիմա արդեն նա կարող է իր զորքը նավերից կապված կամրջի վրայով անարգել գրոհի տանել ավելի թույլ ամրացված պարսպի վրա։ Դրանով սպառնալիքի տակ է դրվում պաշտպանության ավելի թույլ թևը, և պաշարվածների առանց այն էլ նոսր շարքերը ստիպված կլինեն ավելի ձգվել, ավելի ևս նոսրանալ։ Երկաթե բռունցքն ավելի ու ավելի է սեղմում իր զոհի պարանոցը։

ԵՎՐՈՊԱ, ՀԱՍԻ՛Ր ՕԳՆՈՒԹՅԱՆ

Պաշարվածները սին պատրանքներ չեն հյուսում այլևս։ Նրանք հասկանում են՝ որքան էլ ուժեր կենտրոնացնեն ճեղքված թևում, միևնույն է, չեն կարող երկար դիմանալ գնդակոծումներից ավերվող պարիսպների ետևում, ութ հազարը չի կարող դիմագրավել հարյուր հիսուն հազարին, եթե օգնության ձեռք չմեկնվի։ Բայց մի՞թե վենետիկյան սինյորը նավեր ուղարկելու հանդիսավոր խոստում չի տվել։ Մի՞թե Հռոմի պապը կարող է անտարբեր մնալ, երբ Սուրբ Սոֆիային, Արևմուտքի սրբազնագույն տաճարին, սպառնում է անհավատների մեջիդ դառնալու վտանգը։ Մի՞թե Եվրոպան չի հասկանում, որ ինչքան էլ գժտություններում արատավորված, որքան էլ վարկաբեկված ստոր կրքերի հարյուրավոր դրսևորումներով, հույներն, այսուամենայնիվ, վտանգ չեն ներկայացնում Արևմուտքի կուլտուրայի համար։ Բայց գուցեև,— իրենց մխիթարում են պաշարվածները,— արևմտյան նավատորմը, վաղուց ի վեր պատրաստ, հապաղում է առագաստ բանալ իրերի դրությանն անտեղյակ լինելու պատճառով, և նրանց շարժելու համար բավական է հասկացնել, թե այդ սպանիչ հապաղումն ի՞նչ ահեղ պատասխանատվություն է դրնում իրենց վրա։

Բայց ինչպե՞ս լուր տալ վենետիկյան նավատորմին։ Մարմարա ծովում վխտում են թուրքական նավերը. ամբողջ նավատորմը շարժել՝ նշանակում է կործանման դատապարտել նրան և, բացի այդ, պաշտպանները, որոնց մեջ ամեն մարդը հաշիվ է, երկու-երեք հարյուր զինվորից զրկվելով ավելի կթուլանան։ Ուստի և վճռում են վտանգել մի փոքր նավ, փոքրաթիվ անձնակազմով։ Ընդամենը տասներկու մարդ. եթե պատմության մեջ արդարությունը տիրապետեր՝ նրանց անունները հրուշակված կլինեին արգոնավորդների անուններից ոչ պակաս, բայց մենք նրանցից ոչ մեկի անունը չգիտենք. այդ տասներկուսը կատարում են հերոսական արարք։ Փոքրիկ մի բրիգանտինի վրա բարձրացնում են թշնամու դրոշակը։ Չճանաչվելու համար տասներկուսն էլ թուրքական զգեստ են հագնում և գլուխներին չալմա են դնում։ Մայիսի 3-ին, կեսգիշերին, կամացուկ իջեցնում են նավահանգստի արգելափակիչ շղթան։ Հազիվ է լսվում թիակների խլացված ճողփյունը, և անվեհեր բրիգանտինը, մթությունից օգտվելով, դուրս է գալիս նավահանգստից։ Եվ ինչ՝ հրաշքն ի կատար է ածվում. նավն առանց ճանաչվելու Դարդանելի միջով անցնում է էգեյան ծովը։ Եվ, ինչպես միշտ, անլուր քաջությունը կաթվածահար է անում հակառակորդին։ Թվում է, Մահմուդն ամեն ինչ

կանխատեսել էր, բայց նա չէր կարող պատկերացնել անգամ, որ իրենց միայնակ նավով տասներկու հերոս կհանդգնեին իր ամբողջ նավատորմիղի միջով անցնել այնպիսի քաջությամբ, որ հավասար էր արգոնավորդների քաջությանը։

Բայց ինչպիսի՜ ողբերգական հիասթափություն. Էգեյան ծովում չի նշմարվում և ոչ մի վենետիկյան առագաստ։ Ե՛վ Վենետիկը, և՛ Հռոմի պապը, բոլորը մոռացության են տվել Բյուզանդիոնը, բոլորը, տարված իրենց մանր ու չնչին, անհեռատես քաղաքականությամբ, արհամարհանքով լքել են նրան։ Մշտապես, նորից ու վերստին պատմության մեջ կրկնվում են այն ողբերգական պահերը, երբ եվրոպական մշակույթի պաշտպանության համար անհրաժեշտ է լինում մեծագույն կենտրոնացում և բոլոր ուժերի միասնություն, մինչդեռ իշխաններն ու պետությունները իրենց մանր ու չնչին մրցակցության մեջ ամենափոքր զիջում իսկ չեն ուզում անել։ Ջենովան՝ Վենետիկին, իսկ Վենետիկը Ջենովային ստվերելն ավելի կարևոր է համարում, քան գոնե մի քանի ժամով միանալը և ընդհանուր թշնամու դեմ արշավելը։ Եվ ահա ծովն ամայի է, ո՛չ մի քրիստոնեական նավ։ Հերոսները, իրենց ընկույզի կճեպի մեջ, հուսահատաբար թիավարում են հա թիավարում, մի կղզուց մյուսը հասնում։ Բայց նավահանգիստներն ամենուրեք գրավել է թշնամին, և ոչ մի բարեկամ նավ չի հանդգնում մտնել ռազմական գործողությունների ասպարեզ։

Ի՞նչ անել։ Տասներկուսից ոմանք կորցնում են հոգու արիությունը, որ միանգամայն բնական է։ Ի՞նչ միտք ունի վերադառնալ Կոստանդնուպոլիս և վերստին կտրել այդ վտանգավոր ուղին։ Միևնույն է, ոչ մի հուսալի լուր չեն կարող տանել յուրայիններին։ Գուցեև քաղաքն արդեն հանձնվել է։ Համենայն դեպս, եթե վերադառնան նրանց սպասում է մահը կամ գերությունը։ Բայց ի՜նչ սքանչելի են այն հերոսները, որոնց անունները ոչ ոքի հայտնի չեն. նրանց մեծ մասը վճռում է վերադառնալ Բյուզանդիոն։ Իրենց հանձնարարություն է տրված, և պարտավոր են կատարել։ Իրենց ուղարկել են լուր բերելու, և իրենք պարտավոր են լուր տանել հայրենիք, որքան էլ այդ լուրը ծանր լինի։ Եվ ահա փոքրիկ ու փխրուն նավը անվեհերաբար բռնում է տունդարձի ուղին՝ Դարդանելի և Մարմարա ծովի միջով, թշնամական նավատորմի արանքով։ Մայիսի 23-ին, մեկնելուց քսան օր հետո, երբ Կոստանդնուպոլսում վաղուց ի վեր հաշտվել են առաքված նավի կորստյան հետ, արդեն ոչ ոք չի մտածում նրանց վերադարձի և բերվելիք լուրերի մասին, պարիսպների վրա մի քանի ժամապահ թափահարում են դրոշները, քանի որ կտրուկ

թիավարումով փոքրիկ նավը սուրում է դեպի Ոսկեղջյուր։ Եվ թուրքերը, պաշարվածների ցնծության ձայները լսելով, զարմանքով նկատում են, որ իրենց դրոշակով և իրենց ջրերով անցած բրիգանտինը պատկանում է թշնամուն։ Նրանք բոլոր կողմերից շրջապատում են բյուզանդական նավը, որպեսզի հասցնեն բռնել՝ նախքան ապահով նավահանգիստ մըտնելը, բայց դա նրանց չի հաջողվում։ Կոստանդնուպոլսում մի պահ բարձրանում են ցնծության աղաղակներ։ Մարդիկ լի են այն հրճվալի հույսով, որ Եվրոպան մտաբերել է իրենց և նախապես մի քանի նավ է ուղարկել՝ իբրև օգնության նախակարապետներ։ Բայց հետո հայտնի է դառնում տխուր իրողությունը. քրիստոնեական աշխարհը մոռացության է մատնել Բյուզանդիոնը։ Պաշարվածները լքվել են, նրանք դատապարտված են կործանման, եթե իրենք իրենց չփրկեն։

ԳՐՈՀԻՆ ՆԱԽՈՐԴԱԾ ԳԻՇԵՐԸ

Ամենօրյա մարտերում անցած վեց շաբաթից հետո սուլթանը, վերջապես, կորցնում է համբերությունը։ Նրա հրանոթները շատ տեղերում արդեն քանդել են պարիսպը, բայց բոլոր գրոհները ետ են մղվել մեծ արյունահեղությամբ։ Զորավարն այժմ երկու հնարավորություն ունի միայն՝ կամ հրաժարվել պաշարումից, կամ անհամար փոքր գրոհներից հետո մեծ, վճռական գրոհի անցնել։ Մահմուդն իր փաշաներին ռազմական խորհրդի է կանչում, և նրա բռնկուն կամքը փարատում է ամեն տարակուսանք։ Մեծ, վճռական գրոհը նշանակվում է մայիսի 29-ին։

Սովոր եռանդով սուլթանը պատրաստվում է այդ գրոհին։ Նշանակվում է տոնակատարության օրը, երբ բոլոր հարյուր հիսուն հազար ռազմիկները, առաջինից մինչև վերջինը, պետք է կատարեն Իսլամի սահմանած բոլոր տոնական ծեսերը՝ յոթ լվացում և օրեկան երեք մեծ աղոթք։ Գեռևս մնացած վառոդն ու արկերը բերվում են հրանոթների մոտ՝ գրոհը նախապատրաստող ուժգնացված գնդակոծում սկսելու համար։ Գրոհի համար տարբեր տեղամասերում առանձին ջոկատներ են կարգվում։ Վաղ առավոտից մինչև ուշ գիշեր Մահմուդն իրեն ոչ մի ժամ հանգիստ չի տալիս։ Ոսկեղջյուրից մինչև Մարմարա ծով, վիթխարի ճամբարի ամբողջ երկարությամբ, նա անցնում է մի վրանից մյուսը, ամենուրեք խրախուսելով կարդում զորապետներին, ոգևորում ռազմիկներին։ Բայց, իբրև հմուտ հոգեբան, նա քաջ գիտե ինչով կարող է մինչև վերջ բորբոքել իր հարյուր հիսուն հազարանոց զորաբանակի մարտական ոգին. նա տալիս է արյունարբու մի խոստում, որ, ի պատիվ և անարգանք իրեն, կա-

տարում է ամբողջովին։ Մոլեգին թմբկահարության և շեփորահարության ուղեկցությամբ նրա մունետիկները հայտնում են այդ խոստումն աշխարհի չորս բոլորը. «Մահմուդը երդվում է ալլահի անունով, Մուհամեդի անունով և չորս հազար մարգարեների անունով, երդվում իր հոր՝ սուլթան Մուրադի հոգով, իր զավակների կյանքով և իր սրով, որ քաղաքն առնելուց հետո իր զորաբանակին շնորհում է երեքօրյա անսահմանափակ կողոպուտի իրավունք։ Այն ամենը, ինչ կա այդ պարիսպների ներսում՝ տնային իրեր և ամենայն բարիք, զարդեր և թանկագին քարեր, փող և գանձ, տղամարդիկ, կանայք, երեխաներ,— այս ամենը կպատկանեն հաղթանակած զինվորներին, իսկ ինքը՝ սուլթանը, հրաժարվում է ամեն ինչից, բացի արևելահռոմեական կայսրության այս վերջին պատվարը նվաճելու պատվից»։

Զինվորները մոլեգին ցնծությամբ են ընդունում արյունռուշտ խոստումը։ Ինչպես փոթորիկ, ցնծության կատաղի ժխորը և հազարավոր կոկորդներից ելած «ալլա՜հ-ի՛լ-ալլա՜հ» մոլագար աղաղակները սաստկանալով հասնում են մինչև երկյուղած քաղաքը։ «Ցազմա՛, յազմա՛»՝ «Կողոպտեցե՛ք, կողոպտեցե՛ք»՝ այս բառը դառնում է ռազմակոչ. այս բառն է հնչում թմբուկների կարկտահարության մեջ, շեփորների ոռնոցի և ծնծղաների ժխորի մեջ, և գիշերով ճամբարը դառնում է տոնական հրաբորբոք մի ծով։ Երկյուղը սրտերում, իրենց պատվարներին կանգնած, պաշարվածները տեսնում են, թե ինչպես ամբողջ հարթության մեջ և բլուրներին բռնկում են բյուրավոր ջահեր ու կրակներ, և թշնամին փողերի, սուլիչների, թմբուկների ու ծնծղաների ժխորի մեջ տոնում է իր հաղթանակը հաղթությունից առաջ։ Դա հիշեցնում է հեթանոսական քուրմերի չարագուշակ և աղմկալի ծիսակատարությունը զոհ մատուցելուց առաջ։ Բայց կեսգիշերին Մահմուդի հրամանով մի ակնթարթում հանգչում են բոլոր լույսերը, և մոլեգնությունից տաքացած ամբոխների հազարաձայն աղմուկը կտրվում է միանգամից։ Բայց այդ մղձավանջային խավարը և անսպասելի լռությունը իրենց ահեղ վճռականությամբ ավելի են ճնշում հուսալքված, ծանր ակնկալությունների սպասող հույներին, քան հրաբորբոք լույսերի մոլագար ցնծությունը։

ՍՈՒՐԲ ՍՈՖԻԱՅԻ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԱՐԱԳԸ

Պաշարվածներին այլևս պետք չեն ո՛չ դիտակալներ, ո՛չ հետախույզներ. առանց այն էլ գիտեն, թե ինչ է սպասվում իրենց։ Գիտեն, որ գրոհի հրամանը տրված է արդեն, և չտեսնված պատասխանատվու-

թյան ու չլսված վտանգների նախազգուշացումն ամպրոպաբեր ամպի նման կախվում է քաղաքի վրա։ Գժտություններով ու կրոնական երկպառակություններով մասնատված բնակչությունն այդ վերջին ժամերին բոլոր տարաձայնությունները հանկարծ մոռացության է տալիս։ Սովորաբար ծայրահեղ դժբախտությունն է միայն, որ աշխարհիս երեսին կարող է հանդես բերել մարդկային անսահման միասնության այդպիսի մի պատկեր. թող ամենքը գիտենան, թե իրենց ինչ արժեքներ է վիճակված պաշտպանել՝ հավատը, մեծաշուք անցյալը, համընդհանուր մշակույթը։ Բասիլևսը հրամայում է ի կատար ածել հուզիչ մի արարողություն. նրա հրամանով ամբողջ ժողովուրդը՝ և՛ ուղղափառները, և՛ կաթոլիկները, հոգևորականներն ու աշխարհականները, մանուկներն ու ծերերը շարվում են մի թափորի մեջ։ Ոչ ոք իրավունք չունի, ոչ ոք չի կամենում տանը մնալ՝ սկսած ամենահարուստից մինչև ամենից աղքատը. բոլորը շարվում են ընդհանուր թափորում՝ երկյուղածաբար «Kyrie Eleison» երգելով, և հանդիսավոր երթը նախ անցնում է քաղաքով, իսկ հետո նաև արտաքին ամրություններով։ Եկեղեցուց առնված սրբապատկերն ու մասունքները տանում են առջևից. ամենուրեք, ուր պարսպի մեջ ճեղք է բացված, սրբապատկեր են կախում. դրանք անհավատների գրոհը ետ կմղեն ավելի լավ, քան երկրային զենքերը։ Միաժամանակ Կոստանդինոս կայսրը ժողովում է սենատորներին, ազնվականներին ու զորապետներին, որպեսզի մի վերջին կոչով բորբոքի նրանց արիությունը։ Ճիշտ է, նա չի կարող, Մահմուդի նման, նրանց մեծամեծ ավարներ խոստանալ։ Բայց նա ոգեշունչ խոսքերով դրվատում է այն փառքն ու պատիվը, որ իրենք ձեռք կբերեն բոլոր քրիստոնյաների և բովանդակ արևմտյան աշխարհի համար, եթե կարողանան ետ մղել այդ վերջին ու վճռական գրոհը և կանխեն այն վտանգը, որ սպառնում է ամենքին, եթե չդիմանան արնախումների գրոհի առաջ։

Ե՛վ Մահմուդը, և՛ Կոստանդինոսը գիտեն, որ այդ օրը նախանշում է պատմության ընթացքը բազում դարերով։

Այնուհետև սկսվում է եղբափակիչ տեսարանը, ամենահրապուրիչ տեսարաններից մեկը, որ երբևէ տեսել է Եվրոպան՝ կործանման զմայլանքի մի անմոռանալի պատկեր։

Սուրբ Սոֆիայի տաճարում, դեռևս այն ժամանակ աշխարհիս ամենահոյակապ տաճարներից մեկում, որը եկեղեցիների միացման օրվանից լքված էր և՛ ուղղափառների, և՛ կաթոլիկների կողմից, հավաքվում են մահվան դատապարտվածները։ Կայսեր շուրջը խռնվել է ողջ արքունիքը, ազնվականությունը, հունական ու հռոմեական հոգևորականու-

թյունը, Ջենովայի և Վենետիկի զինվորներն ու նավաստիները, բոլորն ասպազենով և զինավառ։ Իսկ նրանց թիկունքում, երկյուղածությամբ ու լռին, ծնկի են եկել բյուրավոր մրմնջացող ստվերներ՝ մտատանջությամբ ու սարսափով համակված ժողովուրդը։ Եվ մոմերի լույսը, որ հազիվ է ցրում կամարների միջև խտացած մշուշը, ողողում է մի սիրտ, մի հոգի դարձած աղոթողների բազմությունը։ Ինքը՝ բովանդակ Բյուզանդիայի ոգին է այստեղ աղոթում աստծուն։ Եվ ահա հնչում է պատրիարքի հզոր ոգեկոչումը, որին պատասխան են տալիս երգչախմբերը։ Այս տաճարում վերստին հնչում է Արևմուտքի սրբազան ու հավերժական ձայնը՝ երաժշտությունը։ Հետո մարդիկ, և ամենից առաջ կայսրը, միմյանց ետևից մոտենում են զոհասեղանին՝ հավատի մխիթարանքն ստանալու համար։ Եվ հսկայական տաճարի պատերից անդրադարձվելով ու մինչև կամարների խորքը հասնելով՝ թնդագին ու հնչեղ ալիք է տալիս աղոթքի անլռելի ձայնը։

Արևելքի Հռոմեական կայսրության հոգեհանգստի վերջին պատարագն սկսվեց։ Քանզի քրիստոնեական հավատը վերջին անգամն է ապրում Հուստինիանոսի տաճարում։

Այս ցնցող ծիսակատարությունից հետո կայսրը միայն մեկ անգամ է կարճ ժամանակով վերադառնում իր պալատը, որպեսզի բոլոր հպատակներից ու սպասավորներից ներողություն խնդրի ամեն մի վիրավորանքի համար, որ երբևէ հասցրել է նրանց։ Ապա նա թռչում է նժույգի թամբին, ճիշտ և ճիշտ Մահմուդի՝ իր մեծ ախոյանի նման, և անցնում ամրությունների երկայնքով՝ իր զինվորներին ոգեշնչելու համար։ Չի լսվում և ոչ մի ձայն, ոչ մի սրի զնգոց։ Բայց միջնաբերդի ներսում՝ ապաստանած հազարավոր մարդիկ, հազարավոր խռովված հոգիներ սպասում են լուսաբացին և մահվան։

ԿԵՐԿԱՊՈՐՏ. ՄՈՌԱՅՎԱԾ ԴՈՒՌԸ

Կեսգիշերվա ժամին սուլթանը տալիս է դրոհի ազդանշանը։ Ծածանվում է սուլթանական վիթխարի դրոշը, և հարյուր հազարավոր մարդիկ «ալլա՜հ, ալլա՜հ-ի՛լ-ալլա՜հ» աղաղակելով դրոհի են նետվում՝ առած զենքեր, սանդուղքներ, պարաններ և պարիսպ մագլցելու կեռեր։ Նույն պահին հնչում են բոլոր թմբուկների մանրահարվածները, իսկ շեփորների, ծնծղաների ու սրինգների ականջ ծակող ձայները միանում են

մարդկանց ճիչերի և հրանոթների թնդյունի հետ՝ առաջ բերելով խլացուցիչ ժխորի փոթորիկ։

Սուլթանն առանց խնայելու պարիսպների վրա է նետում բաշիբոզուկների անվարժ ջոկատները։ Պաշարման ծրագրի մեջ բաշիբոզուկների կիսամերկ մարմինները պետք է հենարանի դեր կատարեն և հյուծեն ու թուլացնեն թշնամուն։ Դրանից հետո միայն նա պետք է ասպարեզ նետի իր հիմնական ուժերը, որոնք և պետք է տան վճռական հարվածը։ Մտրակի հարվածներից քշվելով, բաշիբոզուկները, հարյուրավոր սանդուղքներ առած, դիշերվա խավարում նետվում են առաջ։ Նրանք մագլցում են ատամնավոր պարիսպների վրա, նրանց ցած են գլորում, նորից են նետվում գրոհի, նորից ու վերստին, քանի որ ետ դառնալու հրնար չկա։ Միայն զոհ լինելու համար նախատեսված և արժեք չունեցող այդ մարդկային նյութի թիկունքում կանգնած հիմնական ուժերը նրան անդադրում քշում են գրոհի, դեպի ստույգ մահը։ Պաշտպանները դեռևս դիմադրավում են, նրանց զրահները դեռևս անխոցելի են իրենց վրա թափվող քարերի ու նետերի հանդեպ։ Բայց նրանց սպառնացող գլխավոր վտանգը (և այստեղ Մահմուդը չէր սխալվել իր հաշիվներում) հոգնածությունը պիտի լիներ։ Պաշարվածները ստիպված էին առանց դադար առնելու մարտնչել նորանոր թեթևազեն ստորաբաժանումների դեմ, վըտանգավոր դարձած մի տեղամասից մյուսը նետվել, երբ պարզվեց, որ իրենց ուժերի մեծ մասն արդեն սպառվել է։ Եվ այնուհետև, երբ երկժամյա կռվից հետո սկսվում էր լուսանալ, հաջորդ՝ այս անգամ արդեն թուրքերի ջոկատներն են նետվում գրոհի։ Պայքարն արդեն սպառնալի ընթացք է ստանում, քանի որ սրանք լավ վարժեցված, կարգապահ ռազմիկներ են, նույնպես զրահավորված են, բացի այդ՝ մեծաթիվ են և ուժով լեցուն, մինչդեռ քաղաքի պաշտպանները ստիպված են ներխուժման առաջն առնել մեկ մի տեղում, մեկ՝ մյուս։ Սակայն գրոհողներին դեռ կարողանում են ամենուրեք ետ մղել, և սուլթանն ստիպված է կռվի մեջ նետել իր վերջին, պահեստի ուժերը՝ ենիչերիներին, իր կադրային զորքերը, օտոմանյան ընտիր գվարդիան։ Ինքն է անձամբ գլխավորում տասներկու հազար ընտրովի այն լավագույն ռազմիկներին, որ կային ժամանակի Եվրոպայում։ Եվ, միահամուռ կանչ արձակելով, նրանք նետվում են հոգնատանջ հակառակորդի վրա։ Արդեն վաղուց ժամանակն է զարկելու քաղաքային բոլոր զանգերը և պարիսպների մոտ կանչելու թեկուզև որևէ չափով մարտունակ բնակիչներին, ժամանակն է նավաստիներին ցամաք կանչել նավերից, քանի որ իսկապես վճռական ճակատա-

մարտը հիմա պիտի բռնկի։ Ի դժբախտություն պաշարվածների, քարե գունդը ծանր վիրավորել է ջենովական զորքերի հրամանատար, անվեհեր կոնդոտյեր Ջոստինիանիին. նրան դեպի նավն են տանում, և դա մի պահ թուլացնում է պաշարվածների եռանդը։ Բայց ահա քառատրոփ սլանում է կայսրը, որպեսզի խանգարի ոսոխի ներխուժմանը, և հաջողվում է մի անգամ էլ դեն նետել գրոհողների սանդուղքները։ Գրոհի վճռականությանը հակադրվում է հուսահատ վճռականությունը ու մի պահ, հոգոցի պես կարճատև, թվում է թե Բյուզանդիան փրկված է, մեծագույն աղետը հաղթում է ամենամոլեգին հարձակմանը։

Եվ հանկարծ մի ողբերգական դրվագ, մեկն այն գաղտնախորհուրդ բոպեներից, որ երբեմն ծագում են պատմության անքննելի վճիռներում, մի հարվածով վճռում է Բյուզանդիայի ճակատագիրը։

Կատարվեց միանգամայն անհավատալին։ Արտաքին պարսպի մեջ բացված բազմաթիվ ճեղքերից մեկով, հարձակման գլխավոր կետի մոտ, մի քանի թուրք թափանցեցին։ Բայց նրանք վախենում էին ներքին պարսպին մոտենալ։ Ու երբ առանց որևէ մտադրության, հետախուզելով, նրանք թափառում էին ներքին և արտաքին պարիսպների միջև, նկատեցին, որ դարպասներից մեկը, ավելի փոքրը, որ կերկապորտ է կոչվում, անբմբռնելի մի անփութությամբ բաց է մնացել։ Ըստ էության դա մի դռնակ էր, որ խաղաղ ժամանակ ծառայում էր հետիոտնների համար, երբ գլխավոր դարպասները դեռևս փակ էին լինում։ Հենց այն պատճառով, որ այդ դռնակը չուներ ոչ մի ստրատեգիական նշանակություն, ընդհանուր տագնապի մեջ մոռացության էր մատնվել։ Եվ ենիչերիները, ի զարմանս իրենց, ահեղ պարսպաբերդի մեջ տեսնում են իրենց առջև հանգիստ բացված այդ դուռը։ Նրանք նախ կարծում են, թե դա ռազմի խորամանկություն է, որովհետև թվում է միանգամայն անհեթեթ, որ այստեղ կիրակնօրյա հանգստությամբ կարող էր բաց լինել քաղաքի կենտրոնը տանող մի դուռ, երբ բերդի ամեն մի ճեղքվածքի, ամեն մի բացվածքի, ամեն մի դարպասի առաջ լեռնակուտակ բարձրացել են հազարավոր դիեր, պաշարվածները տեգեր են նետում դեպի պաշարողները և նրանց վրա տաք-տաք թշշացող յուղ են լցնում։ Համենայն դեպս, ապահովության համար ենիչերիները համալրում են կանչում, և, ոչ մի դիմադրության չհանդիպելով, թուրքերի մի ամբողջ ջոկատ խուժում է ներս և թիկունքից հանկարծակի նետվում միամիտ պաշարվածների վրա։ Սրանցից մի քանիսը թուրքերին հանկարծ տեսնում են իրենց թիկունքում և, իրենց գլխին աղետ բերելով, արձակում այն ճիչը, որ ծնում է

ստահոդ լուրը. «Քաղաքն առնվա՜ծ է»։ Եվ ավելի ու ավելի բարձր թուրքերն այդ նույնը կրկնում են ցնծագին. «Քաղաքն առնվա՜ծ է»։ Եվ այդ կանչն ավերում է ամեն մի դիմադրություն։ Վարձկան զորքերի ջոկատները, կարծելով, թե իրենց դավաճանել են, լքում են դիրքերը, ջանալով շուտափույթ նավահանգիստ հասնել ու փրկվել նավերով։ Այլևս իզուր է Կոստանդինոսը մի քանի հավատարիմ մարդկանցով նետվում զավթիչներին ընդառաջ, նա վայր է ընկնում՝ իրարանցման մեջ խփվելով։ Եվ միայն հաջորդ օրը դիերի բլուրի մեջ ճանաչում են նրան՝ ոսկեկար արծիվով զարդարուն ծիրանի կոշիկների շնորհիվ, ու հաստատում, որ արևելահռոմեական կայսրության վերջին տիրակալը քաջաբար (բառիս հռոմեական իմաստով) հրաժեշտ է տվել իր կյանքին ու կայսրությանը։

Այսպես պատահական հյուլեն՝ բաց մնացած կերկապորտը, մոռացված դուռը, վճռեց համաշխարհային պատմության ընթացքը։

ԽԱՉԸ ՏԱՊԱԼՎԱԾ Է

Պատմությունը երբեմն խաղ է անում տարեթվերի հետ, քանի որ ուղիղ հազար տարի այն բանից հետո, երբ Հռոմն այնպես հիմնավորապես կողոպտեցին բարբարոսները՝ Բյուզանդիոնի կողոպուտն սկսվեց։ Հավատարիմ իր երդմանը, արյունարբու հաղթող Մահմուդն իր խոսքի տերը եղավ։ Առաջին կոտորածից հետո նա իր զինվորների ձեռքը տվեց ռազմավարը՝ տներն ու պալատները, վանքերն ու եկեղեցիները, տղամարդկանց, կանանց ու երեխաներին։ Եվ, ասես դժոխային շարքեր, թուրքերը հազարներով սուրում էին Կոստանդնուպոլսի փողոցներով, ջանալով միմյանցից առաջ ընկնել։

Ամենից առաջ խուժում են եկեղեցիները, ուր ոսկե սափորներ են փայլփլում և թանկագին քարեր են շողշողում, իսկ երբ որևէ տուն են ներխուժում՝ զինվորները տան վրա կախում են իրենց դրոշները, որպեսզի իրենցից հետո եկողներն իմանան՝ այստեղի ավարն արդեն բռնագրավված է։ Եվ այդ ավարի մեջ մտնում են ոչ միայն թանկագին քարեր, զարդվածքներ, դրամ ու շարժական կայք, այլև մարդիկ, որ նույնպես ապրանք են. կանայք պետք են հարեմներին, իսկ տղամարդիկ ու երեխաները՝ գերիների շուկային։ Հաղթողները մտրակներով դուրս են քշում բազմություններն այն տարաբախտների, որ ապաստան էին որոնում եկեղեցիներում, ծերերին վերջ են տալիս տեղնուտեղը, քանի որ նրանք

պիտանի չեն վաճառքի համար, ձրիակերներ են և ավելորդ բեռ, իսկ երիտասարդներին կապկպում են միասին, ինչպես անասունների, և մի կողմ քշում։

Ալան-թալանի հետ միասին մոլեգնում է անիմաստ ավերածությունը։ Այն ամենը, ինչ խաչակիրները կողոպտել էին գուցեև ոչ պակաս դաժանորեն՝ թանկագին մասունքներ և արվեստի գործեր, հաղթողները հիմա ջարդուփշուր են անում, պատառոտում՝ առ ոչինչ են դարձնում մեծարժեք պատկերները, փշուր-փշուր են անում հոյակապ քանդակները, ոչընչանցում են դարերի իմաստությունը խտացնող գրքերը։ Հունական մտքի ու պոեզիայի այն անմահ գանձարանները, որ պետք է պահպանվեին գալիք դարերի համար՝ կրակի ճարակ են դառնում և քամահրանքով դեն նետվում։

Մարդկությունը երբեք մինչև վերջ չի իմանա, թե այդ ճակատագրական ժամին ինչ աղետ ներխուժեց բաց մնացած դռնով, և թե աշխարհիս որպիսի՞ մեծաքանակ հոգևոր արժեքներ կորստյան մատնվեցին Հռոմի, Ալեքսանդրիայի և Կոստանդնուպոլսի կողոպուտի ժամանակ։

Մեծ հաղթանակը նշանավորող օրվա երկրորդ կեսին միայն, երբ ջարդն ու կոտորածն արդեն ավարտվել էր, սուլթան Մահմուդը մուտք է գործում նվաճված քաղաքը։ Հպարտ ու լրջախոհ՝ նա իր հոյակապ նժույգով անցնում է թալանի վայրենի տեսարանների մոտով առանց որևէ կողմ նայելու, քանի որ հավատարիմ է տված խոստումին՝ չխանգարել զինվորներին, որ իր համար հաղթանակ էին նվաճել իրենց ահավոր արհեստով։ Եվ նա հպարտորեն ընթանում է ուղիղ դեպի տաճարը՝ դեպի Բյուզանդիոնի այդ ոսկեշող գագաթը։ Ավելի քան հիսուն օր նա իր վրանից ագահորեն նայել է Սուրբ Սոֆիայի շողշողուն և անմատչելի գմբեթին։ Եվ հիմա նա՝ հաղթողը, իրավունք ունի մտնել տաճարի բրոնզաձույլ դռներով։ Բայց Մահմուդը նորից է սանձում իր անհամբերությունը. նա ուզում է նախ երախտագիտություն հայտնել ալլահին՝ տաճարն առմիշտ նրան նվիրաբերելուց առաջ։ Սուլթանը հնազանդորեն իջնում է ձիուց և աղոթում մինչև գետին խոնարհվելով։ Հետո մի բուռ հող է առնում գետնից և լցնում գլխին, հիշեցնելով իրեն, որ ինքն էլ մահկանացու է և չպետք է չափազանց գոռոզանա իր հաղթանակով։ Հետո միայն, աստծուն իր հնազանդությունը ցույց տալուց հետո, սուլթանն ընդոստ շտկվում է և, իբրև առաջինն ալլահի ծառաներից, մուտք գործում Հուստինիանոսի տաճարը, սրբազան իմաստության տաճարը, Սուրբ Սոֆիայի տաճարը։

Հիացումով ու հուզմունքով սուլթանը զննում է հոյակապ շինությունը, նրա բարձրաբերձ կամարները, որ շողշողում են մարմարակերտ ու խճանկար՝ կիսամութից դեպի լույսը հառնելով։ Եվ նա միտք է անում, որ ոչ թե իրեն, այլ աստծուն պետք է պատկանի աղոթքի այս ազնվաշուք պալատը։ Իսկույն կանչել է տալիս իմամին. սա տաճարի ամբիոնն է բարձրանում և այնտեղից ազդարարում մահմեդական հավատի խորհրդանիշը, իսկ փաղիշահը, դեմքը դեպի Մեքքա դարձրած, աղոթում է ալլահին՝ աշխարհների տիրակալին, և դա առաջին մահմեդական աղոթքն է, որ հնչում է այդ քրիստոնեական տաճարում։

Հաջորդ օրն իսկ արհեստավորները հրաման են ստանում տաճարը մաքրել նախկին կրոնի նշաններից. զոհասեղանները դուրս են բերվում, ծեփվում-ծածկվում են խճանկար բարեպաշտական պատկերները, և Սուրբ Սոֆիայի գմբեթի բարձրաբերձ խաչը, որ հազարամյակներ շարունակ թևերը կարկառել էր այս աշխարհին բովանդակ տառապանքն ընդգրկելու համար, խլաձայն գետին է տապալվում։

Այդ ձայնն ուժգին արձագանք է տալիս տաճարում և նրա պատերից շա՜տ հեռու։ Քանի որ խաչի անկումից ամբողջ Արևմուտքն է ցնցվում։ Դանդաղին բոթը, երկյուղ հարուցելով, հնչում է Հռոմում, Ջենովայում, Վենետիկում, իբրև նախազգուշացնող որոտ՝ թավալգոր հասնում է Ֆրանսիա, Գերմանիա, ու Եվրոպան արդեն սարսուռով է գիտակցում, որ իր բուռ անտարբերության հետևանքով մոռացության մատնված դռնով ներխուժեց, ասես իբրև ճակատագիր, մի ավերիչ զորություն, որ դարեր շարունակ պետք է կապի ու կաշկանդի Եվրոպայի ուժերը։

Սակայն ժողովուրդների պատմության մեջ, ինչպես առանձին մարդու կյանքում, անդարձ կորսված բոպեն ափսոսանքներով ետ չես դարձնի, և հազարամյակն անզո՛ր է ետ բերելու մի ժամում կորցրածը։

ՓԱԽՈՒՍՏ ԴԵՊԻ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

Ուսողաղ օվկիանոսի հայտնաբերումը 1513 թվականի սեպտեմբերի 25 ին

ՆԱՎԸ ՍԱՐՔԱՎՈՐՎՈՒՄ Է ԾՈՎ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Կոլումբոսը Ամերիկայի հայտնաբերումից հետո վերադարձավ Իսպանիա, Սևիլիայի և Բարսելոնայի լեփ-լեցուն փողոցներում հաղթական երթ կատարելիս ցուցադրում էր մեծաքանակ արժեքավոր իրեր և չտեսնված արարածներ՝ մինչ այդ անհայտ ցեղի պատկանող կարմրամորթ մարդիկ, չտեսնված գազաններ,

խայտաբղետ, ճչացող թութակներ, դանդալոշ գետակինճներ, զարմանահրաշ բույսեր ու մրգեր, որոնք շատ չանցած տարածում գտան Եվրոպայում, հնդկական ցորեն, ծխախոտ և կոկոսի ընկույզ։ Ցնծությամբ լեցուն՝ ժողովուրդը հետաքրքրությամբ նայում էր այդ ամբողջ հարբստությանը, բայց արքայական զույգի և նրա խորհրդականների ուշադրությունը սևեռվել էր ոսկով լի մի քանի տուփերի ու զամբյուղների վրա։ Շատ քիչ ոսկի էր բերել Կոլումբոսը նոր Հնդկաստանից՝ մի քանի զարդարանք, փոխանակված կամ խլված բնիկներից, մի քանի փոքրիկ ձուլածո ոսկի, երկու-երեք բուռ ոսկեհատիկ, ավելի շուտ ոսկու փոշի, քան ոսկի. այդ ամբողջ ավարը կարող էր բավականացնել հաղիվ մի քանի հարյուր դուկատ դրվագելու համար։ Սակայն հանճարեղ երևակայող Կոլումբոսը, որը մշտապես կուրորեն հավատացել է հենց այն բանին, որին տվյալ պահին կամեցել է հավատալ և որը հենց հիմա այնքան մեծ փառքով հաստատել էր սեփական ճշմարտությունը՝ բացելով Հնդկաստանի ծովային ուղին, ակամա չափազանցության մեջ ընկնելով պարծենում էր, թե այդ ոսկին եղածի առաջին ու չնչին նմուշն է միայն։ Նա, իր իսկ վկայությամբ, հավաստի տվյալներ է ստացել անհաշիվ ոսկեսփյուռքների մասին, որ կան այդ նորահայտ կղզիներում։ Վայրեր կան, ուր թանկարժեք մետաղն ընկած է հողի բարակ շերտի տակ, գետնի գրեթե մակերեսին։ Ոսկին կարելի է հեշտությամբ դուրս բերել սովորական բահով։ Բայց ավելի հեռվում, դեպի հարավ, կան երկրներ, ուր թագավորները գինին խմում են ոսկեհուռ դավաթներով, և այդ երկրներում ոսկին ավելի էժան է գնահատվում, քան կապարն Իսպանիայում։ Մշտապես դրամի կարիք ունեցող թագավորը հմայվածի պես լսում է այդ նորահայտ, իրեն պատկերող ոսկեբեր Օփիրի[1] մասին։ Դեռևս բավականաչափ հայտնի չէ Կոլումբոսի բարձրաշունչ խենթությունը, ուստի և ոչ ոք չի կասկածում նրա խոսքերի հավաստիությանը։

Իսկույնևեթ սարքավորվում է երկրորդ նավագնացության տորմիղը, և այս անգամ չկա նավային անձնակազմ վարձակալողների և մունետիկների կարիք։ Ամբողջ Իսպանիան խելքից հանել է նորահայտ Օփիրի լուրը, այն երկրի, ուր կարելի է ոսկի հանել մերկ ձեռքերով։ Մարդիկ հարյուրներով, հազարներով շտապում են դեպի էլդորադո՝ ոսկու երկիրը։

Բայց ի՞նչ պղտոր ալիք է բարձրացնում ոսկու ծարավը բոլոր քաղաքներից ու գյուղերից։ Իրենց ծառայությունն առաջարկում են ոչ մի-

---

1 Օփիր—ոսկու առասպելական երկիր, որ հիշատակվում է Աստվածաշնչում։

այն աղնվականները, որոնք կամենում են հիմնավորապես ոսկեվորել իրենց տոհմական նիշը, ոչ միայն մոլեգին արկածախնդիրները և քաջարի զինվորները. ալիքը Պալոսի և Կադիսի նավահանգիստներն է նետում Իսպանիայի ամբողջ կեղտն ու տականքը։ Խարանված գողերը, մեծ ճանապարհի այն ավազակներն ու կողոպտիչները, որոնք ավելի շահեկան գործի ակնկալություն ունեն ոսկու երկրում, այն պարտապանները, որոնք փրկություն են որոնում պարտատերերից, և տղամարդիկ, որ փախչում են իրենց կուվարար կանանցից, բոլոր այս մերժվածներն ու տարաբախտները, տաժանակրություն քաշած ոճրագործներն ու հանցագործները, որոնց որոնում է ոստիկանությունը, այս բոլորը վարձվում են իբրև նավերի անձնակազմի անդամներ։ Սա մի բազմաշերտ ամբոխ է ձախողակների, որոնք վճռել են մի հարվածով վերջապես հասնել հարստության և պատրաստ են ամեն մի բռնության, ամեն մի հանցագործության։

Նրանք այնպիսի մղումով են միմյանց հավատ ներշնչում Կոլումբոսի զառանցանքի նկատմամբ, ըստ որի այդ երկրներում բավական է բահը գետին խրել, որպեսզի աչքի առաջ ոսկու շերտերը բացվեն, որ ավելի հարուստ վերաբնակիչներն իրենց հետ ծառաներ ու ջորիներ են տանում՝ թանկարժեք մետաղի սարեր բերելու հուսով։ Նրանք, որ չեն ընկնում արշավախմբի կազմի մեջ, ուրիշ ելք են գտնում. շատ էլ չմտահոգվելով արքայական թույլտվության մասին, խելահեղ արկածախնդիրներն իրենք են ինքնագլուխ նավեր սարքավորում, որպեսզի ըստ հնարավորին շուտ կտրեն օվկիանոսը և ձեռք գցեն ոսկի՛, ոսկի՛, ոսկի՛։

Իսպանիան մի հարվածով ազատվեց անհանգիստ մարդկանցից և ամենավտանգավոր խաժամուժից։

Էսպանյոլի (հետագայում Սան Դոմինիգո կամ Հայիթի) նահանգապետը սոսկումով է նայում, թե այդ անկոչ հյուրերն ինչպես են ողողում իր տնօրինությանը հանձնված կղզին։ Տարեցտարի ժամանում են ծանրաբեռ նավեր՝ բերելով ավելի ու ավելի սանձազերծ ստահակներ։ Սակայն եկողները ևս դառնորեն հիասթափվում են, քանի որ ոսկի չի թափված ճամփաներում, իսկ այն տարաբախտ բնիկներից, որոնց վրա նրանք հարձակվում են գազանների պես, այլևս անհնար է գտնել մի հատիկ ոսկի կորզել։ Սարսափ տարածելով չարաբախտ հնդիկների վրա, երկյուղ պատճառելով նահանգապետին, ամենուրեք կողոպտիչների հրոսակներ են վխտում։ Նահանգապետը զուր է ջանում նրանց մշտակյաց գաղութարարներ դարձնել, նրանց հողաբաժիններ հատկացնել, նախիր տալ և նույնիսկ մեծաքանակ մարդիկ՝ նախիրի վիճակով, այսինքն՝ ամեն մե-

կին վաթսուն-յոթանասուն տեղացի ստրուկ։ Սակայն ոչ ազնվաշուք հիդալգոները[1], ոչ էլ նախկին ավազակները հողագործության նկատմամբ հակում չեն ցուցաբերում։ Ցորեն ցանելու և անասուն բազմացնելու համար չէ, որ նրանք եկել են այստեղ։ Բնավ չմտահոգվելով վար ու ցանքով, նրանք խոշտանգում են տարաբախտ հնդիկներին (մի քանի տարվա ընթացքում բնաջնջվեց ամբողջ տեղական բնակչությունը) կամ իրենց ժամանակն անց են կացնում խաղաորջերում։ Կարճ ժամանակում նրանց մեծամասնությունն այնպես է խրվում պարտքերի մեջ, որ ստիպված է լինում վաճառքի հանել ոչ միայն կալվածքը, այլև թիկնոցը, գըլխարկն ու վերջին հագուստը և վերջնականապես ընկնում է վաճառականների ու վաշխառուների որոգայթը։

Ուստի և Էսպանյոլի բոլոր ձախողակների համար ցանկալի լուր էր այդ կղզում ամենքից հարգված մի մարդու՝ քարոզիչ և բակալավր Մարտին Ֆերնանդես դե Էնսիսոյի վճիռը՝ 1510 թվականին սարքավորել մի նավ, որպեսզի մի նոր ջոկատով օգնության հասնեն terra firma-ում[2], մայրցամաքում գտնվող իրենց գաղութին։

1509 թվականին երկու հռչակավոր արկածախնդիր՝ Ալոնսո դե Օխեդոն և Դիեգո դե Նիկուեսան, Ֆերդինանդ թագավորից իրավունք էին ստացել Պանամայի նեղուցում և Վենեսուելայի ծովափին հիմնելու մի գաղութ, որը նրանք փոքր-ինչ անշրջահայացաբար կոչեցին Կաստիլիա դել Օրո՝ «Ոսկեղեն Կաստիլիա»։ Էնսիսոն, որ կյանքից անտեղյակ մի օրենսգետ էր, հրապուրված այդ հնչեղ անունով և խաբված կեղծ լուրերով, իր բովանդակ կարողությունը ներդրեց այդ ձեռնարկի մեջ։ Սակայն այդ գաղութից, որ հիմնվել էր Սան Սեբաստյանում, Ուրաբա ծովածոցում, գալիս են ոչ թե ոսկի գտնելու լուրեր, այլ օգնության աղաղակներ։ Մարդկանց կեսը կոտորվել է բնիկների դեմ մղած կռիվներում, մնացածները մեռնում են սովից։ Վատնած փողերը փրկելու համար Էնսիսոն վտանգի տակ է դնում մնացած կարողությունը և կազմավորում է փրկարար արշավախումբ։ Հենց որ հայտնի է դառնում, որ Էնսիսոն զինվորների կարիք ունի՝ Էսպանյոլի բոլոր թոկից փախածները և անբանները շտապում են կառչել կղզուց փախչելու այդ հնարավորությունից։ Միայն թե լքեն կղզին, միայն թե ազատվեն պարտատերերից և խստապահանջ նահանգապետի հսկողությունից։ Բայց պարտատերերն էլ քընած չէին։ Տեսնելով, որ ամենաչարամիտ պարտապանները կամենում

1 հիդալգո—խոպանական մանր ու միջին ազնվականություն

2 ամուր հող (լատ.)— ըստ ժամանակի ծովագնացության բառարանի՝ մայրցամաք

են առմիշտ հրաժեշտ տալ իրենց, նրանք պաշարում են նահանգապետին, պահանջում, որ նա արգելի լքել կղզին առանց իր հատուկ թույլտվության։

Նահանգապետը բավարարում է նրանց խնդիրքը։ Սահմանվում է խիստ հսկողություն՝ Էնսիսոյի նավը ստիպված է նավահանգստից հեռու մնալ, նավի շուրջ բոլորը վխտում են կառավարական նավակները, հետևելով, որ դրա իրավունքը չունեցող որևէ մեկը թաքուն չմտնի նավ։

Եվ ահա բոլոր ստահակներն ու թոկից փախածները, որ մահից ավելի քիչ են վախենում, քան աղնիվ աշխատանքից և պարտապանցների բանտից, անհուն դառնությամբ նայում են, թե ինչպես Էնսիսոյի նավը, բոլոր առագաստներն ուռեցրած, հեռանում է իրենցից՝ արկածների ընդառաջ։

ԱՐԿՂԻ ՄԻՋԻ ՄԱՐԴԸ

Բոլոր առագաստները պարզած, Էնսիսոյի նավը, Էսպանյոլի ափերից հեռանալով, սուրում է դեպի ամերիկյան մայր ցամաք։ Կղզու ուրվագծերն արդեն անէացել են կապուտակ հեռուներում։ Խաղաղ նավագնացություն է, սկզբում աչքի ընկնող ոչինչ չի երևում, բացառությամբ թերևս միայն անսովոր ուժի մի ահագին շնից (Բեսերիկո հռչակավոր որսորդական շան այդ ժառանգը շուտով պետք է հայտնի դառնար Լեոնսիկո անունով), որ անհանգիստ ետուառաջ էր անում տախտակամածով, հոտոտելով նրա բոլոր անկյունները։ Ոչ ոք չգիտե ո՞ւմ է պատկանում այդ զորեղ կենդանին և ինչպե՞ս է նավ ընկել։ Վերջապես, շրջապատի մարդիկ պարզ տեսնում են՝ շանն անհնար է հեռացնել նպարեղենի մի շատ մեծ արկղից, որ նավ էր բերվել մեկնելու վերջին օրը։ Բայց ի՞նչ է կատարվում։ Արկղի կափարիչն անսպասելիորեն բարձրանում է, այնտեղից դուրս է գալիս մոտ երեսունհինգ տարեկան մի մարդ՝ սաղավարտով, սուր ու վահանով, ինչպես կաստիլական սուրբը՝ Սանտ-Յագոն։ Դա Վասկո Նունյես դե Բալբոան է, որը հիմա ցույց է տալիս իր զարմանալի հնարագիտությունն ու հանդգնությունը։ Աղնվական, ծնված Խերես դե լոս Կաբալերոս քաղաքում, նա իբրև հասարակ զինվոր Ռոդրիգո դե Բաստիդասի հետ ուղևորվում է նոր Աշխարհ. ի վերջո, երկար դեգերումներից հետո, նա հասնում է Էսպանյոլի ափերը։ Նահանգապետը զուր է ջանում Նունյես դե Բալբոային օրինավոր գաղութարար դարձնել. մի քանի ամսից նա իր կալվածքը թողնում է բախտի քմահաճույքին և

սնանկանում մինչև այն աստիճան, որ չգիտեր ուր կորչել պարտատերերի ձեռքից։

Բայց այն ժամանակ, երբ մյուս պարտապանները ստիպված են ատամները սեղմած նայել կառավարական նավակներին, որոնք թույլ չեն տալիս իրենց նավ բարձրանալ, Նունյես դե Բալբոան գտնում է ելքը. նա թաքնվում է դատարկ արկղում և գործակիցներին հանձնարարում իրեն նավ տեղափոխել, որտեղ, իրարանցման մեջ, չեն նկատում այդ խորամանկ արարքը։ Միայն այն ժամանակ, երբ նա տեսնում է, որ նավը բավականաչափ հեռացել է ափից և իր պատճառով այլևս ետ չի դառնա, անտոմս ուղևորը հայտնի է դարձնում իր գոյությունը։ Հիմա արդեն նա հասել է նպատակին։

Բակալավր Էնսիսոն իրավունքի գիտակ է և, ինչպես օրենսգետների մեծ մասը, գլուխ չունի ռոմանտիկայի հետ։ Իբրև ալկալդ, իբրև նոր գաղութի ոստիկանության պետ, նա մտադիր չէ իր գաղութում անհուսալի հարբեցողներ ու մութ անցյալ ունեցող մարդիկ պահել։ Ուստի և նա խստորեն հայտնում է Նունյես դե Բալբոային, որ իր մտքով չի էլ անցնում նրան տեղ հասցնել և որ ինքը նրան կիջեցնի ճանապարհին հանդիպած առաջին իսկ կղզում՝ մարդաբնակ լինի այդ, թե անմարդաբնակ։

Բայց բանը դրան չհասավ։ Կաստիլիա դել Օրոյի ճանապարհին հանդիպեց մի առագաստանավ, որ հրաշք էր այն ժամանակներում, երբ այդ անհայտ ծովերով լողում էին ընդամենը մի քանի տասնյակ նավեր։ Մարդկանցով լեփ-լեցուն առագաստանավի հրամանատարն էր Ֆրանսիսկո Պիսարոն, որի անունը շուտով պիտի թնդար աշխարհով մեկ։ Առագաստանավի մարդիկ գալիս էին Սան Սեբաստյան գաղութից, որ պատկանում էր Էնսիսոյին։ Նախ նրանց խռովարարների տեղ դրին, որ ինքնակամ լքել են իրենց դիրքերը, բայց, ի սարսափ Էնսիսոյի, նրանք հայտնում են՝ իրենք կենդանի մնացած վերջին գաղութարարներն են, գաղութի պարետ Օխեդան փախել է նավով, իսկ իրենք, ունենալով միայն երկու բրիգանտինա, ստիպված են եղել սպասել մինչև մարդկանց մի մասը մեռնի, քանի որ միայն յոթանասուն մարդ կարող էին տեղավորվել այդքան փոքր նավերում։ Բրիգանտիններից մեկը խորտակվել է։ Պիսարոյի հրամանատարության ներքո գտնվող այս երեսունչորս մարդը Կաստիլիա դել Օրոյի կենդանի մնացած վերջին բնակիչներն են։

Ուր գնալ հիմա։ Պիսարոյի պատմածից հետո Էնսիսոյի վինվորները տրամադիր չեն ոչ իրենց վտանգի ենթարկել, որ սպառնում է լքված գաղութի մահաբեր ճահճային կլիման, ոչ էլ բնիկների թունավոր նետերի

թիրախը դառնալ։ Նրանց թվում է, որ միակ ելքը էսպանյոլ վերադառնալն է։

Այդ վճռական պահին անսպասելիորեն հանդես է գալիս Վասկո Նունյես դե Բալբոան։ Նա ասում է, թե Ռոդրիգո դե Բաստիդասի հետ լողալու շնորհիվ ինքը լավ է ճանաչում Կենտրոնական Ամերիկայի ափերը և, ինչպես հիշում է, այն ժամանակ իրենք ոսկեբեր գետի ափին գըտել են Դարյեն կոչվող մի վայր, ուր ապրում են խաղաղասեր բնիկներ։ Հենց այստե՛ղ և ոչ թե կորստաբեր տեղում պետք է հիմնել նոր բնակավայրը։

Ամբողջ անձնակազմն իսկույնևեթ իր համաձայնությունը տալիս է Նունյես Բալբոային։ Նրա առաջարկով անձնակազմը բռնում է Պանամայի պարանոցում գտնվող Դարյենի ճամփան։ Նախ սովորական սպանդ են սարքում բնիկների մեջ, իսկ հետո, կողոպտած իրերի մեջ ոսկի գըտնելով, ստահակները վճռում են այդտեղ բնակավայր հիմնել, նոր քաղաքին երախտագիտությամբ ու բարեպաշտությամբ տալով Սանտա Մարիա դե լյա Անտիգա դել Դարյեն անունը։

ՎՏԱՆԳԱՎՈՐ ՎԵՐԵԼՔ

Շատ չանցած ձախորդ գաղութարար, բակալավր Էնսիսոն դառնորեն զղջում է, որ ժամանակին ծովը չնետեց Նունյես դե Բալբոային արկղի հետ միասին, քանի որ մի քանի շաբաթ հետո գաղութի ամբողջ իշխանությունն անցնելու էր այդ հանդուգնի ձեռքը։

Օրենսգետ, կարգուկանոնի հասկացողություններով դաստիարակված Էնսիսոն, որպես Alcalde mayor, անհետ կորած կառավարչի փոխանորդը՝ չանում է գաղութը տնօրինել ի շահ իսպանական թագի։ Հնդկական աղքատիկ խրճիթում նա հրովարտակները կազմում է նույնպիսի խնամքով ու խստությամբ, ինչպես մի ժամանակ Սևիլիայում, իր փաստաբանական գրասենյակում։

Այս վայրի երկրներում, որոնց քաղաքակրթությունը չի էլ դիպել, նա զինվորներին արգելում է բնիկներից ապրանքափոխանակությամբ ոսկի վերցնել, քանի որ սույնը բացառապես թագի արտոնությունն է։ Նա փորձում է այդ սանձազերծ հրոսակին օրենք և կարգ պարտադրել, բայց արկածախնդիրների սրտովն է ոչ թե փետուրե գրիչը, այլ սուր բանեցնող մարդը։ Շատ շուտով Բալբոան դառնում է գաղութի լիիրավ տերը։ Էնսիսոն ստիպված է կյանքը փրկելու համար փախուստ տալ։ Իսկ

երբ, վերջապես, թագավորի նշանակած նահանգապետը՝ Նիկուեսան է ժամանում, Բալբոան նրան թույլ չի տալիս անգամ ափ իջնել։ Եվ տարաբախտ Նիկուեսան, վտարված այն երկրից, որ թագավորն իր տնօրինությանն էր հանձնել, խորտակվում է վերադարձի ճանապարհին։

Այժմ արդեն նույնպես Բալբոան, արկղից դուրս եկած մարդն է կառավարում գաղութը։ Բայց, չնայած նվաճած հաջողությանը, նա իրեն շատ էլ լավ չի զգում։ Չէ՞ որ նա բացեիբաց դեմ գնաց թագավորին, և ինքն առավել ևս չի կարող ներումի հույս ունենալ, քանի որ իր մեղքով էր զոհվել արքայի նշանակած նահանգապետը։

Փոխուստ տված Էնսիսոն արդեն Իսպանիայի ճանապարհին է, ուրեմն վաղ թե ուշ նրա բողոքի հիման վրա Բալբոային կդատեն իբրև խարդավարարի։ Սակայն Իսպանիան հեռու է, և շատ ժամանակ կանցնի մինչև նավը երկու անգամ կտրի օվկիանոսը։ Բալբոան նույնքան խելամիտ է, որքան և անվեհեր. նա գտնում է այն միակ ուղին, որով կարող է ըստ հնարավորին երկար պահել խլած իշխանությունը. նա գիտե, որ իր ժամանակներում հաջողությունը կարող է արդարացնել ամեն մի հանցագործություն և, ոսկու հիմնավոր համալրում կատարելով արքայական գանձարանում, կարելի է ձգձգել և կոծկել ամեն մի քրեական գործ։ Ուրեմն ամենից առաջ հարկավոր է ոսկի ձեռք բերել, քանի որ ոսկին է ուժը։ Ֆրանսիսկո Պիսարոյի հետ նա հարստահարում և կողոպտում է հարևան բնիկ ցեղերը, և մի սովորական արյունալի կոտորածի ժամանակ նրան բաժին է ընկնում անսպասելի հաջողությունը։ Կացիկներից[1] մեկը, Կարետա անունով, որի վրա, հյուրընկալության օրենքը կոպտաբար խախտելով, նենգ հարձակում էր գործել Բալբոան՝ մահվան դատապարտվելուց հետո այսպիսի առաջարկ է անում. ավելի լավ չի՞ լինի հնդկացիներին թշնամի դարձնելու փոխարեն դաշինք կնքել իր ցեղի հետ, իսկ իբրև հավատարմության պատանդ Կարետան պատրաստ է նրան կնության տալ իր աղջկան։

Նույնպես Բալբոան իսկույն կռահում է, թե ինչքան կարևոր է հուսալի և ուժեղ բարեկամ ունենալ բնիկների մեջ։ Նա ընդունում է առաջարկը և, որ ամենից զարմանալին է, մինչև կյանքի վերջը ամենաքնքուշ վերաբերմունք է ունենում մանկամարդ հնդկուհու հանդեպ։ Կացիկ Կարետայի հետ նա նվաճում է բոլոր հարևան հնդկացի ցեղերին և նրանց մեջ ձեռք է բերում այնպիսի ազդեցություն, որ ի վերջո նույնիսկ կո-

---

1 կացիկ— *Ամերիկայի գաղութացման ժամանակաշրջանում հնդկացիներն այդպես էին կոչում իրենց ցեղերի առաջնորդներին*

մագրին, հնդկացի առաջնորդներից ամենազորեղը, նրան հարգանքով իր մոտ է հրավիրում։

Կոմագրեի մոտ հյուրընկալվելը համաշխարհային-պատմական նշանակության մի շրջափուլ է խորհրդանշում Վասկո Նունյես Բալբոայի կյանքում, մի մարդու, որ մինչ այդ պարզապես մերժված մարդ էր և գահի դեմ հանդուգն ապստամբող, որին կաստիլական դատավորներն անխուսափելիորեն կառափնարան կուղարկեն։

Կացիկ Կոմագրեն Բալբոային ընդունում է իր ընդարձակ քարաշեն տանը, որ Վասկո Նունյեսին ապշեցնում է չտեսնված շքեղությամբ։ Հետո կացիկը հյուրին անսպասելի նվեր է մատուցում՝ չորս հազար ունցիա ոսկի։ Բայց հետո էլ գալիս է կացիկի զարմանալու հերթը. հենց որ երկնքի այդ զավակները, այդ հզոր, աստվածազոր օտարերկրացիները, որոնց ինքն այնպիսի հարգանքով էր ընդունում, տեսնում են ոսկին՝ նրանց գոռոզ արժանապատվությունից հետք անգամ չի մնում։ Շղթայազերծ շան պես նրանք նետվում են միմյանց վրա, մերկացնում են սրբերը, սեղմում բռունցքները, ճչում, վիճում մոլեգնորեն, և ամեն ոք պահանջում է իր բաժին ոսկին։

Արհամարհական զարմանքով նայում է կացիկը մոլեգնած մարդկանց. աշխարհի բոլոր հորիզոններում բնության զավակները մշտապես այդպես են նայում քաղաքակիրթ մարդկանց, որոնց աչքին մի բուռ դեղին մետաղն ավելի թանկ է, քան սեփական քաղաքակրթության բոլոր հոգևոր և նյութական արժեքները։

Կացիկը իսպանացիներին ճառ է ասում և սրանք, ապահովությունից դողալով, կլանում՝ են թարգմանի ամեն մի բառը։ Որքա՜ն տարօրինակ է,— ասում է Կոմագրեն,— որ դուք կռվում եք այդպիսի դատարկ բանի պատճառով, այդ սովորական մետաղի համար ձեզ ենթարկում եք ծանր փորձությունների և զրկանքների։ Մեր լեռների բարձրադիր շարքի ետևում ընկած է վիթխարի մի ծով, որի մեջ թափվող բոլոր գետերը ոսկեբեր են։ Իսկ այնտեղ ապրում է մի ժողովուրդ, որ լողում է ձեր նավերի նման նավերով՝ առագաստներով ու թիակներով, և նրա թագավորները ուտում-խմում են ոսկեղեն սպասքներով։ Հենց այնտեղ էլ դուք կըգտնեք այդ դեղին մետաղից ինչքան սիրտներդ ուզի։ Իմացեք, որ այնտեղ տանող ճանապարհը վտանգավոր է, քանի որ բնիկների առաջնորդները, հավանորեն, դեմ կլինեն ձեզ։ Բայց դա մի քանի օրվա ճանապարհ է ընդամենը։

Վասկո Նունյես դե Բալբոան ցնցված է մինչև հոգու խորքը։ Վերջապես նա ընկավ ոսկու հեքիաթային երկրի հետքի վրա, որ տենչում

էր այնքան տարիներ։ Իր նախորդներն այդ երկիրը որոնել էին ամենուրեք, հարավում և հյուսիսում, իսկ հիմա դա այնքան մոտ է, ընդամենը մի քանի օրվա հեռավորության վրա, եթե կացիկը ճիշտ է ասում։ Այդ դեպքում, վերջապես, կապացուցվի դոյությունը մյուս օվկիանոսի, որի ճամփան ապարդյուն կերպով որոնել էին Կոլումբոսը, Կաբոտը, Կորտերեալը՝ մեծ ու պանծալի այդ ծովագնացները։ Ուրեմն, դրանով իսկ բացվում է շուրջերկրյա ճանապարհորդության ուղին։ Նա, ով առաջինը տեսնի այդ նորահայտ օվկիանոսը և դա իր հայրենիքի սեփականությունը դարձնի՝ դարերի մեջ կանմահացնի անունը։

Եվ Բալբոայի համար պարզ է դառնում, թե ինչ սխրանք պիտի կատարի իր մեղքը քավելու և անթառամ փառքի հասնելու համար։ Նա առաջինը պետք է կտրի այն պարանոցը, որ տանում է դեպի Mar del sur, դեպի Հարավային ծովը, որ իր հերթին տանում է Հնդկաստան։ Եվ իսպանական թագի համար նա կնվաճի մի նոր ոսկեբեր Օփիր։

Կացիկ Կոմագրեի տան այդ մի քանի ժամը վճռում է Բալբոայի ճակատագիրը։ Այդ ժամից ի վեր սովորական արկածախնդրի կյանքը ձեռք է բերում բարձր ու անանց նշանակություն։

ՓԱԽՈՒՍՏ ԴԵՊԻ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

Ճակատագիրը մարդուն գերագույն երջանկություն է պարգևում, եթե կյանքի միջօրեին, ստեղծագործական հասունության տարիներին հասցնում է կյանքի նպատակին։

Նունյես դե Բալբոան գիտե, թե ինչ ճամփաբաժնի առաջ է կանգնած՝ կամ անարգ մահ կառափնարանում, կամ անմահություն։ Ամենից առաջ հարկավոր է հաշտության դաշն գնել արքայական թագից, թեկուզև հետին թվով արդարացնել և օրինականացնել իշխանության ինքնակամ զավթումը։ Ուստի և երեկվա խռովարարը, իսկ հիմա թագավորի ամենաթունդ հպատակը էսպանյոլ՝ արքայական գանձապահ Պասամոնտեին ուղարկում է ոչ միայն Կոմագրեի ընծաների հինգերորդ մասը, որ օրենքով պետք է հատկացվեր արքունիքին, այլև, որպես ավելի մեծ կենսափորձի տեր մարդ, քան չոր ու ցամաք օրենսգետ էնսիսոն, գանձատան վճարի հետ միասին մի խոշոր գումար է հատկացնում գանձապահին և խնդրում, որ իրեն հաստատեն իբրև գաղութի գեներալ-կապիտան։ Գանձապահ Պասամոնտեն չունի այդպիսի լիազորություն, բայց, իբրև լիարժեք ոսկու հատուցում, նա Բալբոային առաքում է ժամանակավոր և ըստ էության ոչինչ չարժեցող մի փաստաթուղթ։ Մինչդեռ Բալբոան, ջա-

նալով բոլոր կողմերից ապահովել իրեն, Իսպանիա է ուղարկում իր երկու ամենահավատարիմ մարդկանց, որպեսզի արքունիքում նրանք պատմեն գահին մատուցած իր ծառայությունների և այն հայտնության մասին, որ իրենց հաջողվել է կորզել կացիկ Կոմագրեից։

Վասկո Նունյես դե Բալբոան հրամայում է հայտնել Սևիլիայում, որ իրեն հարկավոր է հազար մարդուց բաղկացած մի ջոկատ միայն. նա խոստանում է այդ ջոկատով հանուն Իսպանիայի գործել այնպիսի սխրանքներ, որպիսիք ոչ մի իսպանացու դեռ չի հաջողվել։ Նա պարտավորվում է հայտնաբերել մի նոր ծով և, վերջապես, տիրանալ ոսկու երկրին, որ Կոլումբոսը խոստանում էր միայն, իսկ ինքը՝ Բալբոան, կընվաճի։

Թվում է, ամեն ինչ ընթանում է հօգուտ այդ կորած մարդու՝ խռովարար Բալբոայի։ Սակայն Իսպանիայից ժամանած առաջին իսկ նավը վատ լուրեր է բերում։ Բալբոայի բարձրացրած խռովության մասնակիցներից մեկը, որին նա Իսպանիա էր ուղարկել կողոպտված էնսիսոյի բողոքները հերքելու համար, հայտնում է, որ գործը Բալբոայի համար աննպաստ ընթացք է ընդունել և որ նրա նույնիսկ կյանքն է վտանգի տակ։ Իր իշխանությունը զրված Բալբոայի դեմ էնսիսոյի ներկայացրած հայտը իսպանական դատարանը բավարարել է, ուստի և Բալբոան պետք է հատուցի նրա կրած վնասները։ Իսկ այն լուրը, թե Հարավային ծովը գտնված է, մի լուր, որ կարող էր փրկել Բալբոային, Իսպանիայում դեռ չի ստացվել. համենայն դեպս, առաջիկա նավով պետք է ժամանի այն դատավորը, որ պետք է Բալբոային պատասխանատվության ենթարկի խռովություն բարձրացնելու համար և կամ դատապարտի նրան տեղնուտեղը, կամ շղթայակապ ետ ուղարկի Իսպանիա։

Վասկո Նունյես դե Բալբոան հասկանում է, որ ինքը ոտով-գլխով կորած է։ Նրա դատավճիռը կայացվել է ավելի վաղ, քան Հարավային ծովին և ոսկեբեր ափին վերաբերող իր հաղորդումը տեղ կհասներ։ Իհարկե, այդ լուրը կունենա ազդեցություն, բայց մինչ այդ իր գլուխը կանջատվի ուսերից և ինչ-որ մեկ ուրիշն ի կատար կածի իր սխրանքը, հենց այն սխրանքը, որ իր տենչանքն է։

Իսպանիայից նա այլևս սպասելիք չունի, այնտեղ հայտնի է, որ ինքըն է թագավորի կարգած օրինական նահանգապետի խորտակման պատճառը, որ ինքն է ալկալդին ինքնակամորեն վտարել պաշտոնից. դեռ լավ կլինի, եթե իրեն բանտարկեն միայն և ինքը գլխով չհատուցի բռնած հանգուցն ընթացքի համար։ Ազդեցիկ բարեկամներն էլ չեն կարող օգնել, քանի որ ինքն այլևս իշխանություն չունի, իսկ իր լավագույն պաշտ-

պանի՝ ոսկու ձայնը դեռևս շատ թույլ է հնչում, որպեսզի իրեն ներման շնորհ բերի։

Միայն մի բան կարող է նրան փրկել գործած հանդգնությունների պատճառով պատժվելուց. փրկվելու համար գործել ևս մի հանդգնություն։ Նա կփրկվի, եթե հայտնաբերի մի նոր ծով և մի նոր Օփիր ավելի վաղ, քան կժամանեն դատավորները, ավելի վաղ, քան նրանց մարդիկ կբռնեն ու շղթայակապ կանեն իրեն։ Այստեղ, բնակեցված աշխարհի ծայրին, փախուստ տալու միակ հնարավորությունը փախուստն է դեպի վիթխարի սխրանքը, փախուստը դեպի անմահություն։

Եվ ահա Նունյես դե Բալբոան վճռում է Իսպանիայից չսպասել այն հազար մարդուն, որ ինքը խնդրել էր անհայտ օվկիանոսը նվաճելու համար, չսպասել նաև դատական իշխանությունների ժամանումին։ Ավելի լավ է բախտը փորձել փոքրաթիվ քաջերի հետ։ Ավելի լավ է պատվով մեռնել հանուն բոլոր ժամանակների ամենահանդուգն արկածներից մեկի, քան անարգորեն, կապված ձեռքերով նետվել կառափնարան։ Նունյես դե Բալբոան իր մոտ է կանչում գաղութաբնակներին։ Զթաքցնելով սպասվող դժվարությունները, նա հայտարարում է պարանոցը կտրելու իր մտադրության մասին և հարց է տալիս՝ ո՞վ է կամենում հետևել իրեն։ Նրա քաջությունը քաջություն է ներշնչում մյուսներին։ Հարյուր իննսուն զինվոր՝ գաղութի գրեթե բոլոր բնակիչները, որ ընդունակ էին զենք կրելու, համաձայնություն են տալիս։ Զինվելու մասին կարելի էր բընավ չմտահոգվել, քանի որ առանց այն էլ բոլորը մշտական կռիվների մեջ են։

Եվ 1513 թվականի սեպտեմբերի 1-ին, կախաղանից կամ զնդանից խուսափելու համար, Նունյես դե Բալբոան, այդ հերոսն ու ավազակը, արկածներ որոնողն ու խռովարարը, սկսում է իր աշխատանքը դեպի անմահություն։

ԱՆԱՆՑՈՂԻԿ ԱԿՆԹԱՐԹԸ

Պանամայի պարանոցը կտրելու ուղին սկսվում է կացիկ Կարետային պատկանող Կոյբա գավառից, այն Կարետայի, որի դուստրը Բալբոայի կյանքի ուղեկիցն էր։ Ինչպես պարզվեց հետագայում, Նունյես դե Բալբոան պարանոցի ամենանեղ մասը չէ, որ ընտրել էր և տեղանքը չիմանալու պատճառով վտանգավոր անցումը երկարացրել էր մի քանի օրով։ Բայց Բալբոան, ըստ երևույթին, մտածում էր, որ դեպի անհայտություն այդպիսի համարձակ անցում կատարելիս պետք է ամենից առաջ

վստահ լինել հնդկական բարեկամ ցեղի աջակցության վրա, եթե հանկարծ ստիպված լինի նահանջել կամ համալրման կարիք ունենա։ Մի տասնյակ մեծ կանոններով ջոկատը Դարյենից անցավ Կոյբա։ Հարյուր իննսուն զինվոր՝ զինված նիզակներով, սրերով, արկեբուզներով[1] և ինքնաձիգ աղեղներով, որսորդական կատաղի շների մի մեծ ոհմակի ուղեկցությամբ։

Կացիկ Կարետան՝ Բալբոայի դաշնակիցը, նրան է տրամադրում իր հնդկացիներին իբրև բեռնակիր անասուններ և ուղեկիցներ։ Սեպտեմբերի 6-ին արդեն սկսվում է՝ պարանոցի անցման այն փառավոր արշավանքը, որ կամքի անհնարին լարում էր պահանջում նույնիսկ այդ անվեհեր ու փորձառու արկածախնդիրներից։ Խեղդուկ, թուլացնող, այրող արևադարձային տապի միջով իսպանացիների ճանապարհն անցնում է նախ ստորոտներով։ Ճահճոտ գետինը հագեցած է տենդի ժանտահոտ գոլորշիով, որի պատճառով հարյուր տարի անց բազմահազար մարդիկ պիտի կոտորվեին Պանամայի ջրանցքը կառուցելիս։ Առաջին իսկ ժամերից հարկավոր էր լիանների թունավոր մացառուտների միջով ճամփա բանալ կացնով ու սրով։ Ասես վիթխարի կանաչ հանքախորշի միջով ջոկատի առաջապահներն անցուղիներ են փորում խիտ թավուտներում։ Նեղլիկ անցուղիներով, զինվոր զինվորի ետևից, անվերջանալի շարքով ընթանում է կոնկիստադորների ջոկատը՝ աչալուրջ զոր ու գիշեր, մշտապես պատրաստ ետ մղելու տեղացիների անսպասելի հարձակումը։ Ավելի ու ավելի խեղդուկ է դառնում տապը խոնավ աղջամուղջում, հսկայական ծառերի կամարների տակ, որոնց վերևում անողոքաբար վառվում է արևը։ Հաղթահարելով քայլ քայլի ետևից, մարդիկ դեգերում են ծանր ասպազենի ծանրության տակ կքած, քրտնամխած, ծարավից ճաքճքված շուրթերով։ Հետո հանկարծ տեղատարափ փոթորկածին անձրև է տեղում. առվակները մի ակնթարթում դառնում են սրընթաց գետեր, որոնք պետք է կամ կտրել ծանծաղուտ տեղերով, կամ անցնել երերուն կամրջակներով, կամ էլ հնդկացիների ձեռքով ծառի կեղևից շուտափութ սարքված սայթաքուն կամրջակներով։ Իսպանացիների ունեցած միակ բանը, որ կարող է նրանց ուժերը վերականգնել՝ մի-մի բուռ եգիպտացորենն է։ Անքնությունից տառապելով, սովահար, ծարավից տոչորվելով, պարուրված խայթող, արնախում միջատների պարսերով՝ նրանք առաջ են ընթանում փշերից քրքրված հագուստներով, վիրավոր ոտքերով։ Նրանց աչքերը փայլում են տենդորեն, դեմքները ուռել են մոծակների

[1] արկեբուզ—պատրույգավոր հրացան

խայթերից։ Ոչ ցերեկը հանդիստ ունեն, ոչ գիշերը՝ քուն, և շուտով բոլորովին ուժասպառ են լինում։ Մի շաբաթից արդեն ջոկատի մեծ մասն այլևս ի վիճակի չէ տանելու ճանապարհի զրկանքները, և Նունյես դե Բալբոան հրամայում է լքել բոլոր ուժահատներին և տենդով հիվանդներին. նա գիտե, որ մեծ վտանգը դեռ առջևումն է։ Նա որոշում է վրճռական փորձությանն ընդառաջ գնալ իր ջոկատի ընտրանիով միայն։

Վերջապես սկսվում է վերելքը լեռն ի վեր։ Նոսրանում է թանձրախիտ անտառը, որ ճահճային ստորոտներում արևադարձային փարթամ տեսք ուներ։ Բայց հիմա, երբ ստվերն այլևս չի պաշտպանում մարդկանց, ծանր զրահները անտանելիորեն շիկանում են արևի կիզիչ, ուղղաձիգ ճառագայթներից։ Հոգնատանջ մարդիկ կարող են միայն դանդաղորեն և միայն կարճ անցումներով, աստիճան առ աստիճան հաղթահարելով ելնել բլուրներով դեպի այն լեռնաշղթան, որ ձգվում է երկու օվկիանոսների միջև ընկած նեղ պարանոցի երկարությամբ։ Աստիճանաբար հորիզոնը լայնանում է, օդը՝ զովանում։ Տասնութօրյա հերոսական ջանքերից հետո ամենամեծ դժվարությունները, հավանորեն, մնացել են ետևում։ Ուղևորների առաջ ծառանում է լեռան բաշը, որի գագաթից, ուղեկից հնդկացիների ասելով, միանգամից երևում են երկու օվկիանոսները՝ Ատլանտյանը և մյուսը՝ որ դեռ անհայտ է ու անանուն՝ խաղաղ օվկիանոսը։

Բայց հենց հիմա, երբ, թվում էր, վերջնականապես հաղթահարվել է բնության համառ ու նենգ դիմադրությունը, նրանց դիմավորում է մի նոր թշնամի. այն կացիկը, որ տիրում է լեռնաշղթայի մյուս կողմն ընկած մարզին, հարյուր զինվորով փորձում է փակել օտարերկրացիների ճամփան։ Բայց Նունյես դե Բալբոան հնդկացիների դեմ կռվելու մեծ փորձ ունի։ Բավական է արկեբուզների մի համազարկ՝ և արհեստական կայծակն ու որոտը կախարդական ազդեցություն են գործում բնիկների վրա։ Նրանք սոսկումի ճիչեր արձակելով ցրվում են՝ իսպանացիներից ու որսորդական շներից հալածվելով։ Եվ հեշտ հաղթանակով գոհանալու փոխարեն, Բալբոան, ինչպես բոլոր իսպանական կոնկիստադորները, իր հաղթանակն անարգում է ստոր դաժանությամբ. նա անզեն ու կապոտված, դեռևս կենդանի գերիների վրա բաց է թողնում սովահար, կատաղած շների ոհմակը, որ կրծոտում, խոշտանգում, պատառ-պատառ է անում նրանց։ Այսպիսի նողկալի սպանդով անարգվում է Նունյես դե Բալբոայի անմահ օրվա նախորդ գիշերը։

Անկրկնելի, անբացատրելի հակասություններ կան իսպանական կոնկիստադորների բնավորության և վարքագծի մեջ. բացառիկորեն աստվա-

ծավախ և ջերմեռանդ քրիստոնյաներ՝ նրանք աղոթում են ի խորոց սրտի և միաժամանակ հանուն աստծո կատարում են պատմության մեջ նմանը չունեցող ամենանողկալի, անմարդկային չարագործություններ։ Ընդունակ արիության ամենահոյակապ և հերոսական դրսևորումների, անձնազոհության, ամենածանր փորձությունների դիմանալու զարմանալի քաջության՝ նրանք կռվում են իրար հետ և անամոթաբար խաբում միմյանց։ Եվ, այսուհանդերձ, նույնիսկ բարոյական անկման մեջ նրանք պահպանում են պատվի վառ արտահայտված զգացում և իրենց խնդրի պատմական վսեմության սքանչելի, հիրավի հիացման արժանի ըմբռնում։ Նույն այդ Բալբոան, որ նախորդ օրն անմեղ, անզեն և կողոպտված գերիների վրա բաց էր թողել արնառուշտ շներին և, կարող է պատահել, հաճույքով շոյել է մարդկային թարմ արյունից խոնավ շան դունչը, հիանալի հասկանում է իր սխրանքի նշանակությունը մարդկության պատմության մեջ և ընդունակ է վճռական պահին կատարել այնպիսի հոյակապ մի արարք, որ հավերժ կմնա հետնորդների հիշողության մեջ։

Բալբոան գիտե՝ սեպտեմբերի 25-ը կդառնա համաշխարհային պատմական օր, և զուտ իսպանական պաթոսով այդ դաժանաբարո, ոչնչի առաջ կանգ չառնող արկածախնդիրը ցույց է տալիս, որ խորապես ըմբռնում է իր պատմական առաքելության իմաստը։

Բալբոայի հոյակապ արարքը. հենց արյունալի սպանդից անմիջապես հետո, գիշերը, ընիկներից մեկը նրան ցույց է տալիս մոտակա բարձունքը, ասելով, թե այնտեղից արդեն կարելի է տեսնել անհայտ ծովը։ Mar del sur. Բալբոան իսկույն-ևեթ անհրաժեշտ կարգադրություն է անում։ Նա վիրավոր և ուժահատ մարդկանց թողնում է քարուքանդ արված գյուղում և իր ջոկատի այն մարդկանց, որ դեռ ընդունակ են շարժվելու, հրամայում է լեռը բարձրանալ։ Դարյենից արշավանքի դուրս եկած հարյուր իննսուն մարդուց մնացել է միայն վաթսունյոթը։ Առավոտյան տասի մոտ նրանք մոտենում են լեռան բաշին։ Պետք է ևս մի ոչ մեծ բարձունք ելնել, և աչքի առաջ կբացվի ծովի անեզրությունը։

Բալբոան ջոկատին կանգնելու հրաման է տալիս։ Ոչ ոք չպետք է հետևի իրեն, քանի որ նա ոչ ոքի հետ չի ուզում բաժանել անհայտ օվկիանոսի վրա առաջինը հայացք նետելու իրավունքը։ Նա ուզում է լինել և հավերժության մեջ մնալ իբրև այն միակ առաջին իսպանացին, առաջին եվրոպացին, առաջին քրիստոնյան, որը, կտրելով հողագնդի վիթխարի օվկիանոսը՝ Ատլանտյանը, տեսավ մյուս, մինչև այդ անհայտ, խաղաղ օվկիանոսը։

Դանդաղորեն, տրոփացող սրտով, խորապես ներթափանցված այդ պահի վսեմության գիտակցությամբ՝ նա ելնում է վեր, ձախ ձեռքում դրոշ, աջում՝ սուր. մարդկային միայնակ մի կերպարանք անընդդրկելի տարածության մեջ։ Եվս մի քանի քայլ, ևս մի քիչ, շա՛տ քիչ։

Եվ իրոք, երբ նա հասնում է լեռնագագաթին, իր առջև բացվում է փառահեղ մի պատկեր։ Ուղղաձիգ կտրվող լեռներից, թեքահայաց անտառապատ բլուրներից այն կողմ տարածվում է անեզր մի հեռաստան, որ շողշողում է մետաղի փայլով. ահա նա՝ ծո՛վը, նո՛ր ծովը, մինչև այժըմ միայն անրջվող և երբեք չտեսնված, Կոլումբոսի և իր հետևորդների ապարդյուն որոնած առասպելական ծովը, որի ալիքները ողողում են Ամերիկան, Հնդկաստանը և Չինաստանը։

Եվ Վասկո Նունյես դե Բալբոան նայում ու նայում է անհագորեն, ապրելով այն հպարտ ու երանելի գիտակցությունը, որ ինքն է առաջին եվրոպացին, որի աչքերում արտափայլեց նորահայտ ծովի անեզր կապույտը։

Երկա՛ր և ինքնամոռաց՝ հեռուն է նայում Վասկո Նունյես դե Բալբոան։ Դրանից հետո միայն նա կանչում է ընկերներին՝ միասին վայելելու այդ հրճվանքը, իր հպարտությունը։ Բորբոքված, հուզախռով, տաքացած, շնչակտուր, բարձր կանչերով, մերթ չորեքթաթ, մերթ վազքով նրանք ելնում են լեռնագագաթը, տեսնում են, սքանչանում, հիացմունքով նայում միմյանց։ Նրանց ուղեկցող պատեր Անդրեաս դե Վերան հանկարծ սկսում է երգել «Te Deum Laudamus»[1] սաղմոսը, և կանչերն ու աղմուկը իսկույն դադար են առնում. այդ բոլոր զինվորների, արկածախնդիրների և ավազակների կոպիտ ու խռպոտ ձայները միահյուսվում են բարեպաշտ օրհներգությանը։

Զարմանքով են նայում հնդկացիները, թե ինչպես, հոգևորականի խոսքին հլու, իսպանացիները մի ծառ են կտրում, խաչ սարքում և նրա վրա փորագրում իսպանական թագավորի անվան առաջին տառերը։ Եվ երբ կանգնեցվում է խաչը, թվում է, թե երկու կողմի վրա տարածված նրա փայտե զույգ թևերը ձգտում են ընդգրկել զույգ ծովերը՝ Ատլանտյան և խաղաղ օվկիանոսներն իրենց անեզր հեռուներով։

Այդ ակնածալի լռության մեջ Նունյես դե Բալբոան առաջ է գալիս և ճառ է ասում։ Գովելի է,— ասում է նա,— որ իր զինվորները փառաբանում են աստծուն իրենց բաժին հանած պատվի ու ողորմածության հա-

---

1 «Քեզ ենք, աստված, օրհնում...»—վաղ քրիստոնյաների աղոթքի առաջին բառերը (լատ.)

մար և նրանից օրհնություն են խնդրում այդ ծովն ու բոլոր այդ երկրները նվաճելու համար։ Եթե նրանք նույնպիսի նվիրվածությամբ, ինչպես մինչ այդ պահը, հետևեն իրեն՝ նրանք նոր Հնդկաստանից կվերադառնան իբրև Իսպանիայի ամենահարուստ մարդիկ։ Բալբոան հանդիսավորությամբ ծածանում է դրոշը չորս բոլորը, ասես Իսպանիայի տիրապետության տակ առնելով այս բոլոր հեռաստանները, որոնց վրա փչում են հողագնդի բոլոր չորս քամիները։ Հետո նա իր մոտ է կանչում գրագիր Անդրեաս դե Վալդերրաբանոյին և հրամայում մի թուղթ գրել, որ բոլոր ժամանակների համար վավերացնի տիրապետության հաստատման հանդիսավոր իրողությունը։

Անդրեաս դե Վալդերրաբանոն փռում է մագաղաթը, որ կուսական անտառների միջով տեղ է հասցրել փայտե տուփի մեջ՝ մելանի և սագի փետուրի հետ միասին։ Նա իր մոտ է կանչում բոլոր աղնվականներին, ասպետներին ու զինվորներին, որոնք ներկա են գտնվել Հարավային ծովի հայտնաբերմանը «աղնվաշուք և գերապատիվ սենյոր, կապիտան, նորին մեծության նահանգապետ Վասկո Նունյես դե Բալբոայի կողմից», և վկայել, որ «սույն սենյոր Վասկո Նունյեսն այն անձն է, որ առաջինն է հայել նոր ծովը և ցույց տվել իր ուղեկիցներին»։

Հետո վաթսունյոթ մարդ սկսում է վայրէջքը դեպի ծով, և 1513 թվականի սեպտեմբերի 25-ից մարդկությանը հայտնի է դառնում հողագնդի ցայժմ անհայտ վերջին օվկիանոսը։

ՈՍԿԻ ԵՎ ՄԱՐԳԱՐԻՏ

Այլևս չկա տարակուսանք։ Նրանք տեսել են ծովը։ Բայց հիմա հարկավոր է ափ իջնել, ձեռքը սուզել խոնավ տարերքի մեջ, դիպչել ջրին, ձեռք տալ նրան, զգալ նրա համը և ավարառություն անել ծովեղերին։

Վայրէջքը տևում է երկու օր և, որպեսզի առաջիկայում իմանան լեռներից ծովը տանող ամենակարճ ուղին, Բալբոան իր ջոկատը մի քանի խմբի է բաժանում։ Դրանցից երրորդը, Ալոնսո Մարտինի գլխավորությամբ, առաջինն է ծովածոց դուրս գալիս։ Բոլորը, արկածախնդիրների այդ ջոկատի հասարակ զինվորները ներառյալ, այն աստիճանի են-բռնված փառքի ու անմահության տենչով, որ նույնիսկ այնպիսի աննշան մարդ, ինչպիսին է Ալոնսո Մարտինը, պահանջում է, որ գրագիրն իսկույնևեթ սևով սպիտակի վրա վավերացնի, որ ինքը՝ Ալոնսո Մարտինն է առաջինը ոտքն ու ձեռքը սուզել այդ դեռևս անանուն ջրերը։ Եվ իր փոքրիկ ես-ին անմահության մի նշույլ պարգևելուց հետո միայն նա հա-

զորդում է Բալբոային, որ հասել է ծովին և իր ձեռքով դիպել նրա ալիքներին։

Դրանից հետո Բալբոան նախապատրաստում է ևս մի բարձրաշունչ արարք։ Հաջորդ օրը, Միքայել հրեշտակապետի տոնի օրը, նա հանդիսավոր ծես է կատարում և հանձն առնում նոր ծովի տիրապետությունը։ Նա միանգամից չէ, որ ծովն է մտնում, այլ, իբրև ծովի տերն ու տիրակալը, նախ հանգիստ է առնում ծառի տակ, գոռոզաբար սպասում մինչև աճող մակընթացությունը իր ոտքերին հասցնի ալիքը և, ինչպես հնազանդ շուն, լիզի ոտքերը։ Դրանից հետո միայն Բալբոան ոտքի է ելնում, ուսին առնում վահանը, որ արևի տակ շողշողում է հայելու պես, մի ձեռքն առնում սուրը, մյուսով բռնում Կաստիլիայի դրոշը՝ աստվածամոր պատկերը վրան, և ծովը մտնում։ Այն ժամանակ միայն, երբ ծովը ներքան թրջում է մինչև գոտկատեղը և չորս բոլորը ծփում է անհայտ ու վիթխարի ջրային տարերքը՝ Նունյես դե Բալբոան, մինչ այդ խռովարար և արքայամերժ մարդ, իսկ հիմա հաղթանակողն ու իր արքայի հավատարիմ ծառան, բարձրացնում է դրոշը, ծածանում բոլոր կողմերի վրա՝ ահեղագոչ ազդարարելով. «Կեցցե՛ն Ֆերդինանդն ու Խուանան, Կաստիլիայի, Լեոնի և Արագոնի վսեմ ու հզոր տիրակալները՝ հանուն որոնց ես անմիջապես հանձ եմ առնում այդ ճշմարիտ ու մշտակայուն տիրապետությունը և կաստիլական թագավորների թագին եմ միացնում բոլոր այս ծովերն ու հողերը, ծովափերը, ծովածոցերն ու կղզիները և երդում եմ տալիս, որ եթե որևէ մի թագավոր կամ ուրիշ զորավար, լինի քրիստոնյա թե հեթանոս, ինչ հավատի ու ծագման էլ լինի՝ ոտնձգություն անի սույն ծովերի ու հողերի հանդեպ, ապա ես կելնեմ նրանց դեմ հանուն Կաստիլիայի թագավորների, որոնց սեփականությունն են այս ամենը այժմ ու հավիտյան, քանի դեռ կանգուն է աշխարհը և մինչև գալուստը երկրորդ»։

Բոլոր իսպանացիները կրկնում են երդման խոսքերը, և նրանց ձայները մի պահ խլացնում են մակընթացության հզոր աղմուկը։ Ամեն ոք շուրթերը թրջում է ծովի ջրով։ Եվ գրագիր Անդրեաս դե Վալդերրաբանոն վերստին արձանագրություն է կազմում ի վավերացումն այն իրողության, որ տիրապետությունը հաստատված է՝ փաստաթուղթը եզրափակելով հետևյալ խոսքերով. «Սույն քսաներկու մարդը, իսկ նրանց հետ նաև գրագիր Անդրեաս դե Վալդերրաբանոն, առաջին քրիստոնյաները եղան,

որ մտան Mar del sur-ի ջրերը, և բոլորը ջրին դիպան ձեռքերով, թրջեցին շուրթերը, որպեսզի իմանան՝ այստեղի ջուրն արդյոք աղի՞ է մյուս ծովի նման։ Եվ համոզվելով, որ իրոք այդպես է, նրանք փառք տվին աստծուն»։

Մեծ սխրանքն ի կատար է ածված։ Հիմա պետք է քաջագործությունից երկրային օգուտներ քաղել։ Իսպանացիները փոխանակմամբ ու հափշտակումով մի քիչ ոսկի են ձեռք բերում բնիկներից։ Բայց հաղթության ժիտորի մեջ հայտնվում է մի նոր անակնկալ։ Հնդկացիները լեցուն բուերով թանկագին ադամանդներ են բերում։ Մոտակա կղզիներում դրանցից շատ կա և բերվածի մեջ գտնվում են «Պալեգրինա» կոչվող այնպիսի մարգարիտներ, որ փառաբանել են Սերվանտեսն ու Լոպե դե Վեգան, քանի որ այդ ամենասքանչելի մարգարիտները զարդարել են Իսպանիայի և Անգլիայի թագավորների թագերը։

Բալբոայի մարդիկ իրենց գրպաններն ու տոպրակները լցնում են մարգարիտներով, որոնք այստեղ գնահատվում են ոչ ավելի, քան ծովի ավազն ու խեցին։ Երբ նրանք ագահորեն հարցուփորձ են անում իրենց համար ամենակարևոր բանի՝ ոսկու մասին, կացիկներից մեկը մատնացույց է անում հարավը, այնտեղ, ուր լեռների ուրվագծերը մեղմորեն ձուլվում են հորիզոնին։ Այնտեղ,— ասում է նա,— ընկած է անհաշիվ հարստության երկիրը. այդ երկրի տիրողները ուտում-խմում են ոսկեղեն սպասքով և թանկագին բեռն արքայական գանձատուն են կրում շորքոտանի մեծ կենդանիներով. կացիկն ի նկատի ուներ լամերին։ Նա արտաբերում է մի բառ, որ նշանակում է ծովից ու լեռներից այն կողմ ընկած երկրի անունը։ Այդ բառը հնչում է ինչպես «Բիրու»՝ մեղեդային և օտարոտի։

Վասկո Նունյես դե Բալբոան սևեռուն նայում է կացիկի մեկնած ձեռքի կողմը, այնտեղ, ուր հեռավոր լեռները, գունաթափվելով, կորչում են երկնքի ծովում։ Քնքուշ ու հրապուրիչ «Բիրու» բառն անմիջապես տեղ է գտնում նրա հոգում։ Սիրտը տրոփում է անհանգիստ։ Երկրորդ անգամ նրա կյանքում նախանշվում է իր բախտը՝ անսպասելի, ինչպես երկնքից իջած հայտնություն։ Առաջին անգամ, երբ Կոմագրեն ասաց, որ ծովը մոտ է. դա ի կատար ածվեց՝ Բալբոան գտավ մարգարտի ափը և Mar del sur-ը։ Թերևս երկրորդն էլ հաջողվի՝ հայտնագործել ու նվաճել ինկերի պետությունը, ոսկու երկիրը գտնել մեր հողագնդում։

ԱՍՏՎԱԾՆԵՐԸ ՀԱՋՎԱԴԵՊ ԵՆ ՇՆՈՐՀՈՒՄ...

Նունյես Բալբոան կրքոտ տենչանքով դեռևս նայում է հեռուն։ Իբրև ոսկեձույլ զանգակի զողանջ նրա ականջին հնչում է այն բառը՝ «Բիրու» —«Պերու»։ Սակայն, որքան էլ դառն է խոստովանել, նա հիմա չի կարող նոր որոնումներ ու նվաճումներ կատարել։ Չի կարելի երկու-երեք տասնյակ հոգնատանջ մարդկանցով պետություն նվաճել։ Ուրեմն, ետ դեպի Դարյեն։ Ավելի ուշ, ուժեր հավաքելով, նա նույն այս ճանապարհով ուղևորվում է դեպի Նոր Օփիր։ Բայց վերադարձի ուղին ոչ պակաս դժվարին էր։

Իսպանացիները վերստին ճեղքում են թավուտները, վերստին նա են մղում բնիկների հարձակումները։

Եվ 1514 թվականի հունվարի 19-ին, չորս ամսվա դժոխային փորձություններից հետո, Դարյեն է վերադառնում ոչ թե զինվորական մի ջոկատ, այլ տենդով բռնված, ոտքերը հազիվ քարշ տվող մի բուռ մարդիկ։ Իր՝ Բալբոայի կյանքը մազից է կախված. հնդկացիները նրան պատգարակով են բերում։ Բայց պատմության մեծագույն սխրանքներից մեկը ի կատար է ածված։ Բալբոան իր խոսքի տերը եղավ՝ դեպի անհայտություն կատարված անվեհեր արշավանքի բոլոր մասնակիցները հարստացան. նրանք Հարավային ծովի ափերից այնքան դանձ բերին, ինչքան չէին բերել ոչ Կոլումբոսը, ոչ մյուս կոնկիստադորները։ Դաղութի մյուս անդամներն էլ իրենց բաժինը առան։

Ավարի հինգերորդ մասը տրվում է գահի տնօրինությանը։ Ոչ ոք չի նախատի հաղթողին, եթե նա, ծառայությունները գնահատելիս, մյուս ռազմիկների հետ միասին, բաժին հանի նաև իր շանը, ըստ երևույթին տարաբախտ բնիկներին պատառ-պատառ անելու համար։ Եվ Բալբոան հրամայում է իր Լեոնսիկո շան վզից կախել հինգհարյուր ոսկե պեսետ։

Դաղութում հիմա այլևս ոչ ոք չի վիճարկում նահանգապետ լինելու Բալբոայի իրավունքը։ Արկածախնդրին և խոովարարին պատվում են իբրև աստծո, և նա կարող է հպարտությամբ հաղորդել հայրենիք, որ Կոլումբոսից հետո ինքն է գործել ամենամեծ սխրանքը հանուն կաստիլական թագի։ Իր սրընթաց վերելքով նրա բախտի արևը փարատեց այն ամպերը, որ մինչ այդ մռայլով էին պատում իր կյանքը։ Բալբոայի արևը հասել է զենիթին։

Սակայն Բալբոայի երջանկությունը երկար չի տևում։ Մի քանի ամսից, մի շատ պայծառ հունիսյան օր, Դարյենի բնակիչները ապշահար խռնվում են ծովափին։ Առագաստ է երևում հորիզոնում, հիրավի չտես-

նված հրաշք աշխարհիս այդ հեռավոր անկյունում։ Բայց սա ի՞նչ բան է։ Առաջինի կողքին երևան է գալիս երկրորդը, երրորդը, չորրորդը, հինգերորդը... Ահա դրանք դարձան տասը, ոչ, տասնհինգը, քսանը՝ մի ամբողջ տորմիղ է մոտենում նավահանգստին։ Շուտով ամեն ինչ պարզ է դառնում. դա Նունյես դե Բալբոայի ուղերձի, ոչ թե նրա սխրագործության (այդ լուրը դեռ Իսպանիա չի հասել), այլ առաջին նամակի պատասխանն է, այն նամակի, որով նա հաղորդում էր կացիկի հայտնածը Հարավային ծովի ու ոսկեբեր երկրների գոյության մասին և խնդրում էր հազար մարդուց բաղկացած մի ջոկատ տալ իրեն այդ հողերը նվաճելու համար։

Իսպանական կառավարությունն անհապաղ մի տորմիղ էր կազմավորել այդ արշավի համար, բայց Սևիլիայում ու Բարսելոնայում մտադիր չէին այդքան կարևոր խնդիրը վստահել արկածախնդիր և խռովարար, այնքան վատահամբավ Նունյես դե Բալբոային։

Իսկական նահանգապետը՝ մեծահարուստ և աղնվազարմ վաթսունամյա՝ պալատական Պեդրո Արիաս Դավիլյան, որին սովորաբար Պեդրարիաս էին կոչում, լիազորված է իբրև արքայական նահանգապետ գաղութում, վերջապես, կարգուկանոն սահմանելու, մինչ այդ գործված բոլոր հանցագործությունների դատ ու դատաստանն անելու, Հարավային ծովը գտնելու և ոսկու ավետյաց երկիրը նվաճելու համար։

Բայց Պեդրարիասը հայտնվում է բավական բարդ իրադրության մեջ։ Նախ և առաջ նա լիազորված է պատասխանատվության ենթարկել խռովարար Նունյես դե Բալբոային, որ արտաքսել էր նախորդ նահանգապետին։ Եթե Բալբոայի մեղքը հաստատվեր, ապա պետք է շղթայակապ աներ նրան կամ դատը կատարեր տեղում։ Երկրորդ՝ Պեդրարիասին հանձնարարված է գտնել Հարավային ծովը։ Բայց նահանգապետն ափ իջնելուն պես տեղյակ է դառնում, որ հենց Նունյես դե Բալբոան, որին պետք է դատապարտել, սեփական կամքով ու ջանքով մեծագործություն է կատարել և դեռ հասցրել է տոնել իր հաղթանակը՝ յուրացնելով Պետրարիասի համար նախատեսված դափնիները և իսպանական թագին մատուցել մեծագույն ծառայությունը՝ Ամերիկայի հայտնագործությունից ի վեր։

Պարզ է, որ Պետրարիասը չի կարող կտրել այդպիսի մարդու գլուխը, ինչպես սովորական մի ոճրագործի. նա ստիպված է պատշաճորեն ողջունել նրան և ջերմորեն շնորհավորել։ Բայց այդ պահից ի վեր Նունյես դե Բալբոան դատապարտված է։ Պեդրարիասը երբեք չի ների մրցակցին, որ նա ինքնագլուխ կերպով արել է այն հայտնագործությունը, որ հանձնարարված էր Պեդրարիասին և նրան հավերժական փառքով

պիտի պսակեր։ Վաղաժամորեն գաղութաբնակների զայրույթը չշարժելու համար նա պետք է թաքցնի իր ատելությունը գաղութի հերոսի հանդեպ։ Նա հետաձգում է դատական հետաքննությունը և առերևույթ խաղաղություն կնքում, որի համար էլ հայտարարում է Նունյես դե Բալբոայի նշանադրությունը Իսպանիայում մնացած իր դստեր հետ։ Սակայն նրա նախանձն ու ատելությունը Բալբոայի հանդեպ բնավ չի նվազում, ընդհակառակը, ավելի է սաստկանում, երբ Իսպանիայից, ուր, վերջապես, առել էին Բալբոայի սխրանքի լուրը, գալիս է մի հրամանագիր, որով նախկին խռովարարին հետին թվով շնորհվում է իրեն վայել տիտղոսը։ Այսուհետև նա Պեդրարիասին հավասար կոչվում է նահանգապետ, իսկ Պեդրարիասին հանձնարարվում է նրա հետ խորհրդի նստել բոլոր կարևոր հարցերում։

Երկու նահանգապետի համար երկիրը նեղ է գալիս. նրանցից մեկը պետք է նահանջի, մեկն ու մեկին կործանում է սպասում։ Վասկո Նունյես դե Բալբոան զգում է, որ գլխին սուր է կախված, քանի որ Պեդրարիասն իր ձեռքում է պահում ռազմի իշխանությունը և դատարանը։

Բալբոան երկրորդ անգամ է մտադրվում փախուստ տալ, չէ որ առաջինը՝ փախուստը դեպի անմահություն, նրան հաջողվեց այնքան փայլուն կերպով։ Նա Պեդրարիասից խնդրում է արշավախումբ կազմավորել Հարավային ծովի ափերը հետազոտելու և իսպանական տերություններն ընդլայնելու համար։ Սակայն անուղղելի խռովարարի թաքուն մտահղացումը հետևյալն է. նա ուզում է մյուս ծովի ափին ազատվել ամեն մի հսկողությունից, ստեղծել սեփական տորմիղը, դառնալ սեփական նահանգի լիիրավ տիրակալը, իսկ հետագայում, թերևս, նվաճել առասպելական Բիրուն, Նոր Աշխարհի այդ Օփիրը։

Պեդրարիասը նենգամտորեն տալիս է իր համաձայնությունը. եթե Բալբոան կործանվի՝ ավելի լավ, եթե հաջողության հասնի՝ ինքը միշտ էլ կարող է ազատվել ատելի փառամոլից։

Եվ այսպես, Նունյես դե Բալբոան նորից պատրաստություն է տեսնում դեպի անմահություն փախուստ տալու համար։ Նրա երկրորդ սխրանքը առաջինից ավելի նշանակալի էր թերևս, բայց դա նույնպիսի փառք չբերեց նրան, քանի որ պատմությունը մշտապես հռչակում է հաջողության հասնողներին միայն։ Այս անգամ Բալբոան պարանոցը կտրում է ոչ միայն իր ջոկատի, այլև հազարավոր բնիկների հետ, որոնք իրենց ուսերին տանում էին անտառանյութ, առագաստներ, խարիսխներ, ամբարձիչներ՝ չորս բրիգանտին կառուցելու համար։ Չէ՞ որ լեռների մյուս կողմում նավատորմ ունենալու դեպքում նա կնվաճի ամբողջ ծովափը,

կտիրի մարգարտաշատ կղզիներին և Պերուին, առասպելական Պերուին։ Այս անգամ, սակայն, ճակատագիրը հակառակն է գնում հանդուգն ծովագնացին, և նա շարունակ հանդիպում է նորանոր խոչընդոտների։ Այսպես, համատարած ճահճային թավուտներով անցնելիս որդերը փչացնում են անտառանյութը և տախտակները տեղ են հասնում փտած և անօգտագործելի վիճակում։ Բալբոան չի ընկճվում։ Նա հրամայում է ծառեր հատել Պանամայի ծովածոցի ափերին և նոր տախտակ կտրել։ Նրա եռանդը հրաշքներ է գործում, ամեն ինչ կարծես թե հաջողվում է. բրիգանտիններն արդեն պատրաստ են, առաջի՛ն նավերը խաղաղ օվկիանոսում։ Բայց հանկարծ վրա է հասնում փոթորիկը. այն գետերը, ուր պատրաստված են բրիգանտինները, բարձրանում են։ Ջուրն իրենց տեղերից պոկում է պատրաստի նավերը, քշում դեպի ծովը, ուր նրանք փըշուր-փշուր են լինում տաշեղի պես։

Պետք է ամեն ինչ սկսել երկրորդ անգամ։ Այս անգամ, վերջապես, Բալբոային հաջողվում է կառուցել երկու բրիգանտին։ Պետք են ևս երկուերեք, և նա արդեն կարող կլինի ճանապարհ ընկնել և տիրել այն երկիրը, որի մասին երազում է զոր ու դիշեր այն ժամանակից ի վեր, ինչ իր ականջին հնչեց «Բիրու» դյութական բառը։ Պետք է ջանք թափել, որ իրեն տրամադրեն ևս մի քանի քաջարի սպաներ, պետք է ինչպես հարկն է համալրել ջոկատը, և այն ժամանակ նա կարող է հիմնել իր պետությունը։ Եվս երկու-երեք ամիս ու մի փոքր էլ հաջողություն՝ Բալբոայի անվեհերության հետ, և համաշխարհային պատմությունը ինկերին հաղթող, Պերուն նվաճող կհռչակեր ոչ թե Պիսարոյին, այլ Նունյես դե Բալբոային։

Բայց ճակատագիրը չափազանց բարեհաճ չի լինում նույնիսկ իր սիրելիների հանդեպ։ Աստվածները մահկանացուին հազվադեպ են շընորհում մի անմահական մեծագործությունից ավելին։

ՄԱՅՐԱՄՈՒՏ

Նունյես դե Բալբոան երկաթե կամքով պատրաստվում էր իրագործելու իր նպատակը։ Բայց հենց արիությունն ու հաջողությունն են նրան վտանգի ենթարկում, քանի որ անհանգստացած Պեդրարիասը կասկածամիտ հայացքով հետևում է իր ենթակայի պատրաստություններին։

Հավանաբար, լրտեսների միջոցով նա իմացել էր իշխանություն ձեռք բերելու Բալբոայի փառասիրական տենչերի մասին, գուցե և նա պարզա-

պես նախանձում էր ու վախենում, թե հանկարծ ու մի նոր հաջողության չհասնի անուղղելի խռովարարը։

Ինչևէ, նա Բալբոային հղում է սրտագին մի նամակ, որով առաջարկում է արշավանքից առաջ հանդիպել Դարյենի մոտ գտնվող Ակլ քաղաքում։

Պեդրարիասից համալրում ստանալու հույսով, Բալբոան ընդունում է առաջարկը։ Ակլի դարպասների մոտ նրան դիմավորում է զինվորների մի ջոկատ, ըստ երևույթին, պատշաճ պատիվներ տալու համար։ Բալբոան հրճվանքով շտապում է գրկել ջոկատի հրամանատարին՝ իր հին ընկերոջն ու զինակցին Հարավային ծովը հայտնաբերելիս, իր հավատարիմ բարեկամ Ֆրանսիսկո Պիսարոյին։

Բայց Պիսարոն ձեռքը ծանրորեն դնում է Բալբոայի ուսին և նրան ձերբակալված է հայտարարում։ Պիսարոն նույնպես ծարավի է անմահության, նա էլ է ուզում նվաճել ոսկու երկիրը և հավանորեն դեմ չէ մեջտեղից հանելու հանդուգն հերոսին, որ կտրում է իր առաջը փառքի հասնելու ճանապարհին։

Նահանգապետ Պեդրարիասը դատական գործ է հարուցում Բալբոայի՝ իբրև թե հրահրած խռովության մասին։ Արվում է դատաստան՝ շուտափույթ և անարդար։

Մի քանի օր անց Վասկո դե Նունյես Բալբոային իր մերձավոր զինակիցների հետ միասին տանում են կառափնարան. փայլատակում է դահճի սուրը, գլուխը պոկում ուսերից, և մի ակնթարթում առմիշտ խավարում են աչքերն այն մարդու, որ առաջինն էր մարդկության պատմության մեջ տեսել մեր հողագունդը ողողող զույգ օվկիանոսները։

ՄԻ ԳԻՇԵՐՎԱ ՀԱՆՑԱՐԸ

Մարսեյլեզ, 25 ապրիլի 1792 թվականի

1792 թվականն է։ Արդեն ամբողջ երկու ամիս է, երրորդ ամիսն է արդեն Ազգային ժողովը չի կարողանում վճռել մի հարց՝ խաղաղությո՞ւն կնքել, թե՞ պատերազմ մղել ավստրիական կայսեր և պրուսական թագավորի դեմ։

Ինքը Լյուդովիկոս 16-րդը տարակուսանքի մեջ է. նա հասկանում է, թե իր գահին ինչ վտանգ է բերում հեղափոխական ուժերի հաղթա-

նակը, բայց նա հասկանում է նրանց պարտության վտանգը նույնպես։ Կուսակցությունը ևս չունի միասնական կարծիք։ Ժիրոնդիստները, կամենալով իշխանությունն իրենց ձեռքում պահել, կատաղորեն պատերազմ են ուզում։ Յակոբինցիները, Ռոբեսպիերի հետ միասին, ձգտելով գրավել իշխանությունը, պայքարում են հանուն խաղաղության։

Դրությունը դառնում է ավելի ու ավելի լարված. լրագրերն աղմուկաշաղակ են բարձրացնում, ակումբներում վեճերը դադար չեն առնում, խոսք ու զրույց է, որ ծագում է ամենուրեք, և հասարակական կարծիքն ավելի ու ավելի է շիկանում։ Եվ հենց այդ պատճառով էլ, երբ ապրիլի 20-ին Ֆրանսիայի թագավորը, վերջապես, պատերազմ է հայտարարում, բոլորն ակամա թեթևություն են զգում, ինչպես լինում է ամեն մի դժվարին հարց լուծվելուց հետո։

Այս բոլոր անվերջանալիորեն երկար շաբաթների ընթացքում Փարիզի վրա ծանրանում է մի հոգեմաշ ամպրոպային մթնոլորտ։ Բայց ավելի լարված, ավելի տանջալի վիճակ է տիրում սահմանամերձ քաղաքներում։ Զորքերն արդեն առաջ են քաշվել և դիրքավորվել բոլոր բիվուակներում, ամեն մի գյուղում, ամեն մի քաղաքում կամավորական ջոկատներ և Ազգային գվարդիայի ստորաբաժանումներ են զինվում։ Ամբոխություններ են բարձրանում ամենուրեք և ամենից առաջ Էլզասում, որտեղ գիտեն, որ ամեն անգամ, երբ կռիվ է ծագում Ֆրանսիայի ու Գերմանիայի միջև, ֆրանսիական այդ մի կտոր հողին է բաժին ընկնում առաջին ու վճռական ճակատամարտը։

Այստեղ, Հռենոս գետի ափին, թշնամին ոչ թե վերացական ու անշոշափելի հասկացություն է, հռետորական դարձվածք, ինչպես Փարիզում, այլ տեսանելի ու շոշափելի իրողություն։ Կամրջամերձ ամրության՝ տաճարի աշտարակի վրայից կարելի է անգեն աչքով էլ տեսնել մոտեցող պրուսական զորագնդերը։ Լուսնի լույսով սառնորեն փայլող գետի վրայով գիշերները քամին մյուս ափից բերում է թշնամական շեփորի ազդանշանների, զենք ու զրահի, հրետասայլերի շարժման աղմուկը։ Եվ ամեն ոք գիտե՝ մի հատիկ բառը, արքայական մի հրովարտակը բավական է, որ պրուսական հրանոթների երախները բոց ու որոտ արձակեն և վերստին Նորոգվի Գերմանիայի հաղարամյա պայքարը Ֆրանսիայի դեմ՝ այս անգամ մի կողմից՝ հանուն նոր ազատության և մյուս կողմից՝ հանուն հին կարգերի պահպանման։

Ուստի և այնքա՜ն նշանավոր է 1792 թվականի ապրիլի 25-ի օրը, երբ ռազմի էստաֆետը Փարիզից Ստրասբուրգ է հասցնում այն լուրը, թե Ֆրանսիան պատերազմ է հայտարարել։ Իսկույնևեթ բոլոր տներից ու

նրբանցքներից դուրս են թափվում բորբոքված, հուզախառով մարդկանց բազմություններ։ Հանդիսավորությամբ, գունդ առ գունդ, քաղաքային ամբողջ կայազորը գլխավոր հրապարակ է դուրս գալիս մի վերջին ստուգատեսի։ Այնտեղ կայազորին սպասում է Ստրասբուրգի քաղաքագլուխ Դիտրիխը՝ եռագույն ժապավենը ուսն ի վար կապած և եռագույն աստղանշանը գլխարկին, որը նա թափահարում է, ողջունելով շքերթի ելած զորքերին։

Շեփորները և թմբուկների մանրահարվածները լռության կոչ են անում, և Դիտրիխը բարձրաձայն կարդում է ֆրանսերեն ու գերմաներեն կազմված մի դեկլարացիա։ Եվ ուր էլ որ նա հռչակում է դեկլարացիան՝ քաղաքի բոլոր հրապարակներում՝ դրա վերջին բառերի վրա թնդում է գնդի նվագախումբը, հնչեցնելով հեղափոխության քայլերգերից առաջինը՝ «Կարմանյոլան»։ Իրավն ասած, դա դեռ քայլերգ էլ չէ, այլ կենսուրախ, խինդահարույց մի պարեղանակ, որին հատու, զրնգուն շեշտերն արշավային քայլերգի ռիթմ են հաղորդել։

Բազմությունը վերատին ցրվում է տներն ու նրբանցքները, ամենուրեք արտահայտվում է նրան համակած ոգեշնչումը, սրճարաններում, ակումբներում արտասանվում են հրաբորբոք ճառեր և տարածվում են թռուցիկներ։ «Ի զե՛ն, քաղաքացիներ։ Հառա՛ջ, հայրենիքի զավակներ։ Մենք երբեք ծնկի չե՛նք գա»։ Այսպես և համանման կոչերով են սկսվում բոլոր ճառերն ու թռուցիկները, և ամենուրեք, բոլոր ճառերում, բոլոր թերթերում, բոլոր պլակատներում, բոլոր քաղաքացիների շուրթերին հոլովվում են այդ ռազմաշունչ, զրնգուն կոչերը. «Ի զե՛ն, քաղաքացիներ։ Թող սարսափե՛ն թագակիր բռնակալները։ Հառա՛ջ, ազատություն մեր թանկագին»։ Եվ այս բոցաշունչ խոսքերով ներշնչված, հրճվալից բազմությունները այդ խոսքերը կրկնում են նորից ու նորից։

Պատերազմ հայտարարելու հետ ժողովուրդը ցնծում է փողոցներում ու հրապարակներում։ Բայց համընդհանուր ցնծության հենց նույն այս ժամին լսվում են և ուրիշ, զգույշ ու շրջահայաց ձայներ. պատերազմի լուրը հարուցում է նաև երկյուղ ու մտահոգություն, որոնք, սակայն, թաքնվել են անհամարձակ լռության մեջ կամ հազիվ լսելի հնչում են մութ անկյուններում։

Մշտապես և ամենուրեք մայրեր կան, որ մտածում են՝ օտար զինվորները չե՞ն սպանի իմ զավակին։ Ամենուրեք կան գյուղացիներ, որոնց համար թանկ են իրենց խրճիթները, հողը, ունեցվածքը, անասունները, բերքը. իրենց կացարանները կողոպուտի չե՞ն ենթարկվի, իսկ հրոսակ-

ները ոտքի տակ չե՞ն տա վարուցանքը, արյամբ չե՞ն ներծծվի իրենց վարելահողերը։

Բայց քաղաքագլուխ բարոն Ֆրիդրիխ Դիտրիխը, ինչպես ազնվական դասի լավագույն ներկայացուցիչները, ամբողջ հոգով նվիրված է նոր ազատությանը. նա կամենում է լսել միայն բարձրագոչ, վստահությամբ, հույսերով լեցուն ձայներ, և հենց այդ պատճառով էլ պատերազմ հայտարարելու օրը դարձնում է համաժողովրդական տոնախմբություն։ Եռագույն ժապավենը ուսին ի վար կապած, նա մի հավաքույթից մյուսն է շտապում՝ ոգեշնչելով ժողովրդին։ Նա հրամայում է արշավանքի ելնող զինվորներին գինի և լրացուցիչ պարեն բաժանել, իսկ երեկոյան Պլաս դե Բրոյլյի ընդարձակ առանձնատանը երեկույթ է հրավիրում գեներալների, սպաների ու բարձրաստիճան պաշտոնեության համար։ Եվ այնպիսի ոգեշնչում է տիրում այդ հրավերքում, որ դա նմանվում է նախապես կատարվող հաղթանակի տոնախմբության։

Գեներալները, ինչպես աշխարհիս բոլոր գեներալները, հաստատ համոզված են, որ կհաղթեն։ Այդ հրավերքում նրանք պատվավոր նախագահների դեր են կատարում, իսկ երիտասարդ սպաները, որոնք պատերազմի մեջ են տեսնում իրենց կյանքի բովանդակ իմաստը, աշխույժ խոսք ու զրույցի մեջ բորբոքում են միմյանց։ Նրանք սուր են խաղացնում, գրկախառնվում, կենաց բաժակներ բարձրացնում և, լավորակ գինուց տաքացած, ավելի ու ավելի մոլեգին ճառեր ասում։ Այդ ճառերում վերջապես կրկնում են թերթերի ու թռուցիկների շիկացած կոչերը. «Ի՜ զե՛ն, քաղաքացինե՛ր։ Հառա՛ջ, կուռ շարքերով։ Թող սարսափե՛ն թագակիր բռնակալները, մեր դրոշները կծածանենք Եվրոպայի վրա։ Կեցցե՛ սրբազան հայրենասիրությունը»։

Ամբողջ ժողովուրդը, բովանդակ երկիրը, համակված հաղթանակի հավատով, ազատության պայքարի ձգտումով, ծարավի է ի մի գալու այդպիսի պահերին։

Եվ ահա ճառերի ու կենացների թունդ պահին բարոն Դիտրիխը դիմում է կողքին նստած Ռուժե անունով երիտասարդ սպային, որ ինժեներական ծառայության կապիտան էր։ Բարոնը մտաբերել էր, որ գուցե ոչ այնքան սիրունատես, բայց շատ համակրելի այդ սպայիկը կես տարի առաջ, ի պատիվ սահմանադրության հռչակման, ազատության մի ոչ վատ հիմն էր գրել, որը հենց նույն ժամանակ նվագախմբի վերածեց գնդային երաժիշտ Պլեյելը։ Հիմնը մեղեդային էր, ուստի և զինվորական երգչախումբը սովորեց դյուրությամբ և նվագախմբի ուղեկցությամբ, հաջողությամբ կատարեց քաղաքի գլխավոր հրապարակում։

Նույնպիսի մի հանդիսանք չկազմակերպե՞լ ի նշանավորումն պատերազմ հայտարարելու և արշավանքի դուրս գալու։ Բարոն Դիտրիխը անփույթ տոնով, ինչպես սովորաբար լավ ծանոթներին դիմում են մի ինչ-որ դատարկ խնդիրքով, հարցնում է կապիտան Ռուժեին (ի դեպ, այդ կապիտանը առանց որևէ հիմք ունենալու աղնվական տիտղոս է յուրացրել և կրում է Ռուժե դե Լիլ ազգանունը), թե արդյոք չպե՞տք է օգուտ քաղել հայրենասիրական վերելքից և մի քայլերգ գրել Հռենոսյան բանակի համար, որ վաղը դուրս է գալիս արշավանքի՝ թշնամու հետ մարտնչելու։

Ռուժեն փոքրիկ, համեստ մարդ է. նա երբեք չի կարծել, թե ինքը մեծ արվեստագետ է, իր բանաստեղծությունները ոչ ոք չի տպագրում. իսկ օպերաները բոլոր թատրոնները մերժում են, բայց և գիտե, որ բանաստեղծությունն իրեն երբեմն հաջողվում է։ Կամենալով հաճոյանալ բարձրաստիճան պաշտոնյային և ընկերոջը, Ռուժեն տալիս է իր համաձայնությունը։ Լավ, կփորձի գրել։

— Բրավո՞, Ռուժե։ — Դիմացը նստած գեներալը խմում է նրա կենացը և հրամայում, որ քայլերգը գրվելուն պես ուղարկի ռազմադաշտ։ Թող դա լինի հայրենասիրական զգացմունքներով թևավորող մի երգ։ Հռենոսյան բանակին իրոք հարկավոր է այդպիսի երգ։

Այս ընթացքում ինչ-որ մեկն արդեն ուրիշ ճառ է ասում։ Նորից են բարձրանում և միմյանց զարկվում կենաց բաժակները, նորից ժխոր է տիրում։ Համընդհանուր ոգեշնչման հզոր ալիքը կուլ է տալիս պատահական ու կարճատև զրույցը։ Ավելի ներշնչված ու բարձրագոչ են դառնում ձայները, ավելի բուռն է դառնում խնջույքը, և կեսգիշերից շատ անց միայն՝ հյուրերը լքում են քաղաքագլխի տունը։

Կեսգիշեր է։ Ավարտվել է Ստրասբուրգի համար այնքան նշանակալի ապրիլի 25-ը՝ պատերազմ հռչակելու օրը, ավելի ճիշտ, եկել է ապրիլի 26-ը։ Բոլոր տները թաղված են խավարի մեջ, բայց դա խաբուսիկ խավար է՝ հեռու գիշերային անդորրից. քաղաքը բորբոքված է։ Զինվորները զորանոցում պատրաստվում են արշավի, իսկ տներից շատերում, փեղկերը փակելով, ավելի զգուշավոր քաղաքացիները գուցեև իրերն են կապոտում փախչելու համար։ Փողոցներով անցնում են հետևակային գումարտակները, մերթ հեծյալ սուրհանդակն է սուրում՝ սալահատակը կոկոտացնելով, մերթ անցնող թնդանոթներն են դղրդացնում փողոցը, և ամբողջ ժամանակ հնչում են ժամապահների միալար կանչերը։

Ոսոխը շատ մոտ է, շատ հուզախառով ու անհանգիստ է քաղաքի սիրտը, որպեսզի նա կարողանա հանգիստ առնել այսքան վճռական մի պահի։

Արտասովոր հուզմունքի մեջ է նաև Ռուժեն, որ, վերջապես, կորավուն սանդուղքով բարձրացել, հասել է Գրան Ռյու փողոցի 126 տանը գտնվող իր համեստ սենյակը։ Նա չի մոռացել Հաենոսյան բանակի համար շուտափույթ մի քայլերգ գրելու խոստումը։ Նա անհանգիստ ետուառաջ է անում իր նեղլիկ սենյակի մի անկյունից մյուսը։ Ինչպե՞ս սկսել, ինչպե՞ս սկսել։ Ականջներում դեռևս հնչում է բոցաշունչ կոչերի, կենացների, ճառերի քառասային ժխորը։ «Ի զե՛ն, քաղաքացիներ... Հառա՛ջ, ազատության զավակներ... Ճղմե՛նք բռնակալների սև ուժերը...»։ Բայց նա մըտաբերում է նաև ուրիշ, ի միջի այլոց ականջին հասած խոսքեր՝ իրենց զավակների կյանքի վրա դողացող մայրերի և այն գյուղացիների խոսքերը, որոնք վախենում են իրենց դաշտերը հրոսակների ոտքի տակ տըրորված և արյամբ ներկված տեսնելուց։

Նա ձեռքն է առնում գրիչը և գրեթե անգիտակցաբար թղթին հանձնում բանաստեղծության առաջին տողերը. դրանք իր լսած կոչերի կըրկնությունն են, արձագանքը միայն.

Հառա՛ջ, ուս-ուսի քայլելով կրկին,
Ազատությունն է մեզ ոգեշնչում...

Նա կարդում է և ինքն էլ մնում զարմացած՝ սա հենց այն է, ինչ հարկավոր է։ Սկիզբը դրված է։ Հիմա պետք է համապատասխան ռիթմ ու մեղեդի գտնել. Ռուժեն պահարանից հանում է ջութակը և աղեղը տանում լարերի վրայով։ Եվ, — օ՜ հրաշք, — առաջին իսկ տակտերից նրան հաջողվում է գտնել մեղեդին։ Նորից է հափշտակում գրիչը և գրում՝ ավելի ու ավելի համակվելով մի հանկարծահաս խորհրդավոր զորությամբ։ Ու միանգամից ներդաշնակվում է ամեն ինչ. և՛ այդ օրը ծնունդ առած զգացմունքները, և՛ փողոցում ու հրավերքի ժամանակ լսած խոսքերը, ատելությունը բռնակալների հանդեպ, անհանգստությունը հայրենիքի ճակատագրի համար, հաղթանակի հավատը, ազատության սերը։

Նա մինչև իսկ չի էլ ստեղծագործում, չի էլ մտածում ու հորինում, այդ նշանավոր օրը շուրթից շուրթ անցած խոսքերը նա հանգավորում է միայն ու տեղադրում մեղեդու ռիթմի մեջ։ Եվ նա իր երգում արտահայտեց, պատմեց, փառաբանեց այն ամենը, որ այդ օրն ապրել և վերապրել էր բովանդակ ֆրանսիական ժողովուրդը։ Նա կարող էր մեղեդին էլ չհորինել՝ պատուհանի փակ փեղկերից ներս է թափանցում փողոցի ռիթ-

մը, տագնապալի գիշերվա ռիթմը՝ ահեղաշունչ ու մարտակոչային։ Այդ ռիթմը դրվագում են քայլերթի ելած զինվորները, թնդանոթների հրետասայլերի դղրդյունը։ Կարող է պատահել, որ նույնիսկ ինքը՝ Ռուժեն չէ իր սուր ականջով լսողը, այլ ժամանակի ոգին, որ միայն մի գիշեր թափանցել է մարդու անցավոր, մահկանացու կեղևի մեջ և նա՝ այդ ոգին է որսում այդ ռիթմերը։

Ավելի ու ավելի հնազանդ՝ մեղեդին ենթարկվում է բերկրալի և ասես մուրճով տրվող տակտին, որ դրվագում է բովանդակ ֆրանսիական ժողովրդի սիրտը։ Ասես ինչ-որ մեկի թելադրանքով Ռուժեն շտապ-շտապ թղթին է հանձնում խոսքերն ու ձայնանիշերը, բռնված մի խենթ պոռթկումով, որ մինչ այդ անծանոթ էր այդ մանր քաղքենական հոգուն։

Այն ամբողջ տենդագին հուզումն ու ներշնչանքը, որ ոչ թե հատուկ էին իրեն, այլ պարզապես սքանչելիորեն համակել էին իր հոգին՝ կենտրոնացան մի կիզակետում և հզորագույն պոռթկումով այդ ողորմելի երաժշտասերին բարձրացրին իր համեստ ձիրքից վիթխարիորեն վեր, վառվռուն ու շողշողուն հրթիռի պես հասցրին մինչև հեռու աստղերը։

Միայն մի գիշեր, մի հատիկ գիշեր էր վիճակված կապիտան Ռուժե դը Լիլին անմահների եղբայրը դառնալ. երգի առաջին երկու տողը, որ հյուսվել էր պատրաստի դարձվածքներից, քաղվել փողոցներից ու թերթերից՝ մղում տվին ստեղծագործական մտքին, և ահա գոյացավ բանաստեղծության առաջին տունը, որի խոսքերը նույնքան անմահ են ու անանց, որքան և եղանակը.

Հառա՛ջ, ուս-ուսի քայլելով կրկին
Ազատությունն է մեզ ոգևշնչում,
Հառա՛ջ, կանչում է սերն հայրենիքի,
Սուրբ ազատության դրոշն է կանչում։

Եվս մի քանի տող՝ և այդ անմահ երգը, ստեղծված ներշնչանքի մի բռնկմամբ, խոսքի ու մեղեդու այդ կատարյալ ներդաշնակությունը մինչև լուսաբաց հասնում է իր ավարտին։ Ռուժեն մարում է լույսը և փռվում անկողնին։ Ինչ-որ մի զորություն, ինքն էլ չգիտե ինչ զորություն, համբարձեց իրեն հոգեկան պայծառատեսության անծանոթ մի բարձունքի, իսկ հիմա նույն այդ ուժը մատնեց բութ ուժասպառության։ Նա քընած է անդարթնելի մի քնով, որ նման է մահվան։ Ասենք, հենց այդպես էլ եղավ իսկապես՝ ստեղծագործողը, բանաստեղծը, հանճարը նրա մեջ մեռավ վերստին։ Բայց դրա փոխարեն սեղանին (բոլորովին անջատ-

ված քնած մարդուց, որ ճշմարիտ ներշնչանքի բռնկման պահին ստեղծել էր հրաշքը) դրված է ավարտված գործը։

Հաղիվ թե մարդկության պատմության երկարատև ընթացքում եղել է մի դեպք, երբ խոսքերն ու հնչյունները նույնպիսի արագությամբ և երգ են դարձել։

Բայց ահա հինավուրց տաճարի զանգերը, ինչպես միշտ, ավետում են լուսաբացը։ Ժամանակ առ ժամանակ քամին Հռենոսի այն ափից այս ափն է հասցնում համազարկի ձայնները։ Ռուժեն զարթնում է, դժվարությամբ թոթափելով մեռելային քունը։ Նա, ասես մշուշի մեջ, զգում է, որ բան է կատարվել, իր հետ կատարվել է մի բան, որ միայն թույլ հետք է թողել հիշողության մեջ։ Եվ հանկարծ սեղանին նկատում է գրոտած թղթերը։ Բանաստեղծությո՞ւն։ Բայց ե՞րբ է գրել։ Երաժշտությո՞ւն, իր ձեռքով գրված նոտանե՞ր։ Բայց ե՞րբ եմ գրել դրանք։ Ա՜խ, այո՛, երեկ երեկոյան իմ բարեկամ Դիտրիխին խոստացածս քայլերգն է Հռենոսյան բանակի համար։

Ռուժեն աչքի է անցկացնում ոտանավորը, մտքում դնդնում մեղեդին։ Բայց, ինչպես նոր միայն ստեղծված գործի ամեն մի հեղինակ, նա միայն լիակատար անվստահություն է տածում արածի նկատմամբ։ Գրնդային ծառայության ընկերն ապրում է իր կողքին։ Ռուժեն շտապում է իր երգը ցույց տալ ընկերոջն ու երգել։ Նրան երգը դուր է գալիս, նա առաջարկում է միայն մի քանի աննշան շտկումներ անել։ Այս առաջին գովեստը Ռուժեին վստահություն է ներշնչում։ Այրվելով հեղինակային անհամբերությամբ և հպարտ, որ այդքան շուտ կատարել է խոստումը, նա սուրում է քաղաքագլխի տուն և Դիտրիխին բռնում առավոտյան զբոսանքի ժամին։ Զբոսնելով պարտեզում, նա մտքում մի նոր ճառ է հորինում։

Ինչպե՞ս թե, արդեն պատրաստ է։ Է՛հ, ի՞նչ կա որ, լսենք տեսնենք։ Երկուսով գնում են հյուրասենյակ. Դիտրիխը նստում է կլավեսինի առաջ, Ռուժեն երգում է։ Այսքան վաղ ժամի հնչող երաժշտության ձայների վրա քաղաքագլխի կինը ներս է գալիս։ Նա խոստանում է արտագրել երգը, բազմացնել և, իբրև իսկական երաժիշտ, հանձն է առնում գրել նվագակցությունը, որպեսզի այսօր իսկ երեկոյան իրենց տան մերձավորների առաջ հնարավոր լինի այդ նոր երգն էլ կատարել ուրիշ շատերի հետ միասին։ Քաղաքագլուխը, որ հպարտանում էր իր բավական հաճելի տենորով, իր հերթին հանձն է առնում անգիր անել երգը։

Եվ ահա ապրիլի 26-ին, այսինքն երեկոյան այն նույն օրվա, որի արշալույսին գրվել էին երգի խոսքն ու մեղեդին, դա առաջին անգամ

կատարվում է Ստրասբուրգի քաղաքագլխի հյուրասենյակում, պատահական ունկնդիրների առաջ։

Հավանորեն, ունկնդիրները մտերմաբար ծափահարել են հեղինակին ու չեն խնայել սիրալիր հաճոյախոսություններ։ Բայց, հասկանալի է, Ստրասբուրգի գլխավոր հրապարակում գտնվող առանձնատան հյուրերից և ոչ մեկը չի ունեցել թեկուզև նվազագույն կանխազգացում, որ անտես թեներով իրենց անցողական աշխարհն է սավառնում անմահ մի մեղեդի։

Հազվադեպ է պատահում, որ մեծ մարդկանց և մեծ ստեղծագործությունների ժամանակակիցները իսկույնևեթ հասու լինեն դրանց նշանակությանը։ Դրա օրինակը կարող է լինել քաղաքագլխի կնոջ նամակն իր եղբորը, մի նամակ, ուր հանճարեղության ի կատար ածված հրաշքն իջեցված է աշխարհիկ կյանքի մի ամենասովորական դրվագի աստիճանի. «Դու հո գիտես, որ մենք հաճախ ենք հրավերքներ անում։ Եվ մեր երեկույթները բազմազան դարձնելու համար շարունակ ստիպված ենք ինչ-որ նորություններ գտնել։ Ահա ամուսնուս մտքով անցավ մի երգ պատվիրել պատերազմ հայտարարելու առիթով։ Ոմն Ռուժե դե Լիլ, ինժեներական կորպուսի մի կապիտան, մի հաճելի երիտասարդ, բանաստեղծ ու կոմպոզիտոր, շատ շուտ հորինեց արշավային երգի խոսքեր ու եղանակ։ Ամուսինս, որի ձայնը հաճելի տենոր է, տեղնուտեղը կատարեց այդ երգը, մի սիրունիկ երգ, որի մեջ ինչ-որ յուրահատուկ բան կա։ Ոնց որ Գլյուկ, միայն թե շատ ավելի լավ ու աշխույժ։ Իմ տաղանդն էլ պետք եկավ. ես արեցի գործիքավորումը և գրեցի կլավիրի ու մյուս գործիքների պարտիտուրը, այնպես որ ինձ բավական գործ բաժին ընկավ։ Երեկոյան երգը կատարվեց մեզ մոտ՝ հյուրասենյակում, մեծ հաճույք պատճառելով բոլոր ներկաներին»։

«Մեծ հաճույք պատճառելով բոլոր ներկաներին», — ինչպիսի՞ սառնություն է փչում այս բառերից հետնորդներիս զգացողությամբ։ Բայց չէ՞ որ «Մարսելյեզի» առաջին կատարումը, բացի ընկերական համակրանքից ու խրախուսանքից, ուրիշ զգացմունքներ չէր էլ կարող հարուցել, քանի որ դեռևս չէր կարող ներկայանալ իր բովանդակ ուժով։ «Մարսելյեզը» կամերային երգ չէ հաճելի տենորի կատարման համար և նախատեսված է բնավ ոչ այն նպատակով, որ կատարվի պավառական հյուրասենյակում մի միակ երգչի կողմից ինչ-որ իտալական արիայի և ռոմանսի նման։

Այն երգը, որի ոգևորիչ, զսպանակված և հարվածային ռիթմը ծընունդ է առել «Ի զե՛ն, քաղաքացիներ» կոչից՝ հասցեագրված է ժողո-

վերջին, ամբոխին, և նրա միակ արժանավոր նվագակցությունը զենքի շաչյունն է, շեփորների ձայնը և արշավի ելած գնդերի քայլքը։ Հյուրասենյակում հարմարորեն տեղավորված մարդկանց համար չէր հորինված այդ երգը, այլ միասնական կամքի տեր զինակիցների, պայքարի ընկերների։ Եվ այդ երգը պետք է կատարի ոչ թե միայնակ մի ձայն, տենոր լինի թե սոպրանո, այլ մարդկային հաղարավոր ձայներ, քանի որ դա արշավանքի քայլերգ է, հաղթանակի հիմն, մահվան քայլերգ, հայրենիքի երգ՝ մի ամբողջ ժողովրդի ազգային հիմնը։

Ռուժե դե Լիլի երգի այս ամբողջ բազմախորհուրդ, ներշնչող ուժը բոցավառում է այնպիսի ոգեշնչում, որ նման է այն երևույթին, ինչից ծնունդ է առել ինքը։ Իսկ առայժմ նրա խոսքերն ու մեղեդին իրենց կախարդական միասնությամբ դեռևս չեն թափանցել ազգի հոգու մեջ. բանակը դա դեռևս չի ընկալում իբրև իր քայլերգը, իր հաղթանակի երգը, իսկ հեղափոխությունը՝ իբրև իր անմահ օրհներգը, իր հիմնը։

Ասենք, հենց ինքը՝ Ռուժե դե Լիլը, որի հետ կատարվել էր հրաշքը, մյուսներից ավելի լավ չէր կռահում նշանակությունն այն բանի, ինչ ինքն ստեղծել էր լուսնոտային վիճակում, ինչ-որ հարափոփոխ ոգու դյութանքի ազդեցությամբ։ Այս համակրելի երաժշտասերն ի սրտե ուրախ է ծափահարությունների և սիրալիր հաճոյախոսությունների համար։ Փոքրը մարդու փոքր փառասիրությամբ նա ջանում է իր փոքր հաջողությունը մինչև վերջ օգտագործել գավառական այդ փոքր միջավայրում։ Նա իր նոր երգը սրճարաններում երգում է ընկերների համար, պատվիրում է դրա ձեռագիր օրինակները և ուղարկում Հռենոսյան բանակի գեներալներին։ Այդ ընթացքում, քաղաքագլխի հրամանով և զինվորական հրամանատարության հանձնարարությամբ, Ազգային գվարդիայի գնդային նվագախումբը սովորում է «Հռենոսյան բանակի արշավային երգը» և, չորս օր անց, զորահանդեսի ժամանակ նվագում է քաղաքի գլխավոր հրապարակում։ Հայրենասիրաբար տրամադրված մի հրատարակիչ հանձն է առնում տպել երգը, որ լույս է տեսնում Ռուժե դե Լիլի հարգալիր ընծայականով՝ ուղղված իր պետին, գեներալ Լյուկներին։ Բայց գեներալներից ոչ մեկի մտքով չի անցնում արշավանքի ժամանակ հնչեցնել նոր քայլերգը. հավանորեն, Ռուժե դե Լիլի այս երգին ևս, ինչպես նախորդ գործերին, վիճակված է սահմանափակվելու մի երեկոյի սալոնային հաջողությամբ, դառնալու գավառական կյանքի շուտափույթ մոռացության դատապարտված մի դրվագ։

Բայց այն ուժը, որ վարպետը ներդրել է իր ստեղծագործության մեջ, երբեք փականքի տակ չի մնում։ Գործը կարող է մոռացվել միառժամա-

նակ, նա կարող է արգելվել, թաղվել նույնիսկ, բայց և այնպես նրա մեջ ապրող տարերային ուժը հաղթանակ կտանի անցավոր երևույթների նըկատմամբ։

Մեկ ամիս, երկու ամիս՝ «Հռենոսյան բանակի արշավային երգի» մասին և ոչ մի ձայն։ Դրա տպագիր ու ձեռագիր օրինակները թափված են ինչ-որ տեղ կամ մնացել են անտարբեր մարդկանց ձեռքին։ Բայց այն էլ բավական է, եթե ներշնչանքով արված գործը ոգևորում է թեկուզև մի միակ մարդու, քանի որ ճշմարիտ ներշնչանքը միշտ էլ արգասավոր է։

Հունիսի 22-ին Ֆրանսիայի հակառակ ծայրում՝ Մարսելում, «Սահմանադրության բարեկամների» ակումբը խնջույք է տալիս ի պատիվ արշավանքի ելնող կամավորների։ Երկար նստարաններին շարված են հինգ հարյուր պատանի՝ Ազգային գվարդիայի համազգեստով։ Այստեղ իշխում է նույն տենդային խանդավառությունը, ինչ որ Ստրասբուրգի խնջույքում ապրիլի 25-ին, բայց է՛լ ավելի կրքոտ և բուռն՝ շնորհիվ մարսելցիների հարավային ավյունի և միաժամանակ ոչ այնքան հաղթականորեն աղմըկալի, ինչպես այն ժամանակ պատերազմ հայտարարելու առաջին ժամերին։ Քանի որ հակառակ գեներալների պարծենկոտ հավաստիացումների, թե ֆրանսիական զորքերը հեշտությամբ կանցնեն Հռենոսը, և ամենուրեք նրանց կընդունեն գրկաբաց, դա բնավ էլ այդպես չեղավ։ Ընդհակառակը, ոսոխը սեպի պես խրվեց Ֆրանսիայի սահմաններն ու խորացավ՝ սպառնալով նրա անկախությանն ու ազատությանը։

Խնջույքի թեժ պահին պատանիներից մեկը (նա Մոնպելյեի համալսարանի բժիշկ-ուսանող է, անունն է Միրյոր) զրնգացնում է իր բաժակին՝ լռություն խնդրելով և վեր է կենում։ Ամենքը լռում են ու նայում նրան՝ սպասելով ճառի, կենաց խոսքի։ Բայց դրա փոխարեն պատանին, ձեռքը բարձրացնելով, երգում է բոլորովին նոր, անծանոթ մի երգ, որ անհայտ է, թե ինչ ճանապարհով է ընկել նրա ձեռքը ԵՒ որն սկսվում է այսպես. «Հառա՜ջ, զավակներդ սիրասուն հայրենիքի»։

Եվ հանկարծ, ասես կայծ ընկավ վառոդի տակառը, բոցն ալիք տըվեց. զգացմունքը դիպավ զգացմունքին՝ մարդկային կամքի այդ հավերժական բևեռները բռնեցին իրար։ Վաղն արշավանքի ելնող այս բոլոր պատանիները ծարավի են մարտնչելու հանուն ազատության գործի, պատրաստ են մեռնել հանուն հայրենիքի. այդ երգի խոսքերի մեջ նրանք տեսան իրենց ամենանվիրական իղձերի, ամենաթանկագին խոհերի արտահայտությունը։ Երգի ռիթմը անկասելիորեն նրանց համակում է ոգեշընչման միասնական ու ցնծագին պոռթկումով։ Ամեն մի տունն ուղեկ-

ցվում է հրճվանքի կանչերով։ Երգը կրկնվում է, ամենքն արդեն հիշում են եղանակը և, տեղներից ելնելով, գավաթները բարձր պահած, նրանք որոտաձայն հնչեցնում են կրկներգը. «Ի՜ զե՜ն, քաղաքացիներ, ռազմի շարքերը հավասար»։

Փողոցում, պատուհանների մոտ, հավաքվել են մարդիկ, որ ուզում են իմանալ, թե այստեղ ինչ են երգում այսպես ոգեշնչված։ Եվ ահա նրանք ևս բռնում են կրկներգը, իսկ հաջորդ օրը երգն արդեն տասնյակ հազարավոր մարդկանց շուրթերին է։ Երգն ունենում է երկրորդ հրատարակություն, ու երբ հուլիսի 2-ին հինգ հարյուր կամավոր դուրս են գալիս Մարսելից՝ իրենց հետ դուրս են բերում նաև այդ երգը։ Այսուհետև ամեն անգամ, երբ մարդիկ հոգնում են երկար ճամփաներում և ուժերն սկսում են լքել իրենց՝ բավական է, որ մեկը սկսի երգել նորահայտ հիմնը, և նրա առույգաբեր, մտրակող ռիթմը նոր ուժ է տալիս քայլողին։ Երբ զինվորները քայլում են գյուղերով, և գյուղացիները դուրս են թափվում նրանց նայելու՝ Մարսելի կամավորները համերաշխ թափով հընչեցնում են երգը։

Դա նրանց՝ մարսելյան կամավորների երգն է։ Չիմանալով, թե ով ու երբ է գրել այդ երգը, չիմանալով նաև այն, որ դա նախատեսված էր Հռենոսյան բանակի համար՝ նրանք այդ երգն իրենց գումարտակի հիմնը դարձրին։ Դա իրենց մարտական դրոշն է, իրենց կյանքի ու մահվան դրոշը. առաջ ընթանալու անկասելի ձգտումով նրանք տենչում են իրենց հիմնը տարածել աշխարհով մեկ։

Փարիզ. ահա՛ «Մարսելյեզի» առաջին հաղթանակը, քանի որ շատ չանցած այդպես պիտի կոչվի Ռուժե դե Լիլի ստեղծած նոր հիմնը։ Հուլիսի 30-ին Մարսելի կամավորների գումարտակն իր դրոշով ու երգով քայլում է քաղաքի արվարձաններով։ Փողոցներում խռնվել են հազարավոր փարիզցիներ՝ զինվորներին փառքով ու պատվով ընդունելու համար։ Ու երբ հինգ հարյուր մարդ համերաշխորեն, քայլքին ներդաշնակ միակամ ու միաձայն հնչեցնում են իրենց երգը՝ ժողովուրդը սրում է ականջները։

Սա ի՞նչ երգ է։ Ի՜նչ հրաշալի, քայլքը թեավորող մեղեդի։ Ինչպիսի՜ հաղթական կրկներգ՝ նման հանդիսավոր շեփորահարության. «Ի զե՜ն, քաղաքացիներ...»։ Երգի խոսքերը, ուղեկցվելով թմբուկների որոտընդոստ մանրահարվածով, թափանցում են բոլորի սիրտը։ Երկու-երեք ժամից «Մարսելյեզը» երգում են Փարիզի բոլոր ծայրերում։ «Կարմանյոլը» մոռացվել է, մոռացվել են բոլոր մաշված կրկներգերն ու հնօրյա քայլերգերը։

Հեղափոխությունը «Մարսելյեզի» մեջ գտավ իր ձայնը, և հեղափոխությունն էլ այդ երգն ընդունեց իբրև հիմն։

«Մարսելյեզի» հաղթական երթը անկասելի է, ինչպես գարնանային հեղեղը։ «Մարսելյեզը» երգում են հրավերքներում, ակումբներում, թատրոններում և նույնիսկ եկեղեցիներում Te Deum-ից հետո, իսկ շատ չանցած՝ նաև այդ սաղմոսի փոխարեն։ Եվ մի երկու-երեք ամիս՝ և «Մարսելյեզը» դառնում է բովանդակ ժողովրդի հիմնը, ամբողջ բանակի արշավային երգը։

Սերվանը, ֆրանսիական հանրապետության առաջին ռազմական մինիստրը, կարողացավ զգալ իր տեսակի մեջ միակ այդ ազգային քայլերգի վիթխարի թևավորող ուժը։ Նա հրաման է արձակում՝ «Մարսելյեզի» հարյուր հազար օրինակ շուտափույթ առաքել բոլոր երաժշտախմբերին, և երկու-երեք օր անց անհայտ հեղինակի երգը դառնում է ավելի հանրահայտ, քան Ռասինի, Մոլիերի ու Վոլտերի բոլոր երկերը։

Ոչ մի հանդիսանք չի ավարտվում առանց «Մարսելյեզի», ոչ մի ճակատամարտ չի սկսվում, քանի դեռ գնդի երաժշտախումբը չի նվագել ազատության հիմնը։ Ժեմապպեի և Ներվինդենի ճակատամարտերում այդ հիմնի հնչյունների ուղեկցությամբ են շարվում ֆրանսիական զորքերը գրոհից առաջ, և թշնամու գեներալները, որ իրենց զինվորներին բորբոքելու համար հնի պես օղու կրկնակի բաժին են տալիս, սարսափում են՝ տեսնելով, որ իրենք այդ «ահավոր» երգի ամենակործան ուժին հակադրելու ոչինչ չունեն։ Հիմն, որ երբ միաժամանակ երգում են հազարավոր ձայներ, մոլեգին ու շառաչուն ալիքի պես զարկում է իրենց զինվորների շարքերին։

Ամենուրեք, ուր մարտնչում է Ֆրանսիան, թևածում է «Մարսելյեզը» Նիկե աստվածուհու, հաղթանակի դիցուհու պես՝ իր ետևից մահու և կենաց կռվի տանելով բազում մարդկանց։

Մինչդեռ ինժեներական զորքերի անհայտ ու անանուն կապիտան Ռուժե դե Լիլը, նստած Հյունինգի փոքրիկ կայազորում, ջանասիրաբար խրամատների և ամրությունների գծագրեր է գծում։ Շատ հնարավոր է, որ նա արդեն հասցրել է մոռանալ «Հռենոսյան բանակի քայլերգը», որ ինքը գրել էր 1792 թվականի ապրիլի 26-ի հեռավոր գիշերը։ Համենայն դեպս, երբ թերթերում կարդում է նորահայտ հիմնի, Փարիզը նվաճած նոր քայլերգի մասին, նրա մտքով չի էլ անցնում, որ այդ հաղթական «Մարսելցիների քայլերգը», նրա ամեն մի տակտը, ամեն մի բառը հենց այն հրաշքն է, որ ի կատար ածվեց իր մեջ, կատարվեց իր հետ այն հեռավոր ապրիլյան գիշերը։

Ճակատագրի չար հեգնանքը տես. մինչև երկինք թնդացող, աստղերին հասնող այդ մեղեդին իր թևերով չի բարձրացնում այն միակ մարդուն, հենց այն մարդուն, որ ստեղծել է իրեն։ Բովանդակ Ֆրանսիայում և ոչ ոք չի մտածում ինժեներական զորքերի կապիտան Ռուժե դե Լիլի մասին, և այդ ամբողջ վիթխարի, երգի համար աննախադեպ փառքը բաժին է ընկնում միայն երգին. այդ փառքից նշույլ անգամ չի հասնում հեղինակին։ Նրա անունը չի տպվում «Մարսելյեզի» տեքստի վրա, և այս աշխարհի ուժեղներն այնպես էլ չէին մտաբերի նրան, եթե հենց ինքն իր վրա չհարուցեր նրանց թշնամական ուշադրությունը, քանի որ (և դա մի հանճարեղ պարադոքս է, որ կարող է հորինել պատմությունը միայն) հեղափոխության հիմնի հեղինակը բնավ էլ հեղափոխական չէ։ Ավելին, նա, որ իր անմահ երգով ամենից շատ էր նպաստել հեղափոխության գործին, պատրաստ է իր բոլոր ուժերը տալ հեղափոխությունը կասեցնելու համար։ Եվ երբ մարսելցիներն ու Փարիզի ամբոխներն իր երգը շուրթերին կործանում էին Թյուիլրիի պալատը և գահընկեց անում թագավորին, Ռուժե դե Լիլը երես է դարձնում հեղափոխությունից։ Նա հրաժարվում է երդում տալ հանրապետությանը և գերադասում է պաշտոնաթող լինել, քան ծառայել յակոբինյաններին։ Նա չի կամենում նոր իմաստ տեսնել իր երգի «ազատություն թանկագին» բառերի մեջ։ Նրա աչքում Կոնվենտի գործիչները նույնն են, ինչ սահմանի այն կողմի բռնակալները։ Երբ Հանրային փրկության կոմիտեի հրամանով դեպի գիլյոտին են տանում իր ընկերոջը և «Մարսելյեզի» կնքահայր, քաղաքագլուխ Դիտրիխին և գեներալ Լյուկներին, որին ընծայագրված է այդ երգը, բոլոր ազնվական սպաներին, որ դրա առաջին ունկնդիրներն էին եղել, Ռուժեն ազատություն է տալիս իր մեջ կուտակված մաղձին։ Եվ ահա (վերջստին բախտի չար հեգնանք) հեղափոխության երգչին բանտ են նետում իբրև հակահեղափոխականի, դատում են իբրև հայրենիքի դավաճանի։ Եվ միայն տերմիդորի 9-ին, երբ Ռոբեսպիերի անկումից հետո բացվում են զնդանների դռները, ֆրանսիական հեղափոխությունը փրկվում է անհեթեթ դատավճռից՝ իր անմահ երգի ստեղծողին «ազգային ածելու»[1] տակ գցելուց։

Եվ, այսուամենայնիվ, դա կարող էր հերոսական մահ լինել, այլ ոչ թե ունայն մի կյանք լիակատար անհայտության մեջ, որին նա դատապարտվում է այնուհետև։ Ավելի քան քառասուն տարի, հազարավոր եր-

[1] Նկատի է առնված գիլյոտինը։

կար օրեր տարաբախտ Ռուժեին վիճակվում է ապրել իր կյանքի միակ ճշմարիտ ստեղծագործական ժամը։

Նրանից խլում են համազգեստը, նրան զրկում են թոշակից։ Այն ոտանավորները, օպերաները, պիեսները, որ նա գրում է, ոչ ոք չի տպագրում ու բեմ չի հանում։ Ճակատագիրը դիլետանտին չի ներում նրա ներխուժումը անմահների կաճառը. փոքր մարդուն վիճակվում է իր փոքրիկ գոյությունը պահպանել ամեն տեսակ փոքրիկ և բնավ ոչ միշտ մաքուր գործերով։ Կառնոն և ավելի ուշ Նապոլեոն Բոնապարտը, կարեկցանքից մղված, փորձում են օգնել նրան։ Բայց այն չարաբաստիկ գիշերվանից հետո ինչ-որ բան անհուսորեն կոտրվել է նրա հոգում։ Նա թունավորված է հրեշավոր դաժանությամբ այն դիպվածի, որ նրան թույլ տվեց երեք ժամ լինել հանճարեղ, լինել աստված, իսկ հետո արգահատանքով ետ նետել դեպի իր նախկին ոչնչությունը։

Ռուժեն բոլոր իշխանությունների հետ գժտվեց. Բոնապարտին, որ ուզում էր օգնել իրեն, գրեց հանդուգն բարձրաշունչ նամակներ և ի լուր ամենքի պարծեցավ, թե քվեարկել է ընդդեմ նրա։ Խճճվելով իր գործարքների մեջ, Ռուժեն իջավ կասկածելի սպեկուլյացիաների աստիճանին, նույնիսկ Սենտ Պելաժի բանտն ընկավ մուրհակ չմարելու մեղադրանքով։

Բոլորին սրտնեղություն պատճառող, պարտապանների կողմից պաշարվող, ոստիկանության կողմից հետապնդվող Ռուժեն, ի վերջո, քաշվեց ինչ-որ մի գավառական անկյուն և այնտեղից, ասես գերեզմանի միջից, բոլորից լքված ու մոռացված, հետևեց իր անմահ երգի հետագա ճակատագրին։ Նրան վիճակվեց դեռ ականատես լինել, թե ինչպես է «Մարսելյեզը», Նապոլեոնի հաղթական զորքերի հետ, ճախրում Եվրոպայի բոլոր երկրներով։ Դրանից հետո Նապոլեոնը, հենց որ կայսր հռչակվեց, այդ երգը ջնջեց բոլոր պաշտոնական հանդիսությունների ծրագրից իբրև հույժ հեղափոխական երգ, իսկ Բուրբոնների վերահաստատումից հետո երգն իսպառ արգելվեց։

Եվ երբ, մարդկային մի ամբողջ դարաշրջանի բոլորումից հետո, 1830 թվականի հուլիսյան հեղափոխության ժամանակ երգի խոսքերն ու մեղեդին նորից երբեմնի ուժով հնչեցին Փարիզի բարիկադներում, և բուրժուա-թագավոր Լուի-Ֆիլիպը նրա հեղինակին աննշան թոշակ ողորմաց՝ դառնացած ծերունին այլևս ոչինչ չէր զգում զարմանքից բացի։ Մենության մատնված մարդուն հրաշք է թվում, որ ինչ-որ մեկը մտաբերել է իրեն. բայց դա էլ երկար չտևեց. և երբ 1836 թվականին յոթանասունվեց-

ամյա ծերունին վախճանվեց Շուազի լե Ռուայում՝ նրա անունը այլևս ոչ ոք չէր հիշում։

Եվ միայն առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ «Մարսելյեզը», վաղուց արդեն պետական հիմն դարձած, վերստին մարտականորեն հնչեց Ֆրանսիայի բոլոր ճակատներում, հրաման տրվեց փոքրիկ կապիտան Ռուժե դե Լիլի աճյունը տեղափոխել Հաշմանդամների տուն և թաղել փոքրիկ կապրալ Բոնապարտի աճյունի կողքին։

Վերջապես, անմահ երգի անհայտ ստեղծողը կարող է իր հայրենիքի փառքի հանգստարանում անդորր գտնել այն դառնագին հիասթափությունից, որ իրեն մի միակ գիշեր միայն վիճակվեց բանաստեղծ լինել։

ԱՆԴԱՌՆԱԼԻ ԱԿՆԹԱՐԹԸ

Վայթեռլոո, 1815 թվականի հունիսի 18

Ճակատագիրը հակում ունի դեպի մեծազորներն ու տիրասերները։ Տարիներով նա հլու-հնազանդ հովանավորում է իր ընտրյալներին՝ Կեսարին, Ալեքսանդրին, Նապոլեոնին, քանի որ սիրում է տարերային խառնվածքները, նման հենց իրեն՝ ճակատագրին, որ նույնպես տարերային է՝ անըմբռնելի ու անվերահասու։

Բայց երբեմն, թեև բոլոր դարաշրջաններում հազվադեպ միայն, նա տարօրինակ մի քմահաճույքով նետվում է միջակության գիրկը։ Երբեմն, և դրանք համաշխարհային պատմության ամենազարմանալի ակնթարթներն են, բախտի սանձերը մի միակ երերուն պահի ընկնում են ոչնչության ձեռքը։ Եվ այս մարդիկ սովորաբար ոչ թե հրճվանք, այլ

վախ են ապրում այն պատասխանատվության առաջ, որ իրենց ներքաշում է համաշխարհային խաղի հերոիկայի մեջ, և նրանք գրեթե միշտ իրենց դողդոջուն ձեռքից բաց են թողնում ակամայորեն իրենց բաժին ընկած բախտը։ Նրանցից շատ քչերին է տրվում երջանիկ պատահականությունից բռնելու և դրա հետ միասին սեփական անձը պանծացնելու կամքը։ Քանի որ միայն մի ակնթարթ է մեծությունն իջնում ոչնչության մոտ, և նա, ով ձեռքից բաց է թողնում այդ ակնթարթը՝ կորցնում է անդառնալիորեն։

ԳՐՈՒՇԻ

Վիեննական կոնգրեսի դավերի ու հակաճառությունների, պարահանդեսների և սիրային ինտրիգների ամենաթեժ ժամանակ թնդանոթի հրաձգության նման պայթում է այն լուրը, թե Նապոլեոնը՝ գերված առյուծը, դուրս է պրծել էլբա կղզու իր վանդակից։ Եվ ահա թռչում է էստաֆետ էստաֆետի ետևից. Նապոլեոնը գրավեց Լիոնը, արտաքսեց թագավորին, գնդերը փողփողացող դրոշներով անցնում են նրա կողմը, նա արդեն Փարիզումն է, հենց Թյուիլրիում. զուր անցավ Լայպցիգի մոտի հաղթանակը, զուր անցան քսանամյա արյունալի կռիվները։

Քիչ առաջ միմյանց հակաճառած և գժտված մինիստրներին ասես ինչ-որ ճանկեր ի մի են բերում. անգլիական, պրուսական, ավստրիական, ռուսական զորքերը կենտրոնանում են շուտափույթ, որպեսզի երկրորդ անգամ և վերջնականապես խորտակեն բռնապետին։

Ժառանգական թագավորների ու կայսրների Եվրոպան դեռ երբեք չի եղել այնքան միասնական ու միակամ, որքան մահացու երկյուղի այդ ժամին։ Հյուսիսից Ֆրանսիայի վրա է գալիս Վելինգտոնը, նրան օգնության է գնում պրուսական բանակը՝ Բլյուխերի գլխավորությամբ. Հռենոսում արշավանքի է պատրաստվում Շվարցենբերգը[1], իսկ իբրև ռեզերվ Գերմանիայի միջով ծանր ու դանդաղորեն ընթանում են ռուսական գնդերը։

Նապոլեոնը մի հայացքով ընդգրկում է իրեն սպառնացող վտանգը։ Նա գիտե, որ չի կարելի սպասել մինչև որ հավաքվի ամբողջ ոհմակը։ Նա պետք է բաժան-բաժան անի նրանց, հարձակվի պրուսացիների,

---

[1] Շվարցենբերգ Կարլ Ֆիլիպ (1771—1820)—ավստրիական ֆելդմարշալ, Նապոլեոնի դեմ մղված պատերազմների վերջին շրջանում դաշնակիցների միացյալ զորքերի գլխավոր հրամանատարը։

անգլիացիների, ավստրիացիների վրա առանձին-առանձին, հարձակվի ավելի վաղ, քան նրանք կդառնան համաեվրոպական բանակ և կչախջախեն իր կայսրությունը։ Նա պետք է շտապի, քանի դեռ երկրի ներսում դժգոհության տրտունջ չի բարձրացել, պետք է հաղթանակի հասնի ավելի վաղ, քան հանրապետականները կհասցնեն ամրանալ և միանալ միապետականների հետ, ավելի վաղ, քան երկերեսանի և անորսալի Ֆուշեն, իր երկվորյակների ու թշնամու՝ Թալեյրանի հետ դաշն կնքելով, դանակն իր թիկունքը կխրի։

Նա պետք է, օգուտ քաղելով բանակին համակած ոգեշնչումից, մի սրընթաց հարձակումով ջախջախի թշնամիներին։ Ամեն մի բաց թողած օրը նշանակում է կորուստ, ամեն մի ժամը խորացնում է վտանգը։

Եվ նա առանց հապաղելու պատերազմի վիճակ է նետում Եվրոպայի ամենաարյունալի ռազմադաշտը՝ Բելգիա։ Հունիսի 15-ի առավոտյան երեքին Նապոլեոնի մեծ և այժմ միակ բանակի առաջապահն անցնում է սահմանը։ Ձերբազատված առյուծի թաթի այդ առաջին հարվածը խորտակիչ է, բայց ոչ մահացու։ Պարտված, բայց չոչնչացված պրուսական բանակը նահանջում է դեպի Բրյուսել։

Նապոլեոնը նախապատրաստում է երկրորդ հարվածը, այս անգամ Վելինգտոնի դեմ։ Շունչ քաշելու մի րոպե իսկ չի կարող նա թույլ տալ ո՛չ իրեն, ո՛չ թշնամիներին, քանի որ օր օրի աճում են նրանց ուժերը, իսկ իր թիկունքում գտնվող երկիրը, արնաքամ, տրտնջացող ֆրանսիական ժողովուրդը պետք է շշմեցվի հաղթանակի լուրերի հաշիշով։

Հունիսի 17-ին արդեն նա իր ամբողջ բանակով մոտենում է Կատր-Բրային, ուր ամրացել է սառնարյուն, հաշվենկատ ոսոխը՝ Վելինգտոնը։ Երբեք Նապոլեոնի կարգադրությունները չեն եղել ավելի շրջահայաց, ռազմի հրամանները՝ ավելի հստակ, քան այդ օրը։ Նա ոչ միայն գրոհի է պատրաստվում, այլև կանխատեսում է դրա վտանգը։ Ջախջախված, բայց չոչնչացված Բլյուխերի բանակը կարող է միանալ Վելինգտոնի բանակին։ Այդ վտանգը կանխելու համար նա իր բանակի մի մասն առանձնացնում է, որպեսզի սա կրնկակոխ հետևի պրուսական բանակին և խանգարի նրան միանալու անգլիացիներին։

Իր բանակի այդ առանձնացված մասի հրամանատարությունը նա վստահում է մարշալ Գրուշիին։ Սա մի սովորական մարդ է, բայց քաջարի, աղնիվ, վստահելի, հեծելազորի փորձառու հրամանատար, բայց ոչ ավելին, քան հեծելազորի հրամանատար։ Սա հեծելազորի անվեհեր ու տաքարյուն առաջնորդ չէ, ինչպես Մյուրատը, ոչ էլ ստրատեգ, ինչպես Սեն-Սիրը և Բերտյեն, և ոչ էլ հերոս, ինչպես Նեյը։ Նրա կուրծքը

լանջապանակ չի զարդարում, նրա անունը պսակված չէ առասպելով. նա չունի գոնե մի յուրահատկություն, որ իրեն փաղք բերեր և օրինական տեղ տար Նապոլեոնյան դարաշրջանի հերոսական միթոսի մեջ. միայն իր ձախորդությամբ, անհաջողակ լինելով է հայտնի Գրուշին։ Քսան տարի մարտնչել է բոլոր ճակատամարտերում, Իսպանիայից մինչև Ռուսաստան, Նիդեռլանդներից մինչև Իտալիա, դանդաղորեն բարձրանալով աստիճան առ աստիճան, մինչև որ հասել է մարշալի կոչման՝ ոչ առանց վաստակի, բայց և առանց սխրանքների։ Ավստրիացիների գնդակները, Եգիպտոսի արևը, արաբական դաշույնները, Ռուսաստանի սառնամանիքը նրա ճանապարհից դուրս են բերել նախորդներին. Դեզեին՝ Մարենգոյի մոտ, Կլեբերին՝ Կահիրեում, Լանին՝ Վագրամում[1]։ Վերին տիտղոսի ուղին Գրուշին ինքը չէր հարթել, պատերազմի քսան տարիներն էին բացել նրա համար։

Որ Գրուշին հերոս չէ ու ոչ էլ ստրատեգ, այլ միայն վստահելի, նվիրված, քաջ ու դատող հրամանատար՝ Նապոլեոնը լավ գիտե։ Բայց իր մարշալների մի կեսը գերեզմաններում է, մյուսները չեն կամենում լքել իրենց կալվածքները, քանի որ ավելի քան կուշտ են կռիվներից, և նա ստիպված է վճռական ու պատասխանատու գործը միջակ զորավարին վստահել։

Հունիսի 17-ի առավոտյան տասնմեկին, Լինյիի մոտ տարած հաղթանակի հաջորդ և Վաթերլոոյի նախորդ օրը, Նապոլեոնն առաջին անգամ մարշալ Գրուշին ինքնուրույն հրամանատարություն է վստահում։ Մի ակնթարթ, մի հատիկ օր համեստափայլ Գրուշին լքում է իր տեղը ռազմի հիերարխիայի մեջ՝ համաշխարհային պատմության մեջ մուտք գործելու համար։ Միայն մի ակնթարթ, բայց ինչպիսի՜ ակնթարթ։

---

1 1800 թ. հունիսի 14-ին, Մարենգոյի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Նապոլեոնը ջախջախեց ավստրիական բանակը, որի հրամանատարն էր Մելասը։ Այդ հաղթանակի մեջ վճռական դեր էր խաղացել գեներալ Դեզեն, որի դիվիզիան համարձակ մաններով անսպասելի հարված էր հասցրել ավստրիական ռազմաշարքերին։

Կլեբեր Ժան Բատիստ (1753—1800)—ֆրանսիական զորավար, հետևողաբար ծառայել է Կոնվենտին, Դիրեկտորիային և Նապոլեոնին։ Բոնապարտի եգիպտական արշավանքի տապալումից և Փարիզ վերադառնալուց հետո նա, գլխավոր հրամանատար նշանակվելով, կարողացել էր կարգի բերել ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուսի վիճակը, բայց սպանվել էր Կահիրեում՝ էվակուացիային վերաբերող բանակցությունների ընթացքում։

Լան Ժա՛ն, դուքս դե Մոնտեբելո (1769—1809)— Նապոլեոնի բանակի մարշալ։ Մահացու վիրավորվել էր Էսլինգի (Ցվայգը սխալմամբ նշում է՝ Վագրամի) մոտ կայացած ճակատամարտում 1809 թ. հունիսի 5-ին։

Նապոլեոնի հրամանը պարզ է։ Այն ժամանակ, երբ ինքը հարձակում կգործի անգլիացիների վրա, Գրուշին զորքի մի երրորդով պետք է հետապընդի պրուսացիներին։ Առաջին հայացքից ոչ մի բարդություն չներկայացնող առաջադրանք, հստակ և ուղղագիծ, բայց միաժամանակ և առաձգական ու երկսայրի, ինչպես սուրը։ Քանի որ Գրուշին պարտավորված է գործողության ընթացքում պարտադիր կապ պահպանել բանակի գլխավոր ուժերի հետ։

Մարշալն առաջադրանքն ընդունում է անվճռականորեն։ Նա սովոր չէ ինքնուրույնաբար գործել. զգուշավոր, նախաձեռնությունից զուրկ մարդ՝ նա վստահություն է ձեռք բերում այն դեպքերում միայն, երբ կայսեր հանճարեղ միտքը նրան մատնացույց է անում նպատակը։ Բացի այդ, թիկունքում նա զգում է իր գեներալների դժգոհությունը և, ո՞վ իմանա, գուցեև վրա հասնող ճակատագրի չարագուշակ թևաբախման աղմուկը։ Բանակի գլխավոր կացարանի մոտիկությունն է միայն, որ մի քիչ հանգստացնում է նրան. ընդամենը երեք ժամվա արագացված քայլերթ է բաժանում նրան կայսերական բանակից։

Տեղատարափ անձրևի տակ Գրուշին դուրս է գալիս արշավի։ Նրա զինվորները կավահողի կպչուն ճանապարհով դանդաղորեն քայլում են պրուսացիների հետքերով, համենայն դեպս այն ուղղությամբ, ուր ենթադրում են գտնել Բլյուխերի զորաբանակը։

ԿԱՅՈՒԻ ԳԻՇԵՐԸ

Հյուսիսային անձրևը թափվում է անդադար։ Թրջված նախիրի նման մոտենում են Նապոլեոնի զինվորները իրենց կոշիկների վրա երկուական ֆունտ ցեխ կրելով. ո՛չ մի ապաստան, ո՛չ տուն, ո՛չ տանիք։ Ծղոտն այնպես է խոնավացել, որ ոչ մի տեղ պառկելու հնար չկար, և զինվորները տեղատարափ անձրևի տակ քնում են նստած, մեջք մեջքի տալով, տասը-տասնհինգ մարդ առանձին-առանձին։ Կայսրն էլ հանգիստ չունի։ Տենդագին բորբոքումը նրան քշում է մի տեղից մյուսը. հակառակորդի դիրքերի հետախուզմանը խանգարում է անթափանց թխպոտ եղանակը, հետախույզների բերածը խառնաշփոթ տվյալներ էին միայն։ Նա դեռևս չգիտե՝ Վելինգտոնը ճակատամարտ կընդունի՞ արդյոք, Գրուշիի կողմից էլ լուր չկա պրուսական բանակի մասին։

Եվ գիշերվա մեկին, բանի տեղ չդնելով մտրակող տեղատարափ անձրևը, նա ինքն է քայլում առաջապահ դիրքերի երկայնքով, թնդանոթի հրաձգության չափ մոտենալով անգլիական բիվուակներին, ուր մեկ

այստեղ, մեկ այնտեղ մթության մեջ առկայծում են աղոտ լույսերը, և մտքում որոճում է ճակատամարտի ծրագիրը։ Լուսադեմին միայն նա վերադառնում է Կայու, իր աղքատիկ շտաբ-կացարանը, ուր գտնում է Գրուշիի առաջին հաղորդումները. աղոտ տվյալներ՝ նահանջող պրուսացիների մասին, բայց դրանց հետ միասին հետապնդումը շարունակելու հանգստացնող խոստում։ Անձրևն աստիճանաբար մեղմանում է։ Կայսրն անհամբեր քայլում է մի անկյունից մյուսը՝ հայացքը դարձնելով լուսամուտին, դեպի դեղնին տվող հեռուները՝ չի՞ պարզում, վերջապես, հորիզոնը, չի՞ եկել վճիռ ընդունելու պահը։

Առավոտյան հինգին անձրևը կտրվում է, բոլոր կասկածները փարատվում են։ Նա հրաման է տալիս՝ իննին մոտ ամբողջ բանակը շարվի և պատրաստ լինի գրոհի։ Հանձնակատարները սուրում են բոլոր ուղղություններով։ Թմբուկներն արդեն հավաքի նշան են տալիս։ Եվ դրանից հետո միայն Նապոլեոնը նեռվում է շարժական մահճակալին երկու ժամվա քուն առնելու համար։

ՎԱԹԵՌԼՈՈՅԻ ԱՌԱՎՈՏԸ

Առավոտյան իննն է։ Բայց դեռ բոլոր գնդերը չէ, որ դիրքավորվել են։ Երեք օրվա անձրևից կակղած գետինը դժվարացնում է տեղաշարժը և կասեցնում հրետանու մոտենալը։ Սառը քամի է փչում, դանդաղորեն դուրս է գալիս արևը, բայց դա Աուստերլիցի արևը չէ՝ վառ, ճառագող, երջանկություն գուշակող արևը, այլ դրա տրտմալի առկայծող հյուսիսային արտափայլումը միայն։

Վերջապես գնդերը շարված են, և մարտից առաջ Նապոլեոնը իր ճերմակ զամբիկով շրջում է ճակատով մեկ։ Դրոշների արծիվները խոնարհվում են, հեծյալները մարտականորեն թափահարում են սրերը, հետևակայիններն ի նշան ողջույնի իրենց հրացանների վրա բարձրացնում են արջենու գլխարկները։ Կատաղի թափով թնդում են թմբուկները, մոլեգին հրճվանքով զորավարին դիմավորում են շեփորները, բայց այս ամբողջ հրավառությունը ծածկում է յոթանասունհազարանոց բանակի համերաշխ, ցնծագին, ալիք տվող կանչը. «Vive l'Empereur!», «Կեցցե՛ կայսրը»։

Նապոլեոնի քսանամյա տիրապետության ընթացքում ոչ մի շքահանդես չի եղել ավելի հանդիսավոր ու վսեմաշուք, քան այս վերջին ստուգատեսը։

Հազիվ են դադարում կանչերը, երբ ժամը տասնմեկին, երկու ժամ-

վա ուշացումով (ճակատագրական եղավ այս ուշացումը) հրետանիկներին հրաման տրվեց մանրագնդակ արկեր տեղալ բլրի կարմիր համազգեստների վրա։ Եվ ահա նեյը՝ «քաջաց քաջը», առաջ տարավ հետևակը։ Հասավ Նապոլեոնի վճռական ժամը։ Անհամար անգամ նկարագրվել է այս ճակատամարտը, և այդուամենայնիվ, առանց հոգնության ու ձանձրույթի վերստին հետևում ես դրա հարափոփոխ ընթացքին, բոլոր պերիպետիաներին՝ նորից կարդալով Վալտեր Սկոտի պատմվածքը կամ առանձին դրվագների Ստենդալի նկարագրությունները։ Դա հավասարապես նշանակալի է ու բազմազան՝ ինչ դիտակետից էլ նայելու լինես՝ մոտիկից թե հեռվից, գեներալական բլրի թե կիրասիրական թմբի վրայից։ Դրամատիկական ահագնաթափ լարում գլուխգործոց է այս ճակատամարտը՝ վախի ու հույսերի անընդմեջ փոփոխություններով ու մի այնպիսի հանգուցալուծումով, որի մեջ ամեն ինչ ավարտվում է վերջնական կործանումով. ճշմարիտ ողբերգության մի նմուշ, քանի որ այստեղ հերոսի ճակատագիրը կանխորոշեց Եվրոպայի ճակատագիրը, և նապոլեոնյան դարաշրջանի ֆանտաստիկական հրավառությունն ընդմիշտ մարելուց առաջ գահավիժեց բարձունքից՝ մի անգամ, մի վերջին անգամ ևս հրթիռի պես երկինք մխրճվելով։

Տասնմեկից մինչև մեկը ֆրանսիական գնդերը գրոհում են բարձունքները, գրավում գյուղեր ու դիրքեր, նորից են նահանջում և նորից գրոհի նետվում։ Արդեն տասը հազար դիակ պատել են բլրաշատ տեղանքի խոնավ կավահողը, բայց ուժասպառումից բացի դեռևս ոչինչ ձեռք չի բերվել ոչ մեկ, ոչ մյուս կողմից։ Երկու բանակն էլ հոգնել են, երկու գլխավոր զորապետն էլ անհանգիստ վիճակ են ապրում։ Երկուսն էլ գիտեն, որ կհաղթի նա, ով առաջինը համալրում կստանա՝ Վելինգտոնը Բլյուխերից, Նապոլեոնը՝ Գրուշիից։

Նապոլեոնը ստեպ-ստեպ ձեռքն է առնում հեռադիտակը, սուրհանդակներ առաքում. եթե իր մարշալը վրա հասնի ժամանակին՝ Ֆրանսիայի վրա վերստին կշողա Աուստերլիցի արևը։

ԳՐՈՒՇԻԻ ՍԽԱԼԸ

Գրուշին, Նապոլեոնի ճակատագրի ակամա տնօրենը, նրա հրամանով նախորդ երեկո արշավի ելավ նշված ուղղությամբ։ Անձրևը դադարեց։ Անհոգ, ասես խաղաղ ժամանակ, քայլում են վաշտերը, որ առաջին անգամ երեկ էին առել վառոդի հոտը։ Հակառակորդը չկա ու չկա, ջախջախված պրուսական բանակի հետքն էլ չի երևում։

Հանկարծ, այն ժամանակ, երբ մարշալը շտապ-շտապ նախաճաշ է անում մի ֆերմերի տանը, հողը թեթևակի ցնցվում է ոտքի տակ։ Բոլորն ականջ են դնում։ Նորից ու նորից, խլաձայն և ապա մարելով, ալիք է տալիս թնդյունը. դա հեռավոր հրանոթային համազարկի ձայնն է, ասենք, ոչ այնքան հեռավոր, ամենաշատը՝ երեքժամանոց արշավային տարածություն։ Սպաներից մի քանիսը հնդկացիների նման ականջները հպում են գետնին՝ ուղղությունը որսալու համար։ Անընդմեջ հեռավոր թնդյուն է լսվում։ Մոն-Սեն-Ժանի մոտ սկսված թնդանոթաձգության ձայնն է դա, Վաթերլոոյի սկիզբը։ Գրուշին խորհուրդ է հրավիրում։ Ժերարը՝ նրա օգնականը, տաք-տաք, կրակ կտրած պահանջում է. «Il faut marcher au canon» — հառա՛ջ, դեպի կրակի վայրը։ Մեկ ուրիշ սպա պաշտպանում է նրա առաջարկը՝ այնտե՛ղ, անհապաղ այնտեղ։ Բոլորը հասկանում են, որ կայսրը բախվել է անգլիացիների հետ և կատաղի կռվի թեժ պահն է։

Գրուշին տատանվում է։ Ենթարկվելու վարժված մարդ, նա երկչոտաբար հակվում է դեպի կայսեր կանխագծմանը հետևելու ուղին՝ հետապնդել նահանջող պրուսացիներին։ Տեսնելով մարշալի անվճռականությունը, Ժերարը համբերությունից դուրս է գալիս՝ «Marchez au canon!» — գնացե՛ք դեպի կրակի վայրը։ Իբրև հրաման և ոչ իբրև խնդրանք է հնչում ենթակայի այս պահանջը քսան մարդու՝ զինվորականների և ոչ զինվորականների ներկայությամբ։ Գրուշին դժգոհ է։ Նա ավելի կտրուկ ու խստորեն կրկնում է, որ պարտավոր է ճշտորեն կատարել իր պարտքը, քանի դեռ կայսրն ինքը չի փոխել հրամանը։ Սպաները հիասթափված են, իսկ թնդանոթները որոտում են ցասումնալի լռության մեջ։

Ժերարը մի վերջին հուսահատ փորձ է անում. նա խնդրում է, աղաչում է թույլ տալ իրեն թեկուզև մի դիվիզիայով ու մի բուռ հեծելազորով շարժվել դեպի ռազմադաշտ և պարտավորվում է ժամանակին լինել տեղում։ Գրուշին միտք է անում։ Նա մտածում է միայն մի վայրկյան։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԿԱՆ ԱԿՆԹԱՐԹԸ

Մի վայրկյան է մտածում Գրուշին, և այդ մի վայրկյանը վճռում է իր բախտը, Նապոլեոնի բախտը և ամբողջ աշխարհի։ Դա, այդ մի միակ վայրկյանը Վալհայմի ֆերմայում, կանխորոշում է 19-րդ դարի ամբողջ ընթացքը. և ահա անմահության երաշխիքը՝ այդ վայրկյանը դանդաղում է շատ ազնիվ և նույնքան սովորական մարդու շուրթերին, իսկ կայսեր շարաբաստիկ հրամանը պարզ ու ակներև թրթռում է թուղթը նյարդայնորեն ճմրթող նրա ձեռքերում։

Եթե Գրուշին քաջություն ունենար, եթե նա հանդգներ հրամանը խախտել, եթե նա հավատ ընծայեր իրեն և բացահայտ, հրատապ անհրաժեշտությանը՝ Ֆրանսիան փրկված կլիներ։ Բայց ենթակա, ստորադրյալ մարդը միշտ էլ կարգադրությանն է հետևում և ականջ չի դնում ճակատագրի կանչին։

Գրուշին եռանդով մերժում է ժերարի առաջարկը։ Ո՛չ, այսքան փոքրը բանակը մասնատել չի կարելի։ Իր խնդիրն է հետապնդել պրուսացիներին, և այդքա՛նը միայն։ Նա հրաժարվում է գործել ստացած հրամանին հակառակ։ Անբավական սպաները ձայն չեն հանում։ Գրուշիի շուրջը լռություն է տիրում։ Եվ այդ լռության մեջ անվերադարձ չքանում է այն, ինչ այլևս չի կարելի ետ բերել ո՛չ խոսքով, ո՛չ գործով. չքանում է վճռական ակնթարթը։ Հաղթանակը մնաց Վելինգտոնին։

Իսկ Գրուշիի գնդերը շարունակում են արշավը։ ժերարը, Վանդամը ցասումով սեղմում են բռունցքները։ Գրուշին անհանգստանում է՝ պրուսացիները չեն երևում, պարզ է, որ նրանք շեղվել են Բրյուսելի ճանապարհից։ Շուտով հետախույզները կասկած հարուցող լուրեր են բերում. ամենայն հավանականությամբ, պրուսացիների նահանջը դարձել է շեղումների քայլերթ դեպի ռազմադաշտը։ Դեռ ժամանակ կա կայսրին օգնության հասնելու համար, և ավելի ու ավելի անհամբերությամբ Գրուշին սպասում է վերադարձի հրամանի։ Բայց հրամանը չկա։ Միայն ավելի ու ավելի խլաձայն է լսվում հեռավոր թնդանոթաձգությունը՝ Վաթերլոոյի երկաթե վիճակահանությունը։

ԿԵՍՕՐԻՑ ՀԵՏՈ

Մինչդեռ ժամը մեկն է արդեն։ Չորս գրոհ ետ է մղվել, բայց դրանք նկատելիորեն թուլացրել են Վելինգտոնի ճակատի կենտրոնը։ Նապոլեոնը պատրաստվում է վճռական գրոհի։ Նա հրամայում է ուժեղացնել Բել-Ալյանսի մոտ գտնվող հրետանին և, նախքան հրանոթների ծուխը կվարագուրի բլրամիջյան տարածությունը՝ նա մի վերջին հայացք է նետում ռազմադաշտի վրա։

Եվ ահա հյուսիս-արևելքում Նապոլեոնը ինչ-որ ստվեր է նկատում, որ ասես դուրս են սողում անտառի միջից թարմ զորքեր։ Հեռադիտակներն անմիջապես այն կողմն են դառնում. Գրուշի՞ն է, արդյոք, որ համարձակորեն զանց է առել հրամանը և հրաշքով օգնության եկել ամենավճռական պահին։

Ո՛չ, զերին հայտնում է, որ դա գեներալ Բլյուխերի առաջապահն է,

դրանք պրուսական գնդերն են։ Կայսրն իսկույն կռահում է, որ պրուսացիների պարտված բանակը խուսափել է հետապնդումից և դալիս է միանալու անգլիացիներին, իսկ իր սեփական բանակի մեկ երրորդն աննպատակ ու ապարդյուն ետուառաջ է անում դատարկ տարածության մեջ։ Նա իսկույնևեթ Գրուշիին երկտող է գրում, հրամայելով ինչ գնով էլ լինի կապ պահպանել և խանգարել պրուսացիներին մտնելու մարտի մեջ։

Նույն ժամանակ մարշալ Նեյը գրոհելու հրաման է ստանում։ Վելինգտոնին պետք է տապալել ավելի վաղ, քան պրուսացիները կմոտենան. հենց հիմա, երբ հանկարծ ու միանգամից նվազել են հաղթանակի հնարավորությունները՝ պետք է առանց տատանվելու ամեն ինչ դնել խաղաթղթին։ Եվ ահա մի քանի ժամվա ընթացքում իրար են հետևում կատաղի գրոհները, նորանոր հետևակային զորամասեր են մտնում կռվի մեջ։ Նրանք գրավում են մի քանի ավերված գյուղեր, ապա ետ են քաշվում, և վերստին մարդկային զանգվածը կատաղորեն նետվում է թշնամու արդեն բզկտված կարեի (քառանկյուն դասավորություն) վրա։

Բայց Վելինգտոնը դեռ դիմանում է, իսկ Գրուշիից ոչ մի լուր։ «Ո՞ւր է Գրուշին, որտե՞ղ է դեմ առել Գրուշին», — տագնապով շշնջում է կայսրը՝ նայելով պրուսացիների մոտեցող առաջապահին։ Կայսեր գեներալներն էլ սկսում են կորցնել համբերությունը։ Նպատակ դնելով ուժով վճռել ճակատամարտի ելքը, մարշալ Նեյը, գործելով նույնքան հանդգնաբար ու անվեհեր, որքան անվստահ գործում էր Գրուշին (երեք ձի արդեն սպանվել են Նեյի տակ), նա կրակի երախն է նետում ֆրանսիական ողջ հեծելազորը։ Տասը հազար կիրասիրներ և դրագուններ սուրում են մահվան ընդառաջ, սեպի պես խրվում կարեի մեջ, ճզմում թշնամական շարքերը, հնձում հրետանավորներին։

Ճիշտ է, նրանց ետ են մղում, բայց անգլիական բանակի ուժերն ըսպառվում են, ամրացված բլուրների մեջ խրված բռունցքը սկսում է բացվել։ Ու երբ ֆրանսիական նորաստեղծ հեծելազորը նահանջում է ռմբագնդերի տարափի տակ, Նապոլեոնի վերջին ռեզերվը, հին գվարդիան, հաստատուն և դանդաղ քայլքով գրոհում է այն բարձունքները, որոնց նվաճումը կարող էր որոշել Եվրոպայի ճակատագիրը։

ՀԱՆԳՈՒՅՑԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Ամբողջ օրը չորս հարյուր թնդանոթ է որոտում մեկ և մյուս կողմերից։ Ռազմադաշտում ձիերի դոփյունը միահյուսվում է հրանոթների համազարկերին, խլացուցիչ հարվածում են թմբուկները, գետինը ցնցվում

է զզրդյունից ու թնդյունից։ Բայց բարձունքների՝ երկու բլրի վրա, երկու զորավարն էլ մարտի ժխորի մեջ ուշի-ուշով որսում են ավելի ցածր հնչյուններ։

Ժամանակաչափերը հաղիվ լսելի, թռչունի սրտի պես, տկտկում են կայսեր ձեռքին և Վելինգտոնի ձեռքին։ Երկուսն էլ ստեպ-ստեպ նայում են ժամացույցին և հաշվում բոպեներն ու վայրկյանները, սպասելով վերջին, վճռական օգնության։ Վելինգտոնը գիտե, որ Բլյուխերը մոտենում է, Նապոլեոնը հույս է կապում Գրուշիի հետ։ Երկուսն էլ սպառել են իրենց ուժերը, և կհաղթի նա, ով առաջինը կստանա համալրում։ Երկուսն էլ հեռադիտակով նայում են անտառի փեշին, ուր, ինչպես թեթև ամպ, նշմարվում է պրուսական առաջապահը։ Առաջապա՞հն է միայն, թե բուն բանակը, որ խուսափել է Գրուշիի հետապնդումից։

Արդեն թուլանում է անգլիացիների դիմադրությունը, բայց ֆրանսիացիներն էլ ուժահատվել են։ Ծանր շնչելով, ինչպես երկու ըմբիշ, հակառակորդները կանգնել են դեմ դիմաց, ուժ հավաքելով վերջին գոտեմարտի համար, որը և կվճռի պայքարի ելքը։

Եվ ահա վերջապես անտառի կողմից համազարկ է լսվում՝ կրակում են հրացաններն ու հրանոթները. «Enfin Grouchy!» — վերջապես Գրուշին։ Նապոլեոնը թեթևացած շունչ է քաշում։ Վստահ, որ իր թևին հիմա ոչինչ չի սպառնում, նա բանակի մնացորդները ետ է քաշում թեից և նորից զրոհում Վելինգտոնի կենտրոնը, որ խորտակի Բրյուսելի ճանապարհը փակող բրիտանական փականքը, խորտակի Եվրոպայի դարպասը։

Բայց համազարկը թյուրիմացություն էր. պրուսացիները, որ մոլորության մեջ էին ընկել ոչ անգլիական համազգեստի պատճառով, կրակ էին բացել հանովերցիների վրա։ Կրակոցները դադարում են, և անարգել լայն ու հզոր հոսանքով անտառից դուրս են թափվում պրուսական զորքերը։ Ո՛չ, սա Գրուշին չէ իր գնդերով, այլ Բլյուխերը և նրա հետ միասին՝ անդառնալի հանգուցալուծումը։

Լուրն արագորեն տարածվում է կայսերական զորագնդերի մեջ, նրանք սկսում են նահանջել դեռևս տանելի կարգով։ Բայց Վելինգտոնը զգում է, որ եկել է ճակատագրական պահը։ Նա ձին քշում է դեպի այնքան կատաղորեն պաշտպանվող բլրի գագաթը, հանում է գլխարկը և պըտրտում գլխավերևը՝ ցույց տալով հակառակորդի նահանջը։ Նրա զորքերն իսկույն կռահում են այդ հաղթական շարժման իմաստը։ Անգլիական գնդերի մնացորդները ելնում են միասնաբար ու նետվում ֆրանսիացիների վրա։ Նույն այդ ժամանակ պրուսական հեծելազորը մյուս թևից է վրա տալիս ուժահատ ու նոսրացած բանակի վրա։

Լսվում է «Փրկվեցե՞ք ով ինչպես կարող է» կործանարար ճիչը։ Եվս մի քանի րոպե՝ և մեծ բանակը, դառնալով վախից հալածված մի անկասելի հեղեղ, որ ամեն ինչ և ամենքին, նույնիսկ Նապոլեոնին իր մեջ առած, տանում է ետ։ Դիմադրության չհանդիպելով, հակառակորդի հեծելազորը նետվում է այդ արագորեն ետ քաշվող և լայնորեն տարածվող հեղեղի, ինչպես դյուրաթեք ջրահոսքի մեջ։ Խուճապահար աղաղակների փրփուրի միջից հազիվ դուրս են կորզում Նապոլեոնի կառքը, զինվորական գանձարանը և ամբողջ հերտանին. վրա հասած մութն է միայն, որ փրկում է կայսեր կյանքն ու ազատությունը։ Բայց այն մարդը, որ գիշերվա կեսին, ցեխոտված, ուժահատ, փուլ է գալիս գյուղական աղքատիկ պանդոկի աթոռին՝ կայսր չէ այլևս։

Վե՜րջ կայսրությանը, նրա դինաստիային, նրա ճակատագրին. փոքր, սահմանափակ մարդու անվճռականությունը խորտակեց այն, ինչ մարդկանցից ամենաքաջարին, ամենախորաթափանցը ստեղծել էր հերոսական քսան տարվա ընթացքում։

ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անգլիական դրոհը չէր հասցրել ջախջախել Նապոլեոնի բանակը, երբ ինչ-որ մարդ, մինչ այդ գրեթե անանուն, փոստային արագընթաց կառքով արդեն սուրում էր Բրյուսելից դեպի ծովափ, ուր նրան նավ էր սպասում։ Նա Լոնդոն է հասնում կառավարական լրաբերներից առաջ և, օգուտ քաղելով այն հանգամանքից, որ լուրը դեռ մայրաքաղաք չի հասել, տառացիորեն պայթեցնում է բորսան. այդ հանճարեղ քայլով Ռոտշիլդը հիմնում է նոր կայսրություն, մի նոր դինաստիա։

Վաղնեթ ողջ Անգլիան կիմանա հաղթանակի մասին, իսկ Փարիզում, ինքն իրեն հավատարիմ դավաճան Ֆուշեն՝ պարտության մասին. Բրյուսելի և Գերմանիայի վրա կտարածվի հաղթական զանգահարությունը։

Մի մարդ կա միայն, որ հաջորդ առավոտյան դեռ ոչինչ չգիտե Վաթերլոոյի մասին, չնայած նրան ընդամենը չորսժամյա անցում է բաժանում ողբերգության վայրից՝ տարաբախտ Գրուշին, որ անշեղորեն կատարում է հրամանը՝ հետապնդել պրուսացիներին։ Բայց որքան էլ զարմանալի է՝ պրուսացիները չկան ու չկան, և դա անհանգստացնում է նրան։ Ավելի ու ավելի բարձր են որոտում թնդանոթները, ասես օգնություն աղերսելով։ Բոլորն զգում են, թե հողն ինչպես է դողում ոտքի տակ, և ամեն մի թնդյուն արձագանք է տալիս նրանց սրտում։ Բոլորը գիտեն, որ դա սովորական հրաձգություն չէ և որ վիթխարի, վճռական ճակատա-

մարտը բռնկվել է։ Մռայլ ու անխոս՝ առաջ է շարժվում Գրուշին, շրջապատված իր սպաներով։ Նրանք այլևս վեճի մեջ չեն մտնում մարշալի հետ. չէ որ նա չանսաց իրենց խորհրդին։

Վերջ ի վերջո Վավրի մոտ նրանք բախվում են պրուսական ջոկատին։ Դա Բլյուխերի բանակի վերջապահն է, և այդ հանդիպումը նրանց թեթևացում է բերում։ Նրանք մոլեգնությամբ նետվում են թշնամու խրամատների վրա։ Ամենքից առաջ սուրում է Ժերարը. կարող է պատահել, մռայլ կանխազգացմամբ տոչորվելով, նա մահ է փնտրում։ Գնդակը հասնում է Ժերարին, նա ընկնում է վիրավոր. նա, ով բողոքի ձայն էր բարձրացնում, լռեց։ Երեկոյան դեմ նրանք գրավում են գյուղը, բայց բոլորը կռահում են, որ այդ փոքրիկ հաղթանակն իզուր է արդեն, քանի որ այնտեղ, մյուս կողմում, ուր ռազմի դաշտն է, հանկարծ լռություն տիրեց։

Տիրեց ահեղ, սոսկալիորեն համր մեռելային լռություն։ Եվ ամենքը համոզվում են, որ հրանոթների որոտն էլի ավելի լավ էր, քան այս տանջալի անորոշությունը։ Ճակատամարտն, ըստ երևույթին, ավարտվել է, Վաթերլոոյի ճակատամարտը, որի մասին Գրուշին վերջապես (ավա՜ղ, չափազա՜նց ուշ) լուր է ստանում՝ օգնության հասնելու Նապոլեոնի պահանջի հետ միասին։

Բայց ո՞վ է հաղթել այդ վիթխարի ճակատամարտում։ Նրանք սպասում են ողջ գիշերը։ Իզո՜ւր։ Լուր չկա, ասես մեծ բանակը մոռացել է իրենց և իրենք, ոչ ոքի պետք չգալով, անմտորեն կանգ են առել այստեղ, այս անթափանց խավարում։ Առավոտյան նրանք նորից ելնում են երթի, վերստին քայլում են ճամփաներով, մահու չափ հոգնած և, հավանորեն, գիտենալով արդեն, որ իրենց տեղաշարժերը կորցրել են ամեն մի իմաստ։ Վերջապես, առավոտյան տասին նրանց ընդառաջ է գալիս գլխավոր շտաբի մի սպա։ Նրան օգնում են իջնել թամբից և հարցեր են տեղում վրան։ Սպայի դեմքն աղավաղված է հուսահատությունից, քրտնամխած մազերը կպել են քունքերից, մարդը օրորվում է մահացու հոգնությունից, հազիվ ի վիճակի է ասելու մի քանի անորոշ խոսք, բայց այդ խոսքերը ոչ ոք չի հասկանում, չի՜ կարող, չի՜ ուզում հասկանալ։ Սպային խելագարի, հարբածի տեղ են դնում, քանի որ նա ասում է, թե չկա՜ այլևս կայսր, չկա՜ կայսերական բանակ, Ֆրանսիան կործանված է։ Բայց քիչ-քիչ նրանից կարողանում են մանրամասն տեղեկություններ ստանալ, և ամենքն իմանում են խորտակիչ, սպանիչ ճշմարտությունը։

Գրուշին, գունատ ու դողդոջուն, կանգնած է թրին հենված. նա գիտե, որ իր համար սկսվում է նահատակի կյանք։ Բայց նա հաստատա-

կամորեն իր վրա է առնում մեղքի ողջ ծանրությունը։ Անվճռական ու երկչոտ ստորադրյալը, որ չկարողացավ այն նշանակալի ակնթարթում կռահել մեծ բախտը, հիմա, այս սպառնալիքի հետ երես առ երես դառնում է քաջարի զորապետ, գրեթե հերոս։

Նա անհապաղ հավաքում է բոլոր սպաներին և, ցասման ու տրրտմության արցունքն աչքերին, մի կարճառոտ խոսքով արդարացնում է իր տատանումները և միաժամանակ դառնորեն զղջում արածը։ Անխոս լըսում են մարշալին այն մարդիկ, որ դեռ երեկ զայրույթով էին լցված նրա հանդեպ։ Նրանցից ամեն մեկը կարող էր մեղադրել մարշալին, պարծենալ, թե ինքը ուրիշ, ավելի լավ ելք էր առաջարկում։ Բայց ոչ ոք սիրտ չի անում, ոչ ոք չի ուզում այդ անել։ Նրանք լռում են և լռում։ Անչափելի վիշտը փականք է դրել նրանց շուրթերին։

Եվ ահա այդ ժամին Գրուշին ուշացումով հանդես է բերում զորավարի արտասովոր տաղանդ։ Մարշալի բոլոր արժանիքները՝ խելամըտություն, ջանասիրություն, զսպվածություն, պարտաճանաչություն, երևան են գալիս այն բոպեից, երբ նա դարձյալ վստահում է ինքն իրեն և ոչ թե հրամանի տառին։ Շրջապատված ոսոխի հնգապատիկ գերազանցող ուժերով, նա փայլուն տակտիկական մանևրով իր գնդերը դուրս է բերում թշնամական հոծ զորքերի միջով՝ չկորցնելով ոչ մի թնդանոթ, ոչ մի զինվոր, և Ֆրանսիայի համար, կայսրության համար փրկում է նրա բանակի մնացորդը։ Բայց չկա կայսրը, որ շնորհակալ լինի նրան։ Գրուշին ուշացել է, ուշացել առհավետ։ Ու թեև իր հետագա կյանքում նա շատ է բարձրանում, ստանում գլխավոր հրամանատարի և Ֆրանսիայի պերի տիտղոս, ամեն մի պաշտոնում իր հաստատակամ և բանիմաց գործունեության համար վայելում համընդհանուր հարգանք՝ ոչինչ այլևս չի կարող նրան փոխհատուցել այն վայրկյանը, որ իրեն ճակատագրի տնօրեն էր կարգել և որին նա չկարողացավ տեր կանգնել։

Այսպես ահավոր կերպով վրեժխնդիր է լինում մեծ, անկրկնելի ակընթարթը, որ երբեմն միայն բաժին է ընկնում մահկանացուին, եթե նա, որին սխալմամբ է վիճակվել ակնթարթը, երես է դարձնում նրանից։

Բոլոր քաղքենիական առաքինությունները հուսալի վահան են խաղաղ ընթացող առօրյա պահանջների հանդեպ. զգուշավորություն, ջանասիրություն, ողջախոհություն։ Այս նույն հատկանիշներն անօգնական ու անհարկավոր են դառնում, հալվում, անէանում են այն մի միակ վճռական վայրկյանի մեջ, որ բացահայտվում է միայն հանճարի առաջ և նրա մեջ է որոնում իր մարմնացումը։ Արգահատանքով նա հեռու է վանում փոքրոգի մարդուն, և միայն անվեհերին է բարձրացնում երկինք իր հրեղեն աջով ու նրան հերոսների կաճառը դասում։

ՄԱՐԻԵՆԲԱԴՅԱՆ ԵԼԵԳԻԱՆ

Գյոթեն Կարլսբադից Վայմար գալու ճանապարհին. 1823 թվականի սեպտեմբերի 5-ը



1823 թվականի սեպտեմբերի 5-ին կառքը դանդաղորեն գլորվում է Կարլսբադից էգեր տանող ճանապարհով. արդեն աշնանային պաղությամբ է փչում վաղորդյան քամին, տարածվում հնձված դաշտերի վրայով, բայց լայնարձակ հեռուների վրա կապտին է տալիս անամպ երկինքը։

Կառքի մեջ նստած են երեք տղամարդ. Սաքսեն — Վայմարյան դրքությունյան գաղտնի խորհրդական ֆոն Գյոթեն (նա այդպես է կոչվում կարլսբադյան հանքային ջրերը եկածների ցուցակում) և իրեն անմնացորդ նվիրված երկու մարդ. ծերունի ծառան՝ Շտադելմանը, և Ջոնը՝ իր քարտուղարը, որի ձեռքով են առաջին անգամ թղթին հանձնվել 19-րդ դարում Գյոթեի գրած բոլոր երկերը։ Ոչ մեկը, ոչ մյուսը չեն ասում ոչ մի խոսք, քանի որ Կարլսբադից դուրս գալու հենց առաջին պահից, երբ մատաղահաս կանայք ու աղջիկները հրաժեշտի խոսքեր ու համբույրներ տեղալով խոնվել էին ծերունի բանաստեղծի շուրջը, նրա շուրթերը լռություն են պահպանում։

Գյոթեն նստած է անշարժ, և նրա մտախոհ, ինքնասույզ հայացքն է միայն, որ մատնում է իր հոգու խռովքը։ Առաջին իսկ փոստակայանում նա դուրս է գալիս կառքից, և ուղևորները նկատում են, թե ինչպես նա մատիտով շտապ-շտապ ինչ-որ գրառում է անում պատահաբար ձեռքն ընկած թղթի վրա։ Նույնը կրկնվում է մինչև Վայմար տանող ամբողջ ճանապարհին՝ և՛ ընթացքի ժամանակ, և՛ կանգառներում։ Մյուս օրը, Ցվոտաու հասնելուն պես, էգերի Գարտենբերգ ամրոցում, իսկ հետո էլ Պյոսնեկում, ամենուրեք նրա առաջին շարժումն է՝ տենդային արագությամբ թղթին հանձնել այն, ինչ խորհել էր ճանապարհին։ Օրագրում մի կարճ տվյալ կա միայն. «Աշխատեցի բանաստեղծության վրա» (սա վերաբերում է սեպտեմբերի 6-ին), «Կիրակի օրը շարունակեցի աշխատել» (7 սեպտեմբերի), «Բանաստեղծությունը վերստին կարդացի ճանապարհին» (12 սեպտեմբերի)։

Վայմարում, ճամփորդության վերջնակետին հասնելիս, բանաստեղծությունն ավարտված է. դա այլ բան չէ, քան «Մարիենբադյան էլեգիան», ամենախորաթափանց, խորապես քնարական, և իր ծերության ամենասիրելի երգը՝ արիասիրտ հրաժեշտը և նոր հերոսական թռիչքը։

«Հոգեվիճակի օրագիր», — այսպես է Գյոթեն կոչել պոեզիան գրության ժամանակ, և նրա կյանքի օրագրում թերևս չկա մի էջ, որ այնքան լիակատար, այնքան ակներև բացեր իր ծագման գաղտնիքը, որքան այդ դառնագին հարցումնային բողոքը, իր ամենանվիրական զգացմունքների այդ տրտմալի վկայությունը։ Իր պատանեկան տարիների և ոչ մի բանաստեղծական գեղում այնքան անմիջաբար չէր բխել նոր միայն ապրածից, նրա երկերից ոչ մեկում մենք այնքան ակներևորեն, քայլ առ քայլ, տուն առ տուն, ժամ առ ժամ չենք տեսնում նրա ստեղծագործական մրտքի ընթացքը, որքան «մեզ համար ստեղծված այդ հրաշալի երգում», յո-

թանասունչորսամյա պոետի այդ ամենահասուն, ամենասրտագին, ճըշմարիտ աշնանային ծիրանիով բոցկլտացող բանաստեղծության մեջ։

«Վերին աստիճան կրքոտ վիճակի արգասիք» այդ բանաստեղծությունը, ինչպես իր էլեգիայի մասին էկկերմանին ասել է Գյոթեն, աչքի է ընկնում ձևի ազնվագույն զսպվածությամբ. ամենակրակոտ ակընթարթը բացահայտ և միաժամանակ խորհրդավոր կերպով մարմնավորվել է բանաստեղծական կատարյալ պատկերում։ Անցել է ավելի քան հարյուր տարի, բայց մինչև օրս էլ ոչինչ չի խամրել ու չի աղոտացել նրա շքեղասաղարթ և բազմաժխոր կյանքի աշնանային այդ սքանչելի տերևի վրա, և 1823 թվականի սեպտեմբերի 5-ը դեռ դարերով կմնա իբրև արժանահիշատակ օր Գերմանիայի դալիք սերունդների համար։

Այդ տերևի, այդ բանաստեղծության, այդ ծերացող մարդու և այդ ժամի վերևում փայլփլում է հազվագյուտ մի աստղ՝ նորոգումի աստղը։

1822 թվականի փետրվարին Գյոթեն ծանր հիվանդություն տարավ. տենդի դաժանագույն նոպաները ցնցում են հիվանդի մարմինը, նա ստեպստեպ կորցնում է գիտակցությունը, իսկ մերձավորները՝ իրենց հույսը։ Բժիշկները չեն կարողանում ախտորոշել, բայց հասկանում են, որ դրությունը լուրջ է, ու չգիտեն ինչ անել։ Բայց հիվանդությունն անցնում է նույնքան հանկարծակի, ինչպես և սկսվել էր. հունիսին Գյոթեն մեկնում է Մարիենբադ, նա դառնում է անճանաչելի, և այնպես է թվում, թե անցած հիվանդությունը վերադարձած երիտասարդության, «հասունացման նոր փուլի» նախանշանն էր միայն։ Ինքնամփոփ, խստաբարո, պեղանտ ծերունին, որի միջից կարծրացած գիտական միտքը զրեթե խսպառ դուրս էր մղել պոեզիան, վերստին, տասնամյակներ անց, ամբողջովին ընկնում է զգացմունքների տիրապետության տակ։ Իր իսկ խոստովանությամբ, երաժշտությունը խորապես հուզում է հոգին, առանց արցունքի չի կարող լսել կլավիրի նվագը, մանավանդ, եթե նվագում է այնպիսի հրապուրիչ մի կին, ինչպես Շիմանովսկայան։ Նա անկասելիորեն մղվում է դեպի երիտասարդություն, և բարեկամները տեսնում են զարմանքով, որ յոթանասուներեքամյա ծերունին մինչև կեսգիշեր ժամանակն անց է կացնում կանանց շրջապատում, շատ տարիների ընդհատումից հետո վերստին մասնակից է լինում պարերի, ընդ որում նրան «միշտ ընտրում են ամենահմայիչ կանայք»։

Այս ամառ, ասես կախարդանքով, նրա մարած զգացմունքները ջերմանում են, և նրա վերստին բացված հոգին, առաջվա պես, դառնում է

վաղեմի դյութանքների գերին։ Օրագիրը դավաճանաբար մատնում է ապրած «երջանիկ գիշերները», ծերունու մեջ նորից արթնանում է «հին Վերթերը»։ Կանանց ներկայությունը նրան բանաստեղծական էքսպրոմտներ է ներշնչում, մղում դեպի խաղն ու կատակը, ինչպես կես դար առաջ, Լիլի Շենեմանի[1] ժամանակները։ Նա դեռևս տատանվում է ընտրության մեջ. նախ հրապուրիչ լեհուհին, իսկ հետո տասնիննամյա Ուլրիկա ֆոն Լևեցովն է գերում կյանքի կոչված նրա սիրտը։ Տասնհինգ տարի առաջ Գյոթեն սիրում էր նրա մորը, դեռ մի տարի առաջ լոկ հայրաբար թեթևվանկի հեգնում էր «դստրիկին», բայց հիմա համակրանքն անսպասելիորեն դարձել է կիրք, և, ամբողջովին համակելով սիրտը, ցնցում է նրան զգացմունքների այնպիսի հրաբխային ուժով, ինչպես ոչ մի ապրում չէր ցնցել երկար տարիներ։

Յոթանասունչորսամյա ծերունին սիրահարված է պատանու նման. պարտեզի ծառուղում աղջկա կարկաչահոս ձայնը լսելուն պես նա լքում է աշխատանքը և առանց գլխարկի ու ձեռնափայտի իջնում է ցած, մատաղահաս անհոգ աղջկա մոտ։ Եվ դեռ համառորեն հետապնդում է նրան պատանեկան ավյունով, տղամարդու կրքով։ Տրագիկոմիկական խաղ է ներկայացվում. գաղտնաբար խորհուրդ անելով իր բժշկի հետ, Գյոթեն ամեն ինչ խոստովանում է Սաքսեն-Վարմարյան դքսին և իր հին ու հավատարիմ ընկերոջը հանձնարարում է տիկին Լևեցովից խնդրել իր դուստրը Ուլրիկայի ձեռքը։ Եվ դուքսը, միտը բերելով, թե իրենք ի՞նչ բուռն գիշերներ են անցկացրել մի հիսուն տարի առաջ, գուցեև գողունի չարախնդացել է ծերունու վրա, որին Գերմանիան, ամբողջ Եվրոպան հարգում է իբրև իմաստուններից իմաստունի, իբրև արդիականության ամենահասուն և պայծառ խելքի։ Դուքսը հանդիսավորությամբ զարդարվում է իր բոլոր շքանշաններով ու պատվանշաններով և գնում յոթանասունչորսամյա Գյոթեի համար խնդրելու տասնիննամյա աղջնակի ձեռքը։ Ինչով է ավարտվել հարսնախոսությունը՝ ստույգ հայտնի չէ. ըստ երևույթին, տիկին Լևեցովը տվել է խուսափողական պատասխան և վճիռը հետաձգվել է։

Եվ այսպես, Գյոթեն ստիպված է գոհանալ երջանկության հույսով, հպանցիկ համբույրով, սիրալիր խոսքով, մինչդեռ նրան ավելի ու ավելի

---

1 Շենեման Լիլի (Աննա Էլիզաբեթ Շենեման, 1753—1817)—երիտասարդ Գյոթեի հարսնացու՝ գովերգված նրա մի շարք բանաստեղծություններում։ Հետագայում Ստրասբուրգի քաղաքագլուխ ֆոն Տյուրհայմի կինը։

է համակում այդ նրբագեղ կերպարանքը վերստին պատանեկան ավյունով ըմբոշխնելու տենչանքը։ Նորից է անհամբեր ու կրքոտաբար հետամուտ լինում ճակատագրի բարեհաճությանը. սիրած աղջկա ետևից նա նվիրվածությամբ մեկնում է Կարլսբադ, բայց այստեղ էլ ոչնչի չի հասնում, բացի կիսախոստումներից՝ ի պատասխան իր ջերմագին զգացմունքների։ Եվ անցնող ամառվա հետ նրա տառապանքները խորանում են։ Վերջապես գալիս է հրաժեշտի ժամը, որ նույնպես ոչինչ չի խոստանում, ոչ մի հույս չի ներշնչում, և հիմա, երբ կառքը նրան տանում է Վայմար՝ մեծ պայծառատեսը հասկանում է՝ այն մեծապես նշանակալին, որ խուժել էր իր կյանքի մեջ՝ ավարտվեց։ Բայց «խորագին ցավի հավերժական ուղեկիցը» այդ տրտմալի ժամին էլ փարատում է թախիծը. հանճարը պայծառության լույս է նետում տառապյալի վրա, և նա, սփոփանք չգտնելով երկրայինի մեջ, կոչ է անում աստվածայինին։ Վերստին, ինչպես բազմիցս արդեն, իսկ հիմա վերջին անգամ, Գյոթեն կյանքից վանվելով ապաստան է գտնում պոեզիայի մեջ, և, այս վերջին շնորհի համար երախտագիտության զգացումով, կյանքի յոթանասունհինգերորդ տարում նա խորամտաբար այս բանաստեղծությանը բնաբան է դնում իր «Տասսոյի» տողերը, որոնք գրել էր քառասուն տարի առաջ և որոնք, ի զարմանս իրեն, կենդանություն էին առել իր իսկ համար.

Այնտեղ, ուր լռում է տանջանքի մեջ մարդը,
Տառապանքս պատմելու շնորհ տվեց ինձ աստված...

Անուրախ մտքերի մեջ ընկած ծերունին ընթանում է կառքով և հուզախառով որոնում իրեն պաշարած հարցերի պատասխանը։ Դեռ այսօր առավոտյան «աղմկալի հրաժեշտի» ժամանակ Ուլրիկան քրոջ հետ միասին վազեց իր մոտ, մատաղահաս, սիրելի շուրթերը համբուրեցին իրեն, բայց դա քնքշագի՞ն համբույր էր, արդյոք, թե լոկ դուստրական։ Նա կսիրի՞, արդյոք, իրեն, մոռացության չի՞ մատնի։ Իսկ իր որդին ու հարսը, որ անհամբեր սպասում են մեծահարուստ ժառանգության, արգելք չե՞ն լինի ամուսնությանը։ Ինքը ծիծաղի առարկա չի՞ դառնա հասարակության աչքում։ Մի տարի անց նա Ուլրիկային անհուսալիորեն զառամյալ չի՞ թվա։ Ու եթե իրենք տեսնվեն՝ ի՞նչ կբերի այդ հանդիպումը։

Հարցերը դառնում են ավելի ու ավելի տագնապալի։ Եվ հանկարծ դրանցից մեկը, ամենից հրատապը, ղեղվում է տողերի մեջ. նա աստծուց շնորհ ունի «արտահայտելու, թե ինչպես է տառապում»։ Հոգեկան խր-

ողքի հզոր ճնշման տակ ուղղակի, մերկացած հարցը իբրև ցավագին ճիչ մխրճվում է բանաստեղծական տողերի մեջ.

Ի՞նչ կբերի արդյոք տենչալի օրը ինձ.
Գուցե ծաղի՞կ, որը կոկոն է դեռ,
Հիացումի արցո՞ւնք, թե տառապանք խորին,—
Մի կասկած է մթին հոգիս պատել։

Սրտի ցավը, մաքրագործված ու պայծառացած, մարմնացում է գըտնում բյուրեղյա տողերում։ Պոետը, դիզերելով հոգու խոռվքի «հոգեմաշ մթնոլորտում», հայացքը բարձրացնում է հանկարծ, և նրա առաջ բացվում է Բոհեմիայի վաղորդյան հեռաստանը՝ աստվածային անդորը, որ այնքան տարբեր է իր հոգին ծվատող տագնապներից։ Եվ ահա տեսած պատկերն արդեն հառնում է բանաստեղծության մեջ.

Մարե՞ց աշխարհն արդյոք։ Արդյո՞ք ժայռերն հպարտ
Էլ չեն շողա գրկում լուսաբացի,
Հասկերը չե՞ն լցվի, չի՞ փայլի ցողն ագաթ,
Ջրերը չե՞ն հոսի անծայրածիր,
Մերթ ցոլանքով անձրև հորիզոնին ձուլված,
Ու մերթ հազարա՜ձև, լայնատարա՜ծ։

Բայց իրեն անշունչ աշխարհը չի գոհացնում։ Համակված կրքով, նա ամեն ինչ ըմբռնում է սիրելի էակի հետ միաձուլված միայն, և այդ պատկերը կախարդական փոխակերպմամբ կենդանություն է առնում բանաստեղծի հիշողության մեջ.

Դու տեսնում ես այնտեղ, այն կապույտում անսուտ՝
Հրեշտակներին բոլոր, չնաշխարհիկ,
Որ ծնվել են կարծես կոհակներից լազուր,
Այնպես քնքո՜ւշ, այնպես հրաշալի՜։
Ու պարի մեջ հանկարծ երևում է աչքիդ՝
Ուրվականը չքնաղ ինչ-որ մեկի։

Դու նայո՜ւմ ես, նայո՜ւմ հիացումով անծիր,
Ու թվում է նա՛ է այն բիլ ծովում,
Այնքա՜ն նման է նա քո վեհ պատկերածին,
Սակայն ամեն վայրկյան այլ է թվում։
Հավերժորե՜ն մենակ, բյուր ձևերով նորից,
Եվ ամեն մի ձևում՝ լուսե ու անթերի։

Եվ մտապատկերում հայտնվելուն պես, Ուլրիկայի կերպարն արդեն դառնում է մարմնեղեն։ Գյոթեն բանաստեղծության մեջ գեղանկարում է, թե նա ինչպես է հանդիպել իրեն և ամեն քայլի հետ երջանկություն պարգևել, ինչպես վերջին համբույրին հետևել է ամենավերջինը։ Ամբողջովին քաղցրալուր հուշերին տրված, զառամած պոետը հյուսում է սիրույն ու հավատարմությանը ձոնված այն ամենամաքուր և կատարյալ բանաստեղծական տներից մեկը, որ երբևէ հնչել է գերմաներեն կամ մի ուրիշ լեզվով.

Մենք տենչում ենք տեսնել ճաճանչափայլ մեկին,
Վսեմագույն, անճառ ու հոյատես,
Եվ նմանվել նրան հոգով կարոտագին,
Ու խավարը պատռած դուրս գալ հանդես։
Եվ հենց դա է բարին։ Միայն իր հետ մենակ
Ես կարող եմ հասնել բարձունքներին ճերմակ։

Բայց որքան բերկրալի է սիրած էակի հուշը, նույնքան տանջալի է անջատումը, և ահա տառապանքը դուրս է մղվում այնպիսի ուժով, որ գրեթե փշրում է սքանչելի բանաստեղծության վսեմաշունչ թախծալի հյուսվածքը. շատ տարիների ընթացքում միայն մեկ անգամ է անմիջական զգացմունքն այդքան բացահայտորեն, այդքան մերկացած մարմնացում գտել բանաստեղծական տողերում. մինչև հոգու խորքը ցնցում է այս դառնագին բողոքը.

Եվ ինձ դու լքեցիր։ Եվ այն պահից, ասա՛,
Ես ի՞նչ պիտի անեմ։ Հոգիս տրտում,
Ճամփաներին դաժան՝ տառապանքնե՛ր հազար,
Չկա բարի մի շող անապատում։
Տրտմությունից քշված թափառում եմ անվերջ,
Ափսոսանքս փնտրում արցունքի մեջ։

Եվ այստեղ, երբ, թվում է, վիշտն արդեն հասել է վերջնասահմանին, մի վերջին, ամենատանջալի հառաչանք.

Ինձ հրաժեշտ տվեք ժայռերի մեջ վայրի,
Բարեկամնե՛ր, դուք ինձ թողե՛ք մենակ,
Բայց գնացե՛ք խիզախ, մտեք աշխարհն այս լի,
Տաճարը կեցության՝ շեն ու շռայլ։
Զննեք աշխարհը այս. և՛ օդ, և՛ հող, և՛ ջուր,
Եվ իմացեք կյանքի փնտրեք ամեն ինչում։

Իսկ ես՝ և աշխարհի, և ինձ համար կորա՛ծ.
Ես, որ սիրվա՛ծ էի մանկուց աստվածներից,

Ինձ, որ Պանդորայի զանձատուփն էր տրված,
Ուր կար ամեն բարիք, և բյուրավոր չարիք։
Ես երջանիկ էի, գեղեցիկի հետ պսակված,
Կործանվում եմ հիմա նրանից դատապարտված[1],

Մշտապես զուսպ, գաղտնամիտ բանաստեղծի շուրթերը երբեք այսպիսի տողեր չեն ասել։ Նա, ով պատանի հասակից գիտեր թաքցնել իր զգացմունքները, հասուն հասակում՝ սանձել նրանց, այն պոետը, որ միայն տեսիլքների, այլաբանությունների և խորհրդանիշների մեջ էր կիսաբաց անում իր նվիրական գաղտնարանները, հիմա, կյանքի մայրամուտին առաջին անգամ ազատություն է տալիս իրեն։

Հնարավոր է, որ անցած հիսուն տարում նա ոչ մի անգամ չի եղել այնքան թրթռուն զգացմունքների տեր մարդ, այնքան մեծ քնարերգու, որքան այն անմոռաց օրը, իր կյանքի այն արժանահիշատակ շրջադարձային պահին։

Գյոթեն ինքն էլ իր ստեղծագործության մեջ տեսնում էր բախտի խորհրդավոր ու հազվագյուտ շնորհը։ Վերադառնալով Վայմար, նա ամենից առաջ, նախքան մեկ ուրիշ աշխատությամբ կամ տնային գործերով զբաղվելը, իր ձեռքով արտագրում է էլեգիան վայելչագրական արվեստով։ Խնամքով ընտրված թղթի վրա նա երեք օր գրում է գեղեցիկ, ճարտարահյուս տառերով, ինչպես ճգնավորն իր խցում, թաքնվելով տնեցիներից, նույնիսկ ամենամերձավոր մարդկանցից։ Նույնիսկ կազմելու գործն ինքն է անում՝ միայն թե ժամանակից շուտ բանսարկություններ չտարածվեն։ Ապա մետաքսե ժապավենով ձեռագիրն ամրացնում է կարմիր սեկապատ կազմի մեջ (հետագայում դա փոխարինվում է կտավե հիանալի կազմով, որ հիմա էլ կարելի է տեսնել Գյոթեի ու Շիլլերի արխիվում)։

Օրերն անցնում են օրերի ետևից, լի դառնությամբ և ջղային տրամադրությամբ. ենթադրվող ամուսնությունը չար հեգնանքի առիթ է տալիս, իսկ որդին նույնիսկ պոռթկում է բացահայտ ատելությամբ։ Բանաստեղծությամբ է լոկ, որ պոետը մտերմության մեջ է սիրած էակի հետ։ Միայն այն ժամանակ, երբ հրապուրիչ լեհուհին՝ Շիմանովսկայան, այցելում է իրեն, մարիենբադյան պայծառ օրերի տրամադրությունը վերադառնում է, և նա վերստին դառնում է մարդամոտ։

---

1 *Թարգմ. Վ. Կարենց։*

Վերջապես, հոկտեմբերի 27-ին Գյոթեն իր մոտ է կանչում Էկկերմանին, և այն հանդիսավորությունն արդեն, որ նա ստեղծում է բանաստեղծությունը կարդալու համար՝ ցույց է տալիս, թե դա որքան մոտ էր իր սրտին։ Ծառան գրասեղանին է դնում երկու այրվող մոմ, և դրանից հետո միայն Գյոթեն Էկկերմանին հրավիրում է տեղ գրավել և կարդալ Էլեգիան։

Աստիճանաբար ուրիշ, բայց միայն շատ մտերիմ, մարդկանց ևս հաջողվում է լսել Էլեգիան, քանի որ Գյոթեն, Էկկերմանի վկայությամբ, դա պահպանում էր «իբրև սրբություն»։

Առաջիկա ամիսներին արդեն հայտնի է դառնում, թե այդ բանաստեղծությունն ի՞նչ առանձնահատուկ տեղ է գրավում նրա կյանքում։ Արտասովոր վերելքին, որ ասես վերադարձրել էր իր երիտասարդությունը, հաջորդում է ուժերի կտրուկ անկում։ Նա վերստին մոտ է մահվան, դժվարությամբ է անկողնուց դեպի բազկաթոռը և բազկաթոռից դեպի անկողինը գնում՝ ոչ մի տեղ հանգիստ չգտնելով։ Հարսը տանը չէ, տղան լցված է ատելությամբ, չկա մեկը, որ հոգա մենակ մնացած հիվանդ ծերունու խնամքը։ Բայց ահա Բեռլինից, հավանորեն բարեկամների կանչով, ժամանում է մտերիմ մարդկանցից ամենամտերիմը՝ Ցելտերը[1], և իսկույն նկատում է հիվանդին լափող բոցը։ «Եվ ի՞նչ եմ տեսնում— զարմանքով գրում է նա։— Դատելով ըստ ամենայնի, նրան տանջում է բուն սերը պատանեկության բոլոր տառապանքներով»։ Իր բարեկամին ապաքինելու համար Ցելտերը նորից ու նորից «անկեղծ կարեկցանքով» նրա համար կարդում է Էլեգիան, իսկ Գյոթեն չի հոգնում լսելուց։

«Զարմանալի է, — ապաքինվելուց հետո գրում է Գյոթեն, — դու քո փափուկ, թափանցող ձայնով բազմիցս կարդացիր ինձ համար իմ այնքան սիրելի բանաստեղծությունը, որ ես ինքս չեմ ուզում ինձ խոստովանել»։ Եվ այնուհետև. «Ես չեմ կարողանում անջատվել իմ Էլեգիայից, բայց եթե մենք միասին ապրեինք, դու պետք է ինձ համար մինչև հիմա կարդայիր ու երգեիր Էլեգիան այնքան, մինչև որ անգիր անեիր»։

Այսպես է ընթանում, ինչպես գրում է Ցելտերը, «ապաքինումն այն նիզակից, որով նա խոցվել էր»։ Կարելի է առանց չափազանցության ասել՝ այդ Էլեգիան փրկեց Գյոթեին։ Վերջապես սրտի հիվանդությունը հաղթահարված է, վերջին տանջալի հույսը կորսված է, «դստրիկի» հետ

---

[1] Ցելտեր Կարլ Ֆրիդրիխ (1758—1832)— գերմանացի կոմպոզիտոր և երաժշտական գործիչ, Մենդելսոնի ուսուցիչը։ 1796-ից Գյոթեի հետ եղել է սերտ մտերմության մեջ։

ամուսնանալու երազանքը՝ փարատված։ Նա գիտի, որ ինքն այլևս երբեք չի մեկնի ո՛չ Մարիենբադ, ո՛չ Կարլսբադ, երբեք չի վերադառնա անհոգության ու անգործության աշխարհը. իր կյանքն այսուհետև պատկանում է միայն աշխատանքին։

Նա դիմացավ գայթակղությանը, հրաժարվեց իր ճակատագիրը ետ շրջելու փորձերից, բայց դրա փոխարեն նրա կյանքի ոլորտն է մտնում մի նոր մեծ խոսք՝ ամփոփում։ Նա ետադարձ հայացք է նետում իր անցած վաթսունամյա ստեղծագործական ուղու վրա, տեսնում է, որ իր երկերը ցրված են ու շաղ են տրված, և եթե ինքն այլևս անուժ է ստեղծելու, համենայն դեպս կարող է ամբողջն ի մի հավաքել, ամփոփել. պայմանագիր է կնքվում «Երկերի ժողովածուի» համար, սահմանվում են հեղինակային իրավունքները։ Եվ դարձյալ նրա բովանդակ սերը, որ տրված էր տասնիններորդ դարի աղջկան, վերադառնում է երիտասարդության ամենահին ուղեկիցներին՝ «Վիլհելմ Մայստերին» և «Ֆաուստին»։ Եռանդով լեցուն, նա լծվում է աշխատանքի. դեղնած թերթերի հիման վրա վերականգնվում է անցած դարի մտահղացումը։ Դեռ մինչև ութսունը լրացնելը Գյոթեն ավարտում է «Թափառումի տարիները» և ութսունմեկերորդ տարում հերոսաբար դառնում իր կյանքի գլխավոր գործին՝ «Ֆաուստին»։ «Մարիենբադյան էլեգիայի» ողբերգական օրերից յոթ տարի անց ավարտվում է նաև այդ երկը, որ նա նույնպիսի երկյուղածությամբ հեռու է պահում աշխարհից՝ գաղտնաբար և զմուռսի կնիքով։

Նրա զգացմունքների երկու ոլորտի զենիթում, վերջին կրքի և վերջին զոհաբերության միջև, առանձնաշեշտվում է 1823 թվականի սեպտեմբերի 5-ը՝ հրաժեշտը Կարլսբադին, հրաժեշտը սիրույն՝ հոգեկան շրջադարձի անմոռանալի բեկումը, որ հավերժության մեջ մարմնացում գտավ ցնցող ուժի բողոքով։

Մեզ տրված է այդ օրն արժանահիշատակ կոչելու իրավունքը, քանի որ գերմանական պոեզիան այդ ժամանակից ի վեր չունեցավ ավելի շողշողուն մի ժամ, քան այն ժամը, երբ հզոր զգացմունքը հզոր թափով լցվեց այդ անմահ տողերի մեջ։

ԷԼԴՈՐԱԴՈՅԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒՄԸ

Յ. Ա. Զուտեր, Կալիֆոռնիա,
1848 թվականի հունվար

ԱՅՆ ՄԱՐԴԸ, ՈՐԻՆ ԵՎՐՈՊԱՆ ԶԶՎԵՑՐԵԼ ԷՐ

թվականն է։ Ամերիկյան նավը Հավրից բռնել է Նյու Յորքի ճամփան։ Հարյուրավոր արկածախնդիրներ են մեկնում նավով, և նրանց մեջ Յոհան Ավգուստ Զուտերը. սա երեսունմեկ տարեկան է, ծնվել է Ռյունենբերգում, Բազելի մոտ։ Նա անհամբերությամբ սպասում է այն րոպեին, երբ իր և եվրոպական օրենս-

պահների միջև ընկած կլինի օվկիանոսը։ Սնանկացած մարդ, գրող, խաբեբա՝ նա, առանց երկար մտածելու, կնոջն ու երեք երեխային թողել է բախտի քմահաճույքին, կեղծ փաստաթղթով մի քիչ փող է ձեռք գցել Փարիզում, և ահա նոր կյանքի ճանապարհին է։

Հուլիսի 7-ին նա ափ է իջնում Նյու Յորքում և երկու տարի շարունակ անում է այն, ինչ պատահի. իրեր փաթեթող, դեղագործ, ատամնաբույժ, հաղար տեսակ դեղանյութեր վաճառող, պանդոկապան։ Վերջապես, մի քիչ խելքը գլուխը հավաքելով, հյուրանոց է բացում, շատ չանցած՝ վաճառում և, հետևելով ժամանակի տիրական ձայնին, մեկնում է Միսսուրի։ Այստեղ նա հողագործ է դառնում, կարճ ժամանակում ոչ մեծ կարողության տեր և, թվում է, կարող էր հանգիստ ապրել։ Բայց նրա տան մոտով ինչ-որ տեղ շտապելով, անվերջանալի շարքով անցնում են մարդիկ՝ մորթու առևտրականներ, որսորդներ, զինվորներ, արկածախնդիրներ. նրանք գալիս են արևմուտքից և գնում դեպի արևմուտք, և այդ «արևմուտք» բառն աստիճանաբար նրա աչքում ձեռք է բերում ինչ-որ կախարդական զորություն։ Ամենքը գիտեն, որ արևմուտքն սկսվում է անծայրածիր պրերիով, ուր բիզոնների վիթխարի նախիրներ են արածում, պրերիով, որով կարելի է գնալ օրեր ու շաբաթներ՝ առանց մարդ հանդիպելու, երբեմն միայն կարելի է տեսնել սուրացող կարմրամորթ հեծյալների։ Հետո սկսվում են լեռները՝ բարձր ու անմատչելի և, վերջապես, անհայտ մի երկիր՝ Կալիֆոռնիան, որի մասին ոչ ոք ստույգ ոչինչ չգիտե, մինչդեռ նրա հեքիաթային հարստությունների մասին հրաշքներ են պատմում։ Այնտեղ գետերը կաթ ու մեղր են բերում՝ վերցրո՛ւ, ինչքան սիրտդ ուզի։ Երկիրը, սակայն, հեռու է, շա՜տ հեռու, և այնտեղ հասնել կարելի է կյանքը վտանգի տակ դնելով միայն։

Բայց Յոհան Ավգուստ Զուտերի երակներում արկածախնդիր մարդու արյուն էր հոսում։ Հանգիստ ու խաղաղ ապրել և հո՞ղ մշակել։ Ո՛չ, դա նրա սրտովը չէ։ 1837 թվականին նա ծախեց-ծախծխեց ունեցած-չունեցածը, մի արշավախումբ ստեղծեց՝ ֆուրգոններով, ձիերով, եզներով հանդերձ և, դուրս գալով Ինդեպենդաս ամրոցից, բռնեց անհայտության ուղին։

ԱՐՇԱՎԱՆՔ ԴԵՊԻ ԿԱԼԻՖՈՌՆԻԱ

1838 թվականն է։ Եզներ լծած ֆուրգոնով, ամայի ու անվերջանալի հարթությունների, անեզր տափաստանների միջով և, վերջապես, լեռների վրայով, Զուտերի հետ միասին, խաղաղ օվկիանոսին ընդառաջ

գնում են նաև երկու սպա, հինգ քարոզիչ-միսիոներ և երեք կին։ Երեք ամիս անց, հոկտեմբերի վերջին, նրանք հասնում են Վանկուվեր ամրոցը։ Սպաները Զուտերին լքել են մինչ տեղ հասնելը. քարոզիչները ավելի հեռուն չեկան, կանայք ճանապարհին մեռան, չդիմացան զրկանքներին։

Զուտերը մնաց մենակ։ Զուր էին ջանում նրան պահել այստեղ, Վանկուվերում, զուր էին ծառայություն առաջարկում. նա չենթարկվեց հորդորներին, նրան անդիմադրելիորեն քաշում էր «Կալիֆոռնիա» կախարդական բառը։ Մի հին ու ջարդված առագաստանավով նա ուղևորվում է նախ դեպի Սանդվիչյան կղզիները, իսկ հետո, մեծամեծ դժվարություններով շրջանցելով Ալյասկան, ափ է իջնում աստծուց մոռացված մի հողակտորում, որ կոչվում է Սան Ֆրանցիսկո։ Բայց սա այն Սան Ֆրանցիսկոն չէ՝ միլիոնանոց քաղաքը, որ չտեսնված չափերով աճեց երկրաշարժից հետո և որ մենք գիտենք հիմա։ Ոչ, դա ձկնորսական մի ողորմելի գյուղ է դեռևս, որ այդպես են կոչել ֆրանցիսկյան քարոզիչները։ Դա անծանոթ մեքսիկական Կալիֆոռնիա գավառի լքված ու մոռացված մայրաքաղաքն էլ չէ՝ նոր մայրցամաքի ամենահարուստ երկրամասերից մեկում։

Իսպանական գաղութարարների անտնտեսվարությունն այստեղ երևում է ամեն ինչից. չկա կայուն իշխանություն, շարունակ խռովություններ են ծագում, բանող ուժը և անասունները չեն բավականացնում, պակասում են եռանդուն, նախաձեռնող մարդիկ։

Զուտերը ձի է վարձում և իջնում արգասաբեր Սակրամենտո հովիտը։ Մեկ օրը բավական էր նրան, որպեսզի տեսներ ու համոզվեր, որ այստեղ հնարավորություն կա ոչ միայն մեծ ֆերմա ու ռանչո, այլև ամբողջ թագավորություն հիմնելու։

Մյուս օրն իսկ նա ներկայանում է Մոնտերեյ, նահանգի խղճուկ մայրաքաղաքը, ներկայանում է նահանգապետ Ալվերադոյին և առաջարկում երկրամասը յուրացնելու իր ծրագիրը։ Իր հետ կղզիներից մի քանի պոլինեզցիներ են եկել, և հետագայում ըստ անհրաժեշտության նա էլի մարդ կբերի, նա պատրաստ է այստեղ բնակավայր հիմնել, մի ամբողջ գաղութ, որ ինքը Նոր Հելվեցիա կկոչի։

— Ինչո՞ւ «Նոր Հելվեցիա», — հարցնում է նահանգապետը։

— Ես շվեյցարացի եմ և հանրապետական,— պատասխանում է Զուտերը։

— Լա՜վ, արեք ինչ կամենում եք, ձեզ տասը տարվա կոնցեսիա եմ տալիս։

Տեսնո՞ւմ եք, թե այնտեղ ինչ արագ են կատարվում գործերը։ Քաղաքակրթությունից հազար մղոն հեռու առանձին մարդու եռանդը նշանակում էր բազմապատիկ ավելի, քան Եվրոպայում, Հին Աշխարհում։

ՆՈՐ ՀԵԼՎԵՑԻԱՆ

1839 թվականն է։ Սակրամենտո գետի ափով դանդաղորեն դեպի վեր է ձգվում մի քարավան։ Առջևից ընթանում է հեծյալ Յոհան Ավգուստ Զուտերը՝ հրացանն ուսին։ Ետևից՝ երկու-երեք եվրոպացի, հետո հարյուր հիսուն պոլինեզցի՝ կարճ շապիկներով, եղներ լծած երեսուն ֆուրգոն՝ լեցուն ուտեստով, սերմերով ու զենքերով, հիսուն ձի, հարյուր հիսուն ջորի, կովեր, այծեր և, վերջապես, վերջապահ մի փոքր խումբ։ Ահա և ամբողջ բանակը, որ պետք է նվաճեր Նոր Հելվեցիան։ Նրանց ճանապարհը բացում է բոցեղեն վիթխարի ալիքը. անտառն այրում են, դա ավելի հարմար է, քան կտրատելը։ Եվ հենց որ բոցն ագահորեն լափում է գետինը՝ նրանք գործի են անցնում դեռևս ծխացող ծառերի մեջ։ Պահեստներ են սարքում, ջրհորեր փորում, ցանում դաշտը, որ նույնիսկ վարելու կարիք չունի, փարախներ են սարքում անհամար թվով անասունների համար։ Հարևան վայրերից, քարոզիչների լքած գաղութներից աստիճանաբար համալրում է գալիս։

Հաջողությունը վիթխարի էր։ Առաջին բերքը չափազանց առատ է լինում։ Ամբարները պայթում են ցորենի առատությունից, նախիրներն արդեն հազարներով են հաշվում ու թեև երբեմն դժվար էր լինում (շատ ուժ էր խլում նորից ու նորից գաղութ ներխուժող բնիկների դեմ արշավելը), Նոր Հելվեցիան դարձավ աշխարհի ծաղկուն մի անկյուն։ Ջրանցքներ են փորվում, ջրաղացներ են կառուցվում, ֆակտորիաներ են բացվում, նավերը վեր ու վար են անում գետերով։ Զուտերը մատակարարում է ոչ միայն Վանկուվերին և Սանդվիչյան կղզիներին, այլև Կալիֆոռնիայի ափերին խարիսխ նետող նավերին։ Նա աճեցնում է կալիֆոռնիական մրգեր, որոնք այսօր հռչակված են ամբողջ աշխարհում։ Նա Ֆրանսիայից և Հռենոսից խաղողի վազեր է բերել տալիս. դրանք շատ լավ բռնում են, և մի քանի տարուց այդ հեռավոր հողի ահագին տարածություններ պատվում են խաղողի այգիներով։ Իր համար նա կառուցում է տուն և բարեկարգ ֆերմաներ, «Պլեյել» ֆիրմայի նրա դաշնամուրը ութսունհինգօրյա հեռավոր ճանապարհ է կտրել Փարիզից. վաթսուն եզ ամբողջ մայրցամաքը կտրելով շոգեմեքենա են հասցրել այստեղ։ Նա բաց հաշիվներ ունի Անգլիայի և Ֆրանսիայի խոշորագույն բանկերում,

և այժմ, քառասունհինգ տարեկան հասակում, փառքի գագաթին, նա մըտաբերում է, որ տասնչորս տարի առաջ ինչ-որ տեղ կին և երեք տղա է թողել։ Զուտերը նամակ է գրում, նրանց իր մոտ, իր թագավորությունն է կանչում. այժմ նա ուժ է զգում ձեռքերում, նա Նոր Հելվեցիայի տերն է, աշխարհիս ամենահարուստ մարդկանցից մեկը, ինչպես և պետք է լիներ։

Եվ մի օր էլ, վերջապես, Միացյալ Նահանգները Մեքսիկայից խլում են այդ լքված գավառը։ Հիմա այլևս ամեն ինչ կայուն է և հուսալի։ Եվս մի քանի տարի՝ և Զուտերը կդառնա աշխարհիս ամենահարուստ մարդը։

ԲԱՀԻ ՇԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՀԱՐՎԱԾԸ

1848 թվական, հունվար։ Անսպասելի՝ Զուտերին ներկայանում է Ջեմս Մարշալլը, իր հյուսնը։ Հուզմունքից իրեն կորցրած՝ նա նեռվում է տուն, ինչ-որ շատ կարևոր բան ունի հայտնելու։ Զուտերը զարմացած է. դեռ երեկ նա Մարշալլին ուղարկել է Կոլոմայի ֆերման, ուր նոր սղոցարան է սարքում, և ահա նա վերադարձել է առանց իրավունք ստանալու, կանգնել է տիրոջ առաջ. չկարողանալով զսպել դողը, նրան սենյակն է հրում, փակում դուռը և գրպանից հանում մի լիքը բուռ ավազ, որի մեջ դեղին հատիկներ են փայլում։ Երեկ, բահով հողը փորելիս նա տեսել է մետաղի այս տարօրինակ հատիկները և վճռել, որ դա ոսկի է, բայց մնացած բոլոր մարդիկ ծիծաղել են վրան։

Զուտերն իսկույն զգաստանում է. վերցնում է ավազը և լվանում. այո՛, սա ոսկի՛ է, և նա վաղնևեթ Մարշալլի հետ ֆերմա կգնա։ Իսկ հյուսնը՝ առաջին զոհը ոսկու տենդի, որ շուտով կբռնկի ամբողջ աշխարհը, չի սպասում վաղվան և այդ անձրևային գիշերը բռնում է վերադարձի ճամփան։

Մյուս օրն իսկ Զուտերը մեկնում է Կոլոմա։ Ջրանցքը կապում են և սկսում զննել ավազը։ Բավական է լցնել քարմաղը, մի թեթև թափ տալ, և ոսկու փայլուն հատիկները մնում են սև ցանցի երեսին։ Զուտերը կանչում է իր հետ եղած սակավաթիվ եվրոպացիներին, նրանցից խոսք է առնում ոչ մի ձայն չհանել, քանի դեռ սղոցարանը չի կառուցվել։

Խորին մտահոգության մեջ նա վերադառնում է իր ֆերման։ Վիթխարի մտահղացումներ են ծագում նրա գլխում։ Դեռ երբեք չի պատահել, որ ոսկին ձեռք բերվի այդքան դյուրությամբ, երևա այդքան պարզ,

հողում գրեթե չթաքնված։ Եվ դա ի՞նչ հողն է, Զուտե՛րի հողը։ Թվում է, տասնամյակները կայծակեցին մի գիշերվա մեջ, և նա ամենահարուստ մարդն է աշխարհիս երեսին։

ՈՍԿՈՒ ՏԵՆԴԸ

Ամենահարո՞ւստ։ Ո՛չ, ամենաաղքատ, ամենաղրկվա՛ծ մուրացիկն է աշխարհում։ Մի շաբաթից գաղտնիքը հայտնի է դառնում։ Մի կին (դարձյալ կին) գաղտնիքն ասում է մի անցորդի և նրան ոսկու մի քանի հատիկ տալիս։ Եվ այստեղ պատահեց չտեսնված մի բան՝ Զուտերի մարդիկ խսկույնևեթ լքեցին իրենց գործը. դարբինները փախան իրենց մուրճ ու զնդանից, հովիվներն իրենց նախիրներից, խաղողագործներն իրենց վազերից, զինվորները դեն նետեցին իրենց հրացանները։ Բոլորը մոլագարի պես մի-մի քարմաղ կամ կոնք հափշտակեցին ու նետվեցին դեպի սղոցարանը՝ ոսկի հավաքելու։

Մի գիշերվա մեջ ծաղկուն բնակավայրն ամայանում է։ Կովերն անկիթ մնալով սատկում են, ցուլերը քանդում են արգելանոցները, տրորում դաշտերը, ուր ոտի վրա փտում են ցանքերը։ Պանրի գործարանները կանգ են առնում, ամբարները փլվում են։ Վիթխարի տնտեսության ամբողջ բարդ մեխանիզմը կանգ է առնում։ Հեռագրալարերը ծովերի ու ցամաքների վրայով տարածեցին ոսկու խենթացնող լուրը։ Եվ արդեն մարդիկ են գալիս քաղաքներից ու նավահանգիստներից, նավաստիները լքում են նավերը, պաշտոնյաները՝ ծառայությունը. ոսկի որոնողների անվերջանալի շարասյուներ են, որ գալիս են արևմուտքից և արևելքից, ոտքով, ձիով, ֆուրգոնով, մարդկային սարանչայի պարսեր են, որ բռնկված են ոսկու տենդով։ Սանձազերծ վայրենի հրոսակը, որ չի ճանաչում մի այլ իրավունք, քան ուժեղի իրավունքը, այլ իշխանություն, քան ատրճանակի իշխանությունը՝ ողողում է ծաղկուն գաղութը։ Ամեն ինչ դառնում է ներխուժողների սեփականությունը, ոչ ոք չի հանդգնում կասեցնել այդ ելուզակներին։ Նրանք մորթում են Զուտերի կովերը, ավերում նրա ամբարները և իրենց համար տներ շինում, ոտքի տակ են տալիս նրա վարելահողերը, զողանում են նրա մեքենաները։

Մի գիշերվա մեջ Զուտերը դարձավ աղքատ մարդ. նա առասպելական թագավոր Միդասի նման խեղդամահ էր լինում իր սեփական ոսկուց[1]։

---

1 Ըստ հունական առասպելի, Հին Փռյուգիայի թագավոր Միդասին Դիոնիսիոսը շնորհում է ամեն մի առարկա՝ ինչին որ դիպչի, ոսկի դարձնելու ընդունակություն։ Ոսկի է դառնում նաև ուտելիքը և թագավորը, սովամահ չլինելու համար, իր կախարդական շնորհից ազատվելու աղաչանք է անում։

Ավելի ու ավելի անզսպելի է դառնում ոսկու աննախադեպ տենդը։ Լուրն արդեն հայտնի է բովանդակ աշխարհին. միայն Նյու Յորքից եկել է հարյուր նավ, Գերմանիայից, Անգլիայից, Ֆրանսիայից, Իսպանիայից 1848, 1849, 1850, 1851 թվականներին ներխուժել են արկածախնդիրների անհաշիվ հրոսակներ։ Մի քանիսը շրջանցել են Հորն հրվանդանը, բայց ավելի անհամբերներին այդ ճանապարհը երկար է թվում, և նրանք նախընտրում են ավելի վտանգավոր ուղին՝ ցամաքով, Պանամայի պարանոցով։ Մի ճարպիկ ընկերություն շուտափույթ երկաթուղի է գցում այնտեղով։ Հազարավոր բանվորներ տենդից մեռնում են, որպեսզի երեք-չորս շաբաթով կրճատեն ոսկու ճանապարհը։ Ամբողջ մայրցամաքով բոլոր ցեղերի ու բարբառների պատկանող մարդկանց վիթխարի հոսանքներ են ձգվում, և բոլորը փորփրում են Զուտերի հողը, ինչպես իրենց սեփականը։

Սան Ֆրանցիսկոյի տերիտորիայում, որ կառավարական կնիքով հաստատված արձանագրությամբ պատկանում է Զուտերին, հեքիաթային արագությամբ բարձրանում է մի նոր քաղաք։ Եկվորները կտոր-կտոր միմյանց են վաճառում Զուտերի հողը, իսկ նրա թագավորության «Նոր Հելվեցիա» անունը շուտով իր տեղը զիջում է կախարդական մի անվան՝ էլդորադո՝ ոսկու երկիր։

Վերստին սնանկացած Զուտերը կարկամած նայում է այդ վիշապային ուռճեցումին։ Սկզբում ինքն էլ, իր ծառաների ու ընկերակիցների հետ, փորձեց ոսկի հայթայթել, որպեսզի նորից հարստության տեր դառնա, բայց բոլորը լքեցին նրան։ Եվ նա ոսկեբեր հողամասից հեռացավ դեպի լեռները, իր առանձնացած «էրմիտաժ» ֆերման, հեռու այդ նզովյալ գետից ու չարաբաստիկ ավազից։ Այնտեղ էլ նրան գտավ կինը, արդեն հասուն երեք տղայի հետ միասին։ Բայց կինը շուտով մեռավ, տանջալի ճամփորդության զրկանքներն արել էին իրենցը։ Ինչպես, այժմ նա ունի ոչ թե մեկ, այլ չորս զույգ ձեռք, և Զուտերը նորից է գործի լծվում։ Նորից, և արդեն տղաների հետ, նա սկսում է քայլ առ քայլ մարդամեջ դուրս գալ, օգուտ քաղելով այդ հողի հեքիաթային արգասավորությունից և գաղտնաբար որոճալով մի նոր վիթխարի ծրագիր։

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1850 թվականն է։ Կալիֆոռնիան մտել է Ամերիկայի Միացյալ Նահանգների կազմի մեջ։ Ոսկու տենդով բռնված այդ երկրամասում վերջապես կարգ է հաստատվել։ Անարխիան սանձվել է, օրենքը մտել է ուժի մեջ։

Եվ հիմա արդեն Յոհան Զուտերը հանդես է գալիս իր հավակնություններով։ Նա հայտարարում է, թե այն ամբողջ հողը, որի վրա կառուցվում է Սան Ֆրանցիսկո քաղաքը, օրենքով պատկանում է իրեն։ Նահանգի կառավարությունը պարտավոր է հատուցել այն վնասը, որ իրեն հասցրել են իր կարողության հափշտակիչները։ Իր հողից հանված ամբողջ ոսկուց նա պահանջում է սեփական բաժինը։

Սկսվեց այնպիսի մասշտաբի դատական գործ, որի նմանը մարդկությունը չէր տեսել։ Զուտերը հայց է ներկայացնում 17.221 ֆերմերի, որոնք հաստատվել էին իր հողում, և պահանջում է, որ նրանք ազատեն ապօրինաբար գավթած հողամասերը։ Կալիֆոռնիայի նահանգի իշխանություններից՝ նրանց յուրացրած ճանապարհների, կամուրջների, ջրանցքների, ամբարտակների, ջրաղացների դիմաց, նա պահանջում է քսանհինգ միլիոն դոլար իբրև վնասի հատուցում։ Քսանհինգ միլիոն դոլար էլ պահանջում է միացյալ կառավարությունից և, բացի այդ, հայթայթված ոսկու իր բաժինը։

Ավագ որդի էմիլին նա ուղարկում է Վաշինգտոն՝ իրավագիտություն ուսումնասիրելու, որպեսզի կարողանա վարել գործը։ Այն ահագին հասույթը, որ բերում են ֆերմաները, ամբողջովին վատնվում է այդ քամող ու ավերող դատավարության վրա։ Չորս տարի նա քոչում է պաշտոնեության մի աստիճանից մյուսը։ 1855 թվականի մարտի 15-ին դատավճիռը, վերջապես, կայացվում է։ Անկաշառ դատավոր Թոմսոնը, Կալիֆոռնիայի բարձրագույն պաշտոնական դեմքը, Զուտերի իրավունքները համարում է միանգամայն հիմնավորված և անվիճելի։

Այդ օրը Յոհան Ավգուստ Զուտերը հասնում է նպատակին։ Նա ամենահարո՞ւստ մարդն է աշխարհում։

ՎԱԽՃԱՆԸ

Ամենահարո՞ւստը։ Ո՛չ և ո՛չ։ Ամենաընչազուրկ, ամենատարաբախտ աղքատն աշխարհում։ Ճակատագիրը դարձյալ մի սպանիչ հարված է տալիս նրան։

Հենց որ դատավճիռը հայտնի դարձավ՝ Սան Ֆրանցիսկոյում և ամբողջ նահանգում ամեն ինչ տակնուվրա եղավ։ Տասնյակ հազարավոր մարդիկ իրար անցան. և՛ երկրագործները, որոնց վտանգ էր սպառնում, և՛ փողոցային խաժամուժը, որ միշտ պատրաստ է կողոպուտի։ Նրանք գրոհով առան և հրդեհեցին դատարանի շենքը, դատավորին են որոնում լինչահարելու համար։ Գազազած ամբոխը նպատակ է դնում ոչնչացնել

Զուտերի ամբողջ կայքը։ Նրա ավագ որդին, շրջապատված ավազակներով, ինքնասպան եղավ, երկրորդին գազանաբար սպանեցին, երրորդը փախուստ տվեց, բայց ճանապարհին խեղդվեց։ Հրդեհի բոցն ալիք էր տալիս ամբողջ Նոր Հելվեցիայում. Զուտերի ֆերմաները հրո ճարակ են դառնում, խաղողի այգիները ոտքի տակ են տրվում, հավաքածոներն ու գրամը հափշտակում են, նրա ահագին կալվածքն անողոք ցասումով հող ու մոխիր են դարձնում։ Ինքը՝ Զուտերը, հազիվ է փրկվում։ Այս հարվածներից հետո նա այլևս ուշքի չի գալիս։ Կարողությունը ոչնչացված է, կինն ու զավակները չկան, բանականությունը մթագնել է։

Միայն մի միտք է առկայծում նրա գիտակցության մեջ. օրե՛նք, արդարությո՛ւն, դատավարությո՛ւն։

Եվ քսան երկար տարիներ թուլամիտ, ցնցոտիներ հագած ծերունին թափառում է Վաշինգտոնի դատարանի շուրջը։ Այնտեղ արդեն բոլոր գրասենյակներում ճանաչում են հնամաշ, յուղոտված սերթուկ և ծոմռված կոշիկներ հագած «գեներալին», որ իր միլիոններն է պահանջում։ Եվ դեռ գտնվում են փաստաբաններ, ատեակներ, խաբեբաներ, խղճից ու պատվից զուրկ մարդիկ, որոնք կորզում են նրա վերջին միջոցները՝ ողորմելի թոշակը և հրահրում են շարունակել դատավեճը։ Իրեն՝ Զուտերին, այլևս դրամ պետք չէ, նա ատելով ատում է ոսկին, որ իրեն ընչազուրկ դարձրեց, կործանեց իր զավակներին, խորտակեց իր ամբողջ կյանքը։ Նա ուզում է միայն ապացուցել սեփական իրավունքները և այդ նպատակին է ձգտում մոլագարի համառությամբ։

Նա դանդաղ է առաքում սենատին, իր հավակնությունները ներկայացնում է կոնգրեսին, գործը վստահում է զանազան խաբեբաներին, որոնք մեծ աղմուկով նորոգում են գործը։ Զուտերին գեներալական համազգեստ հագցնելով ու ծաղրելով՝ նրանք տարաբախտին խրտվիլակի պես մի հիմնարկությունից մյուսը, կոնգրեսի մի անդամից մյուսի մոտ են քարշ տալիս։

Այսպես անցնում է քսան տարի, 1860-ից մինչև 1880-ը, քսան դառնաղի, մուրացիկային տարիներ։ Օրերն անցնում են օրերի հետևից, և Զուտերը՝ բոլոր պաշտոնյաների ծաղրի ու փողոցային տղաների զվարճության առարկան, պաշարում է Կապիտոլիի շենքը. չէ՞ որ ինքը աշխարհի ամենահարուստ հողերի տերն է, այն հողերի, որի վրա բարձրացել և օր-օրի հեքիաթային արագությամբ աճում է վիթխարի տերության երկրորդ մայրաքաղաքը։

Բայց ամենքին ձանձրացրած հայցվորին ստիպում են սպասել։ Եվ հենց այնտեղ, կոնգրեսի շենքի դռան մոտ, կեսօրից հետո, վերջապես,

վրա է հասնում փրկարար սրտի պայթյունը։ Սպասավորները շտապում են հեռու տանել ինչ-որ մուրացիկի դին, մուրացիկ, որի գրպանում կա մի փաստաթուղթ, որ, համաձայն աշխարհիս բոլոր օրենքների, հաստատում է իր և իր ժառանգների սեփականության իրավունքը մարդկության պատմության մեջ եղած ամենամեծ կարողության նկատմամբ։

Մինչև օրս ոչ ոք չի պահանջել Զուտերի թողած ժառանգության իր բաժինը, ոչ մի թոռան թոռ հայտարարություն չի արել իր հավակնությունների մասին։

Այժմ էլ Սան Ֆրանցիսկոն, այդ ահագին երկրամասը, ընկած է ուրիշի հողերի վրա, մինչև այժմ էլ այստեղ ոտնահարվում է օրենքը, և միայն Բլեզ Սենդրարի[1] գրիչն է ամենքից մոռացված Յոհան Ավգուստ Զուտերին շնորհել մեծ ճակատագիր ունեցած մարդկանց միակ իրավունքը՝ սերունդների հիշողության մեջ մնալու իրավունքը։

---

1 Սենդրար Բլեզ (ծն. 1887)—ֆրանսիացի գրող և ճանապարհորդ։ Նա իր «Ոսկի» խորագրով վեպում (1925) վերականգնել է Զուտերի պատմությունը։

ԱՐՔԱՅԻՆ ԽՈՍՔԸ ՕՎԿԻԱՆՈՍԻ ՍՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ

Ապրուս Ֆիլդ
1858 թվականի հուլիսի 28



ՆՈՐ ՌԻԹՄ

ազարավոր, գուցեև հարյուր հազարավոր տարիներ, որ անցել են հողագնդում՝ մարդ կոչված զարմանալի արարածի հայտնվելուց ի վեր, արագության չափանիշը եղել է վազող ձին, գլորվող անիվը, թիանավը կամ առագաստանավը։

Բոլոր տեխնիկական հայտնագործությունները, արված գիտակցու-

թյամբ լուսավորված այն կարճ ժամանակամիջոցում, որ մենք կոչում ենք համաշխարհային պատմություն, չկարողացան հանգեցնել շարժման ռիթմի քիչ թե շատ նշանակալի արագացման։ Վալենշտեյնի[1] բանակը շարժվում էր ոչ ավելի արագ, քան Հուլիոս Կեսարի լեգիոնները. Նապոլեոնի զորքերը ավելի ճեպընթաց չէին հարձակվում, քան Չինգիզխանի հորդաները. Նելսոնի ռազմանավերը ծովերը ճեղքում էին մի քիչ միայն ավելի արագ, քան վիկինգների[2] ծովահենական մակույկները կամ փյունիկյան գալլերը[3]։ Լորդ Բայրոնը Չայլդ Հարոլդի ճամփորդություններում օրական հաղթահարում էր ոչ ավելի մեծ տարածություն, քան Օվիդիոսն իր պոնտական աքսորի ճանապարհին[4]։ Գյոթեն 18-րդ դարում ճամփորդում էր գրեթե նույն արագությամբ և նույնպիսի հարմարություններով, ինչպես Պողոս առաքյալը առաջին հազարամյակների սկզբում։ Նապոլեոնի դարաշրջանում ժամանակն ու տարածությունը երկրներն անջատում էին ճիշտ նույնպես, ինչպես Հռոմեական կայսրության ժամանակներում։ Նյութի համառությունը տակավին գերազանցում էր մարդկային կամքը։

Եվ միայն տասնիններորդ դարն արմատապես փոխեց ռիթմն ու ժամանակի չափանիշը հողագնդի վրա։ Դարի առաջին երկու տասնամյակում երկրներն ու ժողովուրդներն ավելի սերտորեն մերձեցան, քան բոլոր նախորդ հազարամյակներում. երկաթուղիներն ու շոգենավերը մի օրվան հանգեցրին անցյալի բազմօրյա ճամփորդությունները, բոպեներ դարձրին այն անվերջանալի ժամերը, որ մինչ այդ հաղթահարում էին ճանապարհորդության ընթացքում։

Բայց ժամանակակիցներին որքան էլ ապշեցուցիչ թվային երկաթուղու և շոգենավի արագությունները, դրանք, այդուամենայնիվ, չէին անցնում ըմբռնման մատչելի սահմանները։ Դրանց արագությունը հինգ, տասը, քսան անգամ գերազանցում էր անցյալում հայտնի արագությունները,

---

1 Վալենշտեյն Ալբրեխտ (1583—1634)— գերմանական զորավար, Երեսնամյա պատերազմում (1618—1648) կայսերական գլխավոր հրամանատար։

2 Վիկինգներ—սկանդինավների 8—11 դդ. ծովային արշավների մասնակիցները։ Արևմտյան Եվրոպայում նրանց կոչում էին նորմաններ, Ռուսաստանում՝ վայրագներ։

3 Հին Փյունիկիայի քաղաք-պետությունների (Տիր, Սիդոն, Բիբլ և Արվադա) բնակչությունը ժառանգել էր Եգիպտոսի ծավալուն առևտուրը։

4 Հռոմեացի պոետ Պուբլիոս Օվիդիոս Նազոնը (մ. թ. ա. 43 թ.— մ. թ. 17 թ.) Օգոստոս կայսեր քաղաքականությունից դժգոհելու պատճառով մ. թ. 8 թվականին աքսորվում է Տոմիս (Կոնստանցա) քաղաք-պետությունը, որ գտնվում էր Դանուբի գետաբերանի մոտ, Սև ծովի ափին («Էվքսինյան Պոնտոս»— Սև ծովի հին հունական անվանումն է)։

բայց և այնպես հնարավոր էր հայացքով հետևել նրանց և խելքով հասու լինել թվացյալ հրաշքին։

Բայց էլեկտրականության, դեռևս օրորոցում գտնվող այդ Հերկուլեսի, առաջին իսկ հաջողությունները կատարում են իսկական մի հեղաշրջում, տապալում են անցյալում հաստատված բոլոր օրենքները, մի կողմ նետում ընդունված բոլոր չափանիշները։ Մենք, ավելի ուշ հետնորդներս, չենք կարող մինչև խորքը հասկանալ հիացմունքն այն մարդկանց, որոնք եղել են էլեկտրական հեռագրի առաջին հաջողության վկաները, ըմբռնել նրանց անչափելի ու հիացական զարմանքը այն բանի վրա, որ Լեյդենի անոթում[1] բռնված հազիվ նկատելի կայծը, որ դեռ երեկ մի դյույմ տարածություն հազիվ էր հաղթահարում, հանկարծ դարձել է մի զորավոր ուժ՝ ընդունակ ուղի հարթելու սարերի ու ձորերի, մայրցամաքների վրայով. որ հազիվհազ ծայրը ծայրին հասցված միտքը, թղթի վրա դեռ չչորացած գրառումը նույն վայրկյանին ընդունվում, ընթերցվում, ըմբռնվում է հազարավոր մղոն տարածության վրա. որ այդ փոքրիկ վոլտյան աղեղի բևեռների միջև ծագած անտեսանելի հոսանքը կարող է տարածվել բովանդակ հողագնդով մեկ՝ վազելով մի ծայրից մյուսը. որ ֆիզիկոսի լաբորատորիայի խաղալիքային սարքը, որ դեռ երեկ ընդունակ էր էլեկտրականացված ապակիով մի քանի կտոր թուղթ քաշելու միայն, իր մեջ պարունակում է միլիոնավոր ու միլիարդավոր մարդկանց ուժին և արագությանը գերազանցող ուժ և արագություն, որը կարող է շարժման մեջ դնել գնացքներ, լուսավորել տներ ու փողոցներ, լուրեր բերել կայծակի արագությամբ և, Արիելի պես, անտեսանելիորեն ճախրել օդի մեջ։

Այս հայտնագործությունն առաջին անգամ աշխարհի ստեղծումից ի վեր արմատապես փոխում է ժամանակի և տարածության պատկերացումը։

Դա ամբողջ աշխարհի համար նշանակալի 1837 թվականն է, երբ հեռագիրն առաջին անգամ ի մի բերեց մարդկային տարբեր ճակատագրերը, մի թվական, որ հազվադեպ է հիշատակվում մեր դպրոցական դասագրքերում, որոնց հեղինակները, դժբախտաբար, դեռևս ավելի կարևոր են համարում պատմել առանձին պետությունների ու զորավարների մղած կռիվների ու հաղթանակների մասին՝ փոխանակ խոսելու մարդկության համընդհանուր, և միակ ճշմարիտ, հաղթանակների մասին։ Ինչպէ,

---

1 Էլեկտրական կոնդենսատոր, որի գյուտը 1745—46 թթ. միաժամանակ արվել է Գերմանիայում և Հոլանդիայի Լեյդեն քաղաքում։

նոր պատմության մեջ չկա մեկ ուրիշ այնպիսի իրադարձություն, որ իր հոգեբանական ազդեցությամբ կարողանա համեմատվել ժամանակի բուն հասկացության այս վերագնահատման հետ։ Աշխարհն ուրիշ դարձավ այն պահից ի վեր, երբ Փարիզում կարելի էր իմանալ, թե նույն այդ րոպեին ինչ է կատարվում Ամստերդամում, Մոսկվայում, Նեապոլում, Լիսաբոնում։ Պետք է անել ևս մի վերջին քայլ՝ և աշխարհի բոլոր մասերը կընդգրկվեն մի վիթխարի համաշխարհային դաշնության մեջ՝ ի մի եկած միասնական համամարդկային գիտակցությամբ։

Բայց բնությունը շարունակում է հակառակվել մարդկության վերջնական միավորմանը, դեռ անանցանելի խոչընդոտներ է հարուցում։ Ու դեռևս երկու տասնամյակ անջատված են մնում այն երկրները, որոնք միմյանցից կտրված էին ծովերով։ Ծովի միջով անհնար է էլեկտրական գիծ անցկացնել՝ ջուրը կլանում է հոսանքը, որ օդի մեջ անարգել տարածվում է հախճապակե մեկուսիչներից կախված լարերով, իսկ այն նյութը, որ կարող էր երկաթե և պղնձե լարերը մեկուսացնել ջրային միջավայրում, դեռ չի հայտնաբերվել։

Բարեբախտաբար, բուռն զարգացման դարաշրջանում մի գյուտը հաջորդում է մյուսին։ Առաջին ցամաքային հեռագրագծերի կառուցումից մի քանի տարի անց գտնվում է այն նյութը, որ ընդունակ է հոսանք տանող լարը մեկուսացնել ջրի մեջ՝ գուտապերշը։ Հիմա կարելի է Եվրոպայի հեռագրական ցանցի մեջ առնել մայրցամաքից դուրս գտնվող կարևորագույն երկիրը՝ Անգլիան։ Բուռ ազգանունով մի ինժեներ առաջին հաղորդալարն անց է կացնում Լա Մանշի միջով, հենց այն տեղում, որով հետագայում Բլերիոն[1] առաջին անգամ կկտրի նեղուցը սավառնակով։

Մի անհեթեթ պատահականություն խանգարեց նախաձեռնության անհապաղ հաջողությանը. բուլոնցի մի ձկնորս, կարծելով թե ինքը անսովոր մեծության օձաձուկ է որսացել, ջրից դուրս է հանել արդեն տեղադրված հաղորդալարը։ Բայց 1851-ին երկրորդ փորձն արդեն պսակվեց լիակատար հաջողությամբ։ Եվ այսպես, Անգլիան միացվեց մայրցամաքին, և այդ ժամանակից ի վեր Եվրոպան դարձավ իսկական Եվրոպա, միասնական մարմին, որ մի ընդհանուր սրտով և մի ուղեղով միաժամանակ ընկալում է ժամանակի բոլոր իրադարձությունները։

Այսքան փայլուն նվաճումներ այսքան սակավաթիվ տարիների ընթացքում (քանի որ տասնամյակները մարդկության պատմության մեջ

---

1 Լուի Բլերիո (1872—1936)—ֆրանսիական օդագնացության առաջամարտիկներից մեկը, օդաչու և կոնստրուկտոր։ 1909-ին առաջինը թռավ Լա Մանշի վրայով։

ավելին չեն, քան ակնթարթները) չէին կարող անսահման հանդգնություն չարթնացնել ժամանակակիցների մեջ։ Ինչ որ մտածվում ու ծրագրվում է՝ հաջողվում է, հաջողվում հեքիաթային արագությամբ։ Մի քանի տարի է անցել, և հեռագրային կապն արդեն Անգլիան կապել է Իռլանդիայի, Դանիայի և Շվեդիայի, Կորսիկան՝ Ֆրանսիայի հետ, և արդեն շոշափվում է Եգիպտոսը, ապա նաև Հնդկաստանը ընդհանուր ցանցի մեջ առնելու հողը։

Աշխարհի միայն մի մասը, ու թերևս կարևորագույնը, Ամերիկան, կարծես քրկար ժամանակ դատապարտված է դուրս մնալու ամբողջ աշխարհը միմյանց կապող շղթայակցումից։ Ինչպե՞ս մի գծով ճեղքել Ատլանտյան կամ խաղաղ օվկիանոսները, որոնց մեջ անհնար է ստեղծել որևէ միջանկյալ կայան։ Այն տարիներին, երբ էլեկտրականությունը նոր էր դուրս եկել խանձարուրից, խնդիրը բաղկացած էր անհայտ տվյալներից միայն։ Օվկիանոսների խորությունը դեռևս չի չափված, նրանց հատակի ռելիեֆը լավ չի ուսումնասիրված, չի ստուգված, թե հատակն իջած հաղորդալարը կդիմանա՞, արդյոք, ջրի վիթխարի զանգվածի ճնշմանը։ Եվ եթե նույնիսկ այդպիսի անսահմանորեն երկար հաղորդալարի տեղադրումը տեխնիկապես իրականացվելու լինի, հապա որտեղի՞ց գտնել այնպիսի մի նավ, որ ի վիճակի լինի կրելու երկաթից ու պղնձից պատրաստված երկու հազար մղոն երկարությամբ հաղորդալարը։ Որտեղի՞ց գտնել մի գեներատոր, որ հոսանք արտադրի այնպիսի չափերով, որպիսին հարկավոր է հաղթահարելու համար մի վիթխարի տարածություն, որ նավերը լավագույն դեպքում կտրում են երկու-երեք շաբաթում։

Բացակայում են անհրաժեշտ բոլոր նախադրյալները։

Դեռևս հայտնի չէ, օվկիանոսում չկա՞ն այնպիսի մագնիսային հոսանքներ, որոնք կարող են էլեկտրական հոսանքի ընթացքը փոխել։ Զբկան բավականաչափ հուսալի մեկուսիչներ, ստույգ չափող սարքավորումներ։ Միայն տարրական օրենքներն են հայտնի այն էլեկտրականության, որ նոր էր արթնացել իր դարավոր քնից։ «Անհնար է, խելագար միտք է» — երես էին դարձնում գիտնականները, երբ խոսք էր բացվում անդրօվկիանոսյան հաղորդալար քաշելու մասին։ «Գուցե հնարավոր է, բայց ավելի ուշ», — ասում էին առավել համարձակ ինժեներները։ Նույնիսկ ինքը՝ Մորզեն, այն մարդը, որ ամենից ավելի էր նպաստել հեռախոսի կատարելագործմանը, այդ գաղափարը համարում է չափազանց համարձակ։ Բայց հենց նրան է պատկանում այն մարգարեական խոսքը, որ եթե հնարավոր լինի անդրօվկիանոսյան հաղորդալարի տեղադրումը,

ապա դա կլինի «the great feat of the century»— հարյուրամյակի մեծագույն սխրանքը։

Որպեսզի հրաշքը կամ այն, ինչ դրվում է հրաշքի տեղ, ի կատար ածվի՝ ամենից առաջ հարկավոր է դրան հավատացող մարդ։ Անգլիության քաջությունը երբեմն հաղթահարում է խոչընդոտներ, որոնց առաջ գիտնականները կանգ են առնում անվճռական։ Եվ, ինչպես հաճախ է պատահում, այստեղ ևս հասարակ պատահականությունն է տալիս վիթխարի ձեռնարկումի առաջին մղումը։ Մի անգլիացի ինժեներ, Հիբսոն ազգանունով, որ 1854-ից նախապատրաստական աշխատանքներ էր կատարում Նյու Յորքից Նյուֆաունդլենդ՝ մինչև Ամերիկայի ամենաարևելյան կետը հաղորդալար քաշելու համար (դա հարկավոր էր նավերից մի քանի օր ավելի շուտ լուրեր ստանալու նպատակով), ստիպված եղավ գործը դադարեցնել դրամական միջոցները սպառելու պատճառով։ Նա ուղևորվում է Նյու Յորք՝ այնտեղ նյութական աջակցություն գտնելու մտադրությամբ։ Եվ այնտեղ զուտ պատահականության՝ այնքան մեծաթիվ սխրանքների հարազատ մոր շնորհիվ նա հանդիպում է մի երիտասարդի, պաստորի զավակ Սայրուս Ֆիլդին, որը, առևտրական գործերի մեջ անընդմեջ հաջողություններ ունենալով, արդեն մեծ կարողություն էր դիզել և կարող էր դեռ երիտասարդ հասակում հեռու քաշվել գործից։ Հենց այդ ոչնչով չզբաղված, անբան կյանքով ապրելու համար դեռևս չափազանց երիտասարդ ու եռանդուն մարդուն է դիմում Հիբսոնը՝ հուսալով նրանից դրամ ստանալ սկսած գործն ավարտելու համար։

Սակայն Սայրուս Ֆիլդը (կարելի է ասել՝ բարեբախտաբար) ոչ ինժեներ է, ոչ մասնագետ։ Նա էլեկտրականությունից ոչինչ չի հասկանում ու կյանքում երբեք հաղորդալար չի տեսել։ Բայց հոգևորականի զավակը լի է հավատով, ամերիկացու արյան մեջ եռանդ և արիություն է հոսում։ Եվ այնտեղ, ուր անգլիացի ինժեները լոկ մի պարզ ու մոտակա նպատակ էր տեսնում՝ Նյու Յորքը կապել Նյուֆաունդլենդի հետ, հրապուրվող ու ոգևորվող երիտասարդը տեսավ ուրիշ հնարավորություններ։

Այդ դեպքում ինչո՞ւ Նյուֆաունդլենդը հաղորդալարով Իռլանդիայի հետ չկապել։ Մի չտեսնված եռանդով, պատրաստ հաղթահարելու ամեն մի խոչընդոտ (միայն մի տարում այդ մարդը երեսունմեկ անգամ կըտրում է Հին Աշխարհը Նոր Աշխարհից բաժանող օվկիանոսը), Սայրուս Ֆիլդը անցնում է գործի, հաստատ վճռելով բոլոր ուժերն ու միջոցները նվիրել դրա իրականացմանը։

Դա եղավ այն կայծը, որ պայթյուն է առաջ բերում՝ միտքը ստեղծարար ուժ դարձնելով։ Էլեկտրականության նորահայտ ուժը միացավ

մեկ ուրիշ՝ ամենազորավոր շարժող ուժի՝ մարդկային կամքի հետ։ Մարդը գտել էր իր կենսական խնդիրը, իսկ խնդիրն այն մարդուն, որ ընդունակ էր գտնելու դրա լուծումը։

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Արտասովոր համառությամբ Սայրուս Ֆիլդն անցնում է գործի։ Կապվում է մասնագետների հետ, պաշարում կառավարությանը թույլտվության խնդրագրերով, երկու կիսագնդում էլ կամպանիա անցկացնում անհրաժեշտ միջոցներ հայթայթելու համար։ Եվ այդ միանգամայն անհայտ մարդուց այնպիսի եռանդ է բխում, այնքան աներեր է նրա կրքոտ համոզումը, այնքան մեծ է նրա հավատը էլեկտրականության հրաշագործ ուժի հանդեպ, որ հիմնական կապիտալի բաժնետոմսերը, երեք հարյուր հիսուն հազար ֆունտ ստեռլինգ գումարով, Անգլիայի բանկերում տեղադրվում են մի քանի օրում։

Լիվերպուլում, Մանչեստրում, Լոնդոնում բավական էր մեծահարուստներին կոչ անել «Telegraph Construction and Maintenance Company»[1] անունով, որպեսզի դրամը հոսեր գետի պես։ Բաժնետերերի մեջ են նաև Թեկկերեյը և լեդի Բայրոնը. սրանք հեռու են գործնական շահերից, բայց, վիթխարի մտահղացմամբ հրապուրված, կամեցել են իրենց ներդրումն ունենալ դրա իրագործման մեջ։ Հավատը տեխնիկայի հանդեպ ոչ մի բանի մեջ.այնքան վառ կերպով չէր արտահայտվել, ոգեշնչել Անգլիային Ստիվենսոնի[2], Բրյունելի[3] և ուրիշ մեծ գյուտարարների ժամանակներում, որքան այն թեթևության, որով առաջին կոչը լսելուն պես վիթխարի գումար էր տրամադրվում միանգամայն ֆանտաստիկ և անհուսալի ձեռնարկին։

Նախնական տվյալներից միակը, որ հայտնի է հավաստիորեն՝ հաղորդալարի տեղադրման մոտավոր արժեքն է։ Չկա տեղադրման տեխնիկական փորձ, որի վրա հնարավոր լիներ հենվել։ Չկա նախագծման փորձ. տասնիններորդ դարը դեռևս չի ճանաչում այդպիսի վիթխարի ձեռ-

---

1 Հեռագրի կառուցման և շահագործման կոմպանիա։

2 Ստիվենսոն Ռոբերտ (1772—1859)—անգլիական ինժեներ, ծագումով շոտլանդացի, փարոսների կառուցման խոշորագույն մասնագետ։

3 Բրյունել Իզամբարդ-Քինգդոմ (1806—1859)—անգլիացի տաղանդավոր ինժեներ, նախագծել է մեծաթիվ թունելներ, երկաթուղիներ, դոկեր, գյուտարարն է պտուտակավոր շոգենավերի, որոնցից խոշորագույնը՝ «Լեվիաֆանը» հետագայում արժանացել է «Գրեյտ Իստերնի» մրցանակին։

նարկում։ Անդրօվկիանոսյան հաղորդալարի տեղադրման դժվարությունը մի՞թե կարելի է համեմատել Դուվրի և Կալեի միջև ընկած Լա Մանշը, ջրային այդ նեղլիկ շերտը հաղթահարելու և հաղորդալար անցկացնելու հետ։ Այնտեղ ամբողջ դժվարությունն այն էր ընդամենը, որ սովորական անվային շոգենավի վերին տախտակամածի վրայից քանդեին և ծովն իջեցնեին երեսուն կամ քառասուն մղոնանոց հաղորդալարը, որ ետ էր տրվում նույնպիսի դյուրությամբ, ինչպես մի սովորական խարսխային շղթա։ Նեղուցում հաղորդալար տեղադրելիս կարելի էր հանգիստ սպասել նպաստավոր եղանակի, ստույգ հայտնի էր ջրի խորությունը, նավը մշտապես տեսանելի էր մեկ կամ մյուս ափից, որ կարող էր կանխել ամեն մի տհաճ անակնկալ և, վերջապես, ամբողջ գործը պահանջում էր մեկ օրից ոչ ավելի։

Բայց օվկիանոսում աշխատելու ժամանակ, որ երկու-երեք շաբաթ էր պահանջում, հարյուր անգամ ծանր ու երկար հաղորդալարը չէր կարելի թողնել տախտակամածին՝ եղանակի բոլոր քմահաճույքների վտանգի տակ։ Ասենք, այն ժամանակի և ոչ մի նավ չէր կարող տեղավորել երկաթից, պղնձից և գուտապերչից սարքված այդ վիթխարի կծիկը, ոչ մի նավ օժտված չէ այդպիսի բեռ կրելու հզորությամբ։ Դրա համար պետք է ամենաքիչը երկու հիմնական և մի քանի օժանդակ նավեր, որպեսզի հետևեն հիմնական գծի ճշտությանը և անհրաժեշտության դեպքում օգնության հասնեն միմյանց։ Ճիշտ է, անգլիական կառավարությունն այդ նպատակի համար տրամադրել է իր ամենամեծ ռազմանավերից մեկը՝ «Ագամեմնոնը», Սևաստոպոլի մոտ գտնվող անգլիական նավատորմի հրամանատարական նավը, իսկ ամերիկյան կառավարությունը՝ «Նիագարան», այն ժամանակների համար խոշորագույն մի ֆրեգատ, հինգ հազար տոննա ջրատարողությամբ, բայց այդ երկու նավն էլ հարկավոր է վերասարքավորել, որպեսզի դրանցից ամեն մեկը կարողանա բարձրացնել կեսն այն անվերջանալի շղթայի, որ պետք է միացներ երկու աշխարհամասերը։

Սակայն գլխավոր դժվարությունն, իհարկե, հաղորդալարի ստեղծումն էր։ Մեծ պահանջներ են ներկայացվում երկու կիսագնդերը կապելու համար ստեղծվելիք այդ պորտալարին։ Դա պետք է ամուր լիներ, ինչպես պողպատե ճոպան, և միաժամանակ ճկուն, որպեսզի հնարավոր լիներ տեղադրել. պետք է դիմանար ամեն մի ճնշման ու ծանրության, և միաժամանակ փաթաթվեր մետաքսաթելի թեթևությամբ. պետք է լիներ զանգվածային, բայց ոչ ծանրաքաշ, ամրակուռ, բայց այնքան զգայուն, որ երկու հազար մղոնի վրա հաղորդեր ամենաթույլ էլեկտրական

ազդանշանն իսկ։ Այդ վիթխարի հաղորդալարի ամենափոքր ճեղքվածքը բավական է, որպեսզի այդ ամբողջ տասնչորս օրվա ճանապարհին հոսանքը կանգ առնի։

Բայց Սայրուս Ֆիլդն ընդունում է մարտահրավերը։ Զոր ու գիշեր գործարաններն աշխատում են, այդ մարդու անխորտակելի կամքը ամբողջ մեխանիզմը գործի է դցում։ Ամբողջ հանքավայրեր են դատարկվում անհրաժեշտ քանակով երկաթ ու պղինձ հայթայթելու համար։ Կաուչուկի ծառերի ամբողջ անտառներ տալիս են իրենց արյունը՝ այդպիսի վիթխարի երկարությյան հաղորդալարը գուտապերչով պատելու համար։

Բայց ոչինչ այնքան շոշափելի ցույց չի տալիս մտահղացման վիթխարի մասշտաբները, որքան երեք հարյուր վաթսուն հազար մղոն միահյուսված ջղերը, որոնք կազմում են հաղորդալարի միջուկը՝ երեսուն անգամ ավելի, քան հարկավոր է հողագունդը գոտևորելու համար, և նույնքան, որքան հարկավոր է երկիրն ուղիղ գծով լուսնի հետ կապելու համար։

Բաբելոնի աշտարակաշինության ժամանակներից ի վեր մարդկությունը ձեռք չէր զարկել տեխնիկական իմաստով այսքան հսկայական մի գործի։

ԱՌԱՋԻՆ ՆԱՎԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ամբողջ տարի անդադրում պտույտ են գործում մեքենաները, երկու նավերի ամբարներում փաթաթվում է գործարաններից բերվող հարթ ու բարակ հաղորդալարը։ Եվ, վերջապես, բազմահազար պտույտներից հետո, հաղորդալարի ամեն մի կեսը ամեն մի նավում փաթաթված է թմբուկների վրա։ Նավերի վրա արդեն դրվել են արգելակներով հատուկ սարքավորված ծանրակիր մեքենաներ, որոնք կարող են նաև ետ պտտվել և որոնք պետք է առանց կանգ առնելու մեկ, երկու, երեք շաբաթ հաղորդալարն իջեցնեն օվկիանոսի հատակը։

Լավագույն ինժեներներն ու էլեկտրիկները, որոնց թվում ինքը՝ Մորզեն, հավաքվել են նավերի վրա, որպեսզի տեղադրման ամբողջ ընթացքում իրենց սարքավորումներով անմիջաբար ստուգեն էլեկտրական շղթայի գործունեությունը։ Թղթակիցներն ու նկարիչները միացել են տորմիղին, որպեսզի գրչով ու վրձնով պատկերեն այդ հուզիչ նավարկումը, որի հետ կարող են համեմատվել Կոլումբոսի և Մագելանի ծովագնացությունները միայն։

Վերջապես, բոլոր պատրաստություններն ավարտված են, և եթե մինչ այդ շատերն այդ ծրագրին նայում էին հոռետեսաբար, ապա այժմ

բովանդակ Անգլիան սևեռուն ուշադրությամբ հետևում է դեպքերի զարգացմանը։ 1857-ի օգոստոսի 5-ին հարյուրավոր նավեր ու նավակներ Վալենսիա իռլանդական փոքր նավահանգստում շրջապատում են տորմիղը, որպեսզի վկա լինեն այն պատմական պահին, երբ հաղորդալարի մի ծայրը կիջեցվի նավից ու կամրացվի Եվրոպայի հողին։

Հրաժեշտը տարերայնորեն վեր է ածվում հանդիսանքի։ Կառավարությունն առաքել է իր ներկայացուցիչներին, ճառեր են ասվում, սրբատաշարած խոսքերով հոգևորականն աստծո օրհնություն է աղերսում հանդուգն ծովագնացներին։ «Օ՜, ամենազոր աստված, — ասում է նա, — դու ես միակը, որ ընդգրկում ես երկինքը, քո ձեռքումն ես պահում ծովային ալիքները և քո կամքով են շարժվում հողմերն ու փոթորիկները։ Ողորմածությամբ հայիր ծառաներին քո։ Զորությամբդ հեռացրու խոչընդոտները նրանց առջևից, խորտակիր արգելքներն ամեն, միայն թե նրանք ի կատար ածեն իրենց հղացումն ազնվամիտ»։

Հազարավոր ձեռքեր ու գլխարկներ են թափահարվում ծովափին ու նավահանգստում։ Դանդաղորեն երկիրն անհետանում է աչքից։ Մոտենում է մարդկության ամենահանդուգն երազանքներից մեկի իրականացման ժամը։

ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ

Նախապես ենթադրվում էր, որ երկու նավն էլ՝ «Ագամեմնոնը» և «Նիագարան», ամեն մեկը հաղորդալարի սեփական բեռով, հակադիր ելակետերից գալով, միմյանց կհանդիպեն օվկիանոսի մեջտեղում նախանշված կետում, ուր հաղորդալարի երկու ծայրերը կզոդվեն միմյանց։ Դրանից հետո նավերից մեկը կմեկնի դեպի արևմուտք՝ Նյուֆաունդլենդ, մյուսը դեպի արևելք՝ Իռլանդիա։ Սակայն առաջին իսկ փորձին ամբողջ թանկագին հաղորդալարը կորցնելու վտանգը շատ մեծ էր թվում, ուստի և վճռվեց առաջին կեսի տեղադրումը սկսել Իռլանդիայի ափերից, մանավանդ որ դեռ հայտնի չէ՝ այդպիսի երկարության ստորջրյա հաղորդալարը կարո՞ղ է կանոնավոր գործել, թե ոչ։

Իռլանդիայի ափերից հաղորդալարը մինչև օվկիանոսի կեսը քաշելու խնդիրը բաժին ընկավ «Նիագարային»։ Դանդաղ և զգույշ շարժվում է ամերիկյան նավը, նման մի վիթխարի սարդի, որ իր մարմնից անընդմեջ թել է բաց թողնում։ Դանդաղ ու համաչափ դղրդում է հաղորդալարը տեղադրող մեքենան, հանելով բոլոր նավաստիներին լավ ծանոթ, սովորական աղմուկ՝ հատուկ ետ պտտվող խարսխային շղթային, երբ

սա, ամբարձիչ թմբուկից քանդվելով, սուզվում է ծովի խորքը։ Եվ մի քանի ժամ անց արդեն մարդիկ այդ համաչափ, միապաղաղ աղմուկին դարձնում են ոչ ավելի մեծ ուշադրություն, քան սեփական սրտի բաբախյունին։

Նավն ավելի ու ավելի է հեռանում դեպի բաց ծովը, նույն համաչափությամբ հաղորդալարն իջեցնելով ծովի հատակը։ Ու թվում է, թե արտասովոր ոչինչ չկա այդ արտասովոր ծովագնացության մեջ։ Միայն թե հատուկ նախասենյակում մասնագետներ են նստած էլեկտրատեխնիկական սարքերի առաջ՝ չընդհատվող ազդանշանային կապ պահելով իռլանդական ափի հետ։ Եվ զարմանալի է. թեև ափը վաղուց է կորել աչքից, ստորերկրյա հաղորդալարը գործում է այնքան հստակ, ասես գիծը եվրոպական երկու քաղաք է կապում միմյանց հետ։ Արդեն ետևում են մնացել առափնյա շերտերի ծանծաղ մասերը, արդեն անցել են այսպես կոչված խորջրային սարահարթի մի մասը, բայց նույն համաչափությամբ, ինչպես ավազային ժամացույցի ավազը, նավից ցած է սահում մետաղաթելը, որով լուրեր են ստացվում և առաքվում միաժամանակ։

Արդեն տեղադրված է երեք հարյուր երեսունհինգ մղոն, տասն անգամ ավելի, քան Դուվրի և Կալեի միջև ընկած տարածությունն է, արդեն հաղթահարված է առաջին հինգ օր ու գիշերվա անվստահությունն ու տագնապը և, բաղում ժամերի լարումից ու անհանգստությունից հետո, օգոստոսի 11-ի երեկոյան, Սայրուս Ֆիլդն արդեն իրեն թույլ է տալիս հանգիստ առնել։ Եվ հանկարծ ինչ-որ բան է կատարվում՝ մեքենայի համաչափ դղրդյունը դադարում է։ Ինչպես ննջացող ուղևորն է մի ակնթարթում զարթնում գնացքի անսպասելի կանգառից, ինչպես ջրաղացպանն է տեղից վեր թռչում չախչախի աղմուկի դադարից, այդպես մի ակնթարթում արշավի մասնակիցները վեր թռան ու նետվեցին դեպի տախտակամած։ Մեքենային դարձված մի հայացք՝ և ամեն ինչ պարզ է. մեքենայի թմբուկը դատարկ է։ Հաղորդալարը կտրվել է այնպես հանկարծակի, որ անհնար է եղել բռնել կտրված կտորը, և հիմա անհույս բան է գտնել դա ծովի խորքում և ջրի երես հանել։

Տեղի է ունեցել անուղղելի մի բան. տեխնիկական ոչ մեծ սխալն ի չիք է դարձրել շատ տարիների աշխատանքը։ Արշավախմբի անվեհեր մասնակիցները պարտված վերադառնում են Անգլիա, որին հանկարծորեն լռած հաղորդալարն արդեն նախապատրաստել էր ամենավատթար լուր առնելու։

ԴԱՐՁՅԱԼ ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ

Սայրուս Ֆիլդը, աներեր մնացած միակ հերոսը, որ վճռական մարդ է նաև, հաշվեկշիռ է անում։ Որքա՞ն մեծ եղավ վնասը։ Երեք հարյուր մղոն հաղորդալար, շուրջ հարյուր հազար բաժնետիրական դրամագլուխ և, որ ամենից ավելի է մտահոգում նրան՝ մի ամբողջ տարվա կորուստ, քանի որ արշավախմբի համար նպաստավոր եղանակը ամառն է, իսկ այդ տարվա ամառն արդեն ձեռքից բաց է թողնվել։

Բայց ծովագնացությունը միայն վնաս չէ, որ տվել է. գործնական մեծ փորձ է ձեռք բերվել։ Հաղորդալարը, որ ապացուցել է իր լիակատար պիտանիությունը, կարելի է նորից փաթաթել և օգտագործել հաջորդ անգամ։ Հարկավոր է միայն փոխել տեղադրող մեքենայի մեխանիզմը, որի պատճառով տեղի ունեցավ շարաբաստիկ անջատումը։

Այսպես, վերստին նախապատրաստական աշխատանքներ կատարելու և ամառվան սպասելու համար անցավ ևս մեկ տարի։

Վերջապես, 1858-ի հունիսի 10-ին նույն նավերը հին հաղորդալարով և նոր հույսերով դուրս են գալիս բաց ծով։ Քանի որ առաջին փորձի ժամանակ հեռագրալարը գործել էր անթերի՝ վճռվում է վերադառնալ նախնական ծրագրին. տեղադրումը կատարել միաժամանակ երկու կողմից, սկսելով օվկիանոսի մեջտեղից։ Նոր արշավանքի առաջին օրերը ոչնչով աչքի չեն ընկնում։ Միայն յոթերորդ օրը, երբ կհասնեն նախանշված կետին, պետք է սկսվի հաղորդալարի սուզումը և դրա հետ միասին իսկական աշխատանքը։ Իսկ առայժմ արշավանքը սովորական ծովային զբոսանք է հիշեցնում։ Մեքենաները չեն գործում, նավաստիները հանգստանում են և վայելում հիանալի եղանակը. անամպ երկինք, հանգիստ, գուցեեւ չափից դուրս հանգիստ, օվկիանոս։

Սակայն երրորդ օրը «Ագամեմնոնի» նավապետին պաշարում է անորոշ մի անհանգստություն։ Աչքը գցելով բարոմետրին, նա տեսնում է, որ սնդիկի սյունն իջնում է սոսկալի արագությամբ։ Դա եղանակի կտրուկ փոփոխության նշան էր, և, իրոք, չորրորդ օրը փոթորիկ է պայթում, այնպիսի փոթորիկ, որի նմանը նույնիսկ փորձառու նավաստիները հազվադեպ էին տեսել Ատլանտյան օվկիանոսում։ Պատահականության բերումով փոթորկի երախն ընկավ հենց անգլիական նավը։ Առաջնակարգ սարքավորում ունեցող, փոթորիկներում ու պատերազմի բոցերում կոփված այդ հրամանատարական նավը, թվում է, պետք է դիմագրավեր ամեն մի աղետի։ Բայց, դժբախտաբար, նավն ամբողջովին վերաձևված էր վիթխարի բեռը կրելու համար։ Բացի այդ, հնարավոր չէր, ինչպես բեռնատար

նավերում սովորաբար արվում է, բեռը հավասարաչափ բաշխել ամբողջ մակերեսի վրա, և հաղորդալարի ամբողջ վիթխարի ծանրությունը բաժին էր ընկնում կենտրոնին։ Բեռի միայն փոքր մասն էր դրված նավախելին, բայց դա միայն խորացնում էր վտանգը, քանի որ վեր ու վար լինելիս նավը ճոճվում էր կրկնակիորեն ավելի մեծ չափով։ Դա հեշտացնում է փոթորկի դաժան խաղը. նավը աջ և ձախ, ետ և առաջ է ճոճվում 45 աստիճանի անկյան թեքությամբ, ալիքները գլորվում են տախտակամածով՝ ծովը թափելով այնտեղ եղած ամեն ինչ։

Մի նոր աղետ. նավը հիմնիվեր ցնցող հրեշավոր հարվածը քանդում է այն պատնեշը, որի ետևում տախտակամածի վրա պահվում էր քարածուխը։ Սև խճի այդ ամբողջ զանգվածը կարկտի պես տեղում է առանց այն էլ տանջված ու արնոտված նավաստիների վրա։ Քարածխի խիճը վիրավորում է շատերին։ Նավի խոհանոցում եղած նավաստիներին խաշում է շուռ եկած կաթսայի եռացրած ջուրը։ Նավաստիներից մեկը, շղթամանալով տասնօրյա փոթորկին, ցնորվում է։ Նավի անձնակազմն արդեն պատրաստ է դիմել ծայրահեղ միջոցին՝ հաղորդալարի մի մասը, որ սպառնում է խորտակել նավը, նետել ծովը։ Բարեբախտաբար, նավապետը, չկամենալով իր վրա առնել այդպիսի պատասխանատվություն, չի համաձայնում, և իրավացի է դուրս գալիս։ «Ագամեմնոնը» դիմանում է տասնօրյա փոթորկի բոլոր փորձություններին և, չնայած մեծ ուշացումով, միանում է մյուս նավերին պայմանավորված վայրում, որտեղից և պետք է սկսվեր տեղադրումը։

Բայց միայն հիմա է պարզվում, թե տասնօրյա անընդմեջ ցնցումներից ինչքան է վնասվել մետաղաթելերից հազարապատիկ անգամ հյուսված զգայուն, թանկագին բեռը։ Որոշ տեղերում լարերը խառնվել են կամ գուտապերչե պատյանը ճեղքվել է։ Չնայած դրան, չունենալով հաջողության գրեթե ոչ մի հույս, տեղադրում կատարելու մի քանի փորձ է արվում, բայց դա հանգեցնում է զուր տեղը օվկիանոսի հատակը սուզած երկուհարյուր մղոն հաղորդալարի կորստյանը։

Ստիպված են լինում իջեցնել դրոշը և վերստին հայրենիք վերադառնալ իբրև պարտվածներ։

ԵՐՐՈՐԴ ՆԱՎԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Այս նոր ձախորդության լուրն առած և ահաբեկված բաժնետերերը սպասում են Սայրուս Ֆիլդին, որ գայթակղեցրել էր իրենց և նորից ծախսի տակ գցել։ Դրամագլխի կեսն արդեն վատնվել է երկու արշավախմ-

բի վրա՝ և ոչինչ ձեռք չի բերվել, ոչինչ չի ապացուցվել։ Կասկած չկա, որ մեծամասնությունը հիմա կհայտարարի. «Բավակա՛ն է»։ Վարչության նախագահը խորհուրդ է տալիս փրկել այն, ինչ դեռ հնարավոր է փրկել։ Նա առաջարկում է չօգտագործված հաղորդալարը նավերից իջեցնել ու վաճառել թեկուզև վնասով, խաչ քաշել անդրովկիանոսյան կապի այդ խելագար ծրագրի վրա։ Փոխ-նախագահը, համամիտ նրա հետ, հրաժարական է ներկայացնում՝ ընդգծելու համար, որ չի ուզում ոչ մի ընդհանուր բան ունենալ այդ անհեթեթ ձեռնարկի հետ։

Բայց Սայրուս Ֆիլդի հավատն ու համառությունն անսահման են։ Դեռ ոչինչ չի կորսվել,—ասում է նա։ Հաղորդալարը փայլուն քննություն բռնեց, և մնացածը բավական է նոր նավարկություն սկսելու համար, նավատորմը պատրաստ է, անձնակազմերը վարձված են, իսկ այն ահավոր փոթորիկը, որ պայթեց երկրորդ նավարկության ժամանակ, թույլ է տալիս հուսալ, որ մի քանի շաբաթ պարզ, անդորր եղանակ կլինի։ Արիություն է հարկավոր, միայն արիություն։ Պետք է բոլոր ուժերը լարել մի վերջին փորձ անելու համար՝ ա՛յժմ կամ երբե՛ք։

Բաժնետերերը շփոթված նայում են միմյանց. դրամագլխի մնացորդը վերստի՞ն վստահել մոլագարին։ Բայց քանի որ ուժեղ կամքը տատանվողներին միշտ էլ տանում է իր ետևից՝ Սայրուս Ֆիլդը կարողանում է բաժնետերերից կորզել նոր նավարկության համաձայնությունը։

1858-ի հուլիսի 17-ին, երկրորդ չարաբաստիկ նավարկությունից հինգ շաբաթ անց, նավատորմը երրորդ անգամ դուրս է գալիս բաց օվկիանոս։

Եվ այս օրինակը մի անգամ ևս ցույց է տալիս, որ կարևորագույն գործերն ամենից լավ հաջողվում են այն ժամանակ, երբ դրանց շուրջն աղմուկ չի բարձրացվում։ Այս անգամ նավարկությունն սկսվում է բոլորովին աննկատ։ Ափից հեռացող տորմիղին բարեմաղթություն հղող նավակներ չեն ուղեկցում, հետաքրքրասերների բազմություն չի հավաքվում ծովափին, հրաժեշտի հանդիսավոր հրավերք չի տրվում, ճառեր չեն ասվում, աստծո օրհնություն չի աղերսվում։

Թաքուն և անաղմուկ, ծովահենային նավերի պես, նավատորմը պոկվում է անգլիական ափից։ Ճիշտ նշանակված օրը, 1858-ի հուլիսի 28-ին հանդիպելով նախատեսված վայրում, «Ագամեմնոնը» և «Նիագարան» կարող են սկսել իրենց տիտանական աշխատանքը։

Հազվագյուտ տեսարան՝ շոգենավերը մերձենում են նավախելները միմյանց դարձրած։ Հիմա նրանց միջև հաղորդալարի ծայրերը պետք է զոդվեն իրար։ Առանց որևէ հանդիսավորության, նախորդ՝ ապարդյուն

անցած փորձերից հիասթափված նավաստիների մեջ անգամ առանձին հետաքրքրություն չհարուցելով, երկաթապղնձեղեն հաղորդալարն իջնում է ջրի խորքը, օվկիանոսի հատակը, ուր դեռևս չի հասել ոչ մի խորաչափ։ Մի վերջին անգամ նավերը ողջույն են հղում միմյանց, կայմերի վրա բացվում են դրոշները՝ և անգլիական նավը դեպի Անգլիայի ափերն է շարժվում, ամերիկյանը՝ դեպի Ամերիկայի ափերը։ Նավերը, ինչպես օվկիանոսի անեզր հեռաստաններում հայտնված երկու թափառող կետեր, հեռանում են միմյանցից, բայց հաղորդալարը շարունակում է միացնել նրանց։ Մարդկության պատմության մեջ առաջին անգամ միմյանցից տարածությամբ բաժանված և միմյանց համար անտեսանելի երկու նավ կարող են խոսել իրար հետ քամու ալիքների և օվկիանոսային հեռուների միջով։ Մի քանի ժամը մեկ անգամ էլեկտրական ազդանշանը, օվկիանոսի հատակով սուրալով, մի նավից մյուսը տվյալներ է տանում տեղադրված հաղորդալարի երկարության մասին։ Եվ ամեն անգամ երկրորդ նավը հղում է պատասխան ազդանշան, հայտնելով, որ եղանակը նպաստավոր է տեղադրման համար և որ հաղթահարված է նույնքան տարածություն։

Այսպես անցնում է մեկ, երկու, երեք, չորս օր։ Վերջապես, օգոստոսի 5-ին «Նիագարայից» հայտնում են, որ նավը գտնվում է Տրինիտի ծովածոցում, Նյուֆաունդլենդ կղզում, ամերիկյան ափից տեսանելի հեռավորության վրա և որ տեղադրված է առնվազն հազար երեսուն մղոն հաղորդալար։ Եվ նույն այդ օրը հաղթանակ է տոնում նաև «Ագամեմնոնը», որը տեղադրել է շուրջ հազար մղոն և մոտենում է Իռլանդիայի ափերին։ Առաջին անգամ երկու մայրցամաքների՝ Եվրոպայի և Ամերիկայի միջև հաստատվել է կենդանի, անմիջական կապ։ Բայց միայն երկու նավ, նրանց մեջ եղած մի քանի հարյուր մարդիկ գիտեն, որ սխրանքն ի կատար է ածված։ Աշխարհը, որ արդեն հասցրել էր մոռանալ արշավախմբի մասին, դեռևս բանից անտեղյակ է։ Վերադարձող նավերին ոչ ոք չի դիմավորում ո՛չ Իռլանդիայում, ո՛չ Նյուֆաունդլենդում։ Բայց հենց այն վայրկյանին, երբ հաղորդալարը միացվի ցամաքային հեռագրական ցանցին, բովանդակ մարդկությունը կիմանա նրանց ձեռք բերած վիթխարի հաղթանակի մասին։

ՄԵԾԱԳՈՒՅՆ ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այն հրճվանքը, որ հարուցեց լուրը, շատ ուժեղ էր, քանի որ թնդաց, ինչպես որոտը պարզ երկնքում։ Գրեթե միաժամանակ, օգոստոսի առաջին օրերին, Հին և Նոր Աշխարհներն իմանում են գործը հաջողությամբ

ավարտելու մասին, որի թողած ազդեցությունը չի ենթարկվում նկարագրության։ Սովորաբար զուսպ անգլիական «Թայմս» լրագիրը առաջնորդող հոդվածում նշում է. «Կոլումբոսի հայտնագործության ժամանակներից ի վեր չի արվել ոչինչ, որ մի որևէ չափով համեմատվի մարդկային գործունեության ոլորտի այս վիթխարի ընդլայնման հետ»։ Լոնդոնի Սիթին բռնվում է տենդով։ Բայց Անգլիայի գոռոզամիտ հրճվանքը թվում է երկչոտ ու ժժգույն՝ հիացմունքի այն փոթորկի հետ, որ բռնում է Ամերիկան լուրն առնելուն պես։ Գործարքները դադարեցվում են, փողոցները լցվում են հարցուփորձ անող, վիճաբանող, բորբոքվող, ճչացող մարդկանցով։

Մինչ այդ ամենքին անծանոթ Սայրուս Ֆիլդը դառնում է ազգային հերոս։ Նրա անունը դրվում է Ֆրանկլինի և Կոլումբոսի կողքին, ողջ Նյու Յորքը, հարյուրավոր ուրիշ քաղաքներ տենդագին ու աղմկալի անհամբերությամբ սպասում են հայտնվելուն այն մարդու, որի հաստատակամության շնորհիվ հնարավոր դարձավ «պատանի Ամերիկայի պսակադրումը Հին Աշխարհի հետ»։ Բայց հիացումը դեռ իր բարձրակետին չի հասել, քանի որ հաղորդալարի տեղադրման մասին լոկ ժլատ տվյալներ են ստացվել։ Իսկ կապ հաստատվե՞լ է, արդյոք։ Հաջողվե՞լ է, արդյոք, ամուր կապ հաստատել երկու մայրցամաքների միջև։

Մեծաշուք տեսարան՝ ամբողջ քաղաքը, բովանդակ ժողովուրդը շունչը պահած սպասում է օվկիանոսի մյուս կողմից գալիք առաջին խոսքին։ Հայտնի է, որ ամենից առաջ պետք է հաղորդվի անգլիական թագուհու շնորհավորանքը, և դրան սպասում են ժամ առ ժամ ահագնացող անհամբերությամբ։ Բայց օրերն անցնում են օրերի ետևից, և օգոստոսի 16-ի երեկոյան միայն, հաղորդալարի պատահական վնասվածքը հենց Նյուֆաունդլենդում վերացնելուց հետո, Վիկտորիա թագուհու շնորհավորական ուղերձը հասնում է Նյու Յորք։

Վաղուց ի վեր սպասված լուրը չափազանց ուշ է գալիս, որպեսզի լրագրերը հասցնեին պաշտոնական հաղորդում հրապարակել, բայց հենց որ ուղերձը փակցվում է խմբագրությունների և հեռագրային գրասենյակների դռներին՝ բազմություններ են, որ խռնվում են դրանց առաջ։ Լրագրողները, շորերը պատռելով, հազիվ են ճամփա բացում տոնական բազմությունների միջով։ Նորությունը հայտարարվել է թատրոններում։ Հազարավոր մարդիկ, որոնց ուղեղում չի տեղավորվում այն իրողությունը, որ հեռագիրը կարող է ամենաճեպընթաց նավից էլ շատ օրեր առաջ ընկնել, ձգտում են հասնել Բրուկլինյան նավահանգիստ՝ այդ համաշխարհային հաղթանակը նվաճած «Նիագարա» հերոսական շոգենավին

ողջույններ հղելու համար։ Հաջորդ օրը թերթերը լույս են տեսնում մեծ-մեծ վերնագրերով. «Հաղորդալարն աշխատում է անթերի», «Բնակչության հիացմունքը սահման չունի», «Չտեսնված սենսացիան տակնուվրա է արել ամբողջ քաղաքը», «Եկել է համընդհանուր բերկրանքի ժամը»։

Չտեսնված հաղթանակ՝ մտածողության գոյացումից ի վեր առաջին անգամ միտքը մտքից էլ արագ թռել է օվկիանոսը կտրելով։ Եվ արդեն թնդում է հարյուր հրանոթի հրետանային համազարկը՝ հռչակելով այն լուրը, որ Միացյալ Նահանգների պրեզիդենտը պատասխանեց թագուհու հղած ուղերձին։ Հիմա այլևս ոչ ոք չի հանդգնում կասկածել։ Երեկոյան Նյու Յորքն ու մյուս բոլոր քաղաքները շողշողում են տասնյակ հազարավոր լամպերի ու ջահերի լույսերով։ Բոլոր պատուհանները լուսավորված են, և քաղաքապետարանի տանիքում ծայր առած հրդեհն անգամ չի կարող խանգարել ցնծությանը։

Հաջորդ օրը բերում է մի նոր ուրախալի լուր. «Նիագարան» ժամանել է Նյու Յորք՝ բերելով հենց իրեն՝ հանդեսների մեղավոր Սայրուս Ֆիլդին։ Հաղորդալարի մնացորդը հաղթանականորեն անց է կացվում քաղաքով, նավի անձնակազմին ցույց է տրվում արժանավայել ընդունելություն։ Միացյալ Նահանգների ամեն մի քաղաքում, Մեքսիկական ծոցից մինչև խաղաղ օվկիանոս, օր-օրի տեղի են ունենում բազմամարդ ցույցեր, ասես Ամերիկան երկրորդ անգամ է տոնում իր հայտնագործումը։

Բայց դա էլ քիչ է։ Իրողությանը վայել հաղթական երթը պետք է լինի առավել հոյակապ, ամենավիթխարին, որ երբևէ տեսել է Նոր Աշխարհը։ Նախապատրաստությունը տևում է երկու շաբաթ, և վերջապես օգոստոսի 31-ի աշնանային պարզ օրը բովանդակ Նյու Յորքը մի մարդու՝ Սայրուս Ֆիլդին մեծարում է այնպես, ինչպես ոչ մի ժողովուրդ չի մեծարել հաղթողներին կեսարների ու կայսրերի ժամանակներից ի վեր։ Հանդիսավոր երթն այնքան մեծ է, որ պետք է լինում վեց ժամ՝ քաղաքը մի ծայրից մյուսը կտրելու համար։ Դրոշակներով զարդարված փողոցներով գնդեր են անցնում փողփողուն դրոշակներով։ Անվերջանալի հոսանքով նրանց հետևում են երգչախմբերն ու նվագախմբերը, հրշեջ ջոկատները, դպրոցականները, վետերանները։ Ամեն ոք, որ կարող է երգել՝ երգում է, ամեն ոք, որ կարող է ցնծալ՝ ցնծում է։

Քառաձի կառքով, ասես անտիկ ժամանակների տրիումֆատոր, առաջինը Սայրուս Ֆիլդն է ընթանում, երկրորդով՝ «Նիագարայի» նավապետը, երրորդով՝ Միացյալ Նահանգների պրեզիդենտը, այնուհետև՝ Նյու Յորքի քաղաքագլուխը, բարձրագույն պաշտոնյաները, գիտնականները։

Ծառերը, հրավերքները, ջահակիր երթերն առանց դադար առնելու հետևում են միմյանց, հնչում են զանգերը, թնդում են հրետանային համազարկերը, նորից ու վերստին փայլատակում են ցնծության բռնկումները ի պատիվ երկրորդ Կոլումբոսի, ի պատիվ տարածությունը հաղթահարողի, որ միմյանց կապեց Նոր և Հին Աշխարհները, և այդ օրը Ամերիկայի ամենահռչակավոր ու սիրված հերոսը դարձած Սայրուս Ֆիլդի։

ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐԸ

Հազարավոր ու միլիոնավոր ձայներ այդ օրը կազմել էին բարձրագոչ ու ցնծագին մի երգչախումբ։ Միայն մի միակ և կարևորագույն ձայն չմիացավ նրանց՝ դա էլեկտրական հեռագրի ձայնն էր։ Հնարավոր է, որ տոնախմբության բուռն պահին Սայրուս Ֆիլդը նախազգում էր ահավոր ճշմարտությունը և, ով իմանա, թե որքան ծանր էր նրա համար գիտենալ, որ հենց այդ օրն իսկ անդրատլանտյան հաղորդալարը դադարել է գործել. վերջին օրերը հեռագրով գալիս էին ավելի ու ավելի կցկտուր, ավելի ու ավելի նվազ հստակ ազդանշաններ՝ մինչև որ վերջին անհասկանալի ազդանշանը տեղ հասավ իբրև մահամերձի հառաչանք, և հաղորդալարը համրացավ վերջնականապես։

Ամբողջ Ամերիկայում միայն մի քանի մարդ, որ Նյուֆաունդլենդում հետևում էին ազդանշաններ ընդունելուն, գիտեին կապի աստիճանական վատթարացման մասին։ Բայց սրանք էլ հապաղում էին օր-օրի, սիրտ չանելով տոնախմբության թեժ պահին հայտնել դառնագին լուրը։ Սակայն շուտով նկատում են, որ Եվրոպայից հեռագրեր շատ հազվադեպ են ստացվում։ Ամերիկայում սպասում էին, որ օվկիանոսի մյուս կողմից ժամ առ ժամ լուրեր կգան, բայց դրա փոխարեն սարքավորումը երբեմն միայն տկտկացնում է անկապ ու անհասկանալի ազդանշաններ։ Այդպես երկար շարունակվել չէր կարող, և ահա լուրեր են սողոսկում, թե փութաջան շտապողականությամբ, ջանալով բարելավել կապը, հաղորդալարով շատ ուժեղ հոսանք են անցկացրել և դրանից էլ առանց այն էլ անկատար հաղորդալարը փչացել է։ Դեռևս մնում է վնասվածքը վերացնելու մի փոքր հույս, բայց շուտով այդ հույսն էլ կտրվում է, քանի որ ազդանշանները դառնում են ավելի ու ավելի անկապ ու սակավադեպ։ Եվ հենց սեպտեմբերի 1-ին, երբ դեռ տոնական արբեցումը չէր փարատվել, սարքավորումը օվկիանոսի մյուս կողմից ոչ մի հստակ ազդանշան չի ընդունում։

Մարդիկ ամենից քիչ են հակվում ներողամտության այն դեպքերում, երբ իրենց անկեղծ խանդավառությունն ավարտվում է հիասթափությամբ. և հատկապես նրանց հանդեպ, ումից նրանք մեծ սպասելիք ունեին և ովքեր իրենց հուսախաբ են անում։ Հռչակված հաղորդալարի համրանալու բոթը հաստատվելուն պես ցնծության բուռն ալիքը ետ է դառնում և ցասմնալի մոլեգնությամբ փուլ դալիս անմեղ մեղավոր Սայրուս Ֆիլդի գլխին։ Նա խաբել է ողջ քաղաքը, ամբողջ երկիրը, բովանդակ աշխարհը,— պնդում են Սիթիում,— նա վաղուց գիտեր, որ հեռագրալարը պիտանի չէ, բայց հանուն փառասիրության թույլ տվեց, որ մեծարեն իրեն, իսկ ինքը նույն այդ ժամանակ հեշտ ու հանգիստ իրացրեց իրեն պատկանող արժեթղթերը և լլսված շահույթի տեր դարձավ։

Տարածվում են ամենաչարամիտ զրպարտություններ։ արդեն անառարկելիորեն հաստատում են, թե անդրօվկիանոսյան հաղորդալարն առհասարակ ինչպես հարկն է չի էլ աշխատել, թե բոլոր հեռագրերը եղել են ոչ այլ ինչ, քան խաբեբայություն և միստիֆիկացիա, թե անգլիական թագուհու ուղերձը ոչ թե հեռագրով էր հաղորդված, այլ բերված էր վաղուց։ Այդ ամբողջ ընթացքում, — պնդում են այնուհետև, — կապակցված տեսքով ոչ մի հեռագիր չի ընդունվել, և հեռագրային ընկերության տնօրեններն իրենք են հաղորդման երևակայական տեքստեր հորինել՝ կոահումների և քառսային ազդանշանների հիման վրա։

Իսկական սկանդալ է պայթում։ Եվ նրանք, որ նախորդ օրն ամենից շատ էին ցնծում, հիմա ամենից բարձր են արտահայտում իրենց վրդովմունքը։ Ամբողջ քաղաքը, ամբողջ երկիրն ամաչում է իր անզուսպ ու հապճեպ ցնծությունից։ Իբրև համընդհանուր ցասման զոհ ընտրվում է Սայրուս Ֆիլդը, և նա, որ դեռ երեկ ազգային հերոս էր հռչակվել, Ֆրանկլինի եղբայրն ու Կոլումբոսի ժառանգորդն էր համարվել՝ այսօր իր երբեմնի բարեկամների ու երկրպագուների ձեռքից պետք է թաքնվի իբրև ոճրագործ։ Մի օրում ստեղծված նրա փառքը մի օրում էլ խորտակվում է։ Անընդգրկելի են պարտության չափերը՝ կորսված է դրամագլուխը, կորսված է վստահությունը, և բանի պետք չեկող հաղորդալարը, ինչպես առասպելական ծովային հրեշ, ընկած է օվկիանոսի անհայտ խորքերում։

ՎԵՑԱՄՅԱ ԼՈՒՐԹՅՈՒՆ

Վեց տարի անօգտակար հաղորդալարն ընկած է օվկիանոսի հատակին։ Վեց տարի երկու մայրցամաքների միջև տիրում է առաջվա սառը լռությունը։ Վեց տարի է անցել այն նշանակալի պահից, երբ համե-

բաշխ ռիթմով խփում էր Ամերիկայի ու Եվրոպայի զարկերակը, որոնք մերձեցման կարճ, հառաչանքի պես կարճ պահին մի քանի հարյուր բառ փոխանակեցին և վերստին, ինչպես նախորդ հազարամյակներում, մնացին անհաղթահարելի տարածությամբ անջատված։ Տասնիններորդ դարի ամենահանդուգն ձեռնարկումը, որ դեռ երեկ իրողություն էր, վերստին առասպել դարձավ։ Իհարկե, ոչ ոքի մտքով չի անցնում կրկնել կիսով չափ հաջողված փորձը. ծանր պարտությունը կաթվածահար է արել բոլոր ուժերը, խորտակել բոլոր հույսերը։

Ամերիկայում ամեն ինչ կլանված է Հյուսիսի և Հարավի պատերազմով, Անգլիայում ժամանակ առ ժամանակ հանձնաժողովների նիստեր են արվում, բայց նրանցից երկու տարվա ժամանակ պահանջվեց կայացնելու համար այն ստույգ վճիռը, որ ստորջրյա հաղորդալարի տեղադրումը տեսականորեն հնարավոր է։ Այս ակադեմիական եզրահանգման և դրա իրագործման միջև ընկած է երկար ճանապարհ, որի վրա ոչ ոք չի ուզում ոտք դնել։ Վեց տարի գործնական փորձեր վերսկսելու մասին մտածում են նույնքան քիչ, որքան օվկիանոսի հատակին ննջող անօգտակար հաղորդալարի։

Բայց վեց տարին, որ լոկ մի աննշան ակնթարթ է պատմության շարժման վիթխարի ընթացքի մեջ, ամբողջ հազարամյակի արժեք ունի էլեկտրատեխնիկայի նման նորահայտ մի գիտության համար։ Ամեն մի տարի, ամեն ամիս նոր հայտնագործում է բերում։ Դինամոմետրերը դառնում են ավելի ու ավելի հզոր ու կատարյալ, ավելի է ընդլայնվում դրանց գործադրման սպարեզը, ավելի ստույգ սարքավորումներ են ստեղծվում։ Հեռագրային գծերը միացնում են մայրցամաքների արդեն ամենահեռավոր ծայրամասերը, արդեն հաղորդալար է քաշված Միջերկրական ծովի միջով, որ Եվրոպան միացնում է Աֆրիկայի հետ, և տարեց տարի փարատվում է այն ցնորային մշուշը, որ այնքան երկար ժամանակ պարուրում էր անդրօվկիանոսյան հաղորդալար անցկացնելու գաղափարը։ Անխուսափելիորեն պետք է գա այն ժամը, երբ փորձը պետք է կրկնվի։ Միայն թե չկա այն մարդը, որ կարողանա հին մտահղացմանը նոր եռանդ ներշնչել։

Եվ հանկարծ այդ մարդը հայտնվեց։ Ո՞վ է նա։ Նույն Սայրուս Ֆիլդը՝ լեցուն նախկին հավատով և նախկին համոզումով։ Սայրուս Ֆիլդը, որին չկարողացան կոտրել ո՛չ լռելյայն արհամարհանքը, ո՛չ չարամիտ հարձակումները։ Երեսուներորդ անգամ նա կտրում է օվկիանոսը և վերստին հայտնվում Լոնդոնում։ Նրան հաջողվում է վերանորոգել հին թույլտվությունը և նոր դրամագլուխ հավաքել վեց հարյուր հազար ֆունտ

ստեռլինգի չափով։ Կա, վերջապես, և այն վիթխարի նավը, որի մասին առաջ միայն երազել կարելի էր՝ հռչակավոր քառախողովակ «Գրեյտ Իստերնը», քսաներկու հազար տոննա ջրատարողությամբ։ Իզաբար Բրյունելի կառուցած այդ նավը մեն-մենակ կարող է կրել հազորդալարի ամբողջ վիթխարի բեռը։ Եվ, հրաշք հրաշքի ետևից. հենց 1865-ին «Գրեյտ Իստերն» շոգենավը, որի չափազանց համարձակ կառուցվածքն առաջ էր անցել իր ժամանակից, չի կարողանում կիրառություն գտնել և կանգնած է անգործ։ Երկու օրվա մեջ նավը գտնվում է և վերասարքավորվում։

Այն, ինչ առաջ անհնարին դժվար էր, հիմա դառնում է դյուրին ու թեթև։ 1865-ի հուլիսի 23-ին հսկայական նավը, բարձված նոր հազորդալարով, լքում է Թեմզայի ափերը։ Ու թեև առաջին փորձը չի հաջողվում, որովհետև նպատակակետին հասնելուց երկու օր առաջ հազորդալարը կտրվում է, և անհագ օվկիանոսը կլանում է ևս վեց հարյուր հազար ֆունտ ստեռլինգ, մարդկանց հավատը տեխնիկայի հանդեպ այնքան մեծ է, որ ձախողանքը չի ընկճում նրանց։ Եվ երբ 1866-ի հուլիսի 13-ին «Գրեյտ Իստերնը» նորից է օվկիանոս դուրս գալիս՝ այս անգամ ամեն ինչ պսակվում է լիակատար հաջողությամբ։

Հիմա արդեն հեռագրային գիծն աշխատում է հստակ ու անթերի։ Մի քանի օր անց գտնվում է հին, մոռացված հազորդալարը, և արդեն երկու գիծ են միացնում Հին և Նոր Աշխարհները։ Երեկվա հրաշքը դարձավ այսօրվա իրողություն, և այդ պահից սկսած ժամանակի զարկերակը միաժամանակ է խփում ամբողջ աշխարհում։ Բոլոր երկրներն ու ժողովուրդները միաժամանակ լսում ու հասկանում են միմյանց հողագնդի բոլոր ծայրերում։ Եվ մարդկությունն իր սեփական ստեղծագործական ուժերի շնորհիվ դարձավ աստվածայնորեն ամենազոր և ամենահաս։

Հաղթանակը ժամանակի և տարածության նկատմամբ առմիշտ միացրեց մարդկանց։ Եվ նրանց ապագան կլիներ սքանչելի, եթե չլիներ այն ճակատագրական կուրացումը, որ նրանց ստիպեց նորից ու նորից խորտակել այդ վիթխարի միասնությունը և նույն այն միջոցները, որոնցով նրանք հաստատել էին իրենց տիրապետությունը բնության վրա, գործի դնել իրենց իսկ ոչնչացման համար։

ՊԱՅՔԱՐ ՀԱՆՈՒՆ ՀՈՂԱԳՆԴԻ ԲԵՎԵՌԻ

Պատվաբեր Սկոտ
1912 թվականի հունվարի 16.

ՊԱՅՔԱՐ ՀԱՆՈՒՆ ՀՈՂԱԳՆԴԻ

Բսաներորդ դարը նայում է այլևս գաղտնիքներ չունեցող աշխարհին։ Բոլոր երկրները հետազոտված են, նավերը ճեղքում են ամենահեռավոր ծովերի ալիքները։

Վայրեր, որ մի սերունդ առաջ ննջում էին երանելի անհայտության

մեջ՝ վայելելով իրենց ազատությունը, հիմա ծառայում են Եվրոպայի կարիքներին. մինչև Նեղոսի ակունքները, որ որոնում էին այնքան երկար, հիմա շոգենավեր են հասնում. Վիկտորիա ջրվեժը, որ կես դար առաջ էր երևացել եվրոպացու աչքին, այժմ խոնարհաբար էլեկտրականություն է արտադրում. վերջին անմատչելի թավուտները՝ ամազոնյան անտառները, հատված են, և ազուցված է միակ կուսական երկրի՝ Տիբեթի գոտին։

Հնօրյա քարտեզների ու գլոբուսների վրայից «Terra incognita»[1] բառերն անհետացել են քաջագիտակ մարդկանց մակագրություններ ներքո։ Քսաներորդ դարի մարդը ճանաչում է իր մոլորակը։ Մարդկային պըրպըտող միտքը նոր ուղիներ որոնելու համար արդեն ստիպված է իջնել ծովի խորքերի զարմանահրաշ արարածների մոտ կամ մխրճվել երկնքի անեղր ոլորտները։ Կուսական վիճակում մնացել են միայն օդային ուղիները, բայց պողպատե թռչունները միմյանց առաջ կտրելով թափանցում են երկինք, ձգտելով դեպի նոր բարձունքներ, դեպի նորահայտ հեռուներ, քանի որ երկրում բոլոր հանելուկները գտնվել են և երկրային հայտնագործումները՝ սպառվել։

Բայց մի գաղտնիք՝ ընդհուպ մինչև մեր դարի սկիզբը, հողագունդն ամոթխածաբար թաքցնում էր մարդկությունից. իր խոշտանգված մարմնի երկու փոքրիկ վայր պահպանում էր իր իսկ ծնունդ տված մարդ արարածների ագահ հայացքից։ Դրանք Հյուսիսային և Հարավային բևեռներն են, երկու գրեթե գոյություն չունեցող, գրեթե անառարկայական կետեր՝ առանցքի երկու ծայրերը, որոնց շուրջը երկրագունդը պտտվում է հաղարամյակներով, նա պահպանում է անբիծ ու անձեռակերտ։ Սառցե հաստաբետ զանգվածներով նա ծածկել է իր այդ վերջին գաղտնիքը, հավերժական ձմռանը պահապան է կարգել՝ սատարելու դրանք մարդկային ագահությունից։ Սառնամանիքն ու բուքը տիրաբար հսկում են մուտքը, սարսափն ու մահացու վտանգը ետ են վանում հանդուգն որոնողներին։

Միայն արևին է վիճակված թեթևակի հայացք նետել այդ ամրոցի վրա, մարդու առաջ արգելք է դրված։

Տասնյակ տարիներ մի արշավախումբը փոխարինում է մյուսին։ Ոչ մեկը նպատակին չի հասնում։ Ինչ-որ տեղ, միայն վերջերս գտնված սառցեղեն-բյուրեղապակե դագաղում երեսուներեք տարի հանգչում է շվեդացի ինժեներ Անդրեի դին. նրա՝ այն քաջաց քաջի, որ կամեցավ օդապարիկով

---

[1] Անհայտ երկիր (լատ.)։

հասնել բևեռ ու չվերադարձավ։ Բոլոր փորձերը փշրվում են սառցակուռ շողշողուն պարիսպներին դիպչելով։ Հազարամյակներ, ընդհուպ մինչև մեր օրերը, երկիրն այստեղ թաքցնում է երեսը, հաղթականորեն ետ մղելով մահկանացուների կատաղի գրոհները։ Կուսական մաքրությամբ նա պահում է իր գաղտնիքը հետաքրքրասեր աշխարհից։

Բայց պատանի քսաներորդ դարն անհամբերությամբ շփում է ձեռքերը։ Նա լաբորատորիաներում կոփել է մի նոր զենք ու զրահ։ Արդելքները միայն բորբոքում են նրա կիրքը։ Նա ուզում է իմանալ ամբողջ ճշմարտությունը, և նրա առաջին փոկ տասնամյակը կամենում է նվաճել այն, ինչ չէին նվաճել հազարամյակները։

Առաջին հանդուգն մարդկանց արիությանը միանում է ազգերի մրցակցությունը։ Նրանք պայքարում են ոչ միայն բևեռի, այլև պատվի համար այն դրոշի, որին կվիճակվի առաջինը փողփողալ նորահայտ երկրի վրա։ Բոլոր մայրցամաքներում արշավախմբեր են ստեղծվում։ Մարդկությունը սպասում է անհամբերությամբ, քանի որ գիտե՝ պայքարը մղվում է հանուն կենսական տարածության վերջին գաղտնիքի բացահայտման։ Ամերիկայից Կուկն ու Պիրին բռնում են Հյուսիսային բևեռի ուղին, իսկ դեպի Հարավային բևեռ ուղևորվում են երկու նավ. մեկն առաջ է տանում նորվեգացի Ամունդսենը, մյուսը՝ անգլիացի նավապետ Սկոտը։

ՍԿՈՏԸ

Սկոտն անգլիական նավատորմի նավապետ է, շատերից մեկը. նրա կենսագրությունը համընկնում է իր ծառայության ցուցակին. պարտականությունները կատարել է բարեխղճորեն, որով շահել է վերադասների խրախուսանքը, մասնակցել է Շեկլտոնի արշավախմբին։ Մի առանձին հերոսություն, սխրանքներ չեն նշված։ Նրա դեմքը, լուսանկարներից դատելով, չի տարբերվում հազարավոր, տասնյակ հազարավոր ուրիշ անգլիական դեմքերից՝ սառը, կամային, հանգիստ, ասես թաքնված եռանդով քանդակված։ Մոխրագույն աչքեր, սեղմված շուրթեր։ Ռոմանտիկական ոչ մի դիմագիծ, հումորի ոչ մի առկայծում, միայն երկաթե կամք և գործնական ողջախոհություն։ Ձեռագիրը՝ սովորական անգլիական ձեռագիր, առանց նրբերանգների, վստահ ու թափով։ Ոճը՝ հստակ ու ստույգ, փաստերի նկարագրության մեջ՝ արտահայտիչ, բայց և այնպես չոր ու գործնական, ասես զեկուցագրի ոճ։ Սկոտն անգլերեն գրում է այնպես, ինչպես Տակիտոսը գրում էր լատիներեն՝ չտաշված քարաբեկորներով։ Ամեն ինչ ներկայացնում է մի մարդու, որ աչքի չի ընկնում

երևակայությամբ, բայց գործնական նպատակի մոլեռանդ է, ուրեմն և՝ ճշմարիտ անգլիացի, որի մեջ, ինչպես իր հայրենակիցների մեծ մասի, նույնիսկ հանճարը տեղադրվում է պարտաճանաչության խիստ շրջանակներում։ Անգլիական պատմությանը հայտնի են հարյուրավոր այդպիսի Սկոտներ։ Նրանք են, որ նվաճել են Հնդկաստանը և Արշիպելագի անանուն կղզիները, նրանք են գաղութացրել Աֆրիկան և ամբողջ աշխարհում ամենուրեք կոիվներ մղել մշտապես նույն երկաթե ուժով, նպատակների ընդհանրության նույն գիտակցությամբ և նույն սառը, ինքնամփոփ դեմքով։

Պողպատի պես ամուր է նավապետ Սկոտի կամքը. դա երևում է դեռ նախքան սխրագործությունը կատարելը։ Նա մտադիր է ավարտել այն, ինչ սկսել էր Շեկլտոնը։ Նա արշավախումբ է ստեղծում, բայց միջոցները չեն բավականացնում։ Դա նրան ետ չի պահում։ Վստահ իր հաջողությանը, նա զոհաբերում է ունեցվածքը և խրվում պարտքերի մեջ։ Կինը նրան արու զավակ է ընծայում, բայց նա, Հեկտորի[1] նման, առանց տատանվելու հրաժեշտ է տալիս իր Անդրոմաքեին։ Շուտով գտնվում են բարեկամներ և ընկերներ, երկրային ոչ մի խոչընդոտ այլևս չի կարող սասանել նրա կամքը։ «Terra Nova»[2] է կոչվում այն տարօրինակ նավը, որ իրեն պետք է հասցնի Սառուցյալ օվկիանոսի ծայրը. տարօրինակ այն պատճառով, որ Նոյի տապանի նման լեցուն է ամեն տեսակի կենդանի արարածներով և միաժամանակ դա նաև լաբորատորիա է, ուր կան մեծաթիվ գրքեր և հազարավոր ամենաստույգ սարքավորումներ, և քանի որ այդ ամայի, անբնակ աշխարհը գնալիս պետք է տանել ամեն ինչ, որ պետք է գալիս մարդուն մարմնի ու հոգու կարիքների համար, շոգենավի մեջ առաջին անհրաժեշտության առարկաները՝ մորթեղեն, անասուններ և այլն, զարմանալիորեն համադրվում են ամենաբարդ, գիտության վերջին խոսքին համապատասխանող սարքավորումների հետ։ Եվ շոգենավի նույն այդ զարմանալի երկվությունը բնորոշ է նաև նավապետ Սկոտի բռնած գործին՝ արկած, բայց մտածված, ծանրությեթև արված, ինչպես առևտրական գործարք. անվեհերություն, բայց զուգորդված նախազգուշական ամենահմուտ միջոցների հետ. բոլոր մանրամասների ստույգ կանխատեսում՝ ենթադրվող ամեն մի պատահականության դեմ առ դեմ։

---

[1] Հոմերոսի «Իլիականի» գլխավոր հերոսներից մեկը՝ Հեկտորը, Տրոյայի թագավորը, Անդրոմաքեի ամուսինը, Աքիլլեսի ախոյանը։

[2] Նոր երկիր (լատ.)։

1910 թվականի հունիսի 1-ին արշավախումբը լքում է Անգլիան։ Ամառային այդ ժամանակներում անգլոսաքսոնական կղզին շողում է գեղեցկությամբ։ Մարգագետինները պատված են հյութալի կանաչով, արևը լույս ու ջերմություն է թափում մշուշով չմռայլված, պարզկա կրզղու վրա։ Ծովագնացները թախիծով են նայում հետզհետե անէացող ափերին, քանի որ գիտեն՝ տարիներով, զուցեև առմիշտ են հրաժեշտ տալիս արևին ու տաքին։

Վերևում, կայմի ծայրին փողփողում է անգլիական դրոշը, և նրանց սփոփում է այն միտքը, որ իրենց աշխարհի այդ խորհրդանիշը իրենց հետ միասին լողում է դեպի նվաճված երկրագնդի միակ չնվաճված կետը։

ԱՆՏԱՐԿՏԻԿԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

Նոր Զելանդիայում կարճատև հանգիստ առնելուց հետո, հունվարին նրանք հասնում են հավերժական սառույցների ծայրին և այնտեղ տուն կառուցում ձմեռելու համար։ Դեկտեմբերն ու հունվարն այնտեղ ամառային ամիսներ են համարվում, քանի որ տարվա մեջ դա միակ ժամանակն է, երբ արևը մի քանի ժամ փայլում է կապարաճերմակ երկնքում։

Տան պատերը շարվում են զերաններից, ինչպես նախորդ արշավախմբերի կայաններում, բայց ներսում զգացվում են նոր դարի շորշոփները, նոր դարի նվաճումները։ Եթե առաջ ձմեռողները նստում էին կիսախավարում՝ ծխացող և վորվանի[1] հոտ արձակող լապտերի լույսով և անարև օրերի միօրինակությունից հոգնատանջ, տրտմությամբ նայում միմյանց, ապա քսաներորդ դարի այս մարդիկ իրենց շորս պատի ներսում վայելում էին ամբողջ աշխարհը՝ փոքրացած չափսերով, գիտության բոլոր նվաճումները։ Ացետիլենե այրոցները պայծառ լույս են արձակում, կինոսարքավորումը, ասես կախարդանքով, վերարտադրում է հեռավոր երկրների բնանկարները, արևադարձային բնության պատկերները, պիանոլան երաժշտություն է վերարտադրում, գրամոֆոնը՝ մարդկային ձայնը, գրադարանը տալիս է գիտելիքներ։ Սենյակներից մեկում տկտկում է գրամեքենան, մյուս՝ մութ սենյակում լուսանկարչական ժապավեններ և գունավոր լուսանկարներ են երևակում։ Երկրաբանը ապառների ռադիոակտիվությունն է հետազոտում. կենդանաբանը բռնված պինգվիններին վրա պարադիտների նոր տեսակ է ի հայտ բերում, օդերե-

---

[1] Ծովային կենդանու ճարպ։

վութաբանական փորձերին հաջորդում են ֆիզիկայի փորձերը. ամբողջ արշավախմբին աշխատանք է հանձնարարված ութ ամսում կատարելու համար, և գործի խելացի դրվածքի շնորհիվ յուրաքանչյուրի անձնական կենսափորձը դառնում է բոլորի սեփականությունը՝ քանի որ այս երեսուն մարդը բևեռային սառույցի ու սառնամանիքի մեջ ամեն երեկո միմյանց համար կարդում են համալսարանական դասախոսություններ, յուրաքանչյուրը ջանում է իր գիտելիքները հաղորդել մյուսին, և մտքերի աշխույժ փոխանակության ընթացքում ընդլայնվում է նրանց աշխարհընկալումը։ Նեղ մասնագիտական գիտելիքները չեն ամփոփվում բարձրամիտ միայնության մեջ, այլ ձգտում են ըմբռնել առաջադիմության միասնական մղումով։

Կորած անծայրածիր նախաստեղծ աշխարհում, ժամանակից և տարածությունից դուրս, երևսուն մարդ մտքեր են փոխանակում քսաներորդ դարի վերջին նվաճումների մասին և այստեղ, այս պատերի մեջ, աշխարհի առաջադիմությունից ոչ մի ժամ, ոչ մի վայրկյան ետ չեն մնում։ Խոբապես հուզիչ է կարդալ, թե ինչպես այդ խստաբարո մարդիկ, գիտնականներ, հրճվում են ամանորյա տոնածառով, զվարճանում իրենց հրատարակած հումորիստական թերթիկի՝ «South Pol Times»-ի[1] կատակներով. ինչպես ամեն մի փոքր բան՝ ջրի երես ելած կետ ձուկը կամ ձիու սայթաքելը նրանց համար դառնում է երևույթ, այնպես էլ ամեն մի անբերևակայելիորեն վիթխարի երևույթ՝ հյուսիսափայլը, կատաղի սառնամանիքը, հրեշավոր մենակությունը, դառնում է սովորական ու առօրեական։

Այս ամենի հետ նրանք մերթ ընդ մերթ դահուկային արշավի են դուրս գալիս ոչ մեծ շառավղով։ Փորձարկում են օդասահնակները, դահուկներով քայլել են սովորում, վարժեցնում են շներին, պաշար են տեսնում մեծ ճանապարհորդության համար։ Բայց և այնպես դանդաղ, շա՜տ դանդաղ են պոկվում օրացույցի թերթիկները, և դեռ հեռու է ամառը (դեկտեմբերը), երբ շոգենավը սառույցը ճեղքելով կհասնի իրենց և տանից նամակներ կբերի։ Հիմա արդեն, ձմռան խստաշունչ օրերին, նրանք փոքր խմբերով կարճ անցումներ են կատարում կոփվելու համար, փորձարկում են վրանները, ստուգում փորձերի արդյունքները։ Ամեն ինչ չէ, որ հաջողվում է, սակայն ամեն անհաջողություն միայն բորբոքում է մարդկանց։ Երբ հոգնած ու մրսած բևեռախույզները դառնում են կայան՝ նրանց դիմավորում են հրճվանքի կանչերով և օջախի ջերմությամբ,

---

[1] «Հարավային բևեռի թայմս» (անգլ.)։

և յոթանասունյոթ աստիճան լայնության վրա գտնվող այդ տաքուկ խրճիթը մի քանի օրվա զրկանքներից հետո թվում է լավագույն կացարանը աշխարհիս երեսին։

Բայց ահա արշավախմբերից մեկը վերադառնում է արևմուտքից, և նրա բերած լուրը մռայլ լռության է մատնում ամբողջ տունը։ Թափառումների ժամանակ ուղևորները դեմ են առել Ամունդսենի ձմեռանոցին, և Սկոտն իսկույնևեթ հասկանում է, որ սառնամանիքից ու տարերային վտանգներից բացի կա նաև մի հակառակորդ, որ իր հետ վիճարկում է առաջնությունը և նա կարող է իրենից առաջ կորզել այս կամակոր հողագնդի գաղտնիքը։ Նա զննում է քարտեզը, գտնում Ամունդսենի ձմեռանոցի տեղը։ Սկոտի գրառումներում զգացվում է այն տագնապը, որ պաշարել է նրան իրողությունը պարզելիս՝ Ամունդսենի կայանը հարյուր տասը կիլոմետր ավելի մոտ է բևեռին, քան իրենը։ Նա ցնցված է. բայց արիությունը չի կորցնում։ «Հառա՜ջ, ի փառս հայրենիքի»,— հպարտորեն գրում է նա օրագրում։

Դա Ամունդսենին վերաբերող միակ հիշատակությունն է օրագրում։ Նրա անունն այլևս չի հանդիպում։ Բայց կասկած չկա, որ այդ օրից ի վեր մռայլ մի ստվեր է ընկնում սառույցների մեջ ընկած այդ միայնակ գերանակապ տան վրա և որ այդ անունը ամեն ժամ, քուն թե արթմնի, անհանգստացնում է նրա բնակիչներին։

ԱՐՇԱՎԱՆՔ ԴԵՊԻ ԲԵՎԵՌ

Խրճիթից մի մղոն հեռու, բարձունքի վրա դիտակետ է տեղադրված։ Այնտեղ, ուղղաձիգ բլուրի վրա, դեպի անտեսանելի թշնամին ուղղված հրանոթի պես, միայնակ մի սարքավորում է դրված՝ մոտեցող արևի ջերմային առաջին տատանումները չափելու համար։ Օր օրի նրանք սպասում են եղանակի ջերմացմանը։ Վաղորդյան երկնքում արդեն խաղում են վառ, հրաշալի ցոլքերը, բայց արևի սկավառակը դեռևս չի բարձրանում հորիզոնից։ Լույսի այդ արտափայլումը՝ երկար սպասված լուսատուի հայտնվելու նախանշանը, բորբոքում է նրանց անհամբերությունը։ Վերջապես, խրճիթում լսվում է հեռախոսային զանգը, և դիտակետից հաղորդում են, որ արևը դուրս է եկել, մթամած շատ ամիսներից հետո նա բարձրացրել է գլուխը բևեռային գիշերվա մեջ։ Նրա լույսը դեռ թույլ է ու աղոտ, նրա ճառագայթները հազիվհազ ջերմացնում են սառնաշունչ օդը, հազիվ նկատելի տատանվում է չափող սարքավորման սլաքը, բայց արևի տեսքն արդեն մի երջանկություն է։

Արշավախումբը պատրաստվում է տենդագին արագությամբ, որպեսզի ոչ մի րոպե չկորցնի այդ կարճատև բուսավոր ժամանակից, որ նշանակում է և՛ գարուն, և՛ ամառ, և՛ աշուն, թեև մեր չափավոր հասկացողությամբ դա իստաշունչ ձմեռ է միայն։

Առջևից սուրում են օդաստահնակները։ Դրանցից հետո՝ շներ և սիբիրյան ձիեր լծած նարտաններ։ Ճանապարհը շրջահայացորեն բաժանված է փուլերի. ամեն մի երկօրյա ուղեբաժնից հետո տարքվում է պահեստ, ուր վերադարձի համար թողնվում են հագուստ, ուտելիք և ամենագրավվորը՝ նավթ, խտացված վառելանյութ՝ անվերջանալի սառնամանիքից պաշտպանվելու համար։

Նրանք արշավի են երել մի քանի, բայց պետք է վերադառնան հերթով, առանձին խմբերով, որպեսզի ամենավերջին փոքր ջոկատին (այն ընտրանուն, որին վիճակված է նվաճել բևեռը) բաժին հասնի որքան կարելի է շատ կենսամթերք, ամենաթարմ շները և ամենալավ նարտաններ։ Արշավանքի ծրագիրը մշակված է հմտորեն, հաշվի են առնված նույնիսկ ձախորդությունները, որոնք, իհարկե, անպակաս են լինում։ Երկու օրվա ճանապարհից հետո օդաստահնակները ջարդվում և դեն են նետվում իբրև ավելորդ բեռ։ Ձիերը նույնպես չեն արգելակում արշավախմբի հույսերը, բայց այս անգամ կենդանի բնությունը հաղթում է տեխնիկային, քանի որ ուժահատ ձիերին գնդակահարում են և շներին տալիս իբրև կաղդուրիչ կեր։

1911 թվականի նոյեմբերի 1-ին արշավախմբի մասնակիցները բաժանվում են ջոկատների։ Լուսանկարներում երևում է այդ զարմանալի քարավանը. նախ երեսուն ուղեղոր, հետո՝ քսան, հետո՝ տասը, և վերջապես միայն հինգ մարդ է շարժվում նախատեսված մեռյալ աշխարհի ճերմակ անապատով։ Առջևից գնում է մշտապես մեկը՝ նման գաղանի, փաթաթված մորթիների մեջ, որոնց տակից երևում են միայն աչքերն ու մորուքը. մորթու մեջ փաթաթված նրա ձեռքը բռնել է սանձն այն ձիու, որ ետևից քարշ է տալիս ծանր բեռնված սահնակը։ Նրան հետևում է երկրորդը՝ նույնպիսի դիրքով ու հագուստով, հետո՝ երրորդը, քսան սև կետ, որ ոլոր-մոլոր գծով ձգվում են անեզր կուրացուցիչ սպիտակի միջով։ Գիշերը նրանք խրվում են վրաններ մեջ, ձյունե պարիսպներ են քաշում՝ ձիերին քամուց պաշտպանելու համար, իսկ առավոտյան վերստին շարունակում են միապաղաղ և անուրախ ճանապարհը, շնչելով սառնաշունչ օդը, որը հազարամյակների ընթացքում առաջին անգամն է թափանցում մարդկային թոքերը։

Դժվարությունները բազմապատկվում են։ Եղանակը մռայլվում է, քառասունի փոխարեն նրանք երբեմն հազիվ տասներեք կիլոմետր են անցնում, մինչդեռ ամեն մի օրը թանկ է այն պահից ի վեր, երբ նրանց հայտնի է դարձել, որ իրենց աչքին անտեսանելի ինչ որ մեկ ուրիշը ճերմակ անապատով դեպի նույն նպատակակետն է շարժվում։

Ամեն մի մանրուք հզի է վտանգով։ Շունը փախել է, ձին հրաժարվում է ուտելուց՝ այս ամենը տագնապ է հարուցում, քանի որ այդ միայնության մեջ սովորական արժեքները ձեռք են բերում մի այլ, նոր նշանակություն։ Այն ամենը, ինչ օգնում է պահպանել մարդկային կյանքը, թանկ է ու անփոխարինելի։ Գուցեև ձիու սմբակի վիճակից է կախված փառքը։ Ամպամած եղանակը, բուքը կարող են տապալել անմահ սրխրանքը։ Եվ դեռ ուղևորների առողջությունը վատանում է. ոմանք տառապում են ձնակուրությամբ, ոմանց ձեռքն ու ոտքը սառել են։ Չիերը, որոնց կերը ստիպված են նվազեցնել, օր օրի թուլանում են և վերջ ի վերջո իսպառ ուժահատվում։ Աշխարհից կտրված երկու տարվա համատեղ կյանքում այդ կենդանիները դարձել են ընկերներ, որոնցից ամեն մեկին յուրաքանչյուրը գիտե անունով և փազաքշել է բազմիցս։ Եվ այդ տոկուն կենդանիներին սպանելու ծանր պարտականությունը պետք է ի կատար ածվի։ «Սպանդանոցի ճամբար» — այսպես են կոչում այդ տրրտմալի վայրը։ Արշավախմբի մի մասը բռնում է վերադարձի ճամփան, մյուսները հավաքում են բոլոր ուժերը՝ կատարելու համար ևս մի վերջին տանջալի անցում սառցադաշտի միջով, բևեռը դոտևորող տհեղ պատնեշի վրայով, որ հաղթահարել կարող էր մարդկային վիթխարի կամքը միայն։

Ավելի ու ավելի դանդաղ են շարժվում, քանի որ ձյունակեղևն այստեղ անհարթ է, և նարտաները պետք է ոչ թե ձգել, այլ քարշ տալ։ Սրածայր սառցաբեկորները ճեղքում են սահնակների կողափայտերը, չոր, սառցախառն ձյան վրայով քայլելուց մարդկանց ոտքերը վիրավորվել են։ Բայց նրանք չեն ընկրկում. դեկտեմբերի 30-ին հասնում են ութսունյոթ աստիճան լայնության վերջին կետը, որին հասել էր Շեկլտոնը։ Այստեղ վերջին ջոկատը պետք է ետ դառնա, ընտրված հինգ մարդու միայն պետք է թույլ տրվի ճանապարհը շարունակել։ Սկոտն ընտրում է նրանց։ Ոչ ոք չի հանդգնում առարկել նրան, բայց բոլորի համար էլ դժվար է, նպատակին այդքան մոտ լինելով, բռնել վերադարձի ճամփան և ընկերներին զիջել բևեռն առաջինը տեսնելու փառքը։ Բայց ընտրությունն արված է։ Մի անգամ ևս, արիաբար հուզմունքը թաքցնելով, նրանք սեղմում են միմյանց ձեռքերը և բաժանվում տարբեր ուղղություններով։

Երկու փոքրիկ, հազիվ նկատելի ջոկատներ շարժվում են՝ մեկը դեպի հարավ, անհայտությանն ընդառաջ, մյուսը՝ հյուսիս, դեպի հայրենիք։ Ե՛վ մեկ, և՛ մյուս կողմն ընթացող մարդիկ ստեպ-ստեպ ետ են նայում, որպեսզի մի անգամ ևս զգան ընկերների կենդանի ներկայությունը։ Ահա և աչքից կորավ ետ դարձողների ջոկատը։ Դեպի անհայտ հեռուն շարունակում են ճանապարհը՝ Սկոտը, Բաուերսը, Օատսը, Վիլսոնը և Էվանսը։

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԲԵՎԵՌԸ

Տագնապալի են դառնում այս վերջին օրերին գրառումները. բևեռին մոտենալիս դրանք դողդոջում են կողմնացույցի կապույտ սլաքի պես. «Ի՜նչ երկար, անվերջանալիորեն երկա՜ր են սողում ստվերները մեր շուրջը՝ աջ կողմից առաջ ընկնելով, հետո նորից դեպի ձախ սահելով»։ Բայց հուսահատությունը փոխարինվում է հույսով։ Սկոտն ավելի ու ավելի հուզմունքով է նշում անցած տարածությունը. «Եվս միայն հարյուր հիսուն կիլոմետր է մնում մինչև բևեռ, բայց եթե վիճակը չթեթևանա՝ մենք չենք դիմանա», — գրում է նա ուժահատ։ Երկու օր անց. «Հարյուր երեսուն կիլոմետր է մնում մինչև բևեռ, բայց դրանք դժվար են հաղթահարվում»։ Եվ հանկարծ՝ «Միայն իննսունչորս կիլոմետր է մնում։ Եթե մենք չհասնենք էլ՝ դիվայնորեն մոտ կլինենք բևեռին»։ Հունվարի 14-ին հույսը վստահություն է դառնում. «Միայն յոթանասուն կիլոմետր, մենք մոտ ենք նպատակին»։ Հաջորդ օրը՝ հաղթական ցնծություն. նա գրում է գրեթե ուրախությամբ. «Եվս ինչ-որ ողորմելի հիսուն կիլոմետր. կհասնե՞նք ինչ էլ որ լինի»։

Մինչև հոգու խորքը ցնցող գրառումներ, որոնց մեջ զգացվում է բոլոր ուժերի լարում, անհամբեր սպասումի թրթիռ։ Ավարը մոտ է, ձեռքերըն արդեն կարկառվում են դեպի հողագնդի վերջին գաղտնիքը։ Եվս մի վերջին առաջնեռում՝ և արդեն հասել են նպատակին։

ՀՈՒՆՎԱՐԻ ՏԱՍՆՎԵՑԸ

«Բարձր տրամադրություն», — նշված է օրագրում։ Լուսադեմին ճամփա են ելնում սովորականից վաղ, անհամբերությունը նրանց դուրս է քշում քնապարկերից՝ շո՛ւտ, ավելի շուտ տեսնել վիթխարի և ահարկու գաղտնիքը։ Կես օրվա ընթացքում հինգ անվեհերները տասնչորս կիլոմետր անցան ճերմակափայլ անշունչ անապատով. նրանք ուրախ են, նպատակը մոտ է։ սխրանքն ի փառս մարդկության գրեթե ի կատար է

ածված։ Եվ հանկարծ անհանգստություն է պաշարում ուղեկիցներից մեկին՝ Բաուերսին։ Նրա այրվող հայացքը սևեռվում է հալիվ նկատելի մի կետի, որ սևին է տալիս ձյունեղեն անեզր հեռաստանում։ Նա սիրտ չի անում հայտնել իր կռահումը, բայց իրեն տանջում է մի սոսկալի միտք՝ գուցեև դա մարդկային ձեռքով սարքված ճանապարհային նշան է։ Նրանք ջանում են փարատել իրենց ահավոր կանխազգացումը։ Փորձում են համոզել իրենց,— Ռոբինզոնի նման, որը, անմարդաբնակ կղզում ուրիշի ոտնահետքեր տեսնելով, ներշնչում էր իրեն, թե դրանք իր իսկ ոտնահետքերն են.— թե իրենց տեսածը սառցի մեջ բացված ճեղք է կամ գուցե ինչ-որ ստվեր։ Հուզմունքից դողալով նրանք մոտենում են՝ դեռ էլի ջանալով խաբել իրենց, թեև բոլորն արդեն կռահել են դառն ճշմարտությունը՝ նորվեգները, Ամունդսենն իրենցից առաջ է ընկել։

Շատ չանցած վերջին հույսը փշրվում է՝ բախվելով անհերքելի փաստին. սև դրոշ է փողփողում ուրիշի լքած կայանի վրա։ Սահնակի և շան թաթերի հետքերը փարատում են բոլոր կասկածները. այստեղ խփված է եղել Ամունդսենի ճամբարը։ Կատարվել է մի չլսված, երևակայությունից դուրս բան. երկրագնդի բևեռը՝ հազարամյակներով մարդու երես չտեսած, հազարամյակներով, սկզբների սկզբից մարդկային հայացքի համար անմատչելի բևեռը ժամանակի մի աննշան հյուլեի՝ միայն մի ամսվա ընթացքում հայտնագործվել է երկու անգամ։

Եվ իրենք ուշացել են, միլիոնավոր ամիսների մեջ ուշացել են մի միակ ամիս, երկրորդն են բևեռին հասել աշխարհում, որի աչքին առաջինը լինել ամեն ինչ է, իսկ երկրորդը՝ ոչինչ։

Զուր են բոլոր ջանքերը և անհեթեթ՝ կրած զրկանքները, անմիտ են երկար շաբաթներ, տարիներ փայփայած հույսերը։ «Ինչի՞ համար էին այս բոլոր ջանքերը, բոլոր զրկանքներն ու տառապանքները, — գրում է Սկոտն օրագրում։ — Ունայն տենչանքներ, որոնց վախճանը եկավ հիմա»։

Արցունքոտվում են նրանց աչքերը և, չնայած մահացու հոգնությանը, չեն կարողանում քնել։ Վհատված, ահեղաշունչ լռության մեջ, ասես դատապարտյալներ, նրանք մի վերջին անցում են կատարում դեպի բևեռը, որ հույս ունեին նվաճել այնպես հաղթականորեն։ Ոչ ոք ոչ մեկին չի փորձում մխիթարել. անխոս շարունակում են մղվել առաջ։

Հունվարի 18-ին նավապետ Սկոտը իր ուղեկիցներով հասնում է բևեռ։ Սխրանքն առաջինը կատարելու հույսն այլևս չի կուրացնում նրան, և նա անտարբեր հայացքով զննում է տրտմալի բնանկարը։ «Աչքի համար ոչինչ չկա, ոչինչ, որ տարբերվի վերջին օրերի ահավոր միօրինա-

կությունից», — ահա ամբողջը, ինչ Ռոբերտ Ֆ. Սկոտը գրել է բևեռի մասին։ Միակ բանը, որի վրա կանգ է առնում նրանց ուշադրությունը, ստեղծված է ոչ թե բնության, այլ ախոյանի ձեռքով. Ամունդսենի վրանը՝ նորվեգական դրոշով, որ վսեմորեն փողփողում է մարդկության նվաճած ամրոցի վրա։ Նրանք գտնում են կոնկիստադորի նամակը՝ հասցեագրված այն անհայտ մարդուն, որ երկրորդը ոտք կդնի բևեռին. նամակն այն խնդիրքով, որ դա ուղարկվի նորվեգական Հակոն թագավորին։ Սկոտը հանձն է առնում ծանրագույն պարտքի կատարումը՝ մարդկության առաջ վկայել ուրիշի սխրանքը, որ իր համար էր տենչում։

Նրանք «անգլիական ուշացած դրոշը» տրտմությամբ բարձրացնում են Ամունդսենի հաղթանակի նորվեգական դրոշի կողքին։ Հետո լքում են «իրենց հույսերի դավաճան վայրը»։ Նրանց հետևից փչում է սառնաշունչ քամին։ Մարգարեական նախազգացումով Սկոտը գրում է օրագրում. «Սոսկալի է մտածել վերադարձի ճանապարհի մասին»։

ԿՈՐԾԱՆՈՒՄ

Վերադարձը հղի է տասնապատիկ դժվարությամբ։ Բևեռի ուղին կողմնացույցն էր նշում։ Հիմա, վերադարձի ճանապարհին, ամենից գլխավորը սեփական հետքերը չկորցնելն է։ Եվ դա՝ շատ շաբաթների ընթացքում, որպեսզի շեղում չկատարվի պահեստներից, ուր իրենց սպասում է ուտելիք, հագուստ և ջերմություն, որ պարունակում են նավթի բալոնները։ Ամեն անգամ, երբ ձնաբուքը պատում է աչքերը, սարսափը տիրում է նրանց, քանի որ մի սխալ քայլն իսկ հավասարազոր է մահվան։ Եվ դեռ երբեմնի ավյունն էլ չկա. արշավի դուրս գալիս նրանք լի էին ամեռանոցի՝ իրենց անտարկտիդական հայրենիքի ջերմության ու առատության մեջ կուտակած եռանդով։

Եվ ապա՝ կամքի պողպատե զսպանակն է թուլացել։ Դեպի բևեռ գալիս նրանց թեավորում էր ամբողջ աշխարհի նվիրական երազանքը կատարելու մեծ հույսը. անմահական սխրանքի գիտակցությունը նրանց անմարդկային ուժ էր ներշնչում։ Իսկ այժմ նրանք մաքառում են սեփական կյանքը փրկելու համար միայն, իրենց մահկանացու գոյությունը պահպանելու, անփառունակ վերադարձի, որից նրանք հոգու խորքում գուցեև ավելի շուտ վախենում են, քան տենչում։

Ծանր է կարդալ վերադարձի օրերի գրառումները։ Եղանակը գնալով վատանում է, ձմեռը վրա է հասնում սովորականից վաղ, փիրուն ձյունը ոտքի տակ սառչում է՝ հյուսելով վտանգավոր թակարդներ, որոնց

մեջ խրվում են ոտքերը, սառնամանիքը հյուծում է հոգնատանջ մարմինները։ Դա է պատճառը, որ այնքան մեծ է լինում նրանց ուրախությունը, երբ բազմօրյա դեգերումներից հետո հասնում են պահեստի. հույսի առկայծումներ են երևում նրանց խոսքերում։ Եվ ոչինչ ավելի պերճախոս չի վկայում անընդգրկելի միայնության մեջ կորած այդ մարդկանց հերոսությունը, քան այն, որ Վիլսոնը նույնիսկ այստեղ, երբ կյանքը մազից է կախված, անդադրում շարունակում է իր գիտական զննումները և իրենց նաբատաների անհրաժեշտ բեռին ավելացրել է տասնվեց կիլոգրամ հազվագյուտ հանքային ապարներ։

Կամաց-կամաց մարդկային արիությունը նահանջում է բնության ահեղ ճնշման առաջ։ Հազարամյակներով կոփված ուժով բնությունը ոչնչացնում, իր բոլոր զենքերն անողոքաբար թափում է այս հինգ հանդուգն մարդու վրա՝ սառնամանիք, բուք, մինչև ոսկորները թափանցող քամի։ Վաղուց է, ինչ բոլորի ոտքերը վիրավորված են։ Ուտելիքի կրճատված բաժինները և օրական մի անգամ ընդունած տաք կերակուրն արդեն չեն կարող պահպանել նրանց ուժերը։ Ընկերները սարսափով են տեսնում, որ Էվանսը, իրենց միջի ամենաուժեղ մարդը, հանկարծ սկսում է իրեն շատ տարօրինակ պահել. ետ է ընկնում, շարունակ գանգատվում է իրական և հնարովի տանջանքներից։ Նրա խառը, անհասկանալի խոսքերից ընկերները կռահում են, որ նա, ընկնելու կամ տառապանքներին չդիմանալու պատճառով, կորցրել է գիտակցությունը։ Ի՞նչ անել։ Լքե՞լ նրան սառցեղեն անապատում։ Տանե՞լ։ Բայց, մյուս կողմից, անհրաժեշտ է ըստ հնարավորին շուտ հասնել հաջորդ պահեստին, այլապես... Սկոտը սիրտ չի անում թղթին հանձնել այդ բառը։ Փետրվարի 17-ի գիշերվա մեկին տարաբախտ Էվանսը մեռնում է, երբ մեկ օրվա անցում էր մնում մինչև նույն այն «Սպանդանոցի ճամբարը», ուր իրենք առաջին անգամ կարող են կուշտ ուտել մեկ ամիս առաջ այնտեղ սպանած ձիերի միսը։

Ջորսով են շարունակում ճանապարհը, բայց չար ճակատագիրը հետապնդում է նրանց. մոտակա պահեստը դառն հիասթափություն է բերում, այնտեղ շատ քիչ նավթ կա, իսկ դա նշանակում է, որ պետք է ժլատաբար օգտագործել նավթը՝ ամենից անհրաժեշտ, միակ վստահելի զենքը սառնամանիքի դեմ։ Սառցաշունչ, բքաուատ գիշեր անցկացնելուց հետո նրանք արթնանում են ուժասպառ և, դժվարությամբ ելնելով տեղից, շարունակում են քարշ գալ դեպի հյուսիս։ Նրանցից մեկի՝ Օտսի ոտքի մատները սառել են։ Քամին գնալով դառնում է ավելի կտրուկ ու խստաշունչ։ Մարտի 2-ին հերթական պահեստում նրանց նորից դաժան հիասթափություն է սպասում. դարձյալ չափազանց քիչ է վառելանյութը։

Հիմա արդեն վախ է լսվում Սկոտի գրառումներում։ Զգացվում է, թե ինչպես նա ջանում է ճղմել վախը, բայց միտումնավոր հանգստությունի միջով մերթ ընդ մերթ թափանցում է հուսահատության ճիչը. «Այսպես շրջունակվել այլևս չի կարող», կամ՝ «Թող աստված պահապան լինի մեզ։ Մեր ուժերը սպառվում են», կամ՝ «Մեր խաղը ողբերգական վախճան է ունենում» և վերջապես. «Մեզ նախախնամությունը օգնության կհասնի՞ արդյոք։ Մարդկանցից մենք այլևս սպասելիք չունենք»։

Մարդիկ, հուսահատ, ատամները սեղմած, քարշ են գալիս ավելի ու ավելի հեռու։ Օտսն ավելի է ետ ընկնում, նա բեռ է դարձել ընկերների համար։ Կեսօրվա 42 աստիճան սառնամանիքին նրանք ստիպված են դանդաղեցնել քայլերը, և տարաբախտը հասկանում է, որ ինքը կարող է ընկերների կործանման պատճառը դառնալ։ Ուղեկիցներն արդեն պատրաստ են ամենից վատթարին։ Վիլսոնն ամեն մեկին տասական հաբ մորֆի է տալիս, որպեսզի, անհրաժեշտության դեպքում, արագացվի վախճանը։ Մեկ օր ևս նրանք փորձում են հիվանդին տանել իրենց հետ։ Երեկոյան նա ինքն է պահանջում, որ իրեն թողնեն քնապարկի մեջ և իրենց բախտը չկապեն դատապարտված մարդու՝ իր բախտի հետ։ Բոլորը վճռականորեն հրաժարվում են այդ մտքից, թեև իրենց լիակատար հաշիվ են տալիս, որ դա կթեթևացներ իրենց վիճակը։ Օտսը ևս մի քանի կիլոմետր քարշ է գալիս մինչև հերթական կայանը, ուր նրանք անց են կացնում գիշերը։ Լուսադեմին վրանի ճեղքից նայում են դուրս՝ բուքը մոլեգնում է։

Օտսը հանկարծ վեր է կենում։ «Մի բոպեով դուրս գամ, — ասում է ընկերներին։ — Մի քիչ կմնամ դրսում»։ Ընկերների մարմնով դող է անցնում, յուրաքանչյուրը հասկանում է, թե ինչ է նշանակում այդ զբոսանքը։ Բայց ոչ ոք սիրտ չի անում նրան ետ պահել գոնե խոսքով։ Ոչ ոք սիրտ չի անում նրան հրաժեշտի ձեռք մեկնել, բոլորը լռում են երկյուղածությամբ, քանի որ գիտեն՝ էնիսկիլենի դրագունյան գնդի ռոտմիստր Լոուրենս Օտսը հերոսաբար ընդառաջ է գնում մահվան։

Երեք հոգնատանջ, ուժասպառ մարդ շարունակում են քարշ գալ անվերջանալի երկաթե-սառցեղեն անապատում։ Նրանք ոչ ուժ ունեն այլևս, ոչ հույս, ինքնապահպանման բնազդն է նրանց դեռևս ստիպում շարժել ոտքերը։ Բուքը գնալով դառնում է ավելի ահեղ, ամեն մի հերթական պահեստ նոր հիասթափություն է բերում՝ քիչ է նավթը, քիչ է տաքությունը։

Մարտի 21-ին նրանք ընդամենը մի կիլոմետր են հեռու պահեստից, բայց քամին սուրում է այնպիսի սպանիչ ուժգնությամբ, որ վրանից

չեն կարողանում դուրս գալ։ Ամեն երեկո հույս են կապում, որ առավոտյան կհասնեն նպատակին, մինչդեռ պաշարները նվազում են և դրանց հետ՝ վերջին հույսը։ Այլևս վառելիք չկա, իսկ ջերմաչափը ցույց է տալիս քառասուն աստիճան զրոյից ցած։ Ամեն ինչ վերջացավ. նրանք երկու ելք ունեն միայն՝ սառչել կամ սովամահ լինել։ Ութ օր երեք մարդ նեղլիկ վրանում, նախաստեղծ աշխարհի համբության մեջ, մաքառում են անդիմադրելի մահվան դեմ։ 29-ին հանդում են այն համոզման, որ այլևս ոչ մի հրաշք իրենց փրկել չի կարող։

Նրանք վճռում են ոչ մի քայլ չմոտենալ ընդառաջ եկող ճակատագրին և մահն ընդունել հպարտությամբ, ինչպես ընդունել էին իրենց բաժին ընկած ամենայն ինչ։ Նրանք խցկվում են իրենց քնապարկերը, և ոչ մի հառաչանք աշխարհին չի մատնում նրանց մահվան տառապանքը։

ՄԵՌՆՈՂԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Այդ պահին, դեմհանդիման անտես, բայց այնքան մոտիկ մահվանը, նավապետ Սկոտը մտաբերում է իրեն՝ կյանքի հետ առնչող բոլոր կապերը։ Սառցե համբության մեջ, որ դարերով չէր խախտել մարդկության ձայնը, այն դժնդակ ժամերին, երբ հողմը կատաղորեն թափ է տալիս վրանի բարակ պատերը, նա ներթափանցվում է իր ազգի և բովանդակ մարդկության հետ ունեցած ընդհանրության գիտակցությամբ։ Այդ սպիտակ ամայության մեջ նրա հայացքի առաջ միրաժի պես հառնում են այն կերպարները, ովքեր կապված են իր հետ սիրո, հավատարմության, բարեկամության կապերով, և նրա՜նց, նրանց է ուղղում իր խոսքը։ Ցրտից փայտացող մատներով նավապետ Սկոտը գրում է, մահվան ժամին նամակներ է գրում բոլոր ողջերին, ում սիրում է։

Զարմանալի նամակներ։ Ամեն մանր ու չնչին բան հեռու է վանում մոտալուտ մահվան հզոր շնչից, և թվում է, թե դրանք հագեցած են բևեռային երկնքի բյուրեղի պես մաքրամաքուր օդով։ Այդ նամակներն ուղղված են մարդկանց, բայց խոսում են բովանդակ մարդկության հետ։

Գրում է կնոջը։ Նա թախանձում է կնոջը պահպանել որդուն՝ իր ամենաթանկ ժառանգությունը, խնդրում է նրան հեռու պահել անկամությունից ու ծուլությունից և ինքը՝ համաշխարհային պատմության մեծագույն սխրանքներից մեկի կատարողը, անում է այսպիսի խոստովանություն. «Չէ՞ որ դու գիտես, որ ես ինձ պետք է ստիպեի գործունյա լինել, ես մշտապես ունեցել եմ հակում դեպի ծուլությունը»։ Կործանման եզրին

նա չի զղջում իր արածի համար, հակառակը՝ իրախուսում է. «Որքա՜ն շատ բան կարող էի պատմել քեզ այս ճանապարհորդության մասին։ Եվ սա որքա՜ն ավելի լավ է, քան ամեն տեսակ հարմարությունների մեջ տանը նստելը»։

Նա գրում է իր հետ զոհվող ուղեկիցների կանանց ու մայրերին՝ վկայելով նրանց ամուսինների ու զավակների քաջությունը։ Մահվան մահճում նա սփոփում է իր դժբախտության ընկերների ընտանիքներին, համակելով նրանց իր ներշնչված և արդեն իսկ ոչ երկրային հավատը ընկերների հերոսական մահվան վեհության ու փառքի հանդեպ։

Նա հայրենիքում մնացած ընկերներին գրում է իր անձի հանդեպ խորին համեստությամբ, բայց և լիաբուռն հպարտությամբ իր ազգի հանդեպ, որի արժանավոր զավակն է համարում իրեն՝ կյանքի վերջին ժամին։ «Չգիտեմ, ես ընդունա՞կ էի, արդյոք, մեծ հայտնագործություն կատարելու,— խոստովանում է նա,— բայց մեր մահը կծառայի իբրև ապացույց, որ մեր ազգին դեռևս հատուկ են արիությունն ու հաստատակամությունը»։ Եվ այն խոսքերը, որ տղամարդու հպարտությունը և հոգու ողջախոհությունը ամբողջ կյանքում թույլ չէին տվել ասել, այդ խոսքերը նրանից կորզում է մահը։ «Ես չեմ հանդիպել մեկ ուրիշ մարդու, որին ես այնքան սիրեի ու հարգեի, որքան Ձեզ,— գրում է նա իր լավագույն ընկերոջը,— բայց ես երբեք չեմ կարողացել Ձեզ ցույց տալ, թե ինձ համար ինչ է նշանակում Ձեր բարեկամությունը, քանի որ դուք այնքան շատ բան եք տվել ինձ, իսկ ես փոխարենը Ձեզ ոչինչ չեմ կարողացել տալ»։

Եվ նա իր վերջին նամակը, իր նամակներից լավագույնը գրում է անգլիական ժողովրդին։ Նա իր պարտքն է համարում բացատրել, որ Անգլիայի փառքի համար մաքառելիս ինքը զոհվել է ոչ իր մեղքով։ Նա թվում է բոլոր այն պատահական հանգամանքները, որ ծառացան իր ճանապարհին, և մի ձայնով, որին մոտալուտ մահն անկրկնելի պաթոս է հաղորդում, նա բոլոր անգլիացիներին կոչ է անում չլքել մերձավորներին։ Նրա վերջին միտքն իր ճակատագրին չի վերաբերում, վերջին խոսքը վերաբերում է ոչ թե իր մահվանը, այլ ուրիշների կյանքին. «Ի սե՛ր աստծո, մտահոգվեցեք ձեր մերձավորներով»։ Սրանից հետո՝ դատարկ են էջերը։

Մինչև վերջին պահը, քանի դեռ մատիտը չի սահել իր փայտացող մատների արանքից, նավապետ Սկոտը գրառումներ է արել օրագրում։ Այն հույսը, որ իր դիակի մոտ կգտնեն այդ գրառումները՝ անգլիական ազգի արիության վկայությունները, ուժ է ներշնչել նրա գերմարդկային

ջանքերին։ Դիակնացող ձեռքով նրան դեռ հաջողվում է թղթին հանձնել իր վերջին կամքը. «Այս օրագիրը հասցրեք իմ կնոջը»։ Բայց վրա հասնող մահվան անողոք գիտակցությամբ նա ջնջում է «իմ կնոջը» բառերը և վերևում գրում «իմ այրուն»-ահավոր բառերը։

ՊԱՏԱՍԽԱՆԸ

Շաբաթներով սպասում ու սպասում են գերանակապ խրճիթում ձմեռողները։ Սկզբում հանգիստ, հետո թեթևակի անհանգստությամբ, վերջապես, ահագնացող տագնապով։ Երկու անգամ արշավախմբեր են դուրս գալիս օգնության, բայց բուքը նրանց ետ է քշում։

Ամբողջ երկարատև ձմեռն անղեկավար մնացած բևեռախույզներն անց են կացնում իրենց կայանում. աղետի կանխազգացումը ծանրացել է նրանց սրտին։ Այդ ամիսներին նավապետ Ռոբերտ Սկոտի ճակատագիրն ու սխրանքը թաղված են մնում ձյան և լռության մեջ։ Սառույցը նրան և իր մի քանի ընկերներին առել է ապակե դագաղի մեջ, և միայն հոկտեմբերի 29-ին, բևեռային գարնան հետ, արշավախումբ է դուրս գալիս, որ գտնի հերոսների գեթ աճյունը և իբրև կտակ թողած լուրը։ Նոյեմբերի 12-ին նրանք գտնում են վրանը. տեսնում են քնապարկերում սառած դիերը, տեսնում են Սկոտին, որ, մեռնելով, եղբայրաբար գրկել է Վիլսոնին, գտնում են նամակները, փաստաթղթերը։ Թաղում են զոհված հերոսներին։ Մի պարզ ու հասարակ խաչ ձյան բլուրի վրա միայնակ վեր է հառնում սպիտակախառն ամայության մեջ, ուր ընդմիշտ թաղված է հերոսական մեծագործության կենդանի վկայությունը։

Ո՛չ։ Ոչ ընդմիշտ։ Անսպասելիորեն նրանց արած գործին հարություն են տալիս։ Կատարվեց մեր դարի տեխնիկայի հրաշքը։ Բարեկամները հայրենիք են բերում լուսանկարված ապակիները, երևակում և վերստին տեսնում են Սկոտին ու իր ընկերներին արշավի ժամանակ, տեսնում են բևեռային բնության պատկերները, որոնք, նրանցից բացի, միայն Ամունդսենն էր տեսել։ Էլեկտրական լարերով նրա օրագրի ու նամակների լուրը սավառնում է զարմացած աշխարհով մեկ, անգլիական թագավորը տաճարում ծնկի է գալիս ի պատիվ հերոսների հիշատակի։

Եվ այսպես, այն սխրագործությունը, որ թվում էր իզուր, դառնում է կենարար, անհաջողությունը՝ մարդկությանը կոչված բոցավառ կոչ՝ լարել բոլոր ուժերը հասնելու համար մինչև այժմ անհասանելիին. հերոսական մահը կյանքի տասնապատկված կամք է ծնում, ողբերգական

կործանումը՝ անկասելի ձգտում դեպի անհունները հեռացող բարձունքները։

Քանի որ միայն փառասիրությունն է գոհանում պատահական հաջողությամբ ու թեթև հաղթանակով, և ոչինչ այնպես չի վսեմացնում հոգին, ինչպես մարդու մահու և կենաց մենամարտը ճակատագրի ահեղ ուժերի դեմ՝ դա բոլոր ժամանակների մեծագույն ողբերգությունն է, որ բանաստեղծները հյուսում են երբեմն միայն, իսկ կյանքը՝ հազարավոր ու բյուրավոր անգամ։

ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՆՈՎԵԼ



Օվկիանոսային մեծ շոգենավի վրա, որը կեսգիշերին Նյու Յորքից դեպի Բուենոս Այրես էր ուղևորվում, ինչպես միշտ ճանապարհվելու վերջին պահերին, գործնական իրարանցում էր տիրում։ Ամբոխի մեջ բոլոր կողմերով հրմշտոցով շարժվում էին ուղեկցողները։ Հեռագրատան ցրիչները, գլխարկները լոթիաբար ծռած՝ բղավում էին ուղևորների անունները։ Բերում էին ուղեբեռ ու ծաղիկներ։ Աստիճաններով վազվզում էին հետաքրքրասեր մանուկները, իսկ վերին տախտակամածին անդադրում նվագում էր նավի նվագախումբը...

Ես բարեկամիս հետ կանգնած էի տախտակամածի վրա՝ այդ խառնաշփոթից հեռու։ Հանկարծ մեզ բոլորովին մոտիկ երկու թե երեք անգամ բռնկեց մագնիումը. հավանաբար, ուղևորների մեջ ինչ-որ երևելի մարդ կար, և վերջին պահին վերցված հարցազրույցի համար նկար էր պետք եկել։ Ընկերս, նայելով այդ կողմ, քմծիծաղ տվեց.

— Մեզ հետ միասին նավի վրա է բնության հրաշքը՝ Ջենտովիչը։

Տեսնելով, որ այդ անունն ինձ ոչինչ չի ասում, նա բացատրեց.

— Միրկո Ջենտովիչ, շախմատի աշխարհի չեմպիոն։ Նա հենց նոր ջախջախել է Ամերիկայի բոլոր շախմատիստներին և հիմա գնում է Արգենտինա՝ դափնիներ վաստակելու։

Այստեղ ես հիշեցի ո՛չ միայն աշխարհի չեմպիոնի անունը, այլև որոշ մանրամասնություններ նրա կայծակնային կարիերայից։ Բարեկամը, որն ինձնից ուշադիր էր հետևում համաշխարհային մամուլին, լրացրեց իմ տեղեկությունները, այդ առթիվ մի քանի անեկդոտներ պատմելով։

Մոտ մեկ տարի առաջ Ջենտովիչին հաջողվեց միանգամից դասվել շախմատային այնպիսի աստղերի շարքը, ինչպիսիք են Ալյոխինը, Կապաբլանկան, Տարտակովերը, Էյսկերը, Բոգոլյուբովը։ 1922 թվականի մրցամարտին յոթնամյա հրաշամանկան՝ Ռեշևսկու Նյու Յորքում հայտնվելուց ի վեր շախմատիստների հրաշալի համաստեղությունը չգիտեր ոչ մի նորեկի, որն այդպիսի աղմուկով ներխուժեր իրենց շրջանը և այդ-

քան սուր հետաքրքրություն առաջացներ իր շուրջը։ Զենտովիչի մտավոր ունակությունները նրան բնավ չէին խոստանում այդքան փայլուն կարիերա։ Գաղտնիքը շուտով բացվեց. աշխարհի չեմպիոնը ոչ մի լեզվով չէր կարող անսխալ գրել գոնե մի քանի բառ, և ինչպես հեգնանքով նկատել էր նրա մաղձոտ ախոյաններից մեկը, «նրա տգիտությունը համապարփակ էր»։

Փոքրիկ նավակը, որ պատկանում էր նրա հորը՝ հարավսլավացի մի աղքատ մակույկավարի, մի դիշեր ջրասույզ էր արվել դանուբյան մի բեռնատար նավի կողմից։ Խուլ գյուղակի սրտացավ պաստորն իր խնամքի տակ էր վերցրել որբացած տղային, որն այն ժամանակ տասներկու տարեկան էր։ Բարի մարդը կաշվից դուրս էր գալիս՝ ճգնելով հիմարավուն, թլվատ, նեղ ճակատով տղայի ուղեղին հասցնել նրա գլուխը չմտնող դպրոցական խորիմաստությունը։

Բայց պաստորի բոլոր ջանքերը զուր անցան։ Միրկոն հարյուրերորդ անգամ անմտորեն նայում էր տառերին, բայց չէր կարողանում հիշել դրանք։ Նրա ծանրաշարժ ուղեղը չէր ընկալում պարզագույն բաներ։ Տասնըչորս տարեկանում նա դեռ մատների վրա էր հաշվում, նրա համար մեծ դժվարություն էր ներկայացնում գրքից կամ թերթից մի ոչ մեծ հատված կարդալը։ Եվ սակայն չի կարելի ասել, թե Միրկոն անպարտաճանաչ էր կամ անհնազանդ։ Նա անում էր այն ամենը, ինչ նրան հրամայում էին. ջուր էր կրում, փայտ էր ջարդում, աշխատում էր դաշտում, կարգի էր բերում խոհանոցը։ Նրան կարելի էր վստահել. ամեն տեսակ հանձնարարություն նա ի վերջո կատարում էր, թեև նրա դանդաղկոտությունը հանում էր համբերությունից։ Բայց ամենից շատ բարի քարոզչին վշտացնում էր համառ պատանու անտարբերությունն աշխարհում ամեն ինչի հանդեպ։ Նա երբեք ոչինչ չէր անում առանց հանձնարարության, երբեք չէր խաղում հասակակիցների հետ և երբեք որևէ գործ չէր փնտրում, մինչև նրան չէին ասում, թե ինչ պետք է անել։ Տնային աշխատանքն ավարտելով, Միրկոն նստում էր սենյակում և այդպես էլ մնում նստած՝ արածող ոչխարի նման իր անմիտ հայացքը հեռուն գամած, առանց փոքր իսկ հետաքրքրություն ցուցաբերելու այն ամենի նկատմամբ, ինչ կատարվում էր շուրջը։ Երեկոները, երբ պաստորը, փայտյա երկար ծխամորճը ծծելով, խաղում էր իր մշտական երեք պարտիաները ոստիկանական վախմիստրի հետ, շիկահեր, դեռահաս պատանին լռելյայն տեղ էր գրավում խաղացողների մոտ և ծանր կոպերը կախելով, քնատ ու անտարբեր տեսքով նայում գծագրված տախտակին։

Մի անգամ ձմռան երեկոյին, երբ երկու բարեկամներն արդեն խորասուզվել էին իրենց սովորական խաղի մեջ, պատուհանից այն կողմ լսվեց զանգուլակների ձայն։ Արագորեն տանն էին մոտենում սահնակներ։ Սենյակ վազեց ձյունոտված զլխարկով մի գյուղացի և սկսեց աղաչել պաստորին՝ հնարավորին չափ շուտ գնալ իր մահացող մոր մոտ՝ նրան վերջին հրաժեշտը տալու։ Քահանան անմիջապես ճանապարհվեց նրա հետ։ Վախմիստրը, որը կիսատ էր թողել գարեջրի բաժակը, գնալուց առաջ ծխեց ծխամորճը և արդեն պատրաստվում էր հագնել երկարաճիթ փափուկ կոշիկները, երբ հանկարծ նկատեց, որ Միրկոն առանց կտրվելու նայում է շախմատի տախտակի վրա անավարտ մնացած պարտիային։

— Գուցե ուզում ես ավարտե՞լ պարտիան, — կատակով նրան հարցրեց վախմիստրը, միանգամայն համոզված, որ հիմարավուն պատանին չգիտե նույնիսկ, թե ինչպես են շարժվում ֆիգուրները տախտակի վրա։ Տղան անվստահ նայեց նրան, բայց դրականորեն գլխով արեց ու նստեց պաստորի տեղը։ Տասնչորսերորդ քայլում վախմիստրը պարտվեց և պետք է խոստովանել, որ իր պարտությունը բոլորովին էլ ինչ-որ պատահական սխալի արդյունքը չէր։ Երկրորդ պարտիան ավարտվեց նույն ձևով։

— Բաղաամի՜ էշ, — վերադառնալով, բացականչեց ցնցված պաստորը և վախմիստրին, որ առանձնապես ծանոթ չէր աստվածաշնչին, բացատրեց, որ նման մի հրաշք կատարվել էր երկու հազար տարի առաջ, երբ մինչև այդ անլեզու անասունն սկսել էր խոսել, այն էլ շատ իմաստուն։ Ցնցված ուշ ժամին, բարի պաստորը չկարողացավ դիմանալ իր կիսագրագետ որդեգրի հետ չափվելու գայթակղությանը։ Նույն հեշտությամբ Միրկոն հաղթեց և նրան։ Նա խաղում էր դանդաղ, առանց տախտակից բարձրացնելու լայնաճակատ գլուխը, բայց նրա խաղում կար մի անսասան վստահություն։ Հաջորդ օրերին ո՛չ պաստորը, ո՛չ էլ վախմիստրը չկարողացան նրանից տանել ոչ մի հաղթանակ։

Քահանան, որ մյուսներից լավ գիտեր իր որդեգրի մտավոր անհուսալի հետամնացությունը, ինքն իրեն հարցնում էր. կարո՞ղ է, արդյոք, այդ միակողմանի անսովոր տաղանդը դիմանալ ավելի լուրջ փորձության։ Գյուղական վարսավիրի օգնությամբ Միրկոյին բերեցին ավելի պատշաճ տեսքի, և պաստորը նրան սահնակով տարավ հարևան փոքրիկ քաղաքը, որտեղ գլխավոր հրապարակի սրճարանում հավաքվում էին տեղի շախմատասերները, ինչպես նա համոզվել էր դառը փորձով, շատ ավելի հմուտ խաղացողներ, քան ինքը։

Պաստորի երևալը խարտյաշ, կարմրաթուշ պատանու ուղեկցությամբ շարժեց բոլորի հետաքրքրասիրությունը։ Քանի դեռ չէին կանչում շախմատի սեղանի մոտ, Միրկոն կանգնած էր քիչ հեռու՝ աչքերը գետնին հառած, այդպես էլ չհանելով կաշեծածիք քուրքը և երկարաճիթ հովվական կոշիկները։ Նա տանուլ տվեց առաջին պարտիան, որովհետև բարեհոգի պաստորը երբեք չէր կիրառել սիցիլիական պաշտպանություն։ Հաջորդ պարտիան ոչ ոքի ավարտվեց։ Սակայն երրորդ, չորրորդ և բոլոր հաջորդ պարտիաները Միրկոն տարավ մեկը մյուսի ետևից։

Հարավսլավիայի գավառական քաղաքները ո՛չ հաճախ են լինում հուզող դեպքերի մրցասպարեզ։ Դրա համար էլ գյուղական չեմպիոնի առաջին ելույթը կատարյալ սենսացիա եղավ հարգարժան քաղաքացիների համար։ Միաձայն որոշվեց, որ հրաշամանուկը պետք է մնա քաղաքում մինչև առավոտ, երբ հավաքված կլինի շախմատային ակումբի հատուկ ժողովը, և հատկապես այն պատճառով, որ նրա հետ կարողանա խաղալ մոտակա ամրոցի տիրակալ ծերունի Զիմշիցը, որն այրվում էր շախմատային կրքով։

Քահանայի հոգում պայքարում էին երկու զգացմունք՝ հպարտություն իր որդեգրի համար և պարտականության զգացումը, որը նրան հետ էր կանչում գյուղ, կիրակնօրյա ծառայության։

Պարտականության զգացումը հաղթեց, բայց և այնպես պաստորը համաձայնեց քաղաքում թողնել Միրկոյին՝ հետագա փորձությունների համար։ Շախմատիստները երիտասարդ Զենտովիչին տեղավորեցին հյուրանոցում, որտեղ նա կյանքում առաջին անգամ տեսավ ժամանակակից զուգարանը։

Կիրակի օրը ճաշից հետո շախմատային սենյակը լեփլեցուն էր։ Չորս ժամ շարունակ Միրկոն անշարժ նստած էր շախմատի տախտակի առաջ՝ առանց մի բառ իսկ արտասանելու, առանց աչքերը բարձրացնելու և մի հակառակորդին մյուսի ետևից ջախջախելով։ Վերջապես, նրան առաջարկեցին միաժամանակյա խաղի սեանս տալ։ Հարկ եղավ որոշ ժամանակ՝ Միրկոյին հասկացնելու համար, որ նա պետք է խաղա միանգամից մի քանի հակառակորդի հետ։ Բայց հենց որ նա հասկացավ, թե ինչ են ուզում իրենից, անվրդով գործի անցավ ու սկսեց անցնել սեղանից սեղան՝ դանդաղորեն շարժվելով ծանր, չմաքրված կոշիկներով։ Ի վերջո, ութ պարտիայից նա շահեց յոթը։

Այնուհետև սկսվեցին լուրջ խորհրդակցությունները։ Խիստ ասած, նոր չեմպիոնը քաղաքի բնիկներից չէր, այնուհանդերձ, տեղական հայ-

բենասիրությունն զգալ էր տալիս իրեն։ Աննշան, նույնիսկ քարտեզի վրա հազիվ նշմարվող փոքրիկ քաղաքը վերջապես մեծ մարդու հայրենիքը ճոշվելու հնարավորություն էր ստանում։

***

Կոլլեր անունով իմպրեսարիոն, որ տեղական կազինոյի համար երգչուհիներ և պարուհիներ էր բերում, հայտարարեց, թե ինքը հանձն է առնում պատանուն դասերի տանել իր ծանոթ մի վիեննացու մոտ, որը շախմատի խաղի գիտակ է, և մի քանի տարի կպահի երիտասարդ Միրկոյին այն պայմանով, որ հետագայում իրեն հատուցվեն ծախսերը։ Պայմանագիրն ստորագրեց կոմս Զիմշիցը։ Ամբողջ վաթսուն տարվա ընթացքում, երբ նա ամեն օր շախմատ էր խաղում, նրան չէր վիճակվել չափվել այդպիսի հիանալի հակառակորդի հետ։ Այդ օրից սկսվեց դանուբյան մաքուլկավարի որդու շշմեցուցիչ կարիերան։

Միրկոյին հարկավոր եղավ ընդամենը վեց ամիս՝ շախմատային տեխնիկայի բոլոր գաղտնիքները հասկանալու համար։ Ճիշտ է, մի բանի նա չհասավ, հետագայում դա նկատվեց շախմատիստների կողմից և ծաղրի պատճառ դարձավ։ Իր խաղացած պարտիաներից և ոչ մեկը Զենտովիչը հիշել չէր կարողանում, մասնագիտական լեզվով ասած՝ նա չէր կարողանում կուրորեն խաղալ։ Նա բացարձակապես անընդունակ էր երևակայության մեջ վերականգնել շախմատի տախտակը։ Նրան անպայմանորեն անհրաժեշտ էր աչքի առջև ունենալ իսկական, վաթսունչորս սև ու սպիտակ քառակուսիներով տախտակը և երեսուներկու ֆիգուրները։ Նույնիսկ համաշխարհային ճանաչում գտնելով՝ նա մշտապես գրպանի շախմատ էր կրում իր հետ՝ ցանկացած պահին պետք եկած դասական որևէ պարտիա վերարտադրելու և հետաքրքրող խնդիրը լուծելու համար։

Չնայած այդ թերությունն ինքնին մեծ կարևորություն չէր ներկայացնում, այնուամենայնիվ այն ցույց էր տալիս երևակայության պակաս և աշխույժ շշուկներ էր առաջացնում շախմատիստների շրջանում. այդպիսի շշուկներ ծագում են, օրինակ, երաժշտական շրջաններում, երբ պարզվում է, որ ականավոր վիրտուոզը կամ դիրիժորը չի կարող նվագել կամ նվագախումբը ղեկավարել հիշողությամբ, առանց նոտաների։ Ասենք, այդ բացը չխանգարեց Միրկոյի հրաշալի հաջողություններին։ Տասնյոթ տարեկանում նա արդեն ուներ տասնյակ տարբեր մրցանակներ, տասնութում դարձավ Հունգարիայի չեմպիոնը և, վերջապես, քսանում՝

աշխարհի չեմպիոն։ Լավագույն խաղացողները, որոնք, անկասկած, գերազանցում էին նրան խելքով, երևակայության ուժով և համարձակությամբ, չկարողացան դիմանալ նրա երկաթե, սառը տրամաբանությանը, ինչպես Նապոլեոնը չկարողացավ դիմանալ զգուշավոր Կուտուզովին և Հաննիբալը՝ Ֆաբիոս Կունկտատորին, որի հուլության և տկարամտության գծերը, ինչպես հավաստում է Լիբիոսը, արտահայտվում էին արդեն վաղ մանկության շրջանում։ Այսպիսով, ստացվեց, որ ականավոր շախմատիստների փայլուն միության մեջ, որտեղ կային հոգեկան և մտավոր գործունեության ամենատարբեր ճյուղերի նշանավոր ներկայացուցիչներ՝ փիլիսոփաներ, մաթեմատիկոսներ, մարդիկ՝ օժտված գեղարվեստական նրբազգացությամբ, գյուտարարական ընդունակություններով և հաճախ էլ ստեղծագործական տաղանդով, մտավ մի իսկական օտարական՝ մռայլ, լռակյաց, չզարգացած մի գյուղական պատանի։ Ամենաճարտար լրագրողները չէին կարողանում պոկել նրանից ոչ մի բառ, որից հնարավոր լիներ սենսացիա ստեղծել։ Թերթերը զուրկ էին այդ հնարավորությունից, բայց դա լրացվում էր նրա մասին պտտվող անեկդոտների առատությամբ. հազիվ վեր կենալով շախմատի սեղանի մոտից, որտեղ նա չուներ իրեն հավասարը, Զենտովիչը դառնում էր զվարճալի, գրեթե զավեշտական մի դեմք. չնայած անթերի կոստյումին, մոդայիկ փողկապին և չափազանց մեծ ադամանդով քորոցին ու խնամքով ներկված եղունգներին՝ նա մնում էր այն, ինչ առաջ էր՝ սահմանափակ, անտաշ մի երիտասարդ, որը դեռ վերջերս պաստորի խոհանոցն էր ավլում։ Օգտագործելով իր տաղանդն ու փառքը՝ նա ջանում էր հնարավորին չափ շատ փող վաստակել՝ ընդամենը երևան հանելով մանրախնդիր և, հաճախ, կոպիտ ագահություն։ Նա այդ անում էր լկտի անկեղծությամբ, որը շարժում էր իր մրցակիցների զայրույթն ու անվերջանալի ծաղրանքները։ Շրջելով քաղաքից քաղաք՝ նա կանգ էր առնում ամենաէժան հյուրատներում, համաձայնում էր խաղալ պատահած շախմատային ակումբում, որը պատրաստ էր նրան հոնորար տալ։ Օճառի գործարանատիրոջը նա վաճառեց իր նկարը ռեկլամային հայտարարություններում դնելու իրավունքը՝ ուշադրություն չդարձնելով իր ախոյանների արհամարհական ծաղրանքներին։ Վերջիններիս հայտնի էր, որ նա դժվար թե կարողանար երկու կապակցված բառ գրել, բայց իր անունով լույս է ընծայել «Շախմատախաղի փիլիսոփայությունը» գիրքը, որը գրել էր մի խեղճ գալիցիացի ուսանող՝ ինչ-որ ձեռներեց հրատարակչի պատվերով։

Ինչպես սովորաբար պատահում է նման խառնվածքի մարդկանց հետ, Զենտովիչը բոլորովին զուրկ էր հումորի զգացումից, և դառնալով

չեմպիոն սկսեց իրեն համարել աշխարհի ամենակարևոր մարդը։ Այն բանի գիտակցումից, որ ինքը կարողացել է հաղթել բոլոր այդ խելացի և բարեկիրթ մարդկանց, փայլուն հռետորների ու գրողների, և մանավանդ, որ նրանցից շատ է վաստակում, նրա նախկին անվստահությունը փոխվեց սառն ամբարտավանության։

— Իհարկե, ինչպես և պետք էր սպասել, հեշտությամբ ձեռք բերած փառքից պտտվեց այդ դատարկ գլուխը,— եզրակացրեց ընկերս և մի քանի բնորոշ օրինակ բերեց այն մասին, թե ինչպես Չենտովիչը զուտ երեխայական սնապարծությամբ ջանում էր տեղ գրավել հասարակության մեջ,— քսանմեկ տարեկան պատանին ինչո՞ւ չդառնա անհավատալիորեն սնապարծ, եթե տախտակի վրա ֆիգուրներ շարժելով նա կարող է մեկ շաբաթում վաստակել ավելի շատ, քան նրա ամբողջ գյուղը՝ մի ամբողջ տարում, սարսափելի պայմաններում զբաղվելով անտառահատությամբ։ Եվ հետո, շատ հեշտ կարող ես քեզ մեծ մարդ համարել, եթե ուղեղդ ֆանրաբեռնված չէ փոքր իսկ կասկածով, թե երկրի վրա ինչ-որ ժամանակ ապրել են Ռեմբրանտ, Բեթհովեն, Դանթե և Նապոլեոն։ Նրա սահմանափակ ուղեղում բուն է դրել միայն մի միտք. արդեն բազմաթիվ ամիսներ նա տանուլ չի տվել ոչ մի պարտիա։ Եվ քանի որ նա ամենափոքր պատկերացում անգամ չունի այն մասին, որ շախմատից ու փոզից բացի աշխարհում կան ուրիշ արժեքավոր բաներ, նա ունի բոլոր հիմքերը սեփական անձով զմայլվելու համար։

Հասկանալի է, որ բարեկամիս պատմածը, շարժեց իմ հետաքրքրասիրությունը։ Ամբողջ կյանքում ինձ հետաքրքրել են մենագարների տարբեր տեսակները, այն մարդկանց, որոնց ուղեղում կա մի եղակի գաղափար, որովհետև որքան նեղ են այն շրջանակները, որոնցով իրեն սահմանափակում է մարդը, որոշակի իմաստով նա այնքան ավելի է մոտենում անսահմանությանը։ Հավանաբար, հենց այդպիսի՝ աշխարհում ամեն ինչի նկատմամբ անտարբեր մարդիկ են, որ համառորեն, ինչպես մրջյունները, ինչ-որ հատուկ նյութից կառուցում են իրենց սեփական, աչքի չնմանվող փոքրիկ աշխարհը, որը նրանց համար տիեզերքի փոքրացված նմանությունն է։ Ուստի ես բարեկամիս՝ չթաքցրի իմ մտադրությունը՝ ջանալ ճանապարհորդության ընթացքում մինչև Ռիո ավելի մոտիկից ծանոթանալ այդ ծայրահեղորեն միակողմանի ընդունակություններով օժտված անձնավորության հետ։

— Հազիվ թե դա ձեզ հաջողվի,— զգուշացրեց իմ զրուցակիցը։— Որքան գիտեմ, դեռ ոչ մեկին չի հաջողվել որսալ Չենտովիչից գոնե մի չնչին բան, որը պիտանի լիներ հոգեբանական դատողությունների համար։

Իր ամբողջ անհավատալի սահմանափակությամբ հանդերձ այդ խորամանկ գյուղացին բավական խելացի է՝ իր թուլությունները ծածկելու համար։ Միջոցը պարզ է. հայրենակիցներից, այն էլ իր շրջանի մարդկանցից բացի, որոնց հետ նա հանդիպում է էժանագին հյուրանոցներում, որևէ մեկի հետ զրույցի բռնվելուց Զենտովիչը խուսափում է։ Զգալով, որ իր առջև կիրթ մարդ է կանգնած, նա խխունջի պես անմիջապես թաքնվում է իր պատյանում, այդ պատճառով ոչ ոք չի կարող պարծենալ, թե որևէ հիմարություն է լսել նրանից և կարողացել է գնահատել նրա ագիտության ողջ անդունդը։

Երեկ բարեկամս իրավացի էր։ Ուղևորության առաջին օրերին Զենտովիչի հետ ծանոթություն հաստատելն անհնարին եղավ. թերևս պետք էր որոշ լկտիություն ցուցաբերել, բայց ես այդպիսի հնարքների կողմնակիցը չեմ։ Երբեմն նա երևում էր վերին տախտակամածի վրա և ճեմում այնտեղ՝ ձեռքերը մեջքին դրած, սևեռուն մտորումների մեջ ընկղմված, ճիշտ այնպես, ինչպես Նապոլեոնը հայտնի նկարում, իսկ տախտակամածով զբոսնելիս նա միշտ այնպես էր շտապում, որ նպատակին հասնելու համար ես ստիպված կլինեի վարգով գնալ նրա ետևից։ Նա երբեք չէր երևում հյուրասրահում, բարում կամ ծխասրահում։ Ստյուարդը, որին ես ծածուկ հարցուփորձ էի անում, ինձ ասաց, թե օրվա մեծ մասը նա անցկացնում է իր նավախցում, մեծ շախմատային տախտակի առաջ՝ վերլուծելով խաղացված պարտիաները կամ խնդիրներ լուծելով։

Երեք օր հետո ինձ սկսեց ջղայնացնել, որ Զենտովիչի պաշտպանական տակտիկան ավելի ուժեղ դուրս եկավ, քան նրան որևէ կերպ հասնելու իմ ցանկությունը։ Մինչ այդ ինձ չէր վիճակվել անվանի շախմատիստների հանդիպել։ Ինչքան ավելի էի ձգտում հասկանալ այդ տիպի մարդկանց, այնքան ավելի անհասկանալի էր թվում ինձ մարդու ուղեղի այդ աշխատանքը, որն ամբողջապես կենտրոնացած է վաթսունչորս սև ու սպիտակ վանդակների բաժանված մի ոչ մեծ տարածության վրա։ Անձնական փորձից ինձ ծանոթ էր «արքայական խաղի» խորհրդավոր հմայքը՝ մարդու հնարած խաղերից միակը, որ կախված չէ դիպվածի քմայքներից և դափնով է պսակում միայն խելքը, կամ, ավելի ճիշտ, մտավոր ունակությունների հատուկ ձևը։ Սակայն մի՞թե «խաղ» նեղլիկ բնորոշումը վիրավորական չէ շախմատի համար։ Բայց և այնպես, դա ո՞չ գիտություն է, ո՞չ էլ արվեստ, ավելի շուտ ինչ-որ միջին մի բան է, որ պտտվում է այդ երկու հասկացողությունների միջև, ինչպես որ երկրի ու երկնքի միջև պտտվում է Մուհամեդի դագաղը։ Այդ խաղում համատեղվում են ամենահակասական հասկացողությունները. այն և՛ հին է, և՛

հավիտենապես նոր, իր հիմքով մեխանիկական է, բայց հաղթանակ է բերում միայն նրան, ով երևակայություն ունի, նեղ երկրաչափական տարածության մեջ սահմանափակված և միաժամանակ անսահման իր կոմբինացիաներում, անընդհատ զարգացող և միանգամայն անպտուղ, միաք՝ առանց հետևության, մաթեմատիկա՝ առանց արդյունքների, արվեստ՝ առանց ստեղծագործությունների, ճարտարապետություն՝ առանց քարի։ Եվ սակայն, այդ խաղն ավելի լավ է դիմացել ժամանակի փորձությանը, քան մարդկանց բոլոր դրքերն ու ստեղծագործությունները. դա միակ խաղն է, որ պատկանում է բոլոր ժողովուրդներին և բոլոր ժամանակներին, և ոչ մեկին հայտնի չէ այն աստծո անունը, որն այն երկիր է իջեցրել ձանձրույթը փարատելու, միտքը հղկելու, հոգին քաջալերելու համար։ Որտե՞ղ է նրա սկիզբը, և որտե՞ղ է վերջը։ Նրա պարզ կանոնները կարող է սովորել ամեն մի երեխա, նրա մեջ իր ուժերն է փորձում յուրաքանչյուր սիրող, և միևնույն ժամանակ, նրա մշտապես նեղ վանդակներում են ծնվում միանգամայն առանձնահատուկ, ոչ մեկի հետ չհամեմատվող վարպետները՝ մարդիկ, որոնք օժտված են բացառապես շախմատի ունակություններով։ Դրանք յուրահատուկ հանճարներ են, որոնց հատուկ են երևակայության թռիչքը, հաստատակամությունն ու ճշգրտության վարպետությունը ոչ պակաս, քան մաթեմատիկոսներին, բանաստեղծներին և կոմպոզիտորներին, միայն թե այլ զուգորդությամբ և այլ ուղղությամբ։ Դիմագիտական ուսումնասիրություններով զբաղվելու օրերին մի ինչ-որ Գալլ[1] պարտավոր էր առաջին հերթին զննել հանճարեղ շախմատիստներից մեկի գլխուղեղը՝ պարզելու համար, թե նրա ուղեղի գորշ նյութի մեջ չկա՞ արդյոք մի հատուկ ծալք, այնտեղ չկա՞ արդյոք ինչ-որ հատուկ շախմատային ջիղ կամ շախմատային ելուստ։ Եվ ի՞նչ հետաքրքրություն կառաջացներ դիմագետի մոտ Ջենտովիչի նման անհատը, որի այդ հատուկ հանճարեղությունը տեղավորված է ուղեղում բոլորովին անարատ և ծուլորեն, ինչպես լեռնային հանքաբեկորում թաքնված ոսկու միակ երակը։ Սկզբունքորեն ես հասկանում էի, որ իր տեսակի մեջ միակ, հանճարեղ խաղը պետք է ծներ և արժանի հետևորդներ, բայց և այնպես ինձ համար միշտ դժվար, համարյա անհնար էր պատկերացնել մի մարդու կյանք, որն օժտված է գործուն խելքով և միևնույն ժամանակ սահմանափակում է իր աշխարհը մի ոչ մեծ սև ու

---

[1] Գալլ Ֆրանց-Հովսեփ (1758—1828)—գերմանացի բժիշկ. ստեղծել է դիմագիտություն կեղծ գիտությունը, որն իբր թե թույլ է տալիս որոշելու մարդու ունակություններն ու հակումները ըստ գանգի ձևի։

սպիտակ տարածությամբ, և որն ընդունակ է իր կյանքի իմաստը գըտնել երեսուներկու ֆիգուրներն այս ու այն կողմ շարժելու մեջ։ Ես չէի կարողանում հասկանալ այն մարդու հոգեբանությունը, որը հավատում է, թե ձիու, այլ ո՞չ թե զինվորի քայլը փառք կբերի իրեն և անմահների շրջանում իր համար կապահովի մի փոքրիկ տեղ, մի բան, որն արտահայտվում է շախմատախաղի ուղեցույցի հակիրճ ծանոթագրություններում, այն մտածող, խելամիտ մարդու, որը, խելագար չլինելով հանդերձ, տաս, քսան, երեսուն, քառասուն տարի շարունակ նորից ու նորից իր խելքի ամբողջ ուժը նվիրում է մի անհեթեթ զբաղմունքի՝ ինչ էլ որ լինի, փայտե տախտակի անկյունը քշել փայտե արքային։

Եվ ահա, վերջապես, կյանքումս առաջին անգամ ինձ բոլորովին մոտիկ, նույն նավի վրա, ընդամենը վեց նավասենյակ այն կողմ հայտնվեց այդպիսի ֆենոմեններից մեկը՝ մի բացառիկ հանճար, կամ գուցե, հանելուկային հիմար, իսկ ես, դժբախտս, որի հոգեբանական հանելուկներ լուծելու կիրքը վերաճել է մոլուցքի, նրա հետ ծանոթանալու ոչ մի միջոց չէի կարողանում գտնել։ Ես կատարում էի բոլոր հնարավոր մանյովրները. մերթ ուզում էի խաղալ նրա սնապարծության հետ՝ որևէ ազդեցիկ լրագրի համար հարցազրույց խնդրելով, մերթ հույս էի դնում նրա մեջ ագահություն արթնացնելու վրա՝ Շոտլանդիայով շահավետ ուղևորություն առաջարկելով։ Վերջապես մտաբերեցի որսորդների վարվելաձևը, որոնք գայթակղեցնում են խլահավերին՝ նմանեցնելով նրանց սիրո կանչը։ Գուցե, շախմատ խաղացող ձևանալո՞վ ինձ կհաջողվի գրավել շախմատային մաեստրոյի ուշադրությունը։

Ես երբեք լրջորեն շախմատ չեմ խաղացել. այն ինձ համար զվարճալիք է, ո՞չ ավելին։ Եթե ես երբևէ շախմատի տախտակի առաջ անցկացնում էլ եմ մի երկու ժամ, ապա բնավ ո՞չ ուղեղս հոգնեցնելու, ընդհակառակը, լարված մտավոր աշխատանքից հետո հանգստանալու համար։ Ես բառիս բուն իմաստով շախմատ «խաղում եմ» այն դեպքում, երբ իսկական շախմատիստները սրբագործում են, եթե կարելի է այդպես ասել։ Շախմատը նույնպես, ինչպես սերը, խաղընկեր է պահանջում, իսկ ես դեռ չէի կարողացել պարզել՝ նավի վրա կա՞ն, արդյոք, այդ խաղի սիրահարներ։ Իրենց բներից նրանց հանելու համար ես ծխասրահում տեղավորեցի մի պարզունակ թակարդ։ Ինձ հետ միասին շախմատի սեղանիկի մոտ որպես խայծ նստեց և իմ կինը, որն ինձնից էլ վատ է խաղում։ Եվ, իհարկե, հազիվ էինք մենք մի քանի քայլ կատարել, երբ մեզ մոտ արդեն կանգնեց ուղևորներից մեկը, այնուհետև խաղին նայե-

լու թույլտվություն խնդրեց ևս մեկ ուրիշը, իսկ շուտով գտնվեց և բաղձալի խաղընկերը, որն առաջարկեց ինձ մի պարտիա խաղալ իր հետ։

Դա ոմն Մակ Կոննոր էր՝ շոտլանդացի մի լեռնային ինժեներ։ Ես իմացա, որ նա նավթային հորատանցքեր էր փորել Կալիֆոռնիայում և խոշոր կարողություն էր դիզել այնտեղ։ Մակ Կոննորը մի ծաղկուն, քաջառողջ տղամարդ էր՝ քառակուսի ծնոտներով և պինդ ատամներով։ Դեմքի վառ գույնը, անկասկած, ընդգծում էր վիսկիի չչափավորված օգտագործումը, իսկ ատլետի լայն ուսերը բավական տհաճ ազդեցություն էին թողնում խաղի ժամանակ, քանի որ Մակ Կոննորը պատկանում էր ինքնավստահ, հաջողակ մարդկանց այն կատեգորիային, որոնք յուրաքանչյուր պարտություն, նույնիսկ ամենաանմեղ մրցության մեջ, ընդունում են ո՛չ այլ կերպ, քան որպես հարված իրենց ինքնասիրությանը։ Այդ հսկա մարդը, որն ամեն ինչի համար պարտական էր միայն իրեն և սովոր էր հասնել նպատակին՝ հաղթահարելով բոլոր խոչընդոտները, այնքան էր լցված սեփական գերազանցության զգացումով, որ ամեն մի արգելք նա համարում էր իրեն նետված անթույլատրելի մարտահրավեր, եթե ոչ անարգանք։ Տանուլ տալով առաջին երկու պարտիաները՝ նա մռայլվեց և սկսեց հանգամանորեն, բոնակալական տոնով բացատրել, որ դա տեղի չէր ունենա, եթե չլիներ իր պատահական անուշադրությունը։ Երրորդ պարտությունը նա վերագրեց հարևան հյուրասրահից եկող աղմուկին։ Տանուլ տված և ոչ մի պարտիա նա չէր ուզում թողնել առանց ռևանշի։ Սկզբում նրա զայրացկոտությունը զվարճացնում էր ինձ, բայց հետո ես հաշտվեցի, մտածելով, որ դա, հավանաբար, կօգնի ինձ հասնելու նպատակիս· դեպի սեղանը գայթակղել աշխարհի չեմպիոնին։

Երրորդ օրն իմ ծրագիրն իրականացավ, թեև ոչ ամբողջապես։ Գուցե շախմատ խաղալիս Չենտովիչը մեզ տեսե՞լ էր վերին տախտակամածի վրա բացվող լուսանցույցից, գուցե նա պարզապես որոշել էր իր ներկայությամբ պատվե՞լ ծխասրահը. համենայն դեպս, հենց որ նա տեսավ, որ իր արվեստի ոլորտը համարձակվել են խցկվել անտեղյակները, ակամա մոտեցավ և, մնալով պատշաճ հեռավորության վրա, տախտակին նետեց զննող մի հայացք։ Քայլը Մակ Կոննորինն էր։ Նրա մի քայլը բավական եղավ, որ Չենտովիչը հասկանար, թե ինչքան փոքր հետաքրքրություն են ներկայացնում մեր սիրողական ճիգերը։ Ձեռքի անփույթ մի շարժումով, որով սովորաբար մերժում են գրախանութում առաջարկված վատ դետեկտիվ վեպը, առանց նույնիսկ թերթելու այն՝ չեմպիոնը շրջվեց ու դուրս եկավ սրահից։

«Իսկույն տեսավ, որ չարժե նեղություն քաշել»,— մտածեցի ես։ Ինձ խոցեց նրա մեծամիտ, սառը հայացքը։ Ես ցանկություն ունեցա որևէ մեկի վրա թափել բարկությունս և դիմեցի Մակ Կոննորին.

— Թվում է, ձեր քայլը մեծ տպավորություն չթողեց չեմպիոնի վրա։

— Ի՞նչ չեմպիոն։

Ես նրան բացատրեցի, որ այն մարդը, որը մտավ սենյակ և այդպիսի քամահրանքով վերաբերվեց մեր խաղին, Զենտովիչն էր՝ շախմատի աշխարհի չեմպիոնը։ Ես ավելացրի, որ չարժե ընկճվել նրա գոռոզությունից. խեղճերի համար հպարտությունն անթույլատրելի պերճանք է։ Պատահաբար ասված այդ խոսքերը միանգամայն անսպասելի ներգործություն ունեցան Մակ Կոննորի վրա։ Նա անմիջապես անհավատալիորեն հուզվեց և փառասիրական հղացումներով տարված՝ մոռացավ մեր խաղի մասին։ Նա չէր էլ կասկածում, թե Զենտովիչը ուղևորների հետ է, չեմպիոնն անպայման պետք է խաղա իր հետ։ Նրան միայն մի անգամ է հաջողվել խաղալ չեմպիոնի հետ, այն էլ, երբ միաժամանակյա խաղի սեանս էր քառասուն տախտակի վրա։ Բայց դա էլ շատ հրապուրիչ էր, և քիչ էր մնացել, որ ինքը հաղթեր։ Ծանո՞թ եմ ես, արդյոք, չեմպիոնին։ Ո՛չ, ծանոթ չեմ։ Չե՞մ կարող, արդյոք, խնդրել նրան խաղալու մեզ հետ։ Ես հրաժարվեցի, պատճառաբանելով, թե Զենտովիչը, որքան ինձ հայտնի է, խուսափում է նոր ծանոթություններից։ Բացի այդ, ի՞նչ հետաքրքրություն չեմպիոնի համար խաղալ մեզ՝ երրորդ կարգայիններիս հետ։

Երրորդ կարգային ասել այնպիսի մի ինքնասիրահար մարդու հասցեին, ինչպիսին Մակ Կոննորն էր, թերևս ավելորդ էր։ Նա զայրացած ընկրկեց բազկաթոռի վրա և բորբոքված հայտարարեց, թե պարզապես չի պատկերացնում, որ Զենտովիչը կարող է մերժել ջենտլմենի մարտահրավերը։ Այդ մասին կհոգա ինքը։ Նրա խնդրանքով ես մի քանի խոսքով նկարագրեցի չեմպիոնի յուրօրինակ բնավորությունը, և Մակ Կոննորը, կիսատ պարտիան թողնելով ճակատագրի քմայքին, սկսեց փընտրել Զենտովիչին վերին տախտակամածի վերա։ Այստեղ ես նորից զգացի, որ հետ պահել այդպիսի թիկնավետ մարդուն, եթե նա իր գլուխն ինչ-որ բան է մտցրել, բոլորովին անհուսալի բան է։

Ես լարված սպասում էի։ Անցավ տասը րոպե, և Մակ Կոննորը վերադարձավ, ինչպես ինձ թվաց, ոչ այնքան լավ տրամադրությամբ...

— Հը՛, ի՞նչ եղավ,— հարցրի ես։

— Դուք իրավացի էիք, — սրտնեղությամբ պատասխանեց Մակ Կոննորը,— այնքան էլ հաճելի պարոն չէ։ Ես բարևեցի ու ներկայացա, իսկ

Նա նույնիսկ ձեռքը չմեկնեց ինձ։ Ես փորձեցի բացատրել նրան, որ մենք՝ բոլոր ուղևորներս, հպարտ ու երջանիկ կլինենք, եթե նա համաձայնի արժանացնել մեզ միաժամանակյա խաղի սեանսի։ Բայց նա չափազանց պաշտոնական էր խոսում ինձ հետ և պատասխանեց, թե ցավոք սրտի, պայմանագիրն Իմպրեսարիոյի հետ, որը կազմակերպել է նրա ուղեկցությունը, պարտավորեցնում է նրան միայն վարձատրությամբ խաղալ ուղևորության ընթացքում, և որ նրա ամենափոքր հոնորարը երկու հարյուր հիսուն դոլար է մեկ պարտիայի համար։

Ես ծիծաղեցի։

— Ա՛յ, երբեք չէի կարծում, թե ֆիգուրները սպիտակ վանդակներից սևերը տեղափոխելն այդքան շահութաբեր գործ է։ Հուսով եմ, որ դուք նույնքան սիրալիր էլ հրաժեշտ տվեցիք։

Մակ Կոնոորը, սակայն, միանգամայն լուրջ էր։

— Մրցամարտը կկայանա վաղը, ժամը երեքին, այստեղ, ծխասրահում։ Հուսով եմ, որ նա այնքան էլ հեշտ չի կարող ջարդել մեզ։

— Ի՞նչ։ Դուք նրան երկու հարյուր հիսուն դոլա՞ր տվեցիք, — բացականչեցի ես՝ կատարելապես ապշած։

— Ի՞նչ կա որ։ C'est son métier[1]։ Եթե սկսել է ցավել ատամս, իսկ նավի վրա ատամնաբույժ կա, հո նա ձրի չի հանի այն։ Նրա իրավունքն է պահանջել, որքան ինքն է ուզում։ Ամեն տեղ այդպես է։ Ցանկացած գործում լավագույն մասնագետները միշտ էլ հրաշալի առևտրականներ են լինում։ Ինչ վերաբերում է ինձ, ապա ես կողմնակից եմ մաքուր գործարքի։ Ես շատ ավելի մեծ հաճույքով ձեր Ջենտովիչին կվճարեմ հնչուն դրամներ, քան կսկսեմ ողորմություն խնդրել նրանից և հետո էլ պարտավորված կզգամ շնորհակալություններ շռայլել նրան։ Պատահել է, որ մի երեկոյի ընթացքում մեր ակումբում տանուլ եմ տվել երկու հարյուր հիսուն դոլարից էլ ավել, բայց չէ՞ որ ինձ չի վիճակվել խաղալ չեմպիոնի հետ։ Երրորդ կարգայինի համար սոսոթ բան չէ Ջենտովիչին տարվելը։

Ինձ ծիծաղելի էր թվում, որ չափազանց անմեղ «երրորդ կարգի խաղացողներ» արտահայտությունն այդքան վիրավորել է Մակ Կոնոորի ինքնասիրությունը։ Բայց քանի որ թանկագին զվարճալիքի համար, որն ինձ հնարավորություն էր տալիս ծանոթանալ հետաքրքրող սուբյեկտի հետ, վճարում էր Մակ Կոնոորը, ես գերադասեցի լռել։

---

1 Դա նրա մասնագիտությունն է (ֆրանս.)։

Մենք շտապեցինք առաջիկա իրադարձության մասին տեղեկացնել ևս մի քանի հոգու, որոնց մեջ սեր էր նկատվում դեպի շախմատը, և պահանջեցինք մեզնից հետո մրցամարտի համար թողնել ոչ միայն մեր, այլև հարևան սեղանները՝ մնացած ուղևորների կողմից հնարավոր խանգարումներից խուսափելու համար։

Մյուս օրը ուղիղ նշանակված ժամին մեր խումբը հավաքված էր լրիվ կազմով։ Հասկանալի է, կենտրոնական տեղը՝ չեմպիոնի դիմաց, հատկացված էր Մակ Կոննորին։ Նա հուզվում էր, թունդ գլանակներ ծխում մեկը մյուսի ետևից և նյարդայնորեն նայում ժամացույցին։

Չեմպիոնը ստիպեց սպասել իրեն ամբողջ տասը րոպե (բարեկամիս պատմածը հիշելով՝ ևս կանխատեսել էի ինչ-որ նման մի բան), և դա ավելի ընդգծեց նրա հայտնվելու հանդիսավորությունը։ Նա սեղանին մոտեցավ անվրդով ու հանդիստ տեսքով, չբարևեց։ Նրա անքաղաքավարությունն, ըստ երևույթին, պետք է նշանակեր. «Դուք գիտեք, թե ով եմ ես, իսկ ինձ բնավ չի հետաքրքրում, թե ովքեր եք դուք»,— և անմիջապես էլ չոր, գործնական տոնով սկսեց առաջադրել իր պայմանները։ Քանի որ շոգենավի վրա բավարար քանակությամբ շախմատի տախտակներ չկան, նա առաջարկում է, որ բոլորս միասին խաղանք իր դեմ։ Կատարելով քայլը՝ նա կհեռանա սենյակի մյուս ծայրը, որպեսզի չխանգարի մեզ խորհրդակցելու։ Իսկ մենք, կատարելով պատասխան քայլը՝ զանգակ չունենալու պատճառով ստիպված կլինենք թեյի գդալով ենգացնել բաժակը։ Եթե առարկություններ չկան, նա առաջարկում է յուրաքանչյուր քայլի վրա մտածելու համար տալ ամենաշատը տասը րոպե։ Երկչոտ աշակերտների նման, մենք ընդունեցինք նրա բոլոր պայմանները։ Չենտովիչին բաժին ընկան սևերը։ Կանգնած վիճակում նա կատարեց առաջին պատասխան քայլը, անմիջապես շրջվեց, հեռացավ մինչև նշանակված տեղը և այնտեղ, ծուլորեն փռվելով բազկաթոռին, սկսեց թերթել նկարազարդ ամսագիրը։

Հազիվ թե արժե նկարագրել այդ պարտիան։ Ինչպես և պետք էր սպասել, այն ավարտվեց մեր լիակատար պարտությամբ, և այն էլ՝ քսանչորսերորդ քայլում։ Բոլորովին էլ զարմանալի չէր, որ աշխարհի չեմպիոնը, խաղալով, ինչպես ասում են, ձախ ձեռքով, գլխովին ջարդեց մի կես դյուժին միջակ և չափազանց թույլ խաղացողների։ Բոլորիս համար, սակայն, զզվելի էր Չենտովիչի գոռող վերաբերմունքը, որը պարզորեն զգացնել էր տալիս, թե հաշիվները մաքրեց մեզ հետ առանց փոքր իսկ դժվարության։ Ամեն անգամ, մոտենալով սեղանին, նա տախտակին էր նետում իր սահող և դիտավորյալ անփույթ հայացքը, իսկ մեզ վրա

բնավ ուշադրություն չէր դարձնում, կարծես մենք նույնպես փայտե ֆիգուրներ էինք։ Այդպես, առանց նեղություն քաշելու նույնիսկ նայել թափառող շանը, ոսկոր են նետում նրան։ Կարծում են, որ եթե նա ունենար գոնե մի փոքր նրբանկատություն և տակտի զգացում, ցույց կտար մեր սիալները կամ կխրախուսեր մեզ ընկերական խոսքով։ Նույնիսկ ավարտելով խաղը՝ այդ շախմատային ռոբոտը ոչ մի ձայն չհանեց։ Մատ հայտարարելով, նա անշարժ մնաց սեղանի մոտ, ակնհայտորեն ցանկանալով իմանալ՝ չե՞նք ուզում մենք, արդյոք, ևս մի պարտիա խաղալ։ Ես արդեն վեր էի կենում տեղիցս և ինչպես միշտ, տեղի տալով անպատկառ կոպտության առաջ, պատրաստվում էի ձեռքի մի շարժումով ցույց տալ նրան, որ անձամբ ես հաճույքով վերջացած կհամարեմ մեր ծանոթությունը, հենց որ ավարտեմ ֆինանսական հաշիվները։ Բայց ի տհաճություն ինձ, նույն պահին Մակ Կոննորը, որը նստած էր իմ կողքին, խոպոտ արտասանեց. «Ռևանշ»։

Ինձ վախեցրեց այն մարտահրավերը, որ հնչեց Մակ Կոննորի ձայնի մեջ։ Նա ավելի շուտ հիշեցնում էր մի բռնցքամարտիկի, որը պատրաստ է իջեցնել վճռական հարվածը, քան մի կոռեկտ ջենտլմենի։ Գուցե նրան վրդովել էր Ջենտովիչի վիրավորական վերաբերմունքը, կամ դրա պատճառը նրա սեփական խոցված ինքնասիրությունն էր, համենայն դեպս, Մակ Կոննորն ամբողջովին փոխվել էր, նույնիսկ արտաքուստ։ Նա շիկնել էր մինչև մազերի արմատները, ոռնգերը փքվել էին, ճակատի վրա քրտինքի կաթիլներ էին գոյացել, կծոտված շրթունքից մինչև մարտականորեն առաջ ցցված կզակը խոր ծալքեր էին ձգվել։ Ես անհանգստությամբ նրա աչքերում նկատեցի անզուսպ կրքի կրակը, որը սովորաբար խաղացողներին նետում է պտուտախաղի մեջ, երբ իրար ետևից վեց-յոթ անգամ նրանց չի վիճակվում անհրաժեշտ գույնը՝ անդադար կրկնվող գումարներից հետո։ Ես արդեն գիտեի, որ այդ տենդահարը Ջենտովիչի առաջ պատրաստ է դնել իր ողջ կարողությունը և խաղա՞լ, խաղա՞լ, խաղալ սովորական կամ կրկնապատիկ գումարներով, մինչև որ շահի գոնե մի պարտիա։ Եթե Ջենտովիչը հանձն առներ այդ գործը, Մակ Կոննորը նրա համար մի իսկական ոսկու հանք կլիներ, և մինչ Բուենոս Այրեսը կերևար հորիզոնում՝ չեմպիոնի զրպանում կհայտնվեր մի քանի հազար դոլար։

Ջենտովիչը մնաց անշարժ։

— Կներեք, — քաղաքավարի ասաց նա։ — Այժմ, պարոնայք, դուք կխաղաք սևերով։

Երկրորդ պարտիան քիչ էր տարբերվում առաջինից, միայն թե մեր խումբը մի փոքր ավելացել էր ի հաշիվ նոր դիտողների, և խաղն ավելի էր աշխուժացել։ Մակ Կոնոորը սկսեցին նայում էր տախտակին, կարծես կամենալով հիպնոսացնել շախմատի ֆիգուրները և դրանք ենթարկել իր կամքին։ Ես զգում էի, որ նա հաճույքով կզոհեր հազար դոլար՝ մեր անվրդով հակառակորդի երեսին «մատ» գցելու բավականության համար։ Եվ, տարօրինակ բան, նրա մռայլ հուզմունքը անհասկանալիորեն համակել էր բոլորիս։ Այժմ ամեն մի քայլը քննարկվում էր անհամեմատ ավելի կրքով, և մենք վիճում էինք մինչև վերջին ակնթարթը, մինչև որ համաձայնվում էինք ազդանշան տալ Չենտովիչին։ Հասնելով տասնյոթերորդ քայլին, զարմանքով տեսանք, որ մեզ մոտ ստեղծվել է մի դրություն, որն ապշեցուցիչ կերպով նպաստավոր էր թվում. մենք կարողացել էինք «c» դաշտի զինվորը հասցնել նախավերջին հորիզոնականը, և մեզ մնում էր միայն տեղափոխել այն առաջ, դեպի c 1։ Մենք երկրորդ թագուհին էինք ստանում։ Սակայն այնքան էլ հանգիստ չէինք՝ չէինք հավատում, որ մեզ իրոք հաղթելու այդքան ակնհայտ շանս է հայտնվել։ Մենք բոլորս կասկածում էինք, թե այդ առավելությունը, որ թվում էր, պակել էինք, ոչ այլ ինչ էր, եթե ոչ՝ Չենտովիչի լարած թակարդը, որը խաղի ընթացքը կանխատեսում էր բազմաթիվ քայլեր առաջ։ Այնուամենայնիվ, որքան էլ քննարկում և վերլուծում էինք դրությունը բոլոր կողմերից, մենք չկարողացանք գուշակել նենգությունը։ Վերջապես, երբ տասը րոպեն արդեն համարյա անցել էր, մենք վճռեցինք ռիսկի դիմել և կատարել այդ քայլը։ Մակ Կոնոորն արդեն վերցրել էր զինվորը՝ այն վերջին վանդակը տանելու համար, երբ ինչ-որ մեկի ձեռքը կանգնեցրեց նրան, և ցածր, բայց հաստատ ձայնն ասաց.

— Պետք չէ, ի սեր աստծո։

Մենք բոլորս ակամա շուռ եկանք։ Մեր ետևում կանգնած էր քառասունհինգ տարեկանի չափ մի մարդ. նեղ, խիստ գծերով նրա դեմքը արդեն առաջ, զբոսանքների ժամանակ իմ ուշադրությունն էր գրավել իր անսովոր, մեռելային գունատությամբ։ Ըստ երևույթին, նա հենց նոր էր միացել մեր խմբին, և հերթական քայլի քննարկման մեջ խորացած, մենք չէինք նկատել նրա հայտնվելը։ Տեսնելով, որ մենք իրեն ենք նայում, նա աճապարանքով շարունակեց.

— Եթե դուք թագուհի դուրս գաք, նա անմիջապես այն կվերցնի փղով, որը դուք կշեղոքացնեք ձեր ձիով։ Իսկ նա այդ ժամանակ d 7 դաշտը կտանի իր անցողիկ զինվորը և կսպառնա ձեր նավակին։ Եթե նույնիսկ դուք ձիով շախ հայտարարեք, միևնույն է, պարտիան ձեզ համար կո-

բած կլինի՝ ինը կամ տասը քայլից դուք մատ կստանաք։ Համարյա նույն կոմբինացիան կիրառել է Ալյոխինը հազար ինը հարյուր քսաներկու թվականին Պեստյենի շախմատային մրցամարտում Բոգոլյուբովի դեմ խաղալիս։

Ցնցված Մակ Կոննորը ձեռքից բաց թողեց զինվորը և, ինչպես մենք բոլորս, համր զարմանքով աչքերը հառեց երկնքից իջած պահապան-հրեշտակին։ Չէ՞ որ կանխագուշակել պարտիան ինը քայլ առաջ կարող էր միայն ամենաբարձր կարգի խաղացողը, միջազգային մրցությունների մասնակիցը։ Գուցե և նա գնում է այն նույն մրցությանը, ուր գնում է Ջենտովիչը և պետք է վիճարկի աշխարհի առաջնությունը։ Ինչ էլ որ լիներ, նրա հանկարծակի հայտնվելը, նրա միջամտությունը խաղի ամենակրիտիկական պահին՝ մեզ ինչ-որ գերբնական բան թվաց։

Առաջինն սթափվեց Մակ Կոննորը.

— Իսկ դուք ի՞նչ խորհուրդ կտայիք,— շշնջաց նա։

— Զինվորը դեռ մի շարժեք առաջ։ Առայժմ խուսափեք։ Ամենից առաջ արքան հանեք վտանգավոր գոտուց՝ g 8-ից h 7։ Այդ դեպքում ձեր հակառակորդն, ամենայն հավանականությամբ, գրոհը կտեղափոխի մյուս թևը։ Բայց այդ գրոհը դուք կկասեցնեք նավակի քայլով՝ c 8—c 4։ Դա ներան կնստի երկու տեմպի ու մի զինվորի, և այդպիսով, ամբողջ առավելության կորուստ։ Այդ ժամանակ երկուսիդ մոտ էլ կհայտնվեն անցողիկ զինվորներ, և եթե դուք ճիշտ պաշտպանվեք, կարող եք ոչ ոքի հասցնել պարտիան։ Դա լավագույնն է, ինչ դուք կարող եք անել։

Մենք դարձյալ քար կտրեցինք։ Նրա հաշվարկների ճշգրտությունն ու արագությունը ապշեցնում էին մեզ։ Թվում էր, թե նա գրքից է կարդում քայլերը։ Նրա միջամտության շնորհիվ խաղն անսպասելի բնույթ էր ստանում։ «Ոչ ոքի» խաղալ աշխարհի չեմպիոնի հետ, դա այնքան գայթակղիչ էր։ Կարծես խոսքներս մեկ արած՝ բոլորս մի կողմ քաշվեցինք, որ չխանգարենք նրան տախտակին նայելու։

Մակ Կոննորը կրկին հարցրեց.

— Ուրեմն, արքան g 8-ից h 7՞։

— Իհարկե։ Հիմա ամենակարևորը խուսափելն է։

Մակ Կոննորը հնազանդվեց, և մենք զնգացրինք բաժակը։

Իր սովորական ալարկոտ քայլվածքով Ջենտովիչը մոտեցավ և նայեց, թե ինչ քայլ ենք կատարել։ Հետո նա արքայական թևում h 2-ից h 4 շարժեց զինվորը ճիշտ այնպես, ինչպես կանխատեսել էր մեր խորհրդավոր օգնականը։

Իսկ վերջինս արդեն հուզված շշնջում էր.

— Նավակն առաջ, նավակը c 8-իդ c 4, այդ դեպքում նա հարկադրված կլինի նախ պաշտպանել իր զինվորը։ Սակայն դա նրան չի օգնի։ Ուշադրություն չդարձնեք նրա անցողիկ զինվորի վրա, c 3-ից ձիով վերցրեք d 5-ը, այդ ժամանակ հավասարակշռությունը կվերականգնվի։ Գրոհե՞ք պաշտպանվելու փոխարեն։

Մենք չէինք հասկանում, թե ինչի մասին է խոսում նա։ Նույն հաջողությամբ նա կարող էր չինարեն խոսել մեզ հետ։ Մակ Կոնորը կախարդվածի նման, առանց մտածելու կատարում էր այն, ինչ նրան հրամայում էին։ Մենք նորից զնգացրինք բաժակը՝ կանչելով Չենտովիչին։ Եվ այստեղ նա, ուշադիր նայելով տախտակին, առաջին անգամ վարանեց, մինչև կկատարեր քայլը։ Նա արեց այն նույն քայլը, որ կանխադուշակել էր անծանոթը։ Նա արդեն շուտ էր եկել հեռանալու, բայց այստեղ տեղի ունեցավ ինչ-որ նոր և անակնկալ մի բան. Չենտովիչը բարձրացրեց աչքերն ու զննեց մեր շարքերը։ Կասկածից վեր է, որ նա ցանկանում էր պարզել, թե այդ ով է մեզնից, որ այդպես եռանդուն դիմադրություն է ցույց տալիս իրեն։

Մեր հուզմունքն աճում էր րոպե առ րոպե։ Առաջ մենք խաղում էինք առանց հաղթանակի լուրջ հույսի, բայց հիմա այն միտքը, թե մենք կարող ենք կոտրել Չենտովիչի սառն ամբարտավանությունը, քաջալերում էր ամենքիս։ Առանց րոպե կորցնելու մեր բարեկամը ցույց տվեց հաջորդ քայլը։ Դողացող ձեռքով ես գդալը խփեցի բաժակին, և հասավ մեր հաղթանակի պահը։ Չենտովիչը, որ մինչ այդ կանգնած էր խաղում, հապաղեց, հապաղեց և ի վերջո նստեց սեղանի մոտ։ Նա աթոռին նըստեց դանդաղ ու ծանրորեն, բայց այդքանն էլ միանգամայն բավական էր, որ մենք վերջապես դառնայինք «նույն մակարդակի» խաղացողներ, թեկուզ և այդ բառի բուն իմաստով։ Մենք ստիպեցինք նրան վարվել մեզ հետ, ինչպես հավասարը հավասարի հետ, գոնե, արտաքուստ։ Նա նստած էր անշարժ, սևեռուն նայում էր տախտակին և մտածում քայլի վրա։ Նրա ծանր կոպերը գրեթե ամբողջովին ծածկել էին աչքերը։ Լարված մտածելուց նրա բերանը թեթևակիորեն բացվել էր, դա նրան հիմարավուն տեսք էր տալիս։ Չենտովիչը մտածեց մի քանի րոպե, հետո կատարեց քայլը և վեր կացավ։

Եվ մեր բարեկամն անմիջապես շշնջաց.

— Պատ։ Լավ է մտածված։ Բայց մի գնացեք այդ բանին։ Առաջարկեք փոխանակություն։ Անպայման փոխանակություն։ Դրանից հետո ոչ ոքի կլինի, նա ոչինչ չի կարող անել։

Մակ Կոննորը հնազանդվեց։ Երկու խաղացողների հաջորդ մանևրները (մենք բոլորս վաղուց արդեն դարձել էինք հասարակ վիճակագիրներ) ֆիգուրների՝ մեզ համար անհասկանալի տեղաշարժեր էին։ Յոթ քայլից հետո Զենտովիչը, մի փոքր մտածելով, դեպի մեզ ուղղեց հայացքը և ասաց. «Ոչ ոքի»։

Մի պահ լիակատար լռություն տիրեց։ Հանկարծ միանգամից լսելի դարձան և՛ ծովի աղմուկը, և՛ հարևան հյուրասրահի ռադիոն, և՛ վերին տախտակամածում ճեմողների յուրաքանչյուր քայլը, և՛ քամու բարակ սուլոցը պատուհանի փեղկերում։ Մենք չէինք համարձակվում շարժվել։ Ամեն ինչ այնպես անսպասելի կատարվեց, մենք պարզապես վախեցած էինք. չգիտես որտեղից հայտնված մարդը աշխարհի չեմպիոնին ստիպեց ենթարկվել իր կամքին, այն էլ կիսով չափ տանուլ տված պարտիայում։ Միայն Մակ Կոննորը լսելի շունչ քաշեց, ետ թեքվեց, և նրա շուրթերից պոկվեց գոհունակ «ահա»։ Ես կրկին ուշադիր նայեցի Զենտովիչին։ Ինձ առաջ էլ թվացել էր, թե խաղի վերջում նա գունատվել է։ Բայց աշխարհի չեմպիոնը կարողանում էր տիրապետել իրեն։ Առաջվա պես պահպանելով անտարբեր տեսքը, նա կոշտ ձեռքով տախտակից թափեց ֆիգուրները և հարցրեց.

— Յանկանո՞ւմ եք խաղալ երրորդ պարտիան, պարոնայք։

Հարցը տրված էր հանդիստ, զուտ գործնական տոնով, բայց զարմանալի բան. չեմպիոնը, կարծես բոլորովին չնկատելով Մակ Կոննորին, սևեռուն նայում էր մեր փրկարարի աչքերին։ Այնպես, ինչպես ձին ճանաչում է թամբի վրա վստահորեն նստող նոր փորձված հեծյալին, այնպես էլ Զենտովիչը գուշակեց, թե իսկապես ով է իր իսկական և միակ հակառակորդը։ Մենք էլ նրա հետ ակամա հայացքներս անծանոթին էինք։ հառել։ Բայց վերջինս դեռ չէր հասցրել պատասխանել, երբ Մակ Կոննորը պատվախնդրության մոլուցքի մեջ հաղթականորեն բացականչեց.

— Իհա՛րկե, անկասկած։ Միայն թե այս անգամ կխաղա այս պարոնը։ Նա մենակ՝ Զենտովիչի դեմ։

Եվ այստեղ կատարվեց ինչ-որ բոլորովին չնախատեսված մի բան։ Անծանոթը, որը դեռևս անհասկանալիորեն լարված նայում էր դատարկված տախտակին, ցնցվեց՝ լսելով այդ եռանդագին հայտարարությունը։ Տեսնելով, որ բոլոր հայացքներն իրեն են գամված, նա շփոթվեց.

— Ոչ մի դեպքում, պարոնայք, — կմկմալով ասաց նա ակնհայտ շփոթության մեջ,— դա անհնար է... Չէ՞ որ անցել է արդեն քսան տարի, ոչ, նույնիսկ քսանհինգ տարի այն ժամանակվանից, ինչ ես նստել եմ շախմատի տախտակի առաջ։ Ես միայն այժմ հասկացա, թե որքան ան-

քաղաքավարի վարվեցի՝ առանց թույլատվության ձեր խաղին խառնվելով։ Խնդրում եմ ներել ինձ հանդգնության համար։ Ես ձեզ այլևս չեմ խանգարի։

Եվ մինչև մենք կսթափվեինք զարմանքից, նա շրջվեց և դուրս եկավ սրահից։

— Բայց դա անհնար է,— որոտաց դյուրաբորբոք Մակ Կոննորը, բռունցքը խփելով սեղանին։ — Բոլորովին բացառված է, թե նա քսանհինգ տարի շախմատ չի խաղացել։ Բայց չէ՞ որ նա կանխատեսում էր յուրաքանչյուր կոմբինացիա, յուրաքանչյուր հանդիպակաց մանևր, գոնե, հինգվեց քայլ առաջ։ Քարից հո չուր չես քամի։ Դա պարզապես անհավանական է։ Այդպես է, չէ՞։

Վերջին հարցը Մակ Կոննորն ակամա ուղղեց Զենտովիչին, բայց չեմպիոնը չկորցրեց իր սառը հանգստությունը։

— Այդ մասին ես ոչինչ չեմ կարող ասել։ Բոլոր դեպքերում այդ պարոնի խաղում կար ինչ-որ ոչ բոլորովին սովորական և հետաքրքիր մի բան։ Դրա համար էլ ես դիտմամբ նրան հնարավորություն տվի պարտիան խաղալ այնպես, ինչպես ինքն էր ցանկանում։

Նա տեղնուտեղը ծուլորեն վեր կացավ և գործնականորեն ավարտեց խոսքը.

— Գուցե այդ պարոնը, կամ դուք, պարոնայք, կկամենաք վաղը խաղալ ևս մեկ պարտիա։ Ժամը երեքից ես ձեր տրամադրության տակ կլինեմ։

Մենք չէինք կարողանում զսպել մեր թեթևակի ժպիտները։ Մեզնից յուրաքանչյուրը հրաշալի հասկանում էր, որ բնավ էլ մեծահոգությունը չէր Զենտովիչին ստիպել հաղթանակը զիջելու մեր անծանոթ օգնականին։ Այդ ակնարկը ոչ այլ ինչ էր, եթե ոչ իր պարտությունը քողարկելու միամիտ մի փորձ, և մենք ավելի մեծ ցանկություն ունեցանք դառնալ այդ մեծամիտ ամբարտավանի վերջնական վարկաբեկման վկաները։ Մեզ՝ բոլոր պարապ ուղևորներիս, համակեց պատվախնդրության մի վայրենի մոլուցք։ Մեզ հրապուրում էր այն միտքը, թե այստեղ, մեր նավի վրա, բաց ծովում չեմպիոնի ձեռքից խլված կլինի առաջնության դափնին, և հեռագրական գործակալությունները ամբողջ աշխարհով մեկ կտարածեն այդ իրադարձության լուրը։ Դրան պետք է ավելացնել, որ մեզ սկսել էին հետաքրքրել մեր փրկարարի խորհրդավոր հայտնությունը, նրա միջամտությունը խաղին ամենակրիտիկական պահին, հակասությունը նրա հիվանդագին ամոթխածության և մասնագետի անսասան ինքնավստահության միջև։ Ո՞վ է այդ անծանոթը։ Գուցե մեր աչքի

առաջ հայտնվել է աշխարհին մինչև այժմ անհայտ շախմատային մի հանճար։ Կամ նա նշանավոր մաեստրո է, որն ինչ-որ պատճառով չի կամեցել հայտնել մեզ իր անունը։ Մենք բորբոքվում էինք, ամբողջ էությամբ քննարկելով այդ հնարավորություններից ամեն մեկը։ Ամենաաներևակայելի ենթադրությունները մեզ արդեն անհավանական չէին թվում, երբ մենք հիշում էինք նրա անհասկանալի երկչոտությունը, նրա անսպասելի հայտարարությունը, թե չի խաղացել արդեն բազմաթիվ տարիներ և այդ բոլորը հակադրում էինք նրա խաղի ակնհայտ վարպետությանը։ Մի բանում, սակայն, համամիտ էին բոլորը. պետք է այնպես անել, որ մրցությունը շարունակվի։ Մենք որոշեցինք գործադրել բոլոր ջանքերը և համոզել անծանոթին՝ մյուս օրը խաղալ Ջենտովիչի դեմ։ Մակ Կոնոլը խոստանում էր վճարել ծախսերը, իսկ ինձ, որպես նրա հայրենակցի (այդ ընթացքում մենք ստյուարդից իմացել էինք, որ անծանոթն ավստրիացի է), հանձնարարեցին նրան հաղորդել մեր բոլորի խնդրանքը։

Նրան գտնելու համար շատ ժամանակ պետք չեղավ։ Նա կարդում էր վերին տախտակամածի վրա, շեզլոնգի մեջ ձգված։ Ես դրանից օգտվեցի՝ նրան մի լավ զննելու համար։ Նա պառկել էր բարձին հենված, և նրա տեսքը շատ հոգնած էր։ Ինձ ապշեցրեց գույների լրիվ բացակայությունը նրա համեմատաբար երիտասարդ, խիստ գծերով դեմքի վրա։ Քունքերը բոլորովին սպիտակ էին։ Չգիտեմ ինչու, բայց ինձ մոտ ստեղծվեց մի այնպիսի տպավորություն, թե նա հանկարծակի է ծերացել։ Հենց որ ես մոտեցա, նա քաղաքավարությամբ կանգնեց և ներկայացավ։ Անունը, որ նա ասաց, պատկանում էր հին Ավստրիայում մեծ հարգանք վայելող մի ընտանիքի։ Ես հիշեցի, որ այդ ընտանիքի անդամներից մեկը Շուբերտի մոտ ընկերն էր, մի ուրիշը՝ ծեր կայսրի պալատական բժիշկը։ Դոկտոր Բ-ն ցնցվեց, երբ ես կրկնեցի Ջենտովիչի հետ խաղալու մասին մեր խնդրանքը։ Պարզվեց, որ նա չէր էլ կասկածում, թե խաղացել էր, այն էլ այդքան հաջող, աշխարհի փառաբանված չեմպիոնի դեմ։ Չգիտես ինչու, այդ մանրամասնությունը նրա վրա հատկապես ուժեղ տպավորություն գործեց։ Նա նորից ու նորից էր հարցնում. համոզվա՞ծ եմ, արդյոք, թե իր հակառակորդն իրոք միջազգային մրցանակների նշանավոր կրողն էր։ Շուտով ես հասկացա, որ այդ հանգամանքը շատ է հեշտացնում իմ միսիան։ Սակայն, զգալով, որ գործ ունեմ չափազանց զգայուն և կիրթ մի մարդու հետ, ես որոշեցի հիշատակել, թե պարտության դեպքում նյութական վնասը կկրի Մակ Կոնոլը։ Մի փոքր երկմտելով, Դոկտոր Բ-ն համաձայնեց մասնակցել մրցությանը, բայց խնդ-

րեց նախազգուշացնել իմ բարեկամներին, որ նրանք շատ մեծ հույսեր չդնեն իր շախմատային ընդունակությունների վրա։

— Որովհետև,— ավելացրեց նա մի տարօրինակ ժպիտով,— ես իսկապես չգիտեմ, կարո՞ղ եմ, արդյոք, խաղալ բոլոր կանոններով։ Հավատացնում եմ ձեզ. երբ ես ասացի, թե ձեռք չեմ տվել շախմատին գիմնազիական ժամանակներից, այսինքն քսան տարուց ավելի, այդ արեցի ոչ կեղծ համեստությունից։ Եվ նույնիսկ այն ժամանակ էլ ես ոչինչ չէի ներկայացնում ինձնից որպես շախմատիստ։

Դա ասվեց այնքան պարզ, որ ես վայրկյան իսկ չկասկածեցի նրա խոսքերի անկեղծությանը։ Բայց և այնպես, ես չէի կարող չառարկել նրան, թե ինձ ապշեցրեց այն ճշգրտությունը, որով նա վկայակոչում էր տարբեր չեմպիոնների խաղացած պարտիաների ամենաչնչին մանրամասնությունները։ Ամենայն հավանականությամբ նա շա՞տ ժամանակ է հատկացրել շախմատի տեսությունը ուսումնասիրելուն։

Դոկտոր Բ-ն նորից ժպտաց իր անհասկանալի ժպիտով.

— Շատ ժամանա՞կ։ Վկա է ասված. դա ճիշտ է։ Շախմատին ես չափազանց շատ ժամանակ եմ նվիրել։ Սակայն դա տեղի է ունեցել հատուկ, ես կասեի բացառիկ հանգամանքներում։ Դա բավական խճճված պատմություն է և կարող է մեր հրաշալի դարաշրջանի մասին գրված մի պատմվածքի նյութ դառնալ։ Գուցե դուք կզինվեք մի կես ժամվա համբերությա՞մբ...

Նա ցույց տվեց հարևան շեզլոնգը։ Ես գոհունակությամբ ընդունեցի հրավերը։ Մոտերքում ոչ ոք չկար։ Դոկտոր Բ-ն հանեց ակնոցը, դրեց կողքին և սկսեց.

— Դուք բարեհաճեցիք նկատել, որ իմ ազգանունը ծանոթ է ձեզ՝ Վիեննայի բնակչին։ Ենթադրում եմ, սակայն, որ դուք հազիվ թե լսած լինեք այն իրավաբանական գրասենյակի մասին, որ սկզբում ղեկավարում էինք ես ու հայրս, իսկ հետո՝ միայն ես։ Մենք չէինք ձեռնարկում այնպիսի գործեր, որոնք աղմուկ էին հանում թերթերում, և սկզբունքայնորեն խուսափում էինք նոր հաճախորդներից։ Ճիշտն ասած, մենք ընդհանրապես չէինք զբաղվում սովորական իրավաբանական պրակտիկայով, այլ սահմանափակվում էինք նրանով, որ տալիս էինք իրավաբանական խորհուրդներ և ղեկավարում էինք այն հարուստ վանքերի ունեցվածքը, որոնց հետ մոտիկ կապ ուներ հայրս, որն անցյալում կղերական կուսակցության դեպուտատ էր։ Բացի այդ (այժմ, երբ միապետությունն արդեն պատմության գիրկն է անցել, կարելի է բարձրաձայն ասել

այդ մասին) մեզ էր վստահված նաև կայսերական պալատի որոշ անդամների կապիտալների կառավարումը։

Մեր ընտանիքի կապերն արքունիքի և եկեղեցու հետ (իմ մի հորեղբայրը կայսեր պալատական բժիշկն էր, մյուսը՝ Զայտենշտետտենի վանահայրը) գալիս էին դեռևս նախորդ սերունդներից։ Մեզ մնում էր միայն պահել ու պահպանել այդ կապերը։ Հաճախորդների վստահությունը մեզ փոխանցվել էր ժառանգաբար, և այդ վստահության հետ փոխանցվել էին նաև ոչ բարդ, հանգիստ պարտականություններ։ Մեզնից պահանջվում էին գլխավորապես համեստություն ու նվիրվածություն՝ հատկություններ, որոնցով կատարելապես օժտված էր հայրս։ Նրա շրջահայեցության շնորհիվ էր միայն, որ մեր հաճախորդներն զգալի արժեքներ պահպանեցին ինֆլյացիայի տարիներին, նաև հեղաշրջումից հետո։ Հետո, երբ Գերմանիայում իշխանությունը զավթեց Հիտլերը և սկսվեց վանքերի ու եկեղեցիների ունեցվածքի բռնագրավումը, արտասահմանում որոշ քայլեր ձեռնարկվեցին գոնե շարժական գույքը փրկելու համար։ Բանակցություններն ընթանում էին մեր միջոցով, և գործարքները կայսերական պալատի ու Վատիկանի միջև, որոնք երբեք հրապարակայնության չեն արժանանա, հայտնի էին միայն մեր երկուսին։ Մեր գրասենյակը միանգամայն աննշան էր, մենք նույնիսկ ցուցանակ չունեինք դռան վրա, մենք դիտավորյալ հեռու էինք պահում մեզ միապետական շրջաններից, և դա մեզ պաշտպանում էր հոգի հանող հարցուփորձերից։ Ավստրիական իշխանությունները չէին էլ կասկածում, թե բոլոր այդ տարիների ընթացքում կայսեր գերդաստանի գաղտնի ցրիչները չորրորդ հարկի մեր համեստ գրասենյակն էին հասցնում չափազանց կարևոր նամակներ և տանում նրանց պատասխանները։

Հայտնի է, որ շատ ավելի առաջ, քան իրենց բանակները կշարժեին ողջ աշխարհի դեմ, Գերմանիային հարևան բոլոր երկրներում նացիստներն սկսեցին նույնքան լավ վարժեցրած և ոչ պակաս վտանգավոր ռազմականացված զորամասեր կազմակերպել խաբված, մերժված ու զրկված մարդկանցից։ Ամեն մի գրասենյակում, ամեն մի ձեռնարկության ներսում գոյություն ունեին նրանց այսպես կոչված բջիջները, նրանք լրտեսներ ու հետախույզներ ունեին ամենուրեք, ներառյալ Դոլֆուսի և Շուշնիգի անձնական ռեզիդենցիաները։ Մեր աննշան գրասենյակում նույնպես կար նրանց գործակալը, որի մասին, ավաղ, ես իմացա չափազանց ուշ։ Դա խղճուկ և անտաղանդ մի պաշտոնյա էր, որին ես վերցրել էի մի քահանայի խորհրդով՝ մեր գրասենյակին իսկական գործարար հիմնարկության տեսք տալու համար։ Մենք նրան տալիս էինք միայն

ամենաանմեղ հանձնարարությունները. նա պատասխանում էր զանգերին ու կարում թղթերը, թղթեր, որոնք, հասկանալի է, որևէ լուրջ նշանակություն չունեին։ Նրան թույլ չէր տրվում բացել նամակները։ Ամենակարևոր նամակները միայն մեկ օրինակ մեքենագրում էի ինքս։ Բոլոր հիմնական փաստաթղթերը ես պահում էի ինձ մոտ, տանը, իսկ գաղտնի բանակցությունները վարում էի միայն վանքի կուսանոցում կամ հորեղբորս բժշկական առանձնատանը։ Շնորհիվ այդ նախազգուշական միջոցների, մեզ կցված լրտեսն էական ոչինչ չէր կարողանում իմանալ։ Բայց, ըստ երևույթին, դժբախտ պատահականությունը բացել էր այդ սնափառ մարդու աչքերը, և նա հասկացել էր, որ մենք չենք վստահում իրեն, որ իր թիկունքում հետաքրքիր բաներ են կատարվում։ Հնարավոր է, որ իմ բացակայությամբ թղթատարներից մեկն անփութորեն «հորին մեծություն» էր ասել պայմանական «բարոն Բեռնի» փոխարեն։ Նույնպես բացառված չէ, որ անպիտանը թաքուն բացում էր նամակները։ Ինչ էլ որ լիներ, ավելի շուտ, քան ես որևէ բան կկասկածեի, նա արդեն մեզ հետևելու հրաման էր ստացել Մյունխենից կամ Բեռլինից։ Արդեն ավելի ուշ, իմ ձերբակալությունից հետո, ես հիշեցի, թե ինչպես նա, սկզբում ծույլ և անգործունյա մարդը, վերջին ամիսներին հանկարծ սկսեց արտասովոր եռանդ ցուցաբերել. նա անընդհատ համառորեն առաջարկում էր ինձ ուղարկել իմ նամակները։ Խոստովանում եմ. ես որոշ անզգուշություն թույլ տվի, բայց մի՞թե Հիտլերը չկարողացավ խաբել ու խորամանկորեն շրջանցել մեր ժամանակի խոշորագույն դիվանագետներին և գեներալներին։

Գեստապոն անընդհատ հետևում էր ինձ. դա ակնհայտորեն հաստատում է այն փաստը, որ էսէսականներն ինձ ձերբակալեցին նույն օրը երեկոյան, երբ հրաժարվեց Շուշնիգը, և մի օր առաջ, նախքան Հիտլերը Վիեննա կմտներ։ Բարեբախտաբար, ռադիոյով լսելով Շուշնիգի հրաժեշտի խոսքը, ես հասցրի այրել բոլոր ամենակարևոր փաստաթղթերը, իսկ մյուսները, ներառյալ այն արժեքավոր թղթերի ստացականները, որոնք գտնվում էին արտասահմանում և պատկանում էին վանքերին ու երկու արքիդուքսերի, թաքցրի կեղտոտ սպիտակեղենի զամբյուղում, որը հորեղբորս տուն տարավ իմ հավատարիմ սպասուհին։ Այդ բոլորն արվեց տառացիորեն վերջին րոպեին, երբ հիտլերականներն արդեն ներխուժում էին իմ տունը։

Դոկտոր Բ-ն ընդհատեց իր պատմությունը գլանակը վառելու համար։ Բոնկեց լուցկին, և ես տեսա, որ դոկտորի բերանի աջ անկյունը ջղաձգորեն ցնցվում է։ Ես առաջ էլ նկատել էի այդ ակնթարթային, հա-

դիվ նշմարվող ցնցումը։ Այն կրկնվում էր ամեն մի երկու-երեք բոպեն մեկ և տալիս էր նրա դեմքին չափազանց անհանդիստ մի արտահայտություն։

— Դուք, հավանաբար, սպասում եք, թե ես կպատմեմ համակենտրոնացման ճամբարի մասին, ուր նետվել էին բոլոր նրանք, ովքեր նվիրված էին Ավստրիային և ենթարկվում էին այնտեղ տանջանքների, կրտտանքների և ստորացումների։ Ոչ մի նման բան ինձ հետ չկատարվեց։ Ես պատկանում էի ուրիշ կատեգորիայի։ Ինձ չտեղավորեցին այն դժբախտների հետ, որոնց վրա բոլոր ձևերով՝ ծվատելով հոգիներն ու մարմինները, իրենց կուտակված մաղձն էին թափում հիտլերականները։ Ինձ միացրին այն մարդկանց ոչ մեծ խմբին, որոնցից նացիստները փող կամ կարևոր տեղեկություններ պոկելու հույս ունեին։ Իմ համեստ անձն ինքնին, իհարկե, գեստապոյի համար ոչ մի հետաքրքրություն չէր ներկայացնում, բայց նրանք կռահում էին, որ ես ու հայրս փոխդիր անձինք էինք՝ իրենց ամենակատաղի թշնամիների կարողության խնամակալներն ու հավատարմատարները։ Նրանք կամենում էին ինձ ստիպել իրենց ձեռքը հանձնելու վանքերը մերկացնող փաստաթղթերը, որպեսզի կապիտալը թաքցնելու մեկուղրանք ներկայացնեն նրանց։ Նրանք կամենում էին նյութեր ստանալ՝ ընդդեմ կայսերական պալատի և միապետությանը նվիրված բոլոր մարդկանց։ Նրանք կասկածում էին, և ոչ առանց հիմքի, որ ֆոնդերի մի զգալի մասը, որոնք անցնում էին մեր ձեռքով, լավ թաքնված և անմատչելի են իրենց ոտնձգություններին։ Դրա համար էլ նրանք ինձ ձերբակալեցին հենց առաջին օրը. նրանք հույս ունեին փորձված մեթոդներ կիրառելով՝ անհրաժեշտ տեղեկություններ պոկել ինձնից։

Այդ պատճառով իմ կատեգորիայի մարդիկ, որոնցից անհրաժեշտ էր պոկել փող կամ կարևոր փաստաթղթեր, համակենտրոնացման ճամբարներ չուղարկվեցին։ Դուք, երևի, հիշում եք, որ մեր կանցլերը, ինչպես նաև բարոն Ռոտշիլդը, որի բարեկամներից նրանք միլիոններ ստանալու հույսեր ունեին, չնետվեցին ճամբար, փշալարերից ներս, ընդհակառակը, նրանց համար ստեղծվեցին հատուկ պայմաններ. նրանք տեղավորվեցին «Մետրոպոլ» հյուրանոցի առանձին սենյակներում. հյուրանոցում գտնվում էր գեստապոյի շտաբը։ Նույն պատվին արժանացա և ես, թեպետ ոչինչ չէի ներկայացնում ինձնից։

Առանձին սենյակ հյուրանոցում. անսովոր կերպով մարդասիրական է հնչում, այդպես չէ՞։ Բայց հավատացեք, նրանք բնավ էլ չէին ուզում մարդկային պայմաններ ստեղծել մեզ համար։ Մեզ՝ «աչքի ընկնող մարդ-

կանց», քսան տեղանոց փոքրիկ սենյակներով սառցե բարաքները քշելու փոխարեն, նրանք տրամադրեցին համեմատաբար տաք համարներ հյուրանոցում, ըստ որում, նրանք ղեկավարվում էին նուրբ հաշվարկով։ Նրանք մտադրվել էին ստանալ մեղնից անհրաժեշտ տեղեկությունները ոչ թե դիմելով սովորական դարձած ծեծին ու խոշտանգումներին, այլ օգտագործելով ավելի նուրբ տանջանք՝ լրիվ մեկուսացման տանջանքը։ Նրանք մեզ ոչինչ չէին անում։ Մեզ պարզապես տեղավորել էին վակուումում, դատարկության մեջ, քաջ գիտենալով, որ մարդու հոգու վրա ամենից ավելի ազդում է մենակությունը։ Արտաքին աշխարհից մեզ ամբողջապես մեկուսացնելով՝ նրանք համոզված էին, որ ներքին լարվածությունն ավելի շուտ կստիպի մեզ խոսել, քան ցուրտն ու մտրակները։

Առաջին հայացքից այն սենյակը, ուր ինձ տեղավորել էին, տհաճ տպավորություն չէր թողնում. կար դուռ, սեղան, մահճակալ, բազկաթոռ, լվացարան, վանդակապատ լուսամուտ։ Սակայն դուռը փակ էր զոր ու գիշեր, սեղանի վրա ոչ գիրք կար, ոչ թերթ, ոչ մատիտ, ոչ թուղթ, լուսամուտի առաջ աղյուսե պատն էր։ Իմ «ես»ը և իմ մարմինը գտնվում էին դատարկության մեջ։ Ինձնից վերցրել էին ամեն ինչ. ժամացույցը, որ չիմանայի ժամանակը, մատիտը, որ չկարողանայի գրել, գրչահատը, որ չկարողանայի կտրել երակս, ինձնից խլել էին նույնիսկ իմ ամենաանմեղ մխիթարանքը՝ ծխախոտը։ Մարդկային միակ էակը, որին ես կարող էի տեսնել, բանտային հսկիչն էր, բայց նրան արգելված էր խոսել ինձ հետ և պատասխանել իմ հարցերին։ Ես չէի տեսնում մարդկային դեմքեր, չէի լսում մարդկային ձայներ, առավոտից մինչև գիշեր և գիշերից մինչև առավոտ ես ոչ մի սնունդ չունեի աչքերիս, լսողությանս և մյուս զգացմունքներիս համար։ Ես մենակ էի ինքս ինձ և մի քանի անշունչ առարկաների հետ՝ սեղան, մահճակալ, լուսամուտ, լվացարան։ Ես մենակ էի, ինչպես ջրասուզակը բաթիսֆերայում, որն ընկղմվել է լռության սև օվկիանոսը և որն աղոտ կերպով գիտակցում է, որ փրկության պարանը կտրվել է և որ իրեն երբեք չեն հանի այդ լռին անդնդից...

Ես ոչինչ չէի անում, ոչինչ չէի լսում, ոչինչ չէի տեսնում, մանավանդ գիշերները։ Դա դատարկություն էր առանց ժամանակի և առանց տարածության։ Կարելի էր քայլել անկյունից անկյուն, և ամբողջ ժամանակ քեզ հետևում էին քո մտքերը։ Այստեղից՝ այնտեղ, այնտեղից՝ այստեղ... Բայց մտքերին էլ ինչ-որ հենարան է պետք, այլապես նրանք կսկսեն անմտորեն պտտվել իրենք իրենց շուրջը. նրանք նույնպես չեն դիմանում դատարկությանը։ Լուսաբացից մինչև երեկո սպասում էիր ինչ-որ բանի, բայց ոչինչ չէր պատահում։ Դու սպասում էիր, սպասում, և

ոչինչ չէր կատարվում։ Եվ այդպես սպասում էս, սպասում, միշտ մտածում ես, մտածում, մտածում, մտածում, մինչև սկսում են ցավել քունքերդ։ Ոչինչ։ Դու առաջվա պես մենակ ես։ Մենակ։ Մենակ...

Դա շարունակվեց երկու շաբաթ։ Ես ապրում էի ժամանակից դուրս, կյանքից դուրս։ Եթե սկսվեր պատերազմ, ես երբեք չէի իմանա այդ մասին. իմ աշխարհը սահմանափակվում էր սեղանով, դռնով, մահճակալով, լվացարանով, բազկաթոռով, լուսամուտով, պատերով։ Ամեն անգամ, երբ ես նայում էի պատուհաններին, ինձ թվում էր, թե ինչ-որ մեկը նրանց գիգզագաձև տեսքը կրկնում է իմ ուղեղում։

Վերջապես սկսվեցին հարցաքննությունները։ Կանչում էին հանկարծակի, ես չգիտեի՝ ցերեկ է, թե՞ գիշեր։ Հետո պետք էր սպասել չգիտես որտեղ։ Վերջապես դուք հայտնվում էիք սեղանի առաջ, որի մոտ նստած էին երկուսը՝ համազգեստ հագած։ Սեղանի վրա թափված էին թղթերի կույտեր՝ փաստաթղթեր, որոնց պարունակությունը դուք չգիտեք։ Այնուհետև սկսվում էին հարցերը. տեղի և անտեղի, անմիջական և թելադրող, վարագուրող և թակարդող։ Մինչ դուք պատասխանում էիք նրանց, օտար չար մատները թերթում էին թղթերը, և դուք չգիտեիք, թե ինչ է գրված նրանց վրա, և օտար, չար ձեռքը գրանցում էր ձեր ցուցմունքները, և դուք չգիտեիք, թե, իսկապես, ինչ է գրում նա։ Բայց ամենասոսկալին այդ հարցաքննություններում այն էր ինձ համար, որ ես չգիտեի և չէի կարող իմանալ, թե հատկապես ինչ է հայտնի գեստապոյին այն օպերացիաների մասին, որ տեղի էին ունենում իմ գրասենյակում, թե էլի ինչ են ուզում դուրս քաշել նրանք ինձնից։ Ես ձեզ արդեն ասել եմ, որ վերջին րոպեին հորեղբորս հանձնելու համար իմ տնտեսուհուն էի հանձնել կարևորագույն փաստաթղթեր։ Ստացե՞լ է նա, արդյոք, այդ փաստաթղթերը։ Հատկապես ի՞նչ էր իմացել իմ ծառայողը։ Ի՞նչ նամակներ էր ճանկել նա։ Ի՞նչ կարող էին կորզել նրանք որևէ տխմարավուն քահանայից այն վանքերից մեկում, որոնց գործերով մենք զբաղվում էինք։

Իսկ նրանք հարցնում էին ու հարցնում։ Ի՞նչ արժեքավոր թղթեր եմ գնել ես այսինչ վանքի համար։ Ո՞ր բանկերի հետ եմ ունեցել պաշտոնական հարաբերություններ։ Ճանաչե՞լ եմ այսինչին, թե՞ ոչ։ Նամակագրական կապեր ունեցե՞լ եմ Շվեյցարիայի և էլի, աստված գիտե, թե որտեղի հետ։ Ես չէի կարող գուշակել, թե մինչև ուր են փորփրել նրանք, և իմ ամեն մի պատասխանը լի էր ահեղ սպառնալիքով ինձ համար։ Խոստովանելով որևէ բան, որ նրանք դեռ չգիտեին, ես կարող էի անտեղի կերպով հարվածի տակ դնել որևէ մեկին, շարունակելով լռել՝ ես վնասում էի ինձ։

Բայց հարցաքննությունները դեռևս ամենավատը չէին։ Ամենից վատը հարցաքննություններից հետո դատարկությունն վերադառնալն էր՝ նույն սենյակը նույն սեղանով, նույն լվացարանով, նույն պաստառներով։ Մնալով մենակ՝ ես անմիջապես սկսում էի պրպտել իմ հիշողության մեջ այն ամենը, ինչ տեղի էր ունեցել հարցաքննության ժամանակ, մտածել, թե ինչպես կարող էի ես պատասխանել ավելի խելացի, ծանրութեթև անել, թե ինչ կասեմ հաջորդ անգամ, ցրելու համար այն կասկածը, որն ստեղծվել էր իմ անխոհեմ դիտողությունից։

Այդ բոլորը ես՝ տնտղում էի իմ մտքում, կշռադատում քննիչին ասած ամեն մի բառս, հիշողությանս մեջ վերականգնում նրա հարցերն ու իմ պատասխանները։ Ես ճգնում էի հասկանալ, թե իմ ցուցմունքների որ մասն է անցկացվում արձանագրության մեջ, թեև - հրաշալի գիտակցում էի, որ հաշվել և որոշակի դարձնել այդ ամենը պարզապես անկարելի է։ Հենց որ ես մենակ էի մնում դատարկության մեջ, մտքերս անդադար սկսում էին պտտվել իմ ուղեղում, ծնելով նորանոր ենթադրություններ, թունավորելով անգամ քունս։ Ամեն անգամ գեստապոյում հարցաքննությունից հետո անգթորեն գործի էին անցնում իմ սեփական մտքերը։ Նրանք կրկին վերարտադրում էին հարցաքննության տանջանքներն ու տառապանքները, և դա, թերևս, ավելի սարսափելի էր, որովհետև քննիչի մոտ վերջին հաշվով ամեն ինչ ավարտվում էր որոշ ժամանակ հետո, իսկ հենց նոր ապրածի կրկնությունը իմ գիտակցության մեջ, որ շղթայված էր նենգավոր միայնությամբ, վերջ չուներ։ Առաջվա պես ինձ հետ էին սեղանը, լվացարանը, մահճակալը, պաստառները, լուսամուտը։ Ոչ մի բան չէր շեղում իմ ուշադրությունը, չկար ոչ գիրք, ոչ ամսագիր, ոչ նոր դեմք, ոչ մատիտ, որով կարելի լիներ որևէ բան գրել, ոչ լուցկի՝ մատների մեջ պտտեցնելու համար, ոչինչ, բոլորովին ոչինչ։

Այստեղ միայն ես ամբողջովին գիտակցեցի, թե ինչ դիվային հնարամտությամբ, մարդկային հոգեբանության ինչպիսի սպանիչ իմացությամբ էր մտածված հյուրանոցում բանտային միայնության այդ սիստեմը։ Համակենտրոնացման ճամբարում, հավանաբար, ինձ կվիճակվեր քարեր կրել ձեռնասայլակով՝ արյունոտելու աստիճան քերելով ձեռքերս, մինչև որ ոտքերս կփայտանային, ապրել գարշահոտ, սառը խցի մեջ երկու տասնյակ նույնպիսի դժբախտների հետ։ Բայց չէ՞ որ այնտեղ կլինեին մարդկային դեմքեր, տարածություն, ձեռնասայլակ, ծառեր, աստղեր, այնտեղ կարելի կլիներ կանգնեցնել հայացքն ինչ-որ բանի վրա... Իսկ այստեղ շուրջս երբեք ոչինչ չէր փոխվում, ամեն ինչ ցնդելու չափ

անփոփոխ էր մնում։ Ոչինչ չէր փոխվում իմ մտքերում, ինձ հետապնդող գաղափարներում և հիվանդագին հաշվարկներում։ Հենց դրան էլ նրանք հետամուտ էին. նրանք ուզում էին, որ մտքերը խեղդեին ինձ, խեղդեին այնքան ժամանակ, մինչև որ ես կսկսեի շնչահեղձ լինել։ Այդ ժամանակ ես չէի ունենա այլ ելք, քան հանձնվել և վերջապես խոստովանել, խոստովանել այն ամենը, ինչ հարկավոր էր նրանց, մատնել մարդկանց և փաստաթղթերը։

Աստիճանաբար ես սկսեցի զգալ, որ դատարկության սաստիկ ճնշման տակ սկսում են տեղի տալ իմ նյարդերը։ Գիտակցելով, թե որքան է դա վտանգավոր, ես ամբողջ ուժով լարում էի իմ կամքը և, ինձ վրա վերահսկողությունս վերջնականապես չկորցնելու համար փորձում էի զբաղվել որևէ բանով։ Ոտանավորներ էի արտասանում, աշխատում էի հիշողության մեջ վերականգնել այն ամենը, ինչ մի ժամանակ անգիր գիտեի՝ ժողովրդական երգեր, մանկական տարիների փոքրիկ բանաստեղծություններ, Հոմերոս, որ մեզ սովորեցնում էին գիմնազիայում, քաղաքացիական օրենսգրքի պարագրաֆները։ Այնուհետև ես սկսեցի լուծել թվաբանական խնդիրներ, գումարում և բաժանում էի մտքումս բոլոր հնարավոր թվերը, սակայն իմ գիտակցությունը կառչելու ոչինչ չուներ։ Ես արդեն ոչնչի վրա կենտրոնանալ չէի կարողանում։ Իմ ուղեղում ծընվում էր միշտ միևնույն միտքը և սկսում էր գործել կայծակնային արագությամբ։ Ի՞նչ գիտեն նրանք։ Ի՞նչ եմ ասել երեկ, ի՞նչ պետք է ասեմ հաջորդ անգամ։

Այդ վիճակը, որը հաղորդելն անկարելի է, տևեց չորս ամիս. հեշտ է գրել՝ ընդամենը ութ տող։ Հեշտ է և ասել՝ ընդամենը մի քանի վանկ։ Քառորդ վայրկյանում շուրթերը կարտասանեն այդ հնչյունները, չո՞ր ամիս։ Սակայն ո՞վ կարող է ընդգրկել և չափել, թե որքան անսահման տևեց ժամանակից ու տարածությունից դուրս այդ ժամանակը։ Դա հնարավոր չէ պատմել ու նկարագրել, և ոչ ոքի չես կարող բացատրել, թե ինչպես է սպանում և ավերում մարդուն միայնությունը, երբ շուրջը միայն դատարկություն է, դատարկությունը և միշտ նույն սեղանը, և՛ մահճակալը, և՛ լվացարանը, և՛ պատուհանները, և՛ լռությունը, և՛ միշտ նույն ծառայողը, որը չբարձրացնելով աչքերը դռնից ներս է խցկում կերակուրը, միշտ նույն մտքերը, որոնք գիշերը հետապնդում են քեզ, մինչև սկսում ես կորցնել գիտակցությունդ։

Մի քանի մանր-մունր նշաններից ես սոսկումով հասկացա, որ իմ ուղեղը դադարում է նորմալ գործել։ Սկզբում ես հարցաքննության էի գնում միանգամայն պարզ գլխով։ Ես ցուցմունքները տալիս էի հան-

գիստ և զգույշ, և պարզ գիտակցում էի, թե ինչ պետք է ասեմ, և ինչը՝ ոչ։ Իսկ այժմ այն ամենը, ինչ ես կարող էի, դա այն էր, որ կմկմալով իրար էի կպցնում պարզագույն ֆրազներ, որովհետև աչքերս անընդհատ հետևում էին գրչին, որը թռչկոտում էր թղթի վրայով՝ գրի առնելով իմ ցուցմունքները, և ես ինքս էլ ուզում էի սլանալ սեփական մտքերիս ետևից։ Ես զգում էի, որ դադարում եմ ինձ իշխել։ Հասկանում էի, որ մոտենում է այն պահը, երբ իմ փրկության համար ես կպատմեմ ամենը, ինչ գիտեմ, գուցե և ավելին։ Այդ հեղձուցիչ դատարկությունից պոկվելու համար ես կմատնեմ տասներկու հոգու, կբացեմ նրանց գաղտնիքները, առանց որևէ շահի կդավաճանեմ նրանց, հասնելով, գուցե, մի կարճատև դադարի միայն։

Մի երեկո բանը նրան հասավ, որ երբ բանտային հսկիչը բերեց կերակուրը, ինձ համակեց հուսահատության մի այնպիսի նոպա, որ ես հանկարծ գոռացի նրա ետևից.

— Տարեք ինձ քննիչի մոտ։ Ես ուզում եմ ամեն ինչ խոստովանել։ Ես կասեմ նրանց, թե որտեղ են գտնվում թղթերն ու փողերը։ Ես նրանց ամեն ինչ կասեմ։ Ամե՞ն ինչ։

Սակայն, բարեբախտաբար, նա արդեն չէր լսում ինձ կամ չէր ուզում լսել։

Եվ ահա, այդ ծայրահեղ հուսալքության պահին կատարվեց անակնկալ մի բան։ Տեղի ունեցավ մի իրադարձություն, որը խոստանում էր փրկություն, թող լինի ժամանակավոր, բայց և այնպես փրկություն։ Հուլիսի վերջն էր, օրը մութ էր, շարագույժ, անձրևային։ Այդ բոլոր մանրամասնությունները ես պարզ եմ հիշում, որովհետև միջանցքի պատուհաններին, որով ինձ տանում էին, թմբկահարում էր անձրևը։ Ես հարկադրված էի սպասել քննիչի առանձնարանի նախասենյակում։ Հարցաքննությունից առաջ միշտ ստիպում էին երկար սպասել, դա մտնում էր նրանց սիստեմի մեջ։ Նախ գրգռում էին նյարդերը գիշերային հանկարծակի կանչով, հետո, երբ դուք ձեզ հավաքում էիք և նախապատրաստվում փորձությանը, երբ ձեր կամքն ու միտքը լարվում էին և պատրաստվում դիմադրության, ձեզ ստիպում էին սպասել, փակ դռան առաջ կանգնել մեկ, երկու, երեք ժամ։ Այդ անիմաստ դադարը հաշվված էր ձեզ ֆիզիկապես և բարոյապես ընկճելու համար։ Այդ հինգշաբթի օրը, հուլիսի 27-ին (հատուկ պատճառներ կան, որ ես հիշեմ այդ թիվը), նրանք ինձ պահեցին առանձնապես երկար։ Ժամացույցը խփեց երկրորդ անգամ, իսկ ես դեռ սպասում էի՝ կանգնած նախասենյակում։ Ինքնին հասկանալի է, որ ինձ երբեք թույլ չէին տալիս նստել, և երկու ժամում ոտքերս ամ-

բողջովին ընդարմացել էին։ Սենյակում, որտեղ ես սպասում էի, օրացույց էր կախված։ Դժվար է բացատրել ձեզ, թե ինչպես էի ես ուզում տեսնել որևէ տպագիր բան, այդ պատճառով էլ ես հմայված պես սեռուն նայում էի այդ թվերին ու տառերին. «Հուլիսի 27»։ Ես պարզապես աչքերով խժռում էի դրանք։ Հետո դարձյալ սպասում էի և էլի էի սպասում՝ նայելով դռանը, մտածելով. ե՞րբ, վերջապես, կբացվի այն։ Ես մտածում էի, թե ինչ հարցեր կտան այս անգամ իմ ինկվիզիտորները, բայց հիանալի հասկանում էի, որ նրանք կհարցնեն ինչ-որ բոլորովին հակառակն այն բանի, ինչին ես պատրաստվել եմ։ Բայց և այնպես, չնայած այդ ամենին, ես օրհնում էի և՛ այդ տանջալի անհայտությունը, և՛ ֆիզիկական հոգնածությունը. չէ՞ որ ես գտնվում էի ուրի՜շ, ո՛չ իմ սենյակում։ Այդ սենյակն իմից մի փոքր մեծ էր, մեկի փոխարեն երկու լուսամուտով, առանց մահճակալի, առանց լվացարանի և առանց լուսամուտի վրա միլիոն անգամ տեսած ճեղքի։ Դուռը ներկված էր ուրիշ գույնով, պատի մոտ ուրիշ բազկաթոռ էր, իսկ ձախ կողմում մի փոքրիկ պահարան էր դրված թղթերի համար և կախիչ, որի վրա կախված էր երեք թե չորս թաց շինել՝ իմ տանջարարների շինելները։ Իմ առաջ ինչ-որ նոր բան կար՝ թարմ տեսարան կարոտից մաշված իմ աչքերի համար, և ես ագահորեն ներծծում էի բոլոր մանրամասնությունները։

Ես զննում էի շինելների ամեն մի ծալքը։ Ես նկատեցի, օրինակ, որ թաց օձիքներից մեկի վրա մի կաթիլ է կախված և, դա ձեզ, հավանաբար, ծիծաղելի կթվա,- ես անիմաստ հուզմունքով սպասում էի, թե կպոկվի՞, արդյոք, այդ կաթիլն ի վերջո, և կգլորվի՞ ներքև, թե կկարողանա հաղթահարել երկրի ձգողությունը և մնալ տեղում։ Աղնիվ խոսք, մի քանի րոպե շարունակ ես, շունչս պահած, դիտում էի այդ կաթիլը, կարծես թե նրանից էր կախված իմ կյանքը։ Երբ կաթիլը վերջապես գլորվեց, ես սկսեցի հաշվել շինելների կոճակները. մեկի վրա կար ութ կոճակ, մյուսի վրա՝ նույնքան, երրորդի վրա՝ տասը։ Հետո ես սկսեցի համեմատել տարբերանշանները։ Չեմ էլ փորձի պատմել ձեզ, թե ինչպես էին զվարճացնում ինձ այդ հիմար, անպետք մանրուքները, ինչպես էին նրանք ծաղրում և հագեցնում իմ ծարաված աչքերը։ Եվ հանկարծ, բոլորովին անսպասելի, ես տեսա այնպիսի մի բան, որը վերջնականորեն դյութեց իմ հայացքը։ Ես նկատեցի, որ շինելներից մեկի կողքի գրպանը թեթևակիորեն դուրս է ցցված։ Ես ավելի մոտեցա։ Ըստ գրպանում գտնվող առարկայի ուղղանկյունաձև ուրվագծման, ես կռահեցի, որ դա գիրք է։ Ծընկներս դողացին։ Ահա արդեն չորս ամիս է, ինչ իմ ձեռքում գիրք չի եղել, այնպես որ նույնիսկ այն միտքը, թե բառերը կարող են կազմել տողեր,

տողերը՝ էջեր, տպագիր թերթեր և, վերջապես, գիրք, գի՛րք, որտեղ կարելի է գտնել և հիշել նոր, ինձ դեռևս անհայտ, հետաքրքիր մտքեր՝ այդ բոլորը գրգռում ու միաժամանակ շշմեցնում էին ինձ։

Հիպնոսված պես նայում էի դուրս ցցված գրպանին, որտեղ գիրքն էր, նայում էի այնպիսի կրքով, որ կարծես ուզում էի հայացքիս հրով անցք բացել շինելի վրա։ Ի վերջո ես արդեն չկարողացա զսպել իմ անհամբերությունը։ Ձեռքերս դողում էին այն մտքից, թե ես կարող եմ շոշափել գիրքը, թեկուզև շինելի կտորի վրայից։ Հաշիվ չտալով ինձ, թե ինչ եմ անում, ես ավելի մոտեցա։

Բարեբախտաբար հսկիչն ուշադրություն չէր դարձնում իմ ոչ այնքան էլ սովորական վարքին։ Ամենայն հավանականությամբ, նա բնական էր համարում, որ երկու ժամ ոտքի վրա անցկացրած մարդը ցանկանում է հենվել պատին։ Եվ ահա, ես արդեն կանգնած էի շինելին բոլորովին մոտ։ Աննկատելիորեն նրան դիպչելու հնարավորություն ունենալու համար ես ձեռքերս դրեցի մեջքիս։ Շոշափեցի գրպանը և համոզվեցի, որ նրա ներսում իրոք ուղղանկյունաձև, ծալվող և թեթևակիորեն շրշացող մի բան կա՝ գիրք է, գի՛րք։ Եվ հանկարծ ինձ խայթեց մի միտք. «Գողացիր այդ գիրքը։ Եթե քեզ հաջողվի այդ անել, դու կարող ես թաքցնել այն քո սենյակում և կարդա՛լ, կարդալ, կարդալ, վերջապես նորի՛ց կարդալ»։ Հավիվ ծագեց այդ միտքն իմ ուղեղում, երբ նրա թույնն սկսեց գործել անմիջապես։ Ականջներս սկսեցին դժժալ, սիրտս սկսեց խփել, սառած մատներս հրաժարվեցին ենթարկվել։ Բայց երբ անցավ սկզբնական ընդարմացումը, ես աննկատելիորեն սեղմվեցի շինելին և, աչքերս ոչ մի վայրկյան չհեռացնելով հսկիչից, մեջքիս վրա թաքցրած ձեռքերով սկսեցի դուրս հրել գիրքը գրպանից։ Ավելի վեր, էլ ավելի վեր, հեղո՝ ցնցում, ես զգույշ ու թեթև ձգեցի, և իմ ձեռքում հայտնվեց մի ոչ մեծ գրքույկ։

Միայն այդ ժամանակ ես վախեցա նրանից, ինչ արել էի։ Նահանջելն անհնար էր։ Ինձ ի՞նչ էր մնում անել։ Ես ետևից անդրավարտիքիս տակ խրեցի գիրքն այնպես, որ այն մնար գոտու տակ, հետո աստիճանաբար այն մղեցի դեպի ազդրս։ Այժմ արդեն ես կարող էի այնտեղ պահել գիրքը՝ ձեռքերս զինվորականի պես կարերին սեղմած։ Հարկավոր էր փորձել։ Ես մի քայլ հեռացա կախիչից, երկու քայլ, երեք քայլ։ Հիանալի է։ Կարելի է վայր չդցել և տանել գիրքը, եթե միայն պինդ սեղմեմ գոտիս։

Այնուհետև սկսվեց հարցաքննությունը։ Այն ինձանից պահանջեց առավել մեծ լարում, քան սովորաբար։ Հարցերին պատասխանելով՝ ես չէի մտածում իմ պատասխանների վրա. բոլոր ճիգերս կենտրոնացրել էի

այն բանի վրա, որ չթողնեմ գիրքը սահի դուրս։ Բարեբախտաբար հարցաքննությունն այս անգամ երկար չտևեց, և ինձ հաջողվեց գիրքը բարեհաջող սենյակ հասցնել։ Ձեզ չեմ հոգնեցնի մանրամասնություններով։ Կասեմ միայն, որ վերադարձի ճանապարհին շատ վտանգավոր մի պահ եղավ միջանցքում. գիրքը գոտկատակից անդրավարտիքիս մեջ սահեց, և ես ստիպված եղա հազի մի ուժգին նոպա ձևացնել, որպեսզի աստիկ կռանալով, այն կրկին հրեմ դեպի գոտկատակս։ Բայց ինչպի՜սի՜ն էր իմ բերկրանքը, երբ ես այն բերեցի իմ դժոխքը և վերջապես մնացի մենակ։ Սակայն ես արդեն միայնակ չէի։

Դուք, երևի, կարծում եք, թե իմ առաջին մղումը գիրքը վերցնելը, այն աչքի անցկացնելը և կարդալ սկսե՞լն էր։ Ամենևին։ Ամենից առաջ ես սկսեցի վայելել այն ունենալու երջանկությունը, ցանկանում էի երկար-երկար խաղտել իմ ջղերը, մտածելով, թե ինչ գիրք եմ գողացել, ուզում էի, որ այն շատ մանր տառատեսակ ունենար, որպեսզի նրա մեջ շատ-շատ տառեր ու շատ-շատ բարալիկ փոքրիկ էջեր լինեին, որ ես կարողանայի կարդալ այն հնարավորին չափ երկար։ Ցանկանում էի, որ այդ գրքի ընթերցումը մտքի լարում պահանջեր ինձանից։ Ոչ մի թեթևսոլիկ, տափակ բան ինձ հարկավոր չէր։ Լավ կլիներ, եթե հնարավոր լիներ որևէ բան անգիր անել այնտեղից, ասենք, ոտանավորներ։ Լավ կլիներ, եթե դա լիներ (ի՜նչ հանդուգն երազանք) Հոմերոս կամ Գյոթե։ Վերջապես ես այլևս չկարողացա զսպել իմ ագահ հետաքրքրությունը։ Զրզվելով անկողնուս վրա, հսկիչի մոտ կասկածներ չհարուցելու համար, այն դեպքում, երբ նա անսպասելիորեն բացեր դուռը, ես գոտուս տակից հանեցի գիրքը։

Առաջին հայացքը, որ ես նետեցի նրա վրա, ոչ միայն հիասթափեցրեց ինձ, ես սարսափելի զայրացա· իմ ավարը, որ թոցնելով ես ինձ ենթարկում էի այնպիսի հրեշավոր վտանգի և որն այնքան վատ հույսեր էր ծնել, ընդամենը շախմատախաղի մի ձեռնարկ դուրս եկավ՝ խոշորագույն վարպետների խաղացած հարյուր հիսուն շախմատային պարտիաների ժողովածու։ Եթե բոլոր կողմերից շրջապատված չլինեի պատերով ու վանդակներով, կատաղության մոլուցքի մեջ ես պատուհանից դուրս կնետեի գիրքը։ Ի՞նչ օգուտ, դե ի՞նչ օգուտ կունենայի ես այդ անհեթեթությունից։ Ինչպես գիմնազիստների մեծամասնությունը, շախմատ ես խաղում էի երբեմն, ժամանակ անցկացնելու համար։ Բայց ինչի՞ս էր պետք այդ տեսական բանդագուշանքը։

Հնարավոր չէ շախմատ խաղալ մենակ, այն էլ առանց ֆիգուրների և առանց տախտակի։ Ես վրդովված թերթում էի գիրքը, հուսալով գըտ-

նել, գոնե ինչ-որ բան կարդալու համար՝ որևէ ներածություն կամ բացատրություն, բայց ոչինչ չգտա, բացի ուղիղ, քառակուսի աղյուսակներից, որոնք վերարտադրում էին վարպետների պարտիաներն ինձ անհասկանալի նշանակումներով· a 2—a3, Qf 1—g3 և այլն։ Այդ բոլորն ինձ համար հանրահաշվական բանաձևերի նման մի բան էր, որի բանալին ես չունեի։ Միայն աստիճանաբար ես կռահեցի, որ a, b, c տառերը նշանակում են ուղղահայաց շարքերը, իսկ 1—8 թվերը՝ հորիզոնականները, և որ դրանք ցույց են տալիս ամեն մի առանձին ֆիգուրի դիրքը տվյալ պահին։ Ուրեմն այդ զուտ գրաֆիկական դիագրամներն, այնուամենայնիվ, ինչ-որ բան ասում էին։

«Ո՞վ գիտե, — մտածում էի ես, — եթե ինձ հաջողվի պատրաստել շախմատային տախտակի նմանակը, գուցե ես կարողանամ խաղալ այդ պարտիաները»։ Վանդակավոր սավանն ինձ աստծո շնորհը թվաց։ Ես այն ծալեցի որոշակի ձևով, և ունեցա դաշտ՝ վաթսունչորս քառակուսիների բաժանված։ Գրքից պոկեցի առաջին թերթը և թաքցրի ներքնակիս տակ։ Հետո պատրաստեցի արքա, թագուհի և մնացած ֆիգուրները հացի միջուկից (արդյունքներն, իհարկե, ծիծաղաշարժ էին) և վերջապես, հաղթահարելով անթիվ դժվարություններ, կարողացա սավանի վրա վերարտադրել գրքում բերված դիրքերից մեկը։ Բայց երբ փորձեցի խաղալ ամբողջ պարտիան, պարզվեց, որ դժբախտ ֆիգուրները, որոնց կեսն, ի տարբերություն «սպիտակների», փոշով էի պատել, բոլորովին անպետք էին իմ նպատակի համար։ Առաջին օրերը խաղի փոխարեն համատարած շիլափլավ էր ստացվում, ես նորից ու նորից էի սկսում պարտիան՝ հինգ, տաս, քսան անգամ։ Բայց ուրիշ ո՞վ ուներ այնքան անտեղի աղատ ժամանակ, որքան ես՝ ինձ պարուրած դատարկության գերին։ Ուրիշ ո՞վ կարող էր ունենալ նպատակին հասնելու այդքան համառ ցանկություն և այդքան համբերություն։

Մի պարտիան անսխալ մինչև վերջ հասցնելու համար ինձնից պահանջվեց վեց օր։ Ութ օր հետո շախմատային ֆիգուրների դասավորությունը հիշողությանս մեջ ամրապնդելու համար ես միայն մեկ անգամ օգտագործեցի սավանը, իսկ ես ութ օր հետո այն ինձ պետք չէր։ a 1, a 2, c 3, c 8 վերացական հասկացողություններն իմ երևակայության մեջ մեքենարար ընդունում էին պարզորոշ, պլաստիկ ձևեր։ Այդ անցումը կատարվեց առանց որևէ դժվարության։ Իմ երևակայության ուժով ես կարողանում էի մտքումս վերարտադրել շախմատային տախտակն ու ֆիգուրները և կանոնների խիստ որոշակիության շնորհիվ անմիջապես էլ մտովի ընդգրկում էի ցանկացած կոմբինացիան։ Այդպես փորձված երա-

ժիշտը, թեթևակի նայելով նոտաներին, լսում է ամեն մի գործիքի պարտիան առանձին և բոլոր ձայները միասին։

Եվ երկու շաբաթ հետո ես առանց որևէ դժվարության կարողանում էի հիշողությամբ, կամ, շախմատիստների լեզվով ասած, կուրորեն խաղալ գրքի ցանկացած պարտիան։ Եվ միայն այդ ժամանակ ես գիտակցեցի, թե ինչ հիանալի գանձ տվեց իմ հանդուգն գողությունը։ Չէ՞ որ ես զբաղմունք գտա, թող լինի անմիտ ու անիմաստ, բայց և այնպես զբաղմունք, որը լցնում էր շրջապատող դատարկությունը։ Հարյուր հիսուն պարտիաները, որ խաղացել էին վարպետները, դարձան մի զենք, որի միջոցով ես կարող էի պայքարել ժամանակի և տարածության ճնշող միօրինակության դեմ։

Այդ պահից սկսած, աշխատելով պահպանել նորության հմայքը, ես սկսեցի ճշտորեն բաժանել իմ օրը. երկու պարտիա առավոտյան, երկուսը՝ ճաշից հետո, և պարտիաների համառոտ քննարկում՝ երեկոյան։ Այդպես իմ օրը, որ մինչև այդ տձև էր, ինչպես դոնդողը, լցվեց ինչ-որ բանով։ Նոր զբաղմունքն ինձ չէր հոգնեցնում։ Շախմատի հիանալի առանձնահատկությունն այն է, որ միտքը, խստորեն սահմանափակելով իր գործունեության սահմանները, չի հոգնում նույնիսկ շատ ուժեղ լարվածության տակ, ընդհակառակը, նրա էներգիան մեծանում է, դառնում ավելի ճկուն։

Սկզբում ես պարտիաները խաղում էի մեխանիկորեն, բայց աստիճանաբար, նորից ու նորից կրկնելով վարպետորեն խաղացված կոմբինացիաներն ու գրոհները, ես սկսեցի էսթետիկական հաճույք գտնել դրանում։ Ես սովորեցի տարբերել հարձակումների ու պաշտպանության նրբությունները, հնարքներն ու խորամանկությունները, կռահեցի, թե ինչպես կարելի է մի քանի քայլ առաջ կանխատեսել խաղի զարգացումը, ինչպես են սկսվում և իրականացվում գրոհն ու հակագրոհը, և շուտով կարողանում էի տարբերել ամեն մի չեմպիոնի անհատական խաղաոճը, տարբերել ճիշտ այնպես անսխալ, ինչպես բանաստեղծության մի քանի տողով կարելի է անվանել բանաստեղծին։

Եվ այն, ինչ որ առաջ ժամանակը կարճելու միջոց էր միայն, բավականություն դարձավ ինձ համար, և շախմատային արվեստի անկրկնելի ստրատեգները՝ Ալյոխինը, Լասկերը, Բոգոլյուբովը, Տարտակովերը, սիրելի ընկերների պես բաժանում էին ինձ հետ բանտարկության մենակությունը։

Այո՛, այժմ արդեն ես միայնակ չէի իմ լուռ մենախցում։ Շախմատի կանոնավոր պարապմունքները նպաստեցին այն բանին, որ տեղի

տալու պատրաստ իմ մտավոր ունակությունները սկսեն վերականգնվել։ Թարմացած ուղեղս գործում էր, ինչպես առաջ, և նույնիսկ ավելի սուր և ճկուն էր դարձել։ Պայծառ և տրամաբանված մտածելու իմ վերականգնված ունակությունն առաջին հերթին արտահայտվում էր հարցաքննություններին։ Ես անդիտակցորեն կեղծ սպառնալիքների և սքողված հարձակումների դեմ պայքարելու մի հմտություն էի մշակել իմ մեջ շախմատի տախտակի մոտ, և այդ ժամանակից ի վեր քննիչներն արդեն չէին կարողանում հանկարծակիի բերել ինձ։ Նույնիսկ թվում էր, թե գեստապոյականները որոշ հարգանքով են վերաբերվում ինձ։ Հնարավոր է, որ նրանց զարմացնում էր, թե այդ ո՞ր անտեսանելի աղբյուրից եմ ես ուժեր վերցնում հետագա դիմադրության համար, երբ այնքան մարդիկ արդեն ծնկի էին եկել իրենց աչքերի առաջ։

Այդ երջանիկ ժամանակը, երբ ես օր օրի սիստեմատիկորեն խաղում էի այդ հարյուր հիսուն պարտիաները, տևեց երկուս ու կեսից երեք ամիս։ Իսկ հետո ես դարձյալ անսպասելիորեն հայտնվեցի մեռյալ կետում։ Իմ առջև դարձյալ դատարկությունն էր։ Մինչ այդ ես քսանից երեսուն անգամ արդեն սերտել էի յուրաքանչյուր պարտիան։ Նորության հմայքն անցել էր, կոմբինացիաներն արդեն չէին մտահոգում ինձ, չէին լիցքավորում էներգիայով։ Աննպատակ բան էր անվերջ կրկնել պարտիաները, որոնց մեջ վաղուց արդեն ես անգիր գիտեի ամեն մի քայլը։ Բավական էր սկսել, և ամբողջ խաղը ծավալվում էր իմ աչքերի առաջ, ինչպես ափիս մեջ, նրանում անսպասելի, լարված, առեղծվածային ոչինչ չկար։ Այ, եթե ես գտնեի մի նոր գիրք նոր պարտիաներով և նորից ստիպեի, որ աշխատեր իմ ուղեղը... Սակայն դա անհնարին էր, և ինձ մնում էր մի ելք միայն, հին, ինձ քաջ ծանոթ պարտիաների փոխարեն հնարել նորերը։ Ես հարկադրված էի խաղալ ինքս ինձ հետ, կամ ավելի ճիշտ՝ իմ դեմ։

Չգիտեմ, երբևէ մտածե՞լ եք դուք, արդյոք, այն մասին, թե ինչպես է ազդում մարդու բանականության վրա բոլոր խաղերից այդ լավագույնը։ Բավական է, սակայն, մտածել մի փոքր, որպեսզի հասկանալի լինի, որ շախմատում, որպես զուտ բանական խաղում, ուր բացառված է պատահականությունը, ինքն իր դեմ խաղալն անհեթեթություն է։ Ըստ էության շախմատի գլխավոր հմայքն էլ հենց այն է առաջին հերթին, որ խաղի ստրատեգիան զարգանում է երկու տարբեր մարդկանց ուղեղներում միաժամանակ, ըստ որում նրանցից ամեն մեկն ընտրում է սեփական ճանապարհը։ Մտքերի այդ ճակատամարտում սևերը, չիմանալով, թե ինչ մանևր կնախաձեռնեն այժմ սպիտակները, աշխատում են դու-

շակել այն և խանգարել նրանց այն դեպքում, երբ սպիտակներն իրենց հերթին ամեն ինչ անում են սևերի գաղտնի մտադրությունները կռահելու և նրանց հակահարված տալու համար։ Եթե միևնույն մարդն ուզենար լինել միաժամանակ և սևերը, և սպիտակները, կստացվեր մի անիմաստ դրություն, երբ նույն ուղեղը միաժամանակ և՛ դիտե, և՛ չգիտե ինչ-որ բան։ Սպիտակների կողմից մի քայլ անելով նա կարծես հրամանով պետք է մոռանար, թե ինչ խորամանկ պլան էր հղացել մինչ այդ, երբ խաղում էր սևերի կողմից։ Նման երկատումը գիտակցության մասնատումից բացի կպահանջեր նաև նրա փոփոխակի միացում և անջատում, ինչպես ավտոմատ գործող ինչ-որ ապարատում։ Կարճ ասած, ինքն իր դեմ խաղալը նույնքան պարադոքսալ բան է, որքան սեփական ստվերի վրայով թռչելու փորձը։ Այնուամենայնիվ, երկար ամիսներ ես հուսահատորեն ճգտնում էի անել անկարելին, անհնարը։ Ուրիշ ընտրություն ես չունեի, այլապես կկանգնեի գիտակցությունս վերջնականապես կորցնելու և հոգեկան լիակատար տկարության մեջ ընկնելու վտանգի առաջ։ Իմ հուսահատ վիճակում շուրջս նորից թանձրացող ահռելի դատարկությունից վերջնականապես չճզմվելու համար ես ստիպված էի գոնե փորձել հասնել իմ սև ու սպիտակ «ես»երի» այդ երկատմանը։

Դոկտոր Բ-ն ետ հենվեց շեզլոնգի մեջ և մի պահ փակեց աչքերը։ Թվում էր, թե նա ջանում էր ցրել կենդանացած հուշերը։ Նրա բերանի անկյունը նորից ցնցվեց ակամայից։ Հետո նա դարձյալ ուղղվեց։

— Այսպես ուրեմն, կարծում եմ, այս բոլորն առայժմ հասկանալի էր ձեզ։ Բայց դժբախտաբար համոզված չեմ, թե նույնքան պարզ կլինի և այն, ինչ կատարվեց հետո։ Բանն այն է, որ այդ նոր զբաղմունքն ինձնից պահանջեց մտքի այնպիսի համապարփակ լարում, որ բոլորովին անկարելի էր դարձել որևէ վերահսկողություն սահմանել նրա մնացած գործողությունների վրա։ Իմ կարծիքով, անմտություն է շախմատ խաղալն իր իսկ դեմ, բայց և այնպես այդպիսի խաղի դեթ ինչ-որ չնչին հնարավորություն կլիներ, եթե իմ առաջ լիներ շախմատի տախտակ, որովհետև տախտակը շոշափելի առարկա լինելով, կառաջացներ տարածության զգացում, որոշ նյութական սահման ստեղծելով «ախոյանների» միջև։ Խաղալով իսկական շախմատային տախտակի վրա իսկական շախմատային ֆիգուրներով, հնարավոր է որոշակի ժամանակ սահմանել քայլը կատարելու համար, կարելի է սկզբում նստել մի կողմում և պատկերացնել, թե ինչպիսին է դրությունը սևերի համար, իսկ հետո՝ թե ինչպես է ներկայանում այն սպիտակներին։ Բայց քանի որ խաղն իմ դեմ կամ, եթե կուզեք, ինձ հետ, ես պետք է վարեի երևակայական տախտա-

կի վրա, ապա ստիպված էի անընդհատ մտքումս պահել բոլոր ֆիգուրների դիրքերը վաթսունչորս քառակուսիներում, և ընդամենը ոչ միայն հիշել դիրքերը տվյալ պահին, այլև նախապես հաշվի առնել երկու հակառակորդների բոլոր հնարավոր քայլերը։ Ես հիանալի հասկանում եմ, որ այս բոլորը հնչում են որպես խսկական խելացնորություն։ Իմ յուրաքանչյուր «ես» համար ես հարկադրված էի լինում պատկերացնել իրավիճակը երկու, երեք, ոչ, ո՜չ, ավելի՝ վեց անգամ, տասներկու անգամ, այն էլ չորս կամ հինգ քայլ առաջ։

Խնդրում եմ ներողամիտ լինեք, որ ես ստիպում եմ ձեզ գլուխ հանել այս ամբողջ խառնաշփոթից։ Վերացական տարածության մեջ խաղալով այդ ֆանտաստիկ պարտիաները, ես պարտավոր էի մի քանի քայլ առաջ հաշվարկներ կատարել սպիտակների և նույնքան էլ սևերի համար, պարտավոր էի ծանրութեթև անել առաջացող կոմբինացիաները մերթ սևերի, մերթ էլ սպիտակների տեսանկյունից, այլ կերպ ասած, իմ մի ուղեղում ես պարտավոր էի զուգորդել թե՛ սևերի միտքը, և թե՛ սպիտակների միտքը։ Սակայն այդ հոգեմաշ էքսպերիմենտի ամենալուրջ վտանգն իմ «ես» երկատումը չէր։ Դա այն էր, որ ես պետք է ինքնուրույնաբար խաղայի իմ իսկ մտածած պարտիաները և շարունակ կորցնում էի ամեն մի հենարան ու կարծես թե մի ինչ-որ անդունդ էի գահավիժում։ Քանի դեռ ես խաղում էի չեմպիոնների պարտիաները, ամեն ինչ լավ էր. ես պարզապես կրկնում էի խաղացված պարտիան, վերարտադրում էի արդեն արվածը։ Դա պահանջում էր ոչ ավելի լարում, քան, ասենք, բանաստեղծություններ կամ որևէ օրենսգրքի հոդվածները հիշելը։ Դա սիստեմատիկորեն մարզող զբաղմունք էր և հենց այդ պատճառով էլ՝ հիանալի վարժություն ուղեղի համար։ Երկու պարտիա մինչև ճաշը և երկուսը՝ հետո. դա որոշակի առաջադրանք էր, որը ես կատարում էի միանգամայն հանգիստ։ Այն կարծես փոխարինում էր առաջվա իմ առօրյա զբաղմունքներին։ Եվ բացի այդ, եթե խաղի ընթացքում ես սխալվում էի կամ մոռանում հաջորդ քայլը, միշտ էլ կարող էի նայել գրքին։ Հենց այն պատճառով, որ օտար պարտիաների ուսումնասիրությունը չէր շոշափում իմ «ես»ը, այնպես բարերար ու հանգստացուցիչ էր ազդում այն իմ քայքայված նյարդերի վրա։ Ինձ համար բոլորովին միևնույն էր, թե ով կհաղթի՝ սպիտակները, թե՞ սևերը, որովհետև առաջնության դափնու համար պայքարում էին Ալյոխինը կամ Բոգոլյուբովը, մինչդեռ ես ինքս, իմ բանականությունը, իմ գիտակցությունը միայն ճաշակում էինք մենամարտի նրբությունները։ Բայց հենց որ ես սկսեցի խաղալ իմ դեմ, անդիտակցաբար սկսեցի մրցել ինքս ինձ հետ։ Իմ սև ու սպիտակ «ես»-

երը պետք է մրցեին իրար հետ, և այդ «ես»-երից յուրաքանչյուրը միաժամանակ բռնկված էր շահելու, հաղթելու անհամբեր և պատվասեր ցանկությամբ։ Քայլը կատարելով իբրև սև «ես», ես տենդորեն սպասում էի, թե ինչ կանի իմ սպիտակ «ես»։ Իմ երկու «ես»-երը փոփոխակիորեն տոնում էին իրենց հաղթանակը, երբ մյուս «ես» սխալ էր կատարում քայլը, և վրդովվում էին, երբ իրենք էին նման անփութություն թույլ տալիս։

Այս բոլորը միանգամայն անհեթեթ է թվում և, իհարկե, արհեստականորեն ստեղծված այդ մտագարությունը, գիտակցության այդ դիտավորյալ երկատումն իր բոլոր վտանգավոր հետևանքներով անիմաստ կլիներ նորմալ իրադրության մեջ գտնվող մարդու համար։ Մի՛ մոռացեք սակայն, որ ես կոպտորեն պոկված էի նորմալ պայմաններից, վանդակի մեջ էի նետված առանց որևէ մեղքի, և բազմաթիվ ամիսներ շարունակ ենթարկվում էի նրբին տառապանքի՝ միայնության տառապանքին։ Իմ մեջ կուտակված կատաղությունը վաղ թե ուշ ինչ-որ բանի վրա պետք է թափվեր։ Բայց քանի որ իմ միակ զբաղմունքն այդ անիմաստ խաղն էր իմ դեմ, իմ զայրույթը, վրեժի իմ ծարավը մոլեգնորեն թափվում էր հենց խաղի վրա։ Ես ուզում էի վրեժխնդիր լինել, սակայն դրա համար ունեի միայն իմ երկրորդ «ես»ը, որի դեմ ես պետք է անընդհատ պայքարեի։ Ահա թե ինչու խաղի ժամանակ ինձ համակում էր կատաղի հուզմունքը։ Սկզբնական շրջանում ես դեռ կարողանում էի հանգիստ ու խելացի վարել այդ խաղերը, ընդմիջումներ էի անում պարտիաների միջև՝ հանգըստանալու համար։ Սակայն կամաց-կամաց իմ հիվանդ նյարդերը դադարեցին դիմանալ այդ կարճատև հանգստին։ Բավական էր, որ սպիտակ «ես»ը մի քայլ կատարեր, երբ սև «ես»ն արդեն տենդորեն շարժում էր ֆիգուրը և, հենց որ վերջանում էր մի պարտիան, ես անմիջապես ինձնից պահանջում էի երկրորդը, ավելի ճիշտ, ամեն անգամ, երբ իմ շախմատային «ես»ը տանուլ էր տալիս, անհապաղ ուանշ էր պահանջում իմ մյուս «ես»ից»։

Ես նույնիսկ մոտավորապես էլ չեմ կարող ասել, թե քանի պարտիա խաղացի ինքս իմ դեմ բանտարկությանս երկար ամիսներին՝ այդ անհագ ծարավով բռնկված։ Դա մի գայթակղություն էր, որի դեմ պայքարել ես չէի կարողանում։ Առավոտից իրիկուն ձիերից ու զինվորներից, նավակներից ու արքաներից բացի ուրիշ որևէ բանի մասին ես չէի մտածում։ Իմ ուղեղի մեջ անվերջ պտտվում էին «a»-ն, «b»-ն, «c»-ն, մատը և տեղափոխությունը, և իմ ողջ էությունը, իմ բոլոր մտքերը ձգտում էին դեպի վանդակների բաժանված տախտակը։ Խաղի հաճույքը դարձավ կիրք,

կիրքը դարձավ մոլեգնություն, մտամոլություն։ Այն լցնում էր ոչ միայն իմ հարթմնի ժամերը, այլ հետագայում նաև քնի ժամանակը։ Ես կարողանում էի մտածել միայն շախմատի, շախմատային քայլերի, շախմատային խնդիրների մասին։ Երբեմն ես արթնանում էի՝ կորած սառը քրտինքի մեջ, և զգում էի, որ խաղն անգիտակցաբար շարունակվում է նաև երազում։ Նույնիսկ երբ ես երազում մարդիկ էի տեսնում, նրանք շարժվում էին, ինչպես ձին կամ նավակը, հարձակվում և նահանջում էին շախմատային ֆիգուրների նման։

Հարցաքննություններին ես արդեն մոռանում էի, որ պատասխանատու եմ իմ խոսքերի և արարքների համար։ Հավանաբար ես խոսում էի կցկտուր ու մշուշապատ. քննիչները մի տեսակ տարօրինակ իրար էին նայում։ Իսկ իրականում, քանի դեռ նրանք ինձ հարցեր էին տալիս և մտածում իմ պատասխանների վրա, ես պարզապես անհամբեր սպասում էի, թե երբ ինձ կվերադարձնեն իմ խուցը, որտեղ ես կարող էի կրկին զբաղվել իմ խելագար գործով. սկսել նոր խաղ, էլի մեկը և մի ուրիշը։ Ընդմիջումները խաղի ժամանակ ավելի ու ավելի էին գրգռում ինձ։ Նույնիսկ այն տասնհինգ րոպեն, երբ հսկիչը կարգի էր բերում իմ սենյակը, այն երկու րոպեն, երբ նա ինձ կերակուր էր տալիս, ինձ տանջում էր տենդագին անհամբերությունը։ Երբեմն նախաճաշին ձեռք չէի տալիս մինչև երեկո, որովհետև խաղով կլանված՝ ես մոռանում էի նրա մասին։ Իմ միակ ֆիզիկական զգացումը ահավոր ծարավն էր։ Ես երկու կումով դատարկում էի ջրի շիշը և աղաչում էի հսկիչին՝ էլի մի քիչ բերել, բայց մեկ րոպեից բերանս բոլորովին չորանում էր։

Կամաց-կամաց խաղի ժամանակ ես սկսեցի ընկնել այնպիսի գրգռված դրության մեջ (այն ժամանակ արդեն առավոտից գիշեր ես ուրիշ ոչնչի մասին չէի մտածում), որ այլևս չէի կարողանում հանգիստ մնալ և ոչ մի րոպե։ Մտածելով քայլի վրա, ես անդադար առաջ ու ետ էի քայլում սենյակում, միշտ ավելի ու ավելի արագ, առաջ ու ետ, առաջ ու ետ։ Եվ ինչքան ավելի էր մոտենում լուծումը, այնքան ավելի արագ էի ես այս ու այն կողմ ընկնում։ Հաղթանակի, ինքս իմ դեմ հաղթանակի ծարավն ինձ մոլեգնության էր հասցնում, որովհետև իմ շախմատային «եսերից» մեկնումեկը միշտ հետ էր մնում մյուսից։ Մի «եսը» գրգռում էր մյուսին և (հասկանում եմ, դա ձեզ անհեթեթություն կթվա), երբ իմ «եսերից» մեկը բավականաչափ արագ չէր արձագանքում քայլին, որը կատարում էր իմ մյուս «եսը», ես չարությամբ գոռում էի. «Արա՜գ, արա՜գ» կամ՝ «Հետո՛, հետո՛»։ Հասկանալի է, հիմա ես ամբողջությամբ հաշիվ եմ տալիս ինձ, որ այն ժամանակվա իմ վիճակը ոչ այլ ինչ էր,

եթե ոչ, հոգեկան հիվանդություն, որի համար ես չեմ կարող գտնել այլ անուն, բացի բժշկությանը դեռևս անհայտ մի տերմինից՝ «թունավորում շախմատով»։

Հասավ մի պահ, երբ այդ մտագարությունը, գայթակղիչ այդ ուրվականը սկսեց կործանարար ազդեցություն գործել ոչ միայն ուղեղիս, այլև իմ մարմնի վրա։ Ես սաստիկ նիհարեցի, քունս անհանգիստ դարձավ։ Արթնանալով, ես դժվարությամբ էի բարձրացնում ծանրացած կոպերս։ Ես զգում էի ինձ ինչպես հարբելուց հետո, և ձեռքերս այնպես էին դողում, որ բաժակը չէի կարողանում բերանիս մոտեցնել։ Սակայն հենց որ սկսվում էր խաղը, ինձ համակում էր մի կատաղի ուժ։ Բռունցքներս սեղմած՝ ես արագորեն պտտվում էի սենյակում և կարմրավուն մշուշի միջից ժամանակ առ ժամանակ ինձ էր հասնում իմ սեփական ձայնը, որ չարությամբ ու խռպոտ ճչում էր «շա՛խ» կամ «մա՛տ»։

Չգիտեմ, թե երբ իր ճգնաժամն ապրեց այդ սոսկալի, աննկարագրելի վիճակը։ Գիտեմ միայն, որ մի առավոտ ես արթնացա բոլորովին անսովոր վիճակում. ես այլևս ծանրություն չէի զգում իմ ամբողջ մարմնում։ Թեթև էի ու հանգիստ։ Կոպերիս վրա մի բարերար հոգնություն կար, որ չէի զգացել արդեն շատ ամիսներ, և այնպես հարմարավետ էր ու հաճելի, որ պարզապես չէի կարողանում ստիպել ինձ բացել աչքերս։ Որոշ ժամանակ ես պառկած էի և ճաշակում էի թուլության զգացումը, հաճելի ընդարմացումը։

Հանկարծ ինձ թվաց, թե կողքիս մարդկային կենդանի ձայներ եմ լսում, մեղմորեն ու զգույշ ասված բառեր։ Չեք կարող պատկերացնել իմ բերկրանքը։ Չէ՞ որ անցել էին շատ ամիսներ, գուցե և մի տարի, որ իմ տանջարարների կոպիտ խոսքերից բացի ես ոչինչ չէի լսել։

«Դու քնած ես, — ասում էի ես ինձ, — դու քնած ես։ Աչքերդ չբացես ոչ մի գնով, թող որքան կարելի է երկար տևի այս երազը, այլապես դարձյալ կտեսնես նույն անիծյալ խուցը նույն աթոռով, լվացարանով, սեղանով, պաստառները նույն անփոփոխ նկարներով։ Դու քնած ես, շարունակիր քնել»։

Սակայն հետաքրքրասիրությունը հաղթեց։ Դանդաղ, զգուշությամբ ես բացեցի աչքերս։ Կատարվեց հրաշք։ Ես մի այլ ավելի ընդարձակ սենյակում էի, քան հյուրանոցի իմ մենախուցն էր։ Պատուհանների վրա վանդակներ չկային, լույսն ազատ թափանցում էր ներս, լուսամուտից այն կողմ աղյուսի պատի փոխարեն ծառեր էին երևում, և քամին խաղում էր նրանց ճյուղերի հետ, սենյակի պատերն սպիտակ էին ու փայլուն, և

առաստաղն սպիտակ ու բարձր էր։ Ես պառկած էի մի նոր, անսովոր անկողնում և, — ո՛չ, դա երազ չէր, — իմ կողքին լսվում էր նույն շշուկը։

Զարմացած, ինքս էլ այդ չուզենալով, ես մի ընդոստ շարժում կատարեցի, և անմիջապես էլ լսեցի, որ ինչ-որ մեկը դեպի իմ անկողինն է գալիս։ Թեթև քայլերով ինձ մոտեցավ սպիտակ գլխաշորով մի կին՝ մի բուժքույր, հիվանդապահուհի։ Ես չէի կարողանում ուշքի գալ երջանկությունից։ Մի ամբողջ տարի ոչ մի կնոջ չէի տեսել։ Առանց կտրվելու, ես նայում էի այդ հրաշալի տեսիլքին և, հավանաբար, իմ հայացքում այնպիսի խելագար հուզմունք կար, որ նա կանգնեցրեց ինձ. «Հանգի՛ստ, պառկեք հանգիստ»։

Ես լսում էի միայն նրա ձայնը. մի՞թե ինձ հետ խոսողը մարդ է։ Մի՞թե աշխարհում դեռ կան մարդիկ, որ չեն ուզում տանջել և հարցաքննել ինձ։ Եվ հետո,— անհասկանալի հրաշք,— դա կնոջ ձայն էր՝ փափուկ, ջերմ, ես կասեի նույնիսկ քնքուշ։ Առանց կտրվելու, ես ագահորեն նայում էի նրա շուրթերին։ Մի դժոխային տարուց հետո ես չէի հավատում, թե մի մարդ կարող է սիրալիր խոսել մյուսի հետ։ Նա ժպտաց ինձ, այո՛, նա ժպտաց։ Ուրեմն, աշխարհում դեռևս կան մարդիկ, որ կարող են անուշ ժպտալ։ Հետո նա մատը շրթունքներին դրեց և անաղմուկ հեռացավ։ Բայց ես չէի կարող հնազանդվել նրան։ Ես դեռ չէի հագեցել հրաշքը դիտելուց։ Ես ցանկանում էի նստել և աչքերով ուղեկցել այդ հրաշալի, քնքուշ էակին։ Բայց երբ ուզում էի արմունկով հենվել մահճակալի կոնակին, չկարողացա այդ անել։ Աջ ձեռքիս փոխարեն ես տեսա օտարոտի մի բան՝ մեծ, ծանր, սպիտակ մի առարկա։ Իմ ամբողջ ձեռքը կարծես թե վիրակապված էր։ Զարմանքով դիտելով այդ առարկան, ես սկսեցի տանջալիորեն մտածել. որտե՞ղ եմ ես և ի՞նչ է կատարվել ինձ հետ։ Ինձ ինչ-որ ձևով վիրավորե՞լ են, թե՞ ինքս եմ վնասել ձեռքս։ Հասկացա, որ պառկած եմ հիվանդանոցում։

Կեսօրին եկավ բժիշկը՝ հաճելի, տարեց մի մարդ։ Նա ճանաչում էր իմ ընտանիքը և, ինչպես երևում է, կամենալով զգացնել տալ՝ իր համակրանքը, հարգանքով արտահայտվեց քեռուս՝ պալատական բժշկի մասին։ Նա ինձ մի քանի հարց տվեց, դրանցից մեկն ինձ առանձնապես զարմացրեց. ո՞վ եմ ես՝ մաթեմատիկո՞ս, թե՞ քիմիկոս։

«Ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը»,— պատասխանեցի ես։

«Տարօրինակ է,— փնթփնթաց նա,— զառանցանքի մեջ դուք անընդհատ ինչ-որ անհայտ բանաձևեր էիք գոռում. c 3, c 4։ Մենք ոչինչ չէինք կարողանում հասկանալ»։

Ես հարցրի, թե ինչ է պատահել ինձ։ Նա մի հանելուկային քմծիծաղ տվեց։

«Լուրջ ոչինչ չկա։ Նյարդային համակարգի սաստիկ քայքայում։— Նայելով շուրջը՝ նա ցածրաձայն ավելացրեց,— դա միանգամայն հասկանալի է։ Չէ՞ որ դուք... մարտի 13-ից...»։

Ես գլխով արեցի։

«Զարմանալի ոչինչ չկա նրանց մեթոդների դեպքում։ Դուք առաջինը չեք։ Սակայն մի՛ անհանգստացեք»։

Նրա բարյացակամ տոնը և կարեկից ժպիտն ինձ համոզեցին, որ ես անվտանգ տեղ եմ։

Երկու օր անց բժիշկն ի՛նքը պատմեց ինձ, թե ինչ է կատարվել։ Բանտային հսկիչն աղաղակներ է լսել իմ խցիկում և մտածել, թե ես երեվի վիճում եմ ինչ-որ մեկի հետ, որն ինձ մոտ է թափանցել։ Հաղիվ է նա երևացել շեմքին, երբ ես բռունցքներով նետվել եմ նրա վրա ու բղավել. «Քայլը կատարի՛ր, սրի՛կա, վախկո՛տ»։ Հետո ես բռնել եմ նրա կոկորդը և սկսել խեղդել այնպիսի կատաղությամբ, որ նա հարկադրված է եղել օգնության կանչել։ Ես շարունակել եմ մոլեգնել և, երբ ինձ քարշ են տրվել բժշկական քննության, նրանցից պոկվել և փորձել եմ դուրս նետվել միջանցքի պատուհանից, ջարդել եմ ապակին և ուժգին կտրել թևս, այ այստեղ դեռ մնացել է խորունկ սպին։ Հոսպիտալ ընկնելու առաջին օրերին ես ունեի ուղեղի բորբոքման նման մի բան, իսկ հիմա, բժշկի կարծիքով, իմ գիտակցությունն ու ընկալման կենտրոններն արդեն միանգամայն կարգին են։ «Պարզ կասեմ, — մեղմորեն ավելացրեց նա, — ես այդ մասին չեմ զեկուցի իշխանություն ունեցողներին, թե չէ նրանք կարող են հայտնվել և ետ տանել ձեզ։ Ապավինեք ինձ, ես կանեմ այն ամենը, ինչ կախված է ինձնից»։

Թե ինչ էր ասել իմ հալածողներին բարեհոգի բժիշկը, ես այդպես էլ չիմացա։ Համենայն դեպս նա իր նպատակին հասավ. ինձ ազատ արձակեցին։ Գուցե նա հայտնել էր, թե ես պատասխանատու չեմ իմ արարքների համար։ Հնարավոր է նաև ուրիշ բան. գեստապոն կարող էր կորցրնել հետաքրքրությունն իմ նկատմամբ, քանի որ մինչ այդ Հիտլերն արդեն գրավել էր ողջ Բոհեմիան և դրանով իսկ փակել հաշիվներն Ավստրիայի հետ։ Ես պարտավոր էի միայն ստորագրել երկու շաբաթվա ընթացքում երկիրը թողնելու պարտավորագիրը։ Այդ ամբողջ ժամանակը ծախսվեց ձևականությունների վրա, որոնք մեր օրերում այնքան դժվարացնում են մեր ուղևորությունն արտասահման. անհրաժեշտ էր ռազմական իշխանությունների և ոստիկանության թույլտվությունը, ձեռք բե-

րել տեղեկանք առողջության մասին, անձնագիր, տեսագիր և այլն, այնպես որ ես ժամանակ չունեցա մտածելու իմ ապրածի մասին։ Ըստ երևույթին ինչ-որ խորհրդավոր ուժեր կարգավորում են մարդու ուղեղի գործունեությունը և մեքենաբար ջնջում հոգու համար վտանգավոր հիշողությունները։ Ինչ էլ որ լինի, հենց որ ես հիշում էի իմ բանտարկությունը, գիտակցությունս իսկույն մթագնում էր, և միայն շատ շաբաթներ հետո, ճիշտն ասած, միայն այժմ, շոգենավի վրա ես քաջություն ունեցա գիտակցելու այն, ինչ ասրել եմ։

Այժմ պետք է որ ձեզ հասկանալի լինի իմ տարօրինակ, ոչ բոլորովին սովորական վարքագիծն այն ժամանակ, ձեր բարեկամների խաղին։ Ես պատահմամբ անցնում էի ծխասրահով, և շախմատային սեղանի մոտ հանկարծ տեսա ձեր ընկերներին։ Զարմանքից ու վախից ես պարզապես քարացա։ Չէ՞ որ ուղղակի մոռացել էի, թե կարելի է շախմատ խաղալ իսկական տախտակի վրա և իսկական ֆիգուրներով, մոռացել էի, որ այդ խաղին մասնակցում են երկու բոլորովին տարբեր մարդիկ, որ նրանք նստում են իրար դիմաց։ Ճիշտն ասած, անցավ մի քանի րոպե, մինչև ես հասկացա, որ այդ մարդիկ խաղում են այն նույն խաղը, որ ես խաղում էի այդքան՝ ժամանակ՝ ուժ չունենալով ազատվել նրանից։ Ուրեմն, այն ծածկագիրը, որի օգնությամբ ես հիշողությանս մեջ վարում էի իմ խաղերը, ոչ այլ ինչ էր, եթե ոչ էրզաց, ահա այս ծանր ֆիգուրների խորհրդանիշը։ Ես ապշեցի, տեսնելով, որ ֆիգուրները տախտակի վրա և նրանց շարժումը լրիվ համապատասխանում են իմ մշակած այն պատկերացումներին, որ ապրում էին իմ երևակայության մեջ։ Այդպես, հավանաբար, ապշում է աստղագետը, երբ տեսականորեն, մաթեմատիկական բարդ հաշվարկների միջոցով ապացուցելով նոր մոլորակի գոյությունը, հանկարծ իր աչքով տեսնում է այն երկնքում, տեսնում պարզորեն, իր ողջ ռեալությամբ։ Ես նայում էի տախտակին կախարդվածի պես և տեսնում այնտեղ իմ դիագրամը՝ ձին, թնդանոթը, արքան, թագուհին, զինվորները, բոլոր իրական, փայտից քանդակված ֆիգուրները։ Դիրքավորումն ըմբռնելու համար ես ստիպված էի իմ աբստրակտ-մաթեմատիկական դաշտից ակամա տեղափոխվել տախտակի վրա, որտեղ շարժվում էին ֆիգուրները։

Աստիճանաբար ինձ համակեց հետաքրքրասիրությունը, ես ցանկացա հետևել երկու խաղընկերների իսկական խաղին։ Եվ ահա, հենց այդ էլ պատճառ դարձավ իմ ծայրահեղ տխուր, անտակտ միջամտությանը ձեր խաղին։ Ձեր բարեկամի սխալ քայլն ինձ համար կարծես սրտիս հասցրված հարված լիներ։ Ես նրան կանգնեցրի բնազդաբար, ինչպես կանգնեց-

նում են բազրիքի վրա չափից ավելի կռացած երեխային։ Եվ միայն հետո ես գիտակցեցի իմ միջամտության ամբողջ կոպիտ անպատեհությունը։

Ես շտապեցի հավատացնել դոկտոր Բ-ին, որ մենք բոլորս շատ ուրախ էինք կատարվածի համար, մանավանդ որ այդ միջադեպի շնորհիվ մենք ծանոթացանք իր հետ։ Ես ավելացրի, որ իմ ամբողջ լսածից հետո ինձ համար կրկնակի չափով հետաքրքիր կլինի ներկա լինել վաղվա իմպրովիզացված մրցամարտին։

Դոկտոր Բ-ն անհանգիստ շարժում կատարեց։

— Դուք, իսկապես, շատ բանի մի սպասեք։ Դա ինձ համար պարզապես փորձ կլինի, կարո՞ղ եմ ես, արդյոք... կարո՞ղ եմ, արդյոք, շախմատ խաղալ նորմալ վիճակում՝ նստած շախմատի տախտակի մոտ, իսկական, կենդանի հակառակորդի դեմ, իսկական ֆիգուրներով։ Որովհետև ես սկսում եմ ավելի ու ավելի կասկածել, այդ հարյուրավոր կամ նույնիսկ հազարավոր պարտիաները ես արդյո՞ք կանոններով եմ խաղացել։ Իսկ գուցե նրանք պարզապես իմ հիվանդ երևակայության արդյո՞ւնքն են։ Դա պարզապես զառացանք չէ՞ր, շախմատային տենդ, երբ մարդ, ասես երազում, անընդհատ ոստյուններով է շարժվում առաջ։ Չէ՞ որ դուք լրջորեն չեք կարծում, թե ես կարող եմ ուժերս չափել աշխարհի չեմպիոնի հետ, խաղալ նրա հետ, ինչպես հավասարը՝ հավասարի։ Միայն հետաքրքրասիրությունն է մղում ինձ դեպի այդ խաղը։ Վերջին հաշվով ես ուզում եմ պարզել, թե իսկապես ի՞նչ է կատարվել ինձ հետ իմ բանտարկության ժամանակ. արդյոք, ես մո՞տ էի խելացը-նորությանը, թե՞ արդեն անցել եմ այդ վտանգավոր սահմանը։ Ահա բոլորը, ուրիշ ոչինչ։

Այդ միջոցին հնչեց կոչնակը, որը ճաշի էր հրավիրում ուղևորներին։ Մեր զրույցը տևել էր համարյա երկու ժամ. դոկտոր Բ-ն պատմեց ինձ իր պատմությունը շատ ավելի մանրամասն, քան ես նկարագրեցի։ Ես ջերմորեն շնորհակալություն հայտնեցի և հրաժեշտ տվի նրան, բայց դեռ չէի հասցրել անցնել տախտակամածը, երբ նա հասավ իմ ետևից. նա հուզված էր և խոսում էր թեթևակի կմկմալով.

— Եվս մի խնդրանք։ Ես չեմ ուզում անքաղաքավարի գտնվել ձեր բարեկամների նկատմամբ, ուստի նախապես զգուշացրեք նրանց, խնդրում եմ, որ ես կխաղամ միայն մեկ պարտիա։ Ինձ համար կարևորն այդ հարցը մեկ անգամ ընդմիշտ լուծելը, այսպես ասած վերջնական արդյունքն ամփոփելն է։ Ես բնավ չեմ ուզում նորից սկսել ամեն ինչ։ Ես չեմ կարող թույլ տալ ինձ երկրորդ անգամ հիվանդանալ այդ շախմա-

տային տենդով, որը ես այժմ էլ սարսուռով եմ հիշում։ Բացի այդ, բժիշկն ինձ նախազգուշացրել է, նա համառորեն նախազգուշացրել է ինձ։ Մտամոլության ենթարկված մարդու համար միշտ էլ մնում է կրկնության վտանգը, ուստի ինձ, որ տառապում էի «շախմատով թունավորումից», եթե նույնիսկ ինձ լրիվ ապաքինված են համարում, անհրաժեշտ է հեռու մնալ շախմատի տախտակից։ Այնպես որ, հասկանում եք, միայն մեկ փորձնական խաղ և ուրիշ ոչ մի պարտիա։

Հաջորդ օրը ճիշտ սահմանված ժամին մենք հավաքվեցինք ծխասրահում։ Մեր խմբակը համալրվել էր արքայական խաղի ևս երկու սիրահարներով. դրանք երկու սպաներ էին, որոնք հատկապես խնդրել էին կապիտանին՝ տեղափոխել իրենց հերթապահության ժամերը, որպեսզի հնարավորություն ունենային դիտելու խաղը։ Այս անգամ Ջենտովիչը նույնպես չհարկադրեց սպասել իրեն, և վիճակահանությունից հետո սկսվեց արտասովոր խաղը. «Homo obscurissimus[1]»-ը՝ աշխարհի հրուշակավոր չեմպիոնի դեմ։

Շատ ափսոս, որ այդ պարտիայի միակ վկաները շախմատին այնքան քիչ տեղյակ մարդիկ էին, ինչպես մենք, և որ այն անվերադարձ կերպով կորած է շախմատային արվեստի տարեգրության համար, ինչպես կորած են երաժշտության պատմության համար Բեթհովենի դաշնամուրային իմպրովիզացիաները։ Ճիշտ է, հաջորդ օրը բոլորս միասին ջանում էինք այն վերականգնել հիշողությամբ, սակայն ապարդյուն։ Ըստ երևույթին դրա պատճառն այն էր, որ մեր ուշադրությունը կենտրոնացած էր ոչ թե պարտիայի, այլ խաղացողների վրա, որոնց մտավոր մակարդակների տարբերությունն ավելի ու ավելի ակնհայտ էր դառնում խաղի զարգացմանը զուգընթաց։

Փորձառու Ջենտովիչը նստած էր բոլորովին անշարժ, ինչպես քարե արձան։ Նրա հայացքը տախտակին էր գամված, թվում էր, թե մտքի լարումը գրեթե ֆիզիկական ցավ է պատճառում նրան։ Դոկտոր Բ-ն, ընդհակառակը, իրեն ազատ ու անկաշկանդ էր պահում։ Իբրև իսկական դիլետանտ այդ բառի ամենալայն իմաստով, իբրև սիրող, որի համար խաղի ողջ իմաստն ու բովանդակությունը հենց խաղի մեջ է, նա կարծես թե հանգստանում էր։ Խաղի սկզբին նա խոսում էր, ուրախ բացատրում մեզ իր քայլերը, անփութորեն ծխում գլանակ գլանակի ետևից, ու երբ հասնում էր քայլ կատարելու իր հերթը, մի արագ հայացք էր նետում տախ-

---

1 Անհայտ մարդ

տակին և տեղաշարժում ֆիգուրը։ Թվում էր, թե ամեն անգամ նա ճշտությամբ կանխատեսում է հակառակորդի քայլը։

Սկզբնախաղը արագ խաղացվեց։ Որոշակի ծրագիր սկսեց նկատվել միայն յոթերորդ թե ութերորդ քայլից հետո։ Զենտովիչն սկսեց ավելի երկար մտածել քայլերի վրա, մենք դրանից եզրակացրինք, որ արդեն սկսվել է իսկական պայքարը նախաձեռնության համար։

Սակայն, անկեղծ ասած, պարտիայի աստիճանական զարգացումը, որ հաղվագեպ չէ լուրջ մրցախաղերում, թերևս նույնիսկ հիասթափեցրեց մեզ՝ ոչ մասնագետներիս։ Որքան ավելի էր բարդանում խաղի պատկերը, այնքան ավելի անհասկանալի էին դառնում մեզ համար հակառակորդների դիրքերը։ Մեր ուժից վեր էր ո՞չ միայն կռահել նրանց մտադրությունները, այլ նույնիսկ պարզել, թե նրանցից ով է առավելություն ստացել։ Մենք տեսնում էինք միայն, որ առանձին ֆիգուրներ, առաջ թափանցելով, խոյահարում են՝ ձգտելով պատռել հակառակորդի ճակատը, բայց քանի որ այդ ականավոր խաղացողների ամեն մի քայլը կազմում էր կոմբինացիայի միայն մի մասը, իսկ յուրաքանչյուր կոմբինացիան՝ միայն մի մասը այն ծրագրի, որն իր հերթին իրականանում է միայն մի քանի քայլով, ապա ստրատեգիական ծրագիրը, որի համաձայն խաղացողները մերթ առաջ, մերթ ետ էին շարժում իրենց ֆիգուրները, մեզ համար միանգամայն անհասկանալի էր։

Հետո մեզ համակեց ճնշող հոգնածությունը, որն առաջացավ գլխավորապես այն պատճառով, որ Զենտովիչն անսահմանորեն երկար էր մտածում իր յուրաքանչյուր քայլի վրա։ Դա սկսեց աստիճանաբար ջղայնացնել նաև մեր բարեկամին։ Ես տագնապով նկատեցի, որ ինչքան ավելի էր երկարում խաղը, այնքան ավելի անհանգիստ էր դառնում նա. շարժվում էր աթոռի վրա, ջղայնորեն վառում ծխախոտ ծխախոտի ետևից, ժամանակ առ ժամանակ բռնում մատիտն ու ինչ-որ բան գրում, հանքային ջուր էր պատվիրում ու ագահորեն կուլ տալիս բաժակ բաժակի ետևից։ Ակնհայտ էր, որ նրա ուղեղը կազմում էր կոմբինացիաներ մի հարյուր անգամ ավելի արագ, քան Զենտովիչի ուղեղը։ Ամեն անգամ, երբ սա անվերջ մտածելուց հետո անշնորհք կերպով վերցնում էր ֆիգուրը և որոշում շարժել այն, մեր բարեկամը, ժպտալով այնպես, ինչպես ժպտում է վաղուց ինչ-որ բանի սպասող և վերջապես այն գտած մարդը, անմիջապես կատարում էր պատասխան քայլը։ Ըստ երևույթին նա իր աշխույժ, շարժուն խելքով հասցնում էր նախապես հետազոտել հակառակորդի առաջ բացվող բոլոր հնարավորությունները։ Որքան ավելի երկար էր մտածում Զենտովիչն իր յուրաքանչյուր քայլի վրա, այնքան

ավելի անհամբեր էր դառնում դոկտոր Բ-ն, որը գրեթե թշնամաբար սեղմում էր շրթունքները։ Զենտովիչը, սակայն, չէր ցանկանում շտապել։ Նա նստած էր համառ և լուռ՝ մտածելով քայլերի վրա, և ինչքան նվազում էր ֆիգուրների թիվը տախտակի վրա, այնքան երկարում էին ընդմիջումները։ Քառասուներկուերորդ քայլին, ամբողջ երկու ժամ հետո, մենք բոլորս նստել էինք գրեթե անտարբեր այն ամենի հանդեպ, ինչ կատարվում էր մեր կողքին։ Սպաներից մեկն արդեն հեռացել էր, մյուսը գիրք էր կարդում և հայացք նետում խաղատախտակի վրա միայն այն ժամանակ, երբ խաղացողներից որևէ մեկը կատարում էր քայլը։ Բայց հանկարծ Զենտովիչի հերթական քայլից հետո տեղի ունեցավ մի անսպասելի բան։ Դոկտոր Բ-ն, նկատելով, որ Զենտովիչը, պատրաստվելով կատարել քայլը, վերցրել է ձին, կծկվեց, ինչպես կատուն՝ թռիչքից առաջ։ Նա ամբողջովին դողում էր, և չհասցրեց Զենտովիչը իրագործել իր մտադրությունը, երբ դոկտոր Բ-ն արագ առաջ տարավ իր թագուհին և բարձրաձայն, հանդիսավոր ասաց.

— Այդպե՞ս, այժմ վե՛րջ այդ բանին։

Հետո նա ետ հենվեց բազկաթոռի մեջ, ձեռքերը կրծքին ծալեց և մարտահրավերով նայեց Զենտովիչին։ Նրա աչքերում փայլեց կրակը։

Մենք բոլորս խոնարհվեցինք տախտակի վրա, աշխատելով կռահել, թե ինչ էր նշանակում այդ հաղթական բացականչությունը, սակայն ուղղակի սպառնալիք արքային մենք չտեսանք։ Մեր բարեկամի բացականչությունը, ըստ երևույթին վերաբերում էր խաղի զարգացմանը, որ մենք՝ կարճատես դիլետանտներս, չէինք կարողանում հասկանալ։ Միայն Զենտովիչն էր, որ չշարժվեց։ Նա մնում էր միանգամայն անվրդով, կարծես թե չէր էլ լսել «վե՛րջ այդ բանին» վիրավորական արտահայտությունը։ Ոչինչ չպատահեց։ Մենք բոլորս, սակայն, պահել էինք շունչներս, և միանգամից լսելի դարձավ ստուգող ժամացույցի տկտկոցը։ Անցավ երեք րոպե, յոթ րոպե, ութը՝ Զենտովիչը շարունակում էր անշարժ նստել, և թե ինչ փոթորիկ էր մոլեգնում նրա կրծքում, երևում էր միայն նրանից, թե ինչպես էին փքվում նրա լայն ռունգերը։

Թվում էր, թե մեր բարեկամը, ինչպես և մենք, դժվարությամբ էր տանում հոգնեցուցիչ, անխոս սպասումը։ Հանկարծ նա կանգնեց, հրեց սեղանը և սկսեց քայլել անկյունից անկյուն, սկզբում դանդաղ, իսկ հետո ավելի ու ավելի արագացնելով քայլերը։ Բոլոր ներկաները զարմանքով էին նայում նրան, սակայն ոչ ոք այնքան անհանգստացած չէր նրա վարքից, որքան ես. չնայած իրեն համակած հուզմունքին՝ նա քայլում էր միանգամայն որոշակի սահմանափակ տարածությամբ, կարծես իր

երևակայության մեջ ամեն անգամ դիպչելով մի անտեսանելի պատի, որը նրան հարկադրում էր ետ դառնալ։ Ես սարսուռով հասկացա, որ նա անգիտակցաբար քայլում է իր նախկին խցիկում։ Բանտարկության ժամանակ նա, երևի, հենց այդպես էլ նետվում էր առաջ ու ետ՝ կորացած, ջղաձգորեն սեղմած բռունցքները, ճիշտ ինչպես այժմ։ Այդպես, հենց այդպես, քարացած հայացքով հազարավոր անգամ վազում էր նա այնտեղ անկյունից անկյուն, և նրա տենդորեն փայլող աչքերում շողում էին մոլեգնության կարմիր կրակները։

Բայց նրա գիտակցությունն, ըստ երևույթին, դեռևս միանգամայն կարգին էր, որովհետև ժամանակ առ ժամանակ նա անհամբեր թեքվում էր դեպի սեղանը տեսնելու՝ որևէ քայլ վճռե՞լ է անել Զենտովիչը։ Ժամանակը շարունակում էր ձգվել՝ ինը րոպե... տասը... Հետո կատարվեց այն, ինչ մեզնից ոչ մեկը չէր սպասում։ Զենտովիչը բարձրացրեց իր ծանրը ձեռքը, որ մինչև այդ անշարժ ընկած էր սեղանի վրա։ Հուզված, մինչև վերջ լարված նյարդերով մենք սպասում էինք վախճանին։ Սակայն Զենտովիչը չկատարեց քայլը։ Անշտապ, բայց վճռական, ափի ետևի կողմով նա տախտակից շուռ տվեց բոլոր ֆիգուրները։ Մենք միանգամից չկարողացանք հասկանալ, որ Զենտովիչը հանձնվեց։ Նա անձնատուր եղավ, նա չցանկացավ, որ մենք դառնանք իր վերջնական պարտության վկաները։ Տեղի ունեցավ անսպասելին. աշխարհի չեմպիոնը, անթիվ մրցամարտերի հաղթողը իր դրոշը խոնարհեց անծանոթի, մի մարդու առաջ, որը քսան թե քսանհինգ տարի ձեռք չէր տվել շախմատին։ Մեր անանուն բարեկամը, որին ոչ ոք չէր ճանաչում, ազնիվ մարտում հաղթեց աշխարհի ամենաուժեղ խաղացողին։

Ինքներս էլ այդ չնկատելով՝ մենք հուզված ցատկեցինք մեր տեղերից։ Բոլորս ունեինք մի այնպիսի զգացում, թե որևէ եղանակով մենք պետք է արտահայտենք մեզ համակած ուրախ զարմանքը, պետք է ասենք կամ անենք մի ինչ-որ բան։ Մի մարդ էր միայն մնում անշարժ ու հանգիստ. դա Զենտովիչն էր։ Մի քիչ սպասելուց հետո նա բարձրացրեց գլուխը և, մեր բարեկամին հառելով իր քարե հայացքը, հարցրեց.

— Եվս մեկ պա՞րտիա։

— Իհա՛րկե, — գոչեց գոկտոր Բ-ն ինձ տհաճորեն ցնցող աշխուժությամբ։ Հետո նա նստեց և ավելի շուտ, քան ես կհիշեցնեի նրան իր իսկ պայմանը՝ խաղալ միայն մեկ պարտիա, սկսեց տենդոտ փութկոտությամբ դասավորել ֆիգուրները։ Դրանք տեղերում շարելով, նա այնպես էր նյարդայնանում, որ գինվորը երկու անգամ սահեց դողացող մատներից և ընկավ հատակին։ Սկզբում հանգիստ և խաղաղ այդ մարդն ակ-

ներևաբար ինչ-որ հափշտակության մեջ էր, ավելի ու ավելի հաճախակի էր ցնցվում նրա բերանի անկյունը, նա ամբողջապես սարսռում էր, ինչպես դողէրոցքից։

— Հարկավոր չէ՛,— շշնջացի ես նրան,— հարկավոր չէ՛։ Այսօրվա համար բավական է։ Դա ձեզ համար չափազանց մեծ լարվածություն է։

— Լարվածությո՞ւն։ Հա՛, հա՛, հա՛,— բարձրաձայն արհամարհաբար ծիծաղեց նա։— Այդքան ժամանակում, որ կորցրինք այս քաշքըշուկի վրա, ես կարող էի խաղալ տասնյոթ պարտիա։ Միակ բանը, որ դժվար է ինձ համար, դա այս տեմպերով խաղալու ընթացքում չքնելու ճիգն է։ Դե, ի՛նչ, դուք երբևէ կսկսե՞ք։

Վերջին խոսքերը, որ ասվեցին կտրուկ, գրեթե կոպիտ տոնով, ուղղված էին Զենտովիչին։ Վերջինս հակառակորդին նայեց հանդարտ ու անվրդով, բայց նրա մռայլ, քարե հայացքն ասես բոունցքի հարված էր։ Խաղացողների միջև ինչ-որ բան առաջացավ՝ վտանգավոր լարվածություն, այրող մի ատելություն։ Նրանք այլևս խաղընկերներ չէին, որոնք հակառակորդի արվեստն էին ուզում փորձել, այլ թշնամիներ, որոնք ելդվել էին ոչնչացնել մեկմեկու։ Զենտովիչը երկար դանդաղեց մինչև առաջին քայլը կատարելը, և իմ մեջ մի հաստատուն տպավորություն ստեղծվեց, թե նա դանդաղում է մտածված կերպով, դիտավորյալ։

Անկասկած, մարտերում կոփված այդ ստրատեգը վաղուց արդեն հասկացել էր, որ իր դանդաղկոտությունը հոգնեցնում ու գրգռում է հակառակորդին։ Նա օգտագործեց ո՛չ պակաս, քան չորս րոպե՝ ամենասովորական սկզբնախաղի՝ արքայական զինվորի քայլը կատարելու համար։ Մեր բարեկամն անմիջապես առաջ շարժեց արքայական զինվորն ի՛ր կողմից, և Զենտովիչը դարձյալ երկար դանդաղում էր կատարել պատասխան քայլը։ Այդպես լինում է, երբ պայծառորեն բռնկված կայծակից հետո սրտատրոփ սպասում ես ամպրոպի ճայթյունին, իսկ ամպրոպը չկա՞ ու չկա։ Զենտովիչը կարծես ամբողջովին քարացել էր։ Նա հանգիստ և անշտապ մտածում էր քայլերի վրա, և իմ մեջ աճում էր այն համոզմունքը, թե նա դիտավորյալ է անում այդ։ Նրա դանդաղկոտությունը թույլ էր տալիս ինձ անդադար հետևել դոկտոր Բ-ին։ Նա հենց նոր էր դատարկել ջրի երրորդ բաժակը, և ես ակամայից հիշեցի, թե ինչպես էր նա պատմում այն անհագ ծարավի մասին, որ տանջում էր նրան իր խցիկում։ Առկա էին աննորմալ վիճակի բոլոր նշանները· նրա ճակատը ծածկվել էր քրտինքով, ձեռքի սպին կարմրել և շատ ավելի նկատելի էր դարձել։ Բայց և այնպես նա դեռ չէր կորցնում իրեն։ Միայն չորրորդ

քայլից հետո, երբ Ջենտովիչը կրկին խրվեց ուժասպառ անող մտորումների մեջ, ինքնատիրապետումը լքեց դոկտոր Բ-ին, և, բորբոքվելով, նա գոչեց.

— Քայլ պիտի կատարե՞ք, վերջապես։

Ջենտովիչը սառնորեն նրան նայեց.

— Որքան ես հիշում եմ, մենք պայմանավորվել ենք յուրաքանչյուր քայլի վրա մտածել ոչ ավել, քան տասը րոպե։ Ես սկզբունքորեն կհետևվեմ այդ պայմանին։

Դոկտոր Բ-ն կծոտեց շրթունքները։ Նկատելով, որ նա անընդհատ աճող անհամբերությամբ ոտքով թխկթխկացնում է հատակին, ես արդեն անկարող էի զսպել ինձ համակող տագնապը. ինձ տանջում էր այն բանի նախազգացումը, թե նա նորից կընկնի խենթության իշխանության տակ։ Ութերորդ քայլում դարձյալ ընդհարում տեղի ունեցավ։ Դոկտոր Բ-ն, որի ինքնատիրապետումը ակնհայտորեն ցնդում էր, չէր կարողանում թաքցնել իր ջղային գրգռվածությունը։ Նա ոչ մի րոպե հանգիստ չէր նստում և հիմա էլ սկսել էր անգիտակցորեն մատներով տկտկացնել սեղանին։ Ջենտովիչը նորից բարձրացրեց իր ծանր, գեղջկական գլուխը.

— Կարո՞ղ եմ ձեզ խնդրել, որ դադարեք տկտկացնել սեղանը։ Դա խանգարում է ինձ։ Ես չեմ կարող այսպես խաղալ։

— Հա՛...— քմծիծաղով պատասխանեց դոկտոր Բ-ն։— Դա երևվում է։— Ջենտովիչը կարմրեց։

— Ի՞նչ եք ուզում դուք դրանով ասել,— կտրուկ, չարությամբ հարցրեց նա։

Դոկտոր Բ-ն կրկին ծիծաղեց կարճ, արհամարհաբար.

— Ոչի՛նչ, բացի նրանից, որ դուք, ինչպես երևում է, շատ եք հուզվում։

Ջենտովիչը լուռ մնաց և նորից խոնարհվեց տախտակի վրա։ Միայն յոթ րոպեից նա կատարեց պատասխան քայլը։ Խաղը շարունակվում էր միշտ նույն մեռելային տեմպերով։ Ջենտովիչն ասես քարե արձան էր դարձել։ Այժմ, ֆիգուրը շարժելուց առաջ նա արդեն ամբողջությամբ պահպանում էր սահմանված առավելագույնը, իսկ մեր բարեկամի վարքագիծը քայլ առ քայլ ավելի ու ավելի տարօրինակ էր դառնում։ Թվում էր, թե նա կորցրել է ամեն մի հետաքրքրություն խաղի նկատմամբ, զբաղված է ինչ-որ բոլորովին կողմնակի բանով։ Նա դադարել էր հուզված քայլելուց, նստել էր անշարժ և, տարածության մեջ հառած իր բացակայող, գրեթե խելացնոր հայացքը, ինչ-որ բան էր փնթփնթում քթի տակ։ Կամ մտասուզված էր ինչ-որ նման անվերջանալի կոմբինացիա-

ների մեջ, կամ, և ես կարծում եմ, որ դա հենց այդպես էր, մտովի խաղում էր ինչ-որ բոլորովին այլ պարտիաներ։ Ինչևէ, ամեն անգամ, երբ Զենտովիչը կատարում էր քայլը, անհրաժեշտ էր նրան իրականություն վերադարձնել։ Եվ այժմ արդեն նրանից պահանջվում էր մեկ կամ երկու րոպե, խաղի դիրքը նորից հասկանալու համար։

Իմ մեջ աճում էր այն համոզմունքը, թե դոկտոր Բ-ի մոտ սկսվել է դանդաղ խանգարման նոպա, որն ամեն րոպե կարող էր վերաճել կատաղության։ Նա կարծես մոռացել էր թե՛ մեր, թե՛ Զենտովիչի գոյությունը։ Եվ իսկապես, տասնիններորդ քայլին վրա հասավ ճգնաժամը։ Հազիվ էր Զենտովիչը կատարել քայլը, երբ դոկտոր Բ-ն, թռուցիկ հայացք նետելով տախտակին, անսպասելիորեն երեք քառակուսի առաջ շարժեց իր փիղը և բարձր, այնպես, որ մենք ցնցվեցինք, գոչեց.

— Շախ, շա՛խ արքային։

Ինչ-որ անսովոր բանի սպասումով մենք բոլորս աչքերս հառեցինք տախտակին։ Զենտովիչը չափազանց դանդաղ բարձրացրեց գլուխը և մեզ պարուրեց իր աչքերով, մի բան, որ ոչ մի անգամ դեռ չէր արել։ Ինչ-որ բան, թվում էր, նրան արտակարգ բավականություն է պատճառում. նրա շուրթերը քիչ-քիչ բացվեցին գոհունակ և մեծամիտ ժպիտից։ Միայն մինչև վերջ ճաշակելով իր հաղթարշավի հաճույքը, որի պատճառը մեզ անհասկանալի էր, շինծու քաղաքավարությամբ նա դիմեց ներկաներիս.

— Ներեցե՛ք, բայց ես շախ չեմ տեսնում։ Գուցե ձեզանից որևէ մեկը, պարոնա՛յք, կասի ինձ, թե որտեղ է իմ արքային հայտարարված շախը։

Մենք նայեցինք տախտակին, իսկ այնուհետև տագնապով՝ դոկտոր Բ-ին։ Զենտովիչի արքան պաշտպանված էր փղից մի զինվորով, այնպես որ ոչ մի շախի մասին խոսք անգամ չէր կարող լինել, դա կնկատեր նույնիսկ երեխան։ Մենք անհանգստացանք։ Գուցե մեր բարեկամը հուզմունքից ֆիգուրը տեղաշարժել է մի վանդակ ավելի հեռու կամ մոտիկ, քան պետք էր։ Մեր լռությունը գրավեց դոկտոր Բ-ի ուշադրությունը, նա սևեռուն նայեց տախտակին և կմկմալով ասաց.

— Բայց չէ՞ որ արքան պետք է լիներ f 7-ի վրա։ Նա սխալ է կանգնած, բոլորովին սխալ։ Դուք սխալ քայլ եք կատարել... Բոլոր ֆիգուրները կանգնած են ո՛չ իրենց տեղերում. այս զինվորը պետք է լիներ d 5-ում, ո՛չ թե d 4-ում։ Սա բոլորովին ուրիշ պարտիա է։ Սա...

Նա անսպասելիորեն լռեց։ Ես ամուր սեղմեցի նրա ձեռքը, ավելի ճիշտ՝ կսմթեցի այնքան ուժեղ, որ նույնիսկ նա իր խելագար շփոթմունքի մեջ զգաց այդ։ Նա շուռ եկավ և լուսնոտի պես նայեց ինձ.

— Ի՞նչ... կհաճեիք։

— Հիշե՛ք,— ասացի ես այդ միակ բառը և մատս թթևակիորեն անցկացրի նրա ձեռքի սպիի վրայով։

Նա մեքենաբար կրկնեց իմ շարժումը և ապակե աչքերը հառեց կարմիր արնագույն շերտերին։ Հանկարծ նա դողաց մարմնով մեկ, ճակատին քրտինք երևաց։

— Ի սե՛ր աստծո,— շշնջաց նա անգույն շուրթերով,— մի՞թե ես որևէ հիմարություն եմ ասել կամ արել։ Մի՞թե հնարավոր է, որ ես նորից...

— Ո՛չ, — ցածրաձայն պատասխանեցի ես, — բայց դուք իսկույն ևեթ պետք է դադարեցնեք խաղը։ Ժամանակն է։ Հիշեք, թե ինչ է ասել բժիշկը։

Դոկտոր Բ-ն ընդոստ վեր թռավ աթոռից։

— Ներողություն եմ խնդրում իմ հիմար սխալի համար, — ասաց նա իր քաղաքավարի ձայնով և խոնարհվեց Ջենտովիչի առաջ, — ես, իհարկե, ամենակատարյալ հիմարությունն ասացի։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ այս խաղը շահեցիք դո՛ւք։

Հետո նա շրջվեց մեր կողմը։

— Եվ ձեզ, պարոնայք, նույնպես խնդրում եմ ներել ինձ։ Զէ՞ որ ես ձեզ հենց սկզբից էլ նախազգուշացնում էի, որ չպետք է մեծ հույսեր դնեք ինձ վրա։ Ներեցեք, որ ես այդպես խայտառակ կերպով վերջացրի խաղը։ Սա վերջին անգամն է, որ տրվեցի շախմատ խաղալու գայթակղությանը։

Նա գլուխ տվեց և հեռացավ նույն համեստ և հանելուկային տեսքով, ինչպես առաջին անգամ երևացել էր մեր մեջ։ Միայն ես գիտեի, որ այդ մարդը երբեք այլևս ձեռք չի տա շախմատին, իսկ մյուսները շփոթված կանգնել էին իմ շուրջը՝ աղոտ կերպով կռահելով, որ ինչ-որ մութ և ահավոր բան անցավ կողքից, որը քիչ մնաց դիպչեր իրենց։

— Գրո՞ղը տանի այդ հիմարին, — հիասթափությամբ մրթմրթաց Մակ Կոնոորը։

Վերջինն իր աթոռից վեր կացավ Ջենտովիչը և էլի՛ մի հայացք ղցեց չավարտված պարտիայի վրա։

— Շա՛տ ափսոս, — ասաց նա մեծահոգաբար։ — հարձակումը բոլորովին էլ վատ չէր մտածված։ Իբրև սիրող՝ այդ մարդը բացառիկ տաղանդով է խաղում։

ՍՏԵՖԱՆ ՑՎԱՅԳԸ ԵՎ ԻՐ «ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՍՏԵՂԱՅԻՆ ԺԱՄԵՐԸ»

Ստեֆան Ցվայգը ապրել է գրական մեծահարուստ կյանք և թողել նույնպիսի գրական ժառանգություն։

Բացառիկորեն մեծ է եղել նրա շփումների ոլորտն իր նշանավոր ժամանակակիցների հետ. եվրոպական մի քանի լեզվի տիրապետող, հումանիտար անբավ գիտելիքների տեր այդ վերին աստիճանի կիրթ գրողը ծանոթ ու մտերիմ է եղել Էմիլ Վերհարնի, Ռոմեն Ռոլանի, Մաքսիմ Գորկու, Ֆրանց Վերֆելի, Օգյուստ Ռոդենի, Անատոլի Լունաչարսկու, Ռայներ Ռիլկեի, Զիգմունդ Ֆրեյդի, Սանդրո Մոիսիի, Յոզեֆ Կայնցի, Արթուրո Տոսկանինիի հետ, իր ներաշխարհը հարստացրել 20-րդ դարի այս և ուրիշ նշանավոր գրողների ու արվեստագետների ստեղծագործական փորձով։ Եվ թողել այնպիսի գրական ժառանգություն, որ իր անունը դասվում է այդ նշանավոր անունների շարքը։

Հիրավի, Ցվայգի ստեղծագործության արժեքը վաղուց ի վեր գերազանցել է ավստրիական և առհասարակ գերմանախոս գրականության սահմանները և ձեռք բերել ավելի ընդհանրական՝ միջազգային արժեք։

Ստեֆան Ցվայգը ծնվել է 1881-ին, Վիեննայում, գործարանատիրոջ հարուստ ընտանիքում, ստացել հիմնավոր կրթություն։ Իր գրական կոչումն ըմբռնել է վաղ հասակից, բայց ստեղծագործական նկարագիրը գտել է տարիներ անց։ 1901-ին լույս է տեսել նրա առաջին գիրքը՝ «Արծաթե լարեր» բանաստեղծությունների ժողովածուն։ Հետագայում գրել է նաև դրամաներ, բայց իր ձիրքի հաստատումը ի վերջո գտել է արձակում։

Եվրոպայում նրա վերջին բնակավայրը եղել է Զալցբուրգը, ավստրիական այդ փոքրիկ, չքնաղ քաղաքը, Մոցարտի հայրենի քաղաքը, որ այսօր այնքան հռչակված է երաժշտական փառատոներով։ 1931-ին Ստեֆան Ցվայգն այստեղ է դիմավորել իր ծննդյան հիսնամյակը։ 1934-ին, հիտլերյան բռնակալության հաստատումից անմիջապես հետո, այստեղից է, իբրև վտարանդի, լքել Եվրոպան և ապաստան գտել մյուս կիսագնդում՝ Բրազիլիայում, ուր և ինքնասպան է եղել ութ տարի անց։ Իսկ այժմ Զալցբուրգի փառատոները բացվում են նրա անունը կրող փողոցում։

Ստեֆան Ցվայգը շատ է ճանապարհորդել. եղել է Ամերիկայում, Հնդկաստանում, Հնդկաչինում, Սովետական Միությունում, եվրոպական գրեթե բոլոր երկրներում, իսկ Փարիզը եղել է իր երկրորդ հայրենիքը։

Անցնող տարիները, ճամփորդությունները, հարստացող կենսափորձը նրա մեջ ավելի ու ավելի են խորացրել իր վաղեմի դավանանքը՝ իր «հոգու հայրենիք» Եվրոպայի սերը, եվրոպական կուլտուրայի պաշտամունքը, այդ կուլտուրայի միասնության անվերապահ հավատը, մի կուլտուրա, որին նա, իբրև համոզված եվրոպակենտրոն մտածող, բացառիկ տեղ էր տալիս մարդկության պատմության և առաջադիմության մեջ։ Եվ հենց այդ հավատի փլուզումն էլ կործանեց նրան։ Հիացումն ու հիասթափությունը ուղիղ համեմատական են. հիասթափությունը լինում է այնքան մեծ, որքան մեծ էր հիացումը։ Այնքան մեծ էր Ցվայգի հիացումն ու հավատը Եվրոպայի ու նրա կուլտուրայի միասնության հանդեպ, որ նույն այդ Եվրոպայում ծագած երկրորդ համաշխարհային պատերազմը՝ այդ միասնության գահավեժ խորտակումը, չափազանց ծանր նստեց նրա վրա։ 1942-ի հունվարին, բրազիլական Պետրոպոլիս փոքրիկ քաղաքում, վտարանդի Ստեֆան Ցվայգը, չդիմանալով իր փայփայած պատրանքների գահավեժ խորտակմանը, ինքնասպանություն գործեց իր կնոջ հետ միասին։

Մահվանից առաջ նա գրել էր մի «Դեկլարացիա», որ բացատրում է այդ մեծ կյանքի ողբերգական վախճանի պատճառը. դա ունեցել է ոչ թե անձնական, այլ խորապես ըմբռնված հասարակական բնույթ, եղել է իր՝ աշխարհից կտրված գրողի հոգեկան ու բարոյական ճգնաժամի հետևանքը, իսկ դրա ակունքն այն էր, որ «իր հոգու հայրենիք Եվրոպան ոչնչացնում է ինքն իրեն»։ Ֆրանց Վերֆելը («Մուսա լեռան քառասուն օրը» գրքի հեղինակը) «Ստեֆան Ցվայգի մահը» հոդվածում այսպես է բացատրել հայրենակից գրողի ողբերգությունը. «Նա մի մարդ էր, որ մանկական ինքնամոռացմամբ նվիրված էր մարդասիրության կրոնին, որի շուքի տակ էր հասակ առել։ Նրան անծանոթ էին կյանքի խորխորատները, որոնց նա մոտենում էր իբրև արվեստագետ և հոգեբան։ Նրա գլխավերևը շողում էր իր պատանեության անամպ երկինքը, որի առջև խորնահվում էր՝ գրականության, արվեստի երկինքը, միակ երկինքը, որ ճանաչում ու գնահատում էր լիբերալ լավատեսությունը։ Ըստ երևույթին, այդ հոգևոր երկնքի մոայլումը Ցվայգի համար եղավ մի հարված, որին նա չկարողացավ դիմանալ...»։

Ժամանակի արժանի նմանություններ են լինում նշանավոր արվեստագետների ստեղծագործական նախասիրության և սեփական կյանքի ու ճակատագրի միջև։

Մահվանից առաջ Ստեֆան Ցվայգն ավարտել է իր «Երեկվա աշխարհը» գիրքը, իր հրաժեշտի երկը, որ Թոմաս Մանը համարում էր «մեծ

գիրք»· դա իր երիտասարդության պայծառ տարիների մասին, նախապատերազմյան Եվրոպայի, իր նվիրական մտերմությունների մասին պատմող մի գիրք է՝ լեցուն հոգեպարար հուշերով և խորունկ դատողություններով, որ այնքան հստակ ցույց են տալիս հեղինակի հումանիստական (ճիշտ է, հայեցողական-հումանիստական) աշխարհայացքը և այրող ատելությունն իր պաշտելի Եվրոպան կրակի մատնած ու իրեն 1934-ից ի վեր վտարանդի դարձրած ֆաշիզմի նկատմամբ։ Այս գիրք-խոստովանության մեջ ահա գրողը ներկայացրել է իր ստեղծագործական նախասիրությունը, իր բարոյական դավանանքը։

Մտաբերելով վաղ շրջանում գրած իր «Թերսիդես» դրաման, նա գրել է. «...այս դրամայում արդեն երևաց իմ հոգեկան կերտվածքի մի որոշակի հատկանիշը՝ երբեք չբռնել այսպես կոչված «հերոսների» կողմը և ողբերգականը մշտապես որոնել ու գտնել պարտվածների մեջ։ Ճակատագրի կողմից տապալվածը՝ ահա ով է ինձ հրապուրել իմ նովելներում, իսկ վարքագրություններում՝ կերպարն այն մարդու, որի արդարությունը հաղթանակում է ոչ թե հաջողության իրական տարածքում, այլ միայն բարոյական առումով։ Էրազմը և ոչ թե Լյութերը, Մարի Ստյուարտը և ոչ Էլիզաբեթը, Կաստելյոն և ոչ Կալվինը։ Եվ հենց այն ժամանակ էլ ես իբրև հերոս ընտրեցի ոչ թե Աքիլլեսին, այլ նրա ամենից անհաղթ հակառակորդին՝ Թերսիդեսին. տառապյալ մարդուն տվեցի նախապատվությունը և ոչ թե այն հերոսին, որի ուժն ու նպատակի սլացքը տառապանք են պատճառում ուրիշներին»։

Հիրավի, ամեն դեպքում Ցվայգի համակրանքն այն հերոսների կողմն է, որ ի վերջո գահավեժ անկում են ապրում, մնալով, սակայն, իրենց բարոյական բարձունքի վրա, և նրանց պարտության մեջ է իրենց ողբերգական վեհությունը՝ արժանի ոչ միայն կարեկցանքի, այլև հիացման։

Իր՝ Ստեֆան Ցվայգի կյանքն ու մահը, վերելքն ու անկումը, իր անձնական ճակատագիրն արդյոք իր նախասիրած հերոսների ճակատագիրը չէ՞, ողբերգական՝ նույնպիսի վսեմ բովանդակությամբ։

Գրողի ապրած կյանքը և ստեղծագործությունը, այսպիսով, ենթարկվում են միևնույն բարոյական գնահատությանը, միևնույն ընդհանուր հայտարարին։ Եվ Ստեֆան Ցվայգից հետո եկած ընթերցողների սերունդները կարող են իրեն վերադարձնել երախտագիտության այն բարձրաշունչ խոսքերը, որ նա այնպիսի արվեստով հյուսել էր իր լավագույն հերոսների համար։

Ստեֆան Ցվայգի ստեղծագործությունը կարելի է դյուրությամբ բաժանել երկու մասի՝ զուտ գեղարվեստական երկեր և պատմավավերագրական գրվածքներ, որոնք ճիշտ կլինի վարքագրություններ կոչել։ Նրա գեղարվեստական երկերը պատկանում են նովելի ժանրին (միայն մի վեպի բացառությամբ, որ նրա լավագույն երկերի շարքին չի պատկանում)։ Իր հանրահայտ նովելներում, ինչպես «Անծանոթ կնոջ նամակը», «Ահը», «Այրող գաղտնիք», «Քսանչորս ժամ մի կնոջ կյանքից», «Ամոկ», «Լուսնի լույսով ողողված փողոցը» և այլն, Ցվայգը հանդես է գալիս իբրև մարդկային հոգու գաղտնարանները թափանցող բացառիկորեն նուրբ հոգեբան, առաջնակարգ պատմող և ոճաբան։ «Անծանոթ կնոջ նամակի» մասին Գորկին, որ նամակագրություն ուներ Ցվայգի հետ, գրել է հեղինակին, թե այդ գործն աչքի է ընկնում «...կնոջ հանդեպ ցուցաբերված վերմարդկային քնքշությամբ, թեմայի ինքնատիպությամբ և պատկերման այն կախարդական ուժով, որ հատուկ է միայն ճշմարիտ արվեստագետին»։ Մարդկային բեկված ճակատագրի հանդեպ անվերապահ կարեկցանքով հագեցած այդ նրբակերտ գործերի շնորհիվ Ցվայգը ճանաչում գտավ իբրև դարիս լավագույն նովելիստներից մեկը։

Նրա գրական ժառանգության ավելի ծավալուն ու ծանրակշիռ մասը կազմում են պատմավավերագրական գործերը, վարքագրությունները[1], որոնց արժեքը բնավ չի զիջում իր զուտ գեղարվեստական գործերին։ Ավելին, դրանք, կարծես, ավելի լավ են դիմանում ժամանակի քննությանը, և դա զարմանալի չէ մեր ժամանակներում, երբ այնքան մեծացել է ընթերցողի հետաքրքրությունը գրականության հատկապես ճանաչողական-իմացական բովանդակության նկատմամբ։ Այն հանգամանքն էլ կա, որ եթե Ցվայգն իբրև նովելիստ շատ մրցակիցներ ունի, ապա իբրև վարքագիր, իբրև պատմության գեղարվեստական-փիլիսոփայական իմաստավորող նա հազիվ թե մրցակիցներ ունենա։ Մարի Ստյուարտին, Բալզակին, Մագելանին և ուրիշ նշանավորների նվիրված նրա վարքագրությունները մի-մի գլուխգործոց են այդ ժանրում։

Նույն ժանրին է պատկանում Ցվայգի նաև «Մարդկության աստեղային ժամերը» պատմական մանրապատումների շարքը՝ գրված իրեն հա-

---

[1] Ահա դրանց ոչ լրիվ ցանկը. «Վեռլենն», «Էմիլ Վերհառն», «Նրեք վարպետ. Բալզակ, Դիկկենս, Դոստոևսկի», «Ռոմեն Ռոլան», «Պայքար դևի դեմ. Գելդերլին, Կլայստ, Նիցշե», «Իրենց կյանքի երեք երգիչները. Կազանովա, Ստենդալ, Տոլստոյ», «Էրազմ Ռոտերդամցու հաղթանակն ու ողբերգությունը», «Մարի Ստյուարտ», «Ամերիգո», «Բալզակ», «Ժոզեֆ Ֆուշե», «Մագելան»։

տուկ թափանցումով, առաջնակարգ արվեստով, պատմության պաղած էջերը կենդանագործելու հազվագյուտ ձիրքով։

Այս շարքը ևս, ինչպես Ցվայգի մյուս գրվածքները, ենթարկվում է նրա մշտական նախասիրությանը՝ իր բարոյական համակրանքը տալ ոչ թե հաղթանակի, այլ պարտության, մայրամուտի հերոսներին, այն մարդկանց, ում հանդեպ ճակատագիրն անողոք է լինում, եթե նույնիսկ նրանք Նապոլեոնի կամ Գյոթեի պես հզոր անհատներ են։

«Կոստանդնուպոլսի առման» մեջ գրողի համակրանքը ոչ թե հաղթություն տանող թուրքերի կողմն է, որոնք կործանում են ևս մի բազմադարյան կուլտուրա, այն էլ Ցվայգի սիրած եվրոպական կուլտուրայի անկյունաքարը, այլ պարտություն կրող բյուզանդացիների, որոնց կործանման մեջ նա տեսնում է ողբերգական վեհություն, որը և բարոյական գերազանցություն է տալիս պարտվողին։

Խաղաղ օվկիանոսը հայտնագործող Բալբոայի կերպարը չէր հրապուրի Ստեֆան Ցվայգին, եթե նրա ճակատագիրը չունենար երերումներ և ի վերջո չկործաներ նրան («Փախուստ դեպի անմահություն»)։ Նույնը և Ռուժե դը Լիլը՝ փառահեղ Մարսելյեզի տարաբախտ հեղինակը, որի գրած երգը թնդում է երկրով մեկ, իսկ ինքը՝ մատնվում մոռացության («Մի գիշերվա հանճարը»)։

Ստեֆան Ցվայգին ողբերգական ճակատագրերն են ոգեշնչում. նրան հոգեբանական բարդ հանգույցներ են հարկավոր՝ որ բացահայտի, կռահման կարոտ պարադոքսներ՝ որ մեկնաբանի, պատմության քմահաճ խաղեր՝ որ գտնի դրանց տրամաբանությունը և իմաստավորի այնպես, ինչպես միայն ինքը կարող էր իմաստավորվել։

Նապոլեոնի հաղթական ճակատամարտերը չեն, Աուստերլիցի վիթխարի հաղթանակը չէ, որ ներշնչել են նրան, այլ նրա վերջին մեծ պարտությունը Վաթերլոոյի ճակատամարտում, որովհետև դա կրել է ողբերգական բովանդակություն («Անդառնալի ակնթարթը»)։ Ճիշտ այդպես էլ Ցվայգի հերոսը կենսական և ստեղծագործական ուժերով լեցուն Գյոթեն չէր, որ ունեցավ այնքան երջանիկ ու կրկարատև կյանք, այլ այն Գյոթեն, որ ապրում է իր ողբերգական մայրամուտը և ունենում քնարական իր վերջին ներշնչումը («Մարիենբադյան էլեգիան»)։ Նրա հերոսը չէր կարող լինել նաև Ռոյալդ Ամունդսենը՝ նորվեգացի հռչակավոր բևեռախույզը, Հարավային բևեռի երջանիկ հայտնագործողը, այլ նույն այդ բևեռի ապերջանիկ հայտնագործող Ռոբերտ Սկոտը, քանի որ նա

երկրորդը հասավ բևեռին և կործանվեց իր ուշացած սխրանքի վայրում («Պայքար Հարավային բևեռի համար»)։

Ընտրելով պատմության ընթացքի և նշանավոր անհատների կյանքի անպայման շրջադարձային, անպայման հանգուցային, բարձրակետային ժամերը, որ գրողը գեղեցիկ համեմատությամբ կոչում է «աստեղային ժամեր», նա իր մտքի թռիչքով, ինքնատիպ մեկնությամբ, գրական արվեստով մշտապես հասել է իր մտահղացման մակարդակին և ստեղծել պատմական մանրապատումներ, որ մի-մի զլուխգործոց են գրականության այդ տեսակում։ Կիրթ և ուշադիր ընթերցողը (սրանք կարևոր պայմաններ են Ցվայգին ընթերցելու համար, որ շատ էլ դյուրին չէ) հիանալով գրողի վարպետությամբ, պատմական իրողությունն իմաստավորելու հմտությամբ, կարող է նկատել նրա գրվածքների որոշ թույլ կողմերը ևս։ Ճիշտ է նկատվել, որ Ցվայգը գերագնահատում է նշանավոր անհատի, ինչպես նաև պատահականության դերը պատմության ընթացքի մեջ։ Այսպես, «Բյուզանդիոնի առումից» կարելի է ստանալ այն տպավորությունը, թե Բյուզանդիայի մայրաքաղաքի կործանման պատճառը պատահականությունը՝ անփութությամբ բաց մնացած դուռը եղավ։ Մինչդեռ (և Ցվայգի պատումն էլ մինչև այդ նույնն է հաստատում) դա պատմության նախորդ դեպքերով կանխորոշված իրողությունն էր. Բյուզանդիան, երբեմնի հզորագույն քրիստոնեական կայսրությունը, այնպես էր քայքայվել և թուրքերի օղակն այնպես էր սեղմվել նրա շուրջը, որ նրա պարտությունը պատմականորեն անխուսափելի էր։ Ուրիշ բան, որ քրիստոնեական տերությունները, չըմբռնելով թուրքական վտանգի մեծությունը և չհաղթահարելով իրենց իսկ ներքին հակասությունները, չկարողացան, ասենք նույնիսկ չկամեցան, ի մի գալ և միասին պատվար կանգնել թուրքական առաջխաղացման դեմ։ Նույնքան տարակուսելի է այն մեկնաբանությունը, որ Ցվայգը տվել է Վաթերլոոյի ճակատամարտում Նապոլեոնի կրած պարտությանը։ Թերևս Մարշալ Գրուշիի ճակատագրական սխալն էր Վաթերլոոյում Նապոլեոնի կրած պարտության պատճառը, բայց հազիվ թե կարելի է ասել, թե հակառակ դեպքում Եվրոպայի ճակատագիրը կարող էր այլ կերպ տնօրինվել։ Դա արդեն պատմականորեն կանխորոշված իրողություն էր՝ պայմանավորված պատմական այնպիսի հանգամանքներով, որ մի որևէ թեկուզ և մեծ, ճակատամարտ չէր կարող փոխել իրերի դրությունը։ Կարելի է, վերջապես, նկատել նաև, որ Ցվայգը երևույթների քննությունը

պատմահասարակական ոլորտից երբեմն տեղափոխում է զուտ հոգեբանական ոլորտներ կամ, հանուն դրամատիկական լարումի ահագնացման, խտացնում է գույները։ Բայց ոչինչ չի կարող նվազեցնել Ցվայգի մանրապատումների ոչ ճանաչողական, ոչ գեղարվեստական արժեքը, երկեր, որ դիմացել են ժամանակի քննությանը և իրավամբ դասվում են գրողի ամենից շատ ընթերցվող գրվածքների շարքը։

Լևոն Հախվերդյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի առաջաբանը 3

Բյուզանդիոնի արումը (29 մայիս, 1853 թ.) — թարգմ. Լ. Հախվերդյան . 6

Վտանգը մոտենում է 6

Հաշտության պատարագը 9

Պատերազմը սկսվում է 10

Պարիսպներն ու թնդանոթները 12

Վերջին ծագում է հույսը 15

Նավատորմիղն անցնում է լեռան վրայով 18

Եվրոպա, հասի՛ր օգնության 21

Գրոհին նախորդած գիշերը 23

Սուրբ Սոֆիայի վերջին պատարագը 24

Կերկապորտ. Մոռացված դուռը 26

Խաչը տապալված է 29

Փախուստ դեպի անմահություն (Խաղաղ օվկիանոսի հայտնաբերումը 1513 թ.)
թարգմ. Լ. Հախվերդյան 32

Նավը սարքավորվում է ծով դուրս գալու համար 32

Արկղի միջի մարդը 36

Վտանգավոր վերելք 38

Փախուստ դեպի անմահություն 41

Անանցողիկ ակնթարթը 43

Ոսկի և մարգարիտ 48

Աստվածները հազվադեպ են շնորհում... 51

Մայրամուտ 54

Մի գիշերվա հանգարը (Մարսելյեզ, 25 ապրիլի 1792 թ.)
թարգմ. Լ. Հախվերդյան 56

Անդառնալի ակնթարթը (Վաթերլոո, 1815 թ. հունիսի 18) թարգմ. Լ. Հախվերդյան 72

Գրուշի 73

Կայսրի գիշերը 76

Վաթերլոոյի առավոտը 77

Գրուշիի սխալը 78

Համաշխարհային պատմության վճռական ակնթարթը 79

Կեսօրից հետո 80

Հանդուցյի լուծումը 81
Վերադարձ դեպի առօրեականություն 83

Մարիենբադյան էլեգիան — թարգմ. Լ. Հախվերդյան 86
Էլեդորադոյի հայտնագործումը — թարգմ. Լ. Հախվերդյան 96

Այն մարդը, որին Եվրոպան զզվեցրել էր 96
Արշավանք դեպի Կալիֆոռնիա 97
Նոր Հելվեցիան 99
Բահի ճակատագրական հարվածը 100
Ոսկու տենդը 101
Դատավարությունը 102
Վախճանը 103

Առաջին խոսքը օվկիանոսի մյուս կողմից — թարգմ. Լ. Հախվերդյան . . 106

Նոր ռիթմ 106
Նախապատրաստություն 112
Առաջին նավարկությունը 114
Անհաջողություն 115
Դարձյալ անհաջողություն 117
Երրորդ նավարկությունը 118
Մեծագույն փառաբանությունը 120
Մկրտության տառապանքները 123
Վեցամյա լռություն 124

Պայքար հանուն հարավային բևեռի — թարգմ. Լ. Հախվերդյան . . . 127

Պայքար հանուն հողագնդի 127
Սկոտը 129
Անտարկտիկայի համալսարանը 131
Արշավանք դեպի բևեռ 133
Հարավային բևեռը 136
Հունվարի տասնվեցը 136
Կործանում 138
Մեռնողի նամակները 141
Պատասխանը 143

Շախմատային նովել — թարգմ. Լ. Պողոսյան 145

Ստեֆան Ցվայգ

ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՍՏԵՂԱՅԻՆ ԺԱՄԵՐԸ

(պատմական մանրապատումներ)

ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ՆՈՎԵԼ

Կազմող՝ Ս. Հ. Պապոյան
Հրատ. խմբագիր՝ Է. Ա. Հանեսօղլյան
Նկարիչ՝ Վ. Բ. Մանգակունի
Գեղ. խմբագիր՝ Բ. Վ. Մազմանյան
Տեխն. խմբագիր՝ Ռ. Ն. Ախիրյան
Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Կ. Մկրտչյան

ИБ № 2140

Հանձնված է շարվածքի՝ 24.03.1986 թ.։ Ստորագրված է տպագրության՝ 17.07.1986 թ.։ Թուղթ՝ տպագր. № 3, չափսը՝ 60×84 1/16։ Բարձր տպագրություն, տառատեսակը՝ «Գրքի սովորական», հրատ. 10,51 մամ.+0,33 մամ. ֆորզ., տպագր. 13,0 մամ.+0,25 մամ. ֆորզ., պայմ. 12,1 մամ.+0,23 մամ. ֆորզ., տպ. 12,5 գուն. թ. օտ.։ Տպաքանակ՝ 100000, (2-րդ թողարկում 50001—100000)։ Պատվեր՝ 822։

Գինը՝ № 5 կազմ — 1 ռուբ.։

№ 7 կազմ — 1 ռուբ. 10 կոպ.։

«Լույս» հրատարակչություն, Երևան—9, Կիրովի 19ա։

Издательство «Луйс», Ереван-9, ул. Кирова, 19а.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Меганарта Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван-9, ул. Теряна, 91.